ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

EX ORIENTE LUX

INSTITUTE OF ORIENTAL STUDIES

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

# MIGRATION PROCESSES IN THE ARMENIAN HIGHLAND FROM THE ANCIENT TIMES TO THE BEGINNING OF THE 20TH CENTURY

CONFERENCE PAPERS

PUBLISHING HOUSE OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
YEREVAN 2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿԻԶԲ

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհուրդների որոշմամբ

Խմբագիր՝ Երվանդ Գրեկյան

ՀՏԴ 314.011:39(=19)(082)
ԳՄԴ 60.7+63.5(5Հ)g43
Մ 670

Մ 670 **Միգրացիոն գործընթացները Հայկական լեռնաշխարհում հնագույն շրջանից մինչև 20-րդ դարասկիզբ (գիտաժողովի նյութեր)** / ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ: Խմբ.՝ Ե. Գրեկյան.– Եր.: ՀԱԻ հրատ., 2023.– 116 էջ:

Ժողովածուն ներկայացնում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտների համատեղ կազմակերպած «Միգրացիոն գործընթացները Հայկական լեռնաշխարհում հնագույն շրջանից մինչև 20-րդ դարասկիզբ» հանրապետական գիտաժողովի նյութերը (Երևան, 19 դեկտեմբերի 2022թ.): Հայաստանի և Արցախի մասնագետների կողմից ներկայացված հոդվածները վերաբերում են ինչպես Հայկական լեռնաշխարհում, այնպես էլ՝ պոնտ-կասպյան, էգեյան և մերձավորարևելյան տարածաշրջաններում պատմական տարբեր դարաշրջաններում տեղ գտած միգրացիաներին՝ սկսած Ք.ա. 4-րդ հազարամյակից ընդհուպ մինչև 20-րդ դար: Արծարծվում են հայ ժողովրդի կազմավորմանը, կլիմայական ու միջավայրային փոփոխությունների ու միգրացիաների փոխկապակցվածությանը, տարբեր էթնիկական տեղաշարժերին, բնակչության ներքին տեղաշարժերին և բռնագաղթերին վերաբերող խնդիրներ:
Ժողովածուն հրատարակվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ 20TTSH-005 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Կազմին պատկերված է անվավոր փոխադրամիջոցի ժայռապատկեր Գեղամա լեռներից: Աղբյուրը՝ Սարդարյան Ս. 2010. *Հայաստանի ժայռապատկերները քարի դարից մինչև բրոնզի դար*. էջ 88, նկ. 54. Երևան, ԵՊՀ հրատարակչություն.

ՀՏԴ 314.011:39(=19)(082)
ԳՄԴ 60.7+63.5(5Հ)g43

ISBN 978-9939-886-43-5
DOI: 10.54503/978-9939-886-43-5

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2023
© ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Արմեն Պետրոսյան, Արամ Պալյան*
**Հայոց ազգածագման խնդիրը վերջին հնագենետիկական տվյալների լույսի ներքո** 7

*Արսեն Բոբոխյան*
**Ուղղահայաց զաղթեր. տարածության ընտելացման առանձնահատկությունները Հայկական լեռնաշխարհում** 25

*Երվանդ Գրեկյան*
**Կլիմայական միգրանտները. «Կատակոմբային մշակույթ»-ի օրինակը** 31

*Համլետ Հմայակյան*
**Քարաշամբի գավաթը խաթախեթական իրողությունների համատեքստում** 47

*Արամ Քոսյան*
**Միգրացիաները և Միկենյան քաղաքակրթության անկումը** 56

*Նժդեհ Երանյան*
**Կլիմայական փոփոխությունները և բնակչության ներքին տեղաշարժերը Հայկական լեռնաշխարհում Ք.ա. 2-րդ – 1-ին հազարամյակներում. լեռնային գոտիների ադապտացումը** 69

*Ռուսլան Ցականյան*
**Հայկյանների միգրացիան (վերականգնման փորձ)** 74

*Արթուր Մելիքյան*
**Դահերի միգրացիան Ք.ա. 5–3-րդ դարերում** 84

*Դաբաղյան Արտակ, Արթուր Պետրոսյան*
**Համառոտ մի լրացում “Encyclopaedia Iranica”-ի “Deportations” բառահոդվածի երկրորդ մասին՝ հայկական սկզբնաղբյուրների կարևորմամբ** 98

*Համազասպ Աբրահամյան*
**Պարսկահայերի միգրացիան և Արարատյան դաշտի 19–20-րդ դարերի հողաշեն ժառանգությունը** 106

# CONTENTS


*Armen Petrosyan, Aram Palyan*
**The Problem of Armenian Origins in the Light of Recent Archaeogenetic Data** 7

*Arsen Bobokhyan*
**Vertical Migrations: Traits of Space Domestication within the Armenian Highland** 25

*Yervand Grekyan*
**Climate Migrants: the Case of "Catacomb Culture"** 31

*Hasmik Hmayakyan*
**The Goblet of Karashamb in the Context of Hattian-Hittite Realities** 47

*Aram Kosyan*
**Migrations and the Fall of Mycenaean Civilization** 56

*Nzhdeh Yeranyan*
**Climate Changes and the Internal Movements of Population in the Armenian Highlands in the 2$^{nd}$–1$^{st}$ Millennia BC: the Adaptation of Mountainous Zones** 69

*Ruslan Tsakanyan*
**The Migration of the Haykides (Attempt of Reconstruction)** 74

*Artur Melikyan*
**The Migration of the Dahai in the 5$^{th}$–3$^{rd}$ Centuries BC** 84

*Artak Dabaghyan, Artur Petrosyan*
**A Small Addendum to the Second Part of the "Deportations" Entry in "Encyclopaedia Iranica" with Emphasis on the Armenian Sources** 98

*Hamazasp Abrahamyan*
**The Migration of Persian Armenians and the Earthen Heritage of the Ararat Valley in the 19$^{th}$–20$^{th}$ Centuries** 106

# ՀԱՅՈՑ ԱԶԳԱԾԱԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՎԵՐՋԻՆ ՀՆԱԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

*Արմեն Պետրոսյան, Արամ Պալյան*

**Բանալի բառեր**. հնագենետիկա, հնդեվրոպական նախահայրենիք, հնդեվրոպական լեզվաբանություն, Հայաստանի վաղ հնագիտություն, Հայաստանի նախապատմություն, վաղնջահայերեն, վաղնջահայեր, հայ ժողովրդի ձևավորում:

**Ամփոփում**. Հոդվածում ներկայացվում են հնագենետիկական նորագույն տվյալներ, որոնց հիման վրա, լեզվաբանական և հնագիտական փաստերի համադրմամբ, քննվում է Հայաստանի նախապատմության և վաղ պատմության ամենակարևոր խնդիրը՝ հայ ժողովրդի ծագման և ձևավորման ընթացքը: Ըստ այդ տվյալների, հնագույն հնդխեթական կամ հնդանատոլիական հանրույթի նախահայրենիքը տեղայնացվում է Հայկական լեռնաշխարհում և մերձակայքում: Այդտեղից նրանց մի մասը Կովկասի վրայով անցել է հյուսիս և հաստատվել արևելաեվրոպական տափաստանային և անտառատափաստանային գոտում՝ Վոլգայից մինչև Դնեստր: Այնտեղ, բնակչության մեջ Ք. ա. 5-հազարամյակից ի հայտ է գալիս զգալի գենետիկական ներդրում Կովկասից հարավ ընկած տարածքներից: Իսկ Ք. ա. 4–3-րդ հազարամյակներում (Յամնայա մշակույթ) հարավային ծագում ուներ մարդկանց գենոֆոնդի կեսը: Այդտեղ է ձևավորվել բուն հնդեվրոպական նախահայրենիքը, և այստեղից են սկզբնավորվել ներկայումս խոսվող բոլոր հնդեվրոպական լեզուները (Փոքր Ասիայի անատոլիական լեզուներն անհետացել են ավելի քան երկու հազարամյակ առաջ):

Հնագենետիկական տվյալները հիմնավորապես ապացուցում են արևելաեվրոպական տափաստաններից Կովկասյան լեռների վրայով մարդկանց հետադարձ ներգաղթը Հարավային Կովկաս և Հայկական լեռնաշխարհ Ք. ա. 3-րդ հազարամյակի կեսերից: Նրանք և նրանց ժառանգներն են ստեղծել տեղի միջին և ուշ բրոնզի դարի Վաղ կուրգանների, Թռեղք-վանաձորյան, Սևան-արցախյան, Կարմիրվանքյան, Կարմիրբերդյան և Լճաշեն-մեծամորյան մշակույթները: Նույնիսկ մինչև Ուրարտուի անկումը ՀՀ տարածքների տեղական բնակչության մեջ տափաստանային հայրագիծ գենոֆոնդը կազմել է 75%: Հայերենը եղել է այդ մշակույթները ստեղծողների լեզուն, և գենետիկական տվյալներն առավել հավանական են դարձնում հայոց ազգածագման էթիունյան վարկածը: Ներկայիս հայության գենոֆոնդը թեև նման է արդեն նեոլիթյան շրջանում այստեղ ապրած երկրագործների ունեցածին, բայց և առկա է տափաստանային նախահայրենիքից ժառանգած նշանակալի հայրագիծ ներդրում՝ շուրջ 30%:

## Լեզու և նախապատմություն

### *Վաղնջահայերեն և վաղնջահայեր*

Գիտության մեջ էթնիկական խումբ հասկացության տակ հիմնականում նկատի են ունենում մարդկանց այն որոշակի խումբը, որը նույնացնում է իրեն որպես միասնական հանրույթ ընդհանուր ժառանգորդությամբ և որոշ մշակութային բնութագրերով: Որպես ընդհանուր հատկանիշներ հիշվում են միասնական ծագումը, միանման ֆիզիկական տեսքը, ընդհանուր լեզուն, ընդհանուր ցեղանունը, պատմությունը, մշակույթը, կրոնը, բնակության տարածքը[1]: Հայ ժողովրդի նախապատմության մենագրության մեջ Իգոր Դյակոնովն առանձնացնում էր ժողովուրդների ժառանգորդության երեք հայեցակետ՝ կենսաբանական, մշակութային և լեզվական: Ընդ որում, ակնհայտ է, որ հայ ժողովուրդը Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների կենսաբանական և մշակութային ժառանգորդն է և ուրեմն վիճելի և խնդրահարույց է մնում հիմնականում հայերի լեզվական նախնիների նույնացման հարցը[2]: Սա է հենց հին

1 Պետրոսյան 2017: 10 (գրականությամբ):

2 Дьяконов 1968: 7–10, 211.

ժողովուրդների ծագման խնդրի առավել կարևոր և դժվար լուծելի ասպեկտը[3]:

Հիրավի, հին ժողովուրդների ձևավորման խնդրում միշտ առաջնային է լեզվական ժառանգորդության հարցը: Մենք չենք կարող, ասենք, Ֆրանսիայի, Իսպանիայի, Ռուսաստանի, Հունաստանի և շատ այլ տարածքների հին բնակիչներին կոչել ֆրանսիացի, իսպանացի, ռուս, հույն և այլ նոր ցեղանուններով, քանի որ նրանք խոսել են այլ լեզուներով: Հենց լեզուն է եղել ժողովուրդների տարբերակիչ առաջնային հատկանիշը, և խոսելով հայ ժողովրդի ծագման և ձևավորման մասին, պետք է սկսել հայերենի հնագույն տարբերակներով խոսող մարդկանց նույնացման խնդրից: Ստորև օգտագործում ենք Գ. Ջահուկյանի առաջարկած վաղնջահայերեն տերմինը, որով բնորոշվում է հայերենի՝ հնդեվրոպական հանրույթից առանձնանալուն հաջորդած ինքնուրույն գոյության սկզբնական շրջանը (համապատասխան ռուս. протоармянский, անգլ. Proto-Armenian տերմիններին)[4]: Իսկ այդ լեզվի կրողները համապատասխանաբար կկոչվեն վաղնջահայեր (ռուս. протоармяне, անգլ. Proto-Armenians):

### ***Հնդեվրոպական նախահայրենիքը և միգրացիաները***

Հայերենը հնդեվրոպական լեզու է՝ ազգակից արդեն հնում Հնդկաստանից մինչև Արևմտյան Եվրոպա տարածված բազմաթիվ լեզուների (անատոլիական, թոխարական, հնդիրանական, իտալյան, կելտական, գերմանական, սլավոնական, բալթյան, հունարեն, ալբաներեն և այլն): Այդ լեզուների նախնին՝ հնդեվրոպական մայր լեզուն կամ «նախալեզուն», պիտի խոսվելիս լիներ նախապատմական ժամանակներում, ինչ-որ սահմանափակ մի տարածքում՝ «նախահայրենիքում»: Այդ տարածքը տեղայնացնելու լուծումները փնտրվել են առասպելաբանական, լեզվաբանական, մարդաբանական, հնագիտական և գենետիկական տվյալների հիման վրա: Ամենից երկար ժամանակ առավել հավանական է համարվել նախահայրենիքի տեղայնացումը Սև և Կասպից ծովերի միջև, վոլգյան և մերձսևծովյան տափաստաններում, ժամանակակակից Ռուսաստանի և Ուկրաինայի տարածքներում: Այսպես՝ Յ. Տիշլերը բերում է 1851–1992 թթ. տարբեր գիտնականների կողմից առաջ քաշված հիսուն տեղայնացումներ, որոնցից ամենահաճախ հանդիպողը հարավային Ռուսաստանն է[5]: Կարծում էին, որ այդտեղից նրանք տեղաշարժվել են՝ անցել իրենց հետագա բնակության տարածքները՝ Հնդկաստանից մինչև Արևմտյան Եվրոպա: Նրանց մշտական ճնշման տակ նվաճված տարածքներում ձևավորվել են հայրագիծ և հայրիշխանական հասարակություններ, որոնք հանգուցյալներին թաղում էին կուրգան-դամբանաբլուրներում և պաշտում արևային ու ռազմական արական աստվածություններին: Հնդեվրոպական ներգաղթողները կազմել են նոր ստեղծվող հասարակությունների իշխող վերնախավը: Նրանց ազդեցությամբ տեղի հին բնակչությունը վերափոխվել է և ընդունել նոր իշխողների լեզուն, դիցաբանությունը և հասարակության կառույցը[6]:

Զուգահեռաբար շրջանառվում էին մի քանի այլ վարկածներ, սակայն, անկախ բուն նախահայրենիքի տեղայնացումից, Պոնտոս-կասպյան շրջանները հաճախ ընդունվել են որպես «երկրորդային նախահայրենիք»: Մեր նյութի համար անհրաժեշտ է հիշել հնդեվրոպական նախահայրենիքի տեղայնացման ևս երկու վարկած (թեև դրանցով, իհարկե, եղած վարկածների թիվը չի սահմանափակվում): 1970-ականների սկզբներին խորհրդային լեզվաբաններ Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը առաջ են քաշում հնդեվրոպացիների՝ Հայկական լեռնաշխարհից և Հյուսիսային Միջագետքի ու Սիրիայի հարակից տարածքներից, իսկ բրիտանացի հնագետ Ք. Ռենֆրյուն՝ հարավ-կենտրոնական Փոքր Ասիայից ծագելու գաղափարները, որոնք 1980-ականներին ներկայացվում են մենագրություններով[7]: Այս երկու վարկածների համաձայն՝ հարավռուսական տափաստանները եղել են հնդեվրոպական «երկրորդային» հայրենիք, որտեղից իրենց պատմական հայրենիքներն են տեղաշարժվել հնդեվրոպական լեզուների նշանակալի մասը[8]:

Հնդեվրոպական ժողովուրդների բաժանումը իրարից եղել է բարդ և ակնհայտորեն՝ ոչ համա-

---

[3] Պետրոսյան 2017: 18–20:
[4] Ջահուկյան 1987: 25:
[5] Tischler 2002: 477–478.
[6] Տե՛ս Gimbutas 1965; Mallory 1989; Anthony 2007: 7, 83–84; Պետրոսյան 2017: 134–142:
[7] Гамкрелидзе, Иванов 1984; Renfrew 1987.
[8] Այստեղ արժե նշել, որ չնայած Գամկրելիձե-Իվանովի վարկածի՝ մեզանում գտած զգացմունքային վերաբերմունքին, այն երբեք լայն ընդունելություն չի ունեցել հարցին իրազեկ քիչ թե շատ նշանավոր գիտնականների շրջանում, հատկապես Արևմուտքում, տե՛ս Պետրոսյան 2017: 139–140:




*Նկար 1. Յամնայա և Կատակոմբյան մշակույթները. առաջինը նշված է կարմիր շեղ գծերով, իսկ նրան հաջորդող Կատակոմբյանը՝ դեղինով (Ochir-Goryaeva 2021: 4)*

ժամակյա մի գործընթաց: Այսպես, երբ հայտնաբերվեցին խեթական արձանագրությունները, շուտով դրանք սկսեցին կարդալ և հասկանալ: Պարզվեց, որ խեթերենը հնդեվրոպական լեզու է, սակայն շատ հեռու մյուսներից: Ըստ Է.Հ.Ստըրտևանտի, խեթերենն ու մյուս անատոլիական լեզուների (խեթերեն, լուվիերեն, լիդիերեն, լիկիերեն, կարիերեն ևն) նախնի լեզուն անջատվել են հնդեվրոպական վաղնջական՝ այսպես կոչված «հնդխեթական» կամ «հնդանատոլիական» մայր լեզվից նշանակալիորեն ավելի վաղ, քան մյուսները[9]: Այնպես որ խեթերենը կարելի է բնութագրել ոչ թե որպես հնդեվրոպական «քույր լեզու», ինչպես մյուսները, այլ «մորաքույր լեզու»: Անատոլիական լեզուներից հետո մայր լեզվից անջատվել են թոխարական լեզուները, ապա մյուսները:

Վերջին տարիների հնագենետիկական ուսումնասիրությունները, որոնք իսկական հեղափոխություն մտցրեցին գիտության մեջ, վերջնականապես հաստատեցին այս տեսակետները: Արդեն վստահաբար կարելի է պնդել, որ Եվրոպայի և Ասիայի ներկայիս հնդեվրոպական լեզուները այդ տարածքներն են տարվել Պոնտոս-կասպյան տափաստանային նախահայրենիքից[10]: Իսկ 2022 թ. հրատարակված մի քանի կարևոր հոդվածներ նշանակալի լույս են սփռում նաև հայոց ազգածագման և հարակից խնդիրների վրա[11]: Ըստ այդ տվյալների, հնդխեթական նախալեզվի կրողները բնակվել են Հայկական լեռնաշխարհում, Հարավային Կովկասում և մերձակա շրջաններում: Այստեղից նրանց մի մասը Ք.ա. 5-րդ հազարամյակի սկզբից Կովկասի վրայով անցել են Հարավային Ռուսաստանի տափաստանային տարածքներ, մյուսը արևմուտք՝ Փոքր Ասիա: Տափաստան անցած հնդխեթական հատվածը որոշակի լեզվական զարգացում է ապրել և խառնվել տեղացիների հետ: Ձևավորվել է բուն հնդեվրոպական նախալեզուն՝ ներկայիս բոլոր կենդանի հնդեվրոպական լեզուների մայր լեզուն: Այստեղից են տարբեր ուղղություններով դեպի իրենց հետագա հայրենիքները գաղթել այդ ժողովուրդների լեզվական նախնիները: Մի մասը նրանցից անցել է Եվրոպա, երկրորդը՝ Միջին Ասիա, այնտեղից՝ Իրան և Հնդկաստան, իսկ երրորդը, նորից Կովկասի վրայով, Անդրկովկաս: «Տափաստանային» գենետիկայի կրողներն այստեղ հայտնվում են Ք.ա. 3-րդ հա-

9 Sturtevant 1926; նույնի՝ 1962.

10 Allentoft *et al.* 2015; Haak *et al.* 2015; Jones *et al.* 2015; Lazaridis *et al.* 2016.

11 Lazaridis *et al.* 2022a; նույնի՝ 2022b; նույնի՝ 2022c.

զարամյակի կեսերից, իսկ նրանց ստեղծած միջինբրոնզեդարյան հնագիտական մշակույթները տարածվում են լեռնաշխարհի հյուսիսարևելյան տարածքներից մինչև Ուրմիա և Վան լճերի ավազանը, Մուշի և Կարինի շրջանները (Նկար 2)[12]:

Հարավային Կովկասից և Հայկական լեռնաշխարհից Փոքր Ասիա անցած հնդանատոլիացիների ժառանգներն են հինանատոլիական ժողովուրդները (խեթեր, լուվիացիներ, լիդիացիներ ևն)[13]: Այդտեղ, թեև արդեն Ք. ա. 2-րդ հազարամյակի սկզբներից հանդես են գալիս խեթերեն անվանաբանության հետքեր, ապա և խեթերեն ու լուվիերեն գրավոր աղբյուրներ, տափաստանային գենետիկայի կրողներ չեն հանդիպում մինչև Ք. ա. 2-րդ հազարամյակի վերջը, այսինքն՝ խեթերի և մյուս հին անատոլիական ժողովուրդների լեզվական նախնիները չեն եկել տափաստանային նախահայրենիքի տարածքներից, այլ եղել են Հայկական լեռնաշխարհի, Փոքր Ասիայի և հարակից տարածքների հին բնակիչները[14]:

### *Հայկական լեռնաշխարհը Ք. ա. 4–2-րդ հազարամյակներում*

Էնեոլիթից հետո՝ Ք. ա. 4-րդ հազարամյակի կեսերից մինչև 3-րդ հազարամյակի կեսերը, մեր լեռնաշխարհում և հարակից շրջաններում ծաղկում է վաղբրոնզեդարյան կուր-արաքսյան մշակույթը: Նրա բնորոշ հատկանիշներն են վառ արտահայտված սոցիալական շերտավորման բացակայությունը և խաղաղ, երկրագործական կացութաձևը բնակավայրերում: Ք. ա. 3-րդ հազարամյակի կեսերից սկզբում կուր-արաքսյան միջագետքի հյուսիսային տարածքներում, ապա և Հայաստանում, սկսում են ի հայտ գալ նոր իրողություններ՝ նոր, երբեմն ռազմաշունչ գաղափարախոսությամբ մարդկանց ներհոսք, սոցիալական վառ արտահայտված շերտավորում, առաջնորդների ճոխ թաղումներ (այսպես կոչված՝ Մարտկոփ-Բեդենի և վաղ թռեղքյան մշակույթներ): Անհետանում է ողջ հին մշակույթը, վերանում են բնակավայրերը, ի հայտ են գալիս նոր, նախորդից բացարձակապես տարբեր միջինբրոնզեդարյան մշակույթներ, և երկար դարեր լեռնաշխարհում տիրապետող է դառնում (կիսա)քոչվորական կենցաղը: Այս ներգաղթողները շատ առումներով համապատասխանում են հնդեվրոպացիների վերաբերյալ հայտնի պատկերացումներին: Ընդ որում՝ որոշ փաստեր ակնարկում են ներգաղթողների սկզբնական տարածքը՝ հնդեվրոպացիների կուրգանային/տափաստանային նախահայրենիքը[15]:

Լեռնաշխարհի մի նշանակալի մասը, օրինակ, Արաքսի հովիտը և մերձակայքը, կլիմայական նշանակալի փոփոխության պատճառով Ք. ա. 3-րդ հազարմյակի կեսերին դատարկվել էր բնակչությունից, որը հեռացել էր բնակության համար ավելի պիտանի վայրեր, օրինակ՝ Մալաթիայի շրջանը, որտեղ ի հայտ է գալիս կուր-արաքսյան մշակույթի մի նոր, նշանակալի օջախ[16]: Ներգաղթյալները, իհարկե, ժամանակի ընթացքում խառնվել են լեռնաշխարհի հին բնակչության հետ, բայց հայրագծային գենոֆոնդով նշանակալիորեն պահպանելով տափաստանային ժառանգությունը[17] (այսպես, ՀՀ տարածքի բնակչության մեջ ուշ բրոնզի դարից մինչև Ուրարտուի անկումը տափաստանային Y քրոմոսոմային R1b1 և I2 հապլոխմբերը[18] կազմել են ընդհանուրի երեք քառոր-

---

[12] Lazaridis 2022a; տե՛ս և Ավետիսյան 2014: 49:

[13] Lazaridis *et al.* 2022a.

[14] Damgaard 2018a; Lazaridis *et al.* 2022a: 11–12. Այս վերջին դրույթը վիճարկվում է: Բանն այն է, որ հնդեվրոպական լեզուներն ազգակից են ուրալյան (ֆիննաուգրական և սամոդիական) լեզուներին, և նրանց ընդհանուր նախահայրենիքը կարող էր լինել ինչ-որ տեղ հնդեվրոպական տափաստանային նախահայրենիքի արևելքում, ոչ հեռու Ուրալից: Ըստ այդմ, հինանատոլիական ժողովուրդների նախնիները Փոքր Ասիա կարող էին անցնել տափաստանային նախահայրենիքից Բալկաններով, ինչպես կարծել են առաջ, տե՛ս Kloekhorst 2023: Այս հեղինակը տափաստանային գենոֆոնդի բացակայությունը հին Փոքր Ասիայում բացատրում է ուսումնասիրված նմուշների փոքր քանակով, ապա՝ որպես կարևորագույն փաստարկ նշում, որ Կովկասում հինանատոլիացիների հետքեր չեն հայտնաբերվում: Մինչդեռ, ինչպես կտեսնենք, այդ հետքերը կան, և հինանատոլիացիների ներգաղթն արևմուտքից թվում է քիչ հավանական:

[15] Ավետիսյան 2014: 44; Պետրոսյան 2014; նույնի՝ 2017: 141–142:

[16] Grekyan 2023: 150:

[17] Ակնհայտ է, որ մարդկանց՝ նորանոր տարածքների նվաճման և յուրացման ժամանակ էական դեր են կատարել տղամարդիկ: Մասնավորապես, հնդեվրոպական զաղթերի դեպքում պատանեկան ռազմական եղբայրություններն են, որ առաջինն են նվաճել և բնակեցրել նոր տարածքները, ապա՝ խառնվելով տեղական կանանց հետ սերունդներ թողել և տարածել նրանց մեջ իրենց լեզուն (տե՛ս, հատկապես, Sergeant 2003; այդ երևույթի արտացոլումները հայ ավանդույթում՝ Պետրոսյան 2020: 84):

[18] Y-ը երկու սեռական քրոմոսոմներից մեկն է, որը պայմանավորում է մարդու արական սեռը: Այն կարևոր դեր է կատարում հնագենետիկայում, քանի որ, ի տարբերություն մյուսների, փոխանցվում է միայն հորից որդուն և այսպիսով ապահովում երկարատև հայրագիծ ժառանգորդությունը: Ըստ այդմ, հնդեվրոպական լեզվի առաջին կրողների Y քրոմոսոմային գեները երկար պահպանվում են տղամարդկանց մոտ: Այդ քրոմոսոմի՝ մեկ ընդհանուր նախահորից միասնաբար ժառանգվող




*Նկար 2. Միջին բրոնզի դարը (2200–1500 Ք.ա.) Հայկական լեռնաշխարհում և հարակից շրջաններում: Սպիտակ գծով նշված է Թռեղք-վանաձորյան մշակույթը, կարմիրով՝ Կարմիրվանքյանը, բաց կապույտով՝ Սևան-արցախյանը, դեղինով՝ Կարմիրբերդյանը (Biscione 2019: 77):*

ղը, տե՛ս Նկար 4 և 5): Այս մարդիկ և նրանց ժառանգներն են, որ ստեղծել են Հայկական լեռնաշխարհի միջին և ուշ բրոնզի, ապա և՝ վաղ երկաթի դարերի հնագիտական մշակույթները (Վաղ կուրգանային, Թռեղք-վանաձորյան, Սևան-արցախյան, Կարմիրբերդյան, Կարմիրվանքյան և Լճաշեն-մեծամորյան): Այս մարդիկ են, որ պիտի լինեին վաղնջահայերենի կրողները՝ ձևավորվող հայ ժողովրդի լեզվական նախնիները:

Կարծում են, որ միջինբրոնզեդարյան Սևան-արցախյան և Կարմիրբերդյան մշակույթները ծագում են համապատասխանաբար Թռեղք-վանաձորյան և Կարմիրվանքյան մշակույթներից: Ընդ որում, այդ մշակույթները տարբերվում են միմյանցից ոչ միայն առանձնահատկություններով, այլև՝ նախնական տեղայնացմամբ: Այսպես, Թռեղք-վանաձորյանի նախնական տարածքները գտնվում են ներկայիս ՀՀ և հարևան տարածքներում, իսկ Կարմիրբերդյանինը՝ Վան և Ուրմիա լճերի շրջանում: Տարբեր է և նրանց թաղման ծեսը՝ Թռեղք-վանաձորյանում կիրառվել է դիակիզումը, իսկ Կարմիրվանքյանում՝ ոչ: Դա կրոնական տարբերության ակնհայտ ցուցիչ է, իսկ կրոնական տարբերությունը վկայում է նաև լեզվական որոշակի տարբերության մասին: Ինչևէ, արդեն միջին բրոնզի առաջին շրջանից հետո տեղի է ունենում մշակույթների որոշակի համահարթեցում: Նկատվում են մշակույթի զգալի փոփոխություններ՝ բնակավայրերի քանակական ու որակական աճ և անցում նստակյաց կյանքի: Ձևավորվում է ուշբրոնզեդարյան և երկաթեդարյան միասնական Լճաշեն-մեծամորյան մշակույթը:

### Լեռնաշխարհի խեթալեզու բնակիչները

Ուրարտական դիցարանի երրորդ՝ արևի աստծու անունն էր Šiwini, որն ըստ Ի. Դյակոնովի և Վ. Իվանովի պիտի փոխառված լիներ խեթերենին մոտ մի լեզվից, հմմտ. խեթ.՝ šiu- (šiuni-, šiuna-)՝ «աստված», հնում՝ «արևի աստված», šiuatt-՝ «ցերեկ» < *dyeu-՝ լուսավոր երկնքի աստծու հնդեվրոպական անունից: Շիվինիի պաշտամունքի կենտրոնն էր երկրի մայրաքաղաք Վան-Տուշպան: Այս հիման վրա Վ. Իվանովը կարծիք է

գեների բնորոշ խմբերը՝ հապլոխմբերը, նշանակվում են լատինական տառերի և թվերի կոմբինացիաներով և հանդես են գալիս որպես պոպուլյացիաների կարևոր գենետիկական ցուցիչներ:

հայտնել, որ Վանի շրջանը եղել է խեթական ցեղերի այն հին բնօրրանը, որտեղից նրանք հետագայում տեղաշարժվել են արևմուտք[19]:

Հայկական անվանաբանության մեջ Šiwini անվան հետ համադրելի են սիւ-/սեւ- հիմքով տեղանունները (ասորեստանյան և նրանից փոխառված խեթական, խուռիական և ուրարտական սեպագրում š-ով հաղորդվել է s հնչյունը, իսկ հայերենում եւ և իւ երկբարբառները հերթագայում են): Սրանցից առաջին հերթին նշենք Սևան անունով գետը և ամրոցը Վանից արևելք: Դրանցից շատ ավելի հանրահայտ է Սևանա, հին անունով՝ Գեղամա լիճը (սկզբնապես Սևան է կոչվել լճի կղզին և նրա վրայի ամրոցը, և հետո է միայն այդ անվանումն անցել լճին): Գեղամա/Սևանա լիճը գտնվում էր Սյունիք, հնում՝ Սիւնիք/Սեւնիք նահանգում, որի անունն անբաժանելի է թվում Սևանից (այս ձևի համար հմմտ. խեթ. šiuanni «աստվածային» բառը): Սյունիքը հայ. արև/արեգ արմատով անվանումների առավել խիտ կենտրոնացման շրջանն է, հմմտ. օրինակ Արևիք, Արևեաց տուն, Արևիս, Արեգունի, Արևաբույ, Արևիկ տեղանունները (սրանցից առաջին երեքը ցեղանվան տեսք ունեն՝ «արևյաններ»): Սյունյաց տոհմում Արև անձնանունը հայտնի է հինգերորդ դարից. նույնարմատ անձնանունների մեծ մասը (Արևիկ, Արևհատ ևն) ևս Սյունիքից է: Ըստ այդմ կարելի է կարծել, որ Սիւնիք < *Siw(i)niyā տեղանունը կապված է խեթերեն «արև, արևի աստված» բառի հետ[20]:

Ուրարտական տեքստերում իրենց երկիրը կոչվում է Biainili: Բիաինիլին ներկայացրել է երկրի մայրաքաղաքի՝ Վան-Տուշպայի շրջանը, որը հակադրվում է թշնամական երկրներին: Ուրարտագիտության մեջ ընդունված է, որ Biainili-ի Biaina/Biana հոլովաձևից է ծագում Տուշպայի հետագա Վան, սեռ. Վանայ անվանումը (ուրարտ. սեպագիր b-ին հայերենում երբեմն համապատասխանում է վ/ւ-ն)[21]: Բիաինիլին կազմված է Biai հիմքից, -ni ածանցից և -li հոգնակերտից («Biai-ական-ք»): Ըստ այդմ, biai-ը կարող է դիտվել որպես ցեղանուն (հավանաբար՝ væy հնչմամբ): Ըստ Գ. Ղափանցյանի, Բիայնիլի-Վանի հիմքի հետ է կապված Սյունիքի Վայոց ձոր գավառանունը[22]: Այսպիսով, Սյունիքում, ինչպես և Վանա լճի արևելքում, սիւ/սեւ և վայ տարրերով կազմված տեղանունները հանդես են գալիս կողք-կողքի: Ընդ որում, պետք է կարծել, որ Վայոց ձորի առաջին մասը ինչ-որ *վայ ցեղանվան հոգնակի սեռական հոլովաձևն է, հմմտ. Հայոց ձոր գավառի, ինչպես և Տայք (սեռ. Տայոց) նահանգի անվանումները: Այսինքն, հայերենում օտարալեզու væy ցեղանունը, հնդեվրոպական *-i(y)o- ածանցի հավելումով ստացել է *վայո ձևը, որը, վերջնավանկի անկումից հետո դարձել է վայ, իսկ վերջին -o-ն պահպանվել է հոգնակի սեռականում: Վայոց ձորը սահմանակից էր Արցախի Վայկունիք գավառին, որը ևս պետք է կապվի նույն ցեղանվան հետ: Հայերենին բնորոշ է ցեղանուններին -իկ ածանցի հավելումը՝ հմմտ. օրինակ հնդիկ, պարսիկ, խուժիկ, ռուզիկ ձևերը (կա նաև միջնադարյան խայիկ «հայ» ձևը): Վայիկը, -ունի ածանցով, ի-ի կանոնավոր սղմամբ և -ք հոգնակերտի հավելմամբ դարձել է Վայկունիք:

Նախապատմական դարաշրջանում հնագիտական տվյալներով արևմուտքից Վանի շրջան մարդկանց և մշակույթի ներթափանցում չի արձանագրվում: Չնայած դրան, ուրարտական հագուստի և զենքերի հնագույն ձևերը մոտ էին խեթականներին[23]: Հաշվի առնելով, որ Խեթական տերությունը կործանվել է Ուրարտուի կազմավորումից շուրջ երեքուկես դար առաջ, այսինքն՝ նրա ուղղակի ազդեցությունն ուրարտականի վրա ամեն դեպքում բացառվում է, կարելի է կարծել, որ դա հին՝ էթնիկ ընդհանրության արձագանք է:

Հայկական լեռնաշխարհում կարելի է գտնել նաև այլ տեղանուններ, որոնք բացահայտ խեթական տեսք ունեն: Դրանցից առավել ակներևն է հայոց առաջին մայրաքաղաք Արմավիրը, հմմտ. խեթ. Arma – «լուսին, լուսնաստված» և pir «տուն», որը կարող է նշանակել նաև «տաճար, բնակավայր, շրջան», p > w կանոնավոր զարգացմամբ[24]: Լուսնաստվածը հայոց հին ավանդույթում հիշվում է միայն Արմավիրի առնչությամբ, երբ լեգենդար արքա Վաղարշակը մեհյան է շինում նվիրված իր նախնիներին, արևին ու լուսնին, այսինքն՝ արևի և լուսնի աստվածներին (Խորենացի Բ.ժը, ժդ): Այսպիսով, հավանական է, որ խեթերի հնագույն հայրենիքը եղել է Հայկական լեռնաշխարհում (և մեր-

19 Diakonoff 1971: 81; Иванов 1980: 131, 136; Гамкрелидзе, Иванов 1984: 897; Дьяконов 1988: 172.

20 Petrosyan 2009: 63–72; Պետրոսյան 2010: 65–77:

21 Ջահուկյան 1987: 430:

22 Капанцян 1975: 129–130.

23 Пиотровский 1962: 29:

24 Պետրոսյան 2010; Պետրասյան, Տիրացյան 2012:

ձակայքում), ինչպես կարծում էր Վ. Իվանովը: Լազարիդիսը և համահեղինակները հնդեվրոպական նախահայրենիքի տեղայնացումների համար հղում են Գամկրելիձեի և Իվանովի, Ռենֆրյուի և Գրիգորևի աշխատանքները (վերջինը ևս այն տեղայնացնում է Հայկական լեռնաշխարհում)[25]: Ի միջի այլոց մոտավորապես նույնը գտնում ենք Դ. Ռայխի[26] և Ա. Կոզինցևի մոտ[27]:

### *Վաղնջահայերի ծագման վարկածները*

Հայագիտության համար կարևոր է հայերենի՝ հնդեվրոպական լեզուների շարքում ունեցած տեղի, մայր լեզվից նրա բաժանման և Հայկական լեռնաշխարհում գտնվելու ժամանակագրության հարցը: Բավական ընդունված է ենթադրել, որ հնդեվրոպական միասնության դարաշրջանից հետո եղել է հունա-հայ-հնդիրանական միասնության մի փուլ, երբ այդ լեզուների նախորդը, բաժանվելով հնդեվրոպական մայր լեզվից, որոշ ժամանակ զարգացել է առանձին: Հետագայում նրանից առանձնացել են հնդիրանական, հայկական և հունական ճյուղերը, ընդ որում, հայերենն ավելի մոտիկ է համարվել հունարենին[28]: Ըստ Գ. Ջահուկյանի և որոշ այլ հեղինակների, հայերենի՝ որպես առանձին լեզվի սկզբնավորումը սկսվել է Ք. ա. 3-րդ հազարամյակի սկզբից[29]: Կան նաև այլ տեսակետներ. հայերենի և հունարենի առավել մերձավոր ազգակցությունը վիճարկվում է, հնդիրանականները միավորվում են այլ խմբի մեջ և այլն[30]: Չնայած այդ առթիվ եղած տարակարծություններին, դրանք չեն փոխում և չեն կարող փոխել ընդհանուր եզրակացությունը՝ հայերենը, որպես հնդեվրոպական քույր լեզու, առավել մերձավոր է հունարենին, հնդիրանական, ապա՝ բալթիկ-սլավոնական և մյուս հնդեվրոպական լեզուներին, շատ հեռու անատոլիական լեզուներից և ըստ գենետիկական տվյալների ևս կարող էր ձևավորվել միայն հնդեվրոպացիների տափաստանային նախահայրենիքում:

Տափաստանային գենետիկայի կրողների Կովկասից հարավ հասնելուց հետո, Ք. ա. 3-րդ և 2-րդ հազարամյակներից, Հայկական լեռնաշխարհի հատկապես արևելյան, կենտրոնական և հյուսիսային շրջանները դառնում են նրանց կուտակման կենտրոն: Սկսած Ուրարտուի դարաշրջանից այդ պատկերը սկսում է փոխվել, լեռնաշխարհի հյուսիսարևելյան և հարավարևմտյան շրջանների բնակչության գենոֆոնդը նշանակալիորեն համահարթվում է, միջինում՝ տափաստանային հապլոխմբերի հայրագիծ 30% ժառանգությամբ (Նկ. 6):

Երկար ժամանակ գիտության մեջ վաղնջահայերին արևմտյան՝ բալկանյան ծագում է վերագրվել, ըստ հին հունական որոշ աղբյուրների, որոնց համաձայն հայերը Հայաստան են անցել փոքրասիական Փռյուգիա երկրից (Մարկվարտ, Աճառյան, Մանանդյան, Դյակոնով և այլք)[31]: Սակայն, ներկայումս այդ մոտեցումը անընդունելի է. նախ, պարզվել է, որ փռյուգերենը շատ մոտ է հունարենին և հեռու հայերենից (հունարենն ու փռյուգերենը ծագում են հավանաբար Ք. ա. 3-րդ հազարամյակի վերջին Բալկաններում խոսված մի նախնի լեզվից)[32]: Ինչպես ասվեց, տափաստանային գենետիկայի հետքեր Փոքր Ասիայում չկան մինչև Ք. ա. 2-րդ հազարամյակի վերջ, և նույնիսկ Փռյուգիայի մայրաքաղաք Գորդիոնում չորս հնդեվրոպական ժողովուրդների՝ խեթերի, փռյուգացիների, պարսիկների և հույների տիրապետության տակ գտնվելուց հետո, եվրոպական ծագման գեների կրողները չափազանց փոքր թիվ են կազմել[33]: Իհարկե, Ք. ա. 2-րդ հազարամյակի վերջից Հայկական լեռնաշխարհում և մերձակայքում ի հայտ են գալիս բալկանյան լեզուների հետքեր[34], բայց հին բալկանյան ժողովուրդների մեջ տափաստանային գենետիկայի մասնաբաժինը շատ ավելի փոքր է քան հայոց մոտ: Եթե մի պահ ենթադրենք, որ անկախ ամեն ինչից, հնագույն հայերենի կրողները Հայկական լեռնաշխարհ են անցել Բալկաններից և Փռյուգիայից, ապա հարց է առաջանում, ովքե՞ր են եղել երկրի նախորդ դարաշրջանի բնակիչները, որոնց մեջ արդեն ավելի քան հազար տարի առկա է եղել նշանակալի

[25] Grigoriev 2002.
[26] Reich 2018.
[27] Kozintsev 2019: 352–354:
[28] Martirosyan 2013, հարցի գրականությամբ:
[29] Ջահուկյան 1987: 25: Տե՛ս և Պետրոսյան 2017: 138:
[30] Տե՛ս, օրինակ, Claxson 1994; Kim 2018; Kassian *et al.* 2021.
[31] Տե՛ս Պետրոսյան 2017: 142–150:
[32] Brixhe 2004: 780. Лигорио, Лубоцкий 2013: 181.
[33] Lazaridis *et al.* 2022a: 11.
[34] Պետրոսյան 2017: 109–121:

հնդեվրոպական՝ տափաստանային տարրը, շատ ավելի մեծ քանակով, քան հին բալկանյան ժողովուրդների մեջ: Ոչ հայե՞ր, ինչ-որ մի այլ հնդեվրոպական (ոչ անատոլիական) ցե՞ղ: Դա միանգամայն անհավանական է: Եվ որտե՞ղ են անհետացել նրանք՝ այդ հին տեղական հնդեվրոպացիները:

Ուղղակի ակնհայտ է, որ վաղնջահայերենի կրողները Հայկական լեռնաշխարհ և մերձակա երկրամասեր են անցել հնդեվրոպական հայրենիքից՝ արևելաեվրոպական (անտառա)տափաստանային շրջաններից: Նրանք հաստատվել են հատկապես ներկայիս ՀՀ և մերձակա տարածքներում[35]: Այս երկրամասը ուրարտական աղբյուրներում կոչվել է Էթիունի կամ Էթիուխի: Ըստ մեր վարկածի Էթիունին է եղել հայոց օրրանը, նախնական Հայաստանը, և նրա անվանումը կապված է հայ ցեղանվան *հաթիո- նախատիպի հետ (որը պետք է ծագեր հնդեվրոպական *poti- «տեր» արմատից)[36]: Էթիունիում և մերձակա տարածքներում է կենտրոնացած ուրարտական աղբյուրների հայերենով ստուգաբանվող անվանաբանությունը[37]: Ուրարտուից հետո Էթիունի անվանումն այլևս չի հանդիպում գրավոր աղբյուրներում, իսկ նույն երկրամասը հայկական դարաշրջանում կոչվել է Այրարատ: Ազգածին ավանդության մեջ Այրարատը հանդես է գալիս որպես «հայկական տիեզերքի» կենտրոն: Հայոց ազգածին նախապետները, սկսած Հայկի անդրանիկ որդի Արամանյակից, ապրում և գործում են հիմնականում Արարատյան դաշտում: Այրարատ նահանգը և Արարատյան դաշտը դառնում և մնում են հայոց քաղաքական, պետական, կրոնական, տնտեսական կենտրոնը մինչև մեր օրերը: Այդտեղ են գտնվել հայոց հնագույն մայրաքաղաքների մեծ մասը՝ Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Վաղարշապատ, Դվին, Երևան:

Հայկական լեռնաշխարհի հայացման գործում մեծ պիտի լիներ Վանի արքաների՝ երկրի տարբեր շրջաններում նվաճված երկրամասերից գերեվարված մարդկանց վերաբնակեցնելու քաղաքականությունը: Ըստ Ե. Գրեկյանի հաշվարկների, Ուրարտուի պատմության ընթացքում արքաների գերեվարած մոտավորապես մեկ միլիոն մարդուց 700 հազարը եղել է լեռնաշխարհի ներքին շրջաններից: Ընդ որում՝ լեռնաշխարհի հյուսիսային շրջաններից՝ հիմնականում Էթիունիից են տարվել ամենամեծ քանակությամբ գերիներ՝ շուրջ 300 հազար, գուցեև ավելի: Ակնհայտ է, որ վերաբնակեցված գերիների նշանակալի մասը կազմող էթիունցիներն արդեն Ուրարտուի պատմության վերջին փուլում վերափոխել էին լեռնաշխարհի էթնիկական և լեզվական պատկերը հօգուտ իրենց: Մյուս կողմից, Էթիունին էլ բնակեցվել է լեռնաշխարհի այլ շրջաններից բերված գերիներով, ինչի հետևանքով էթիունցի-հայերը խառնվելով երկրի մյուս շրջանների բնակչության հետ, ձեռք են բերել այն գենոֆոնդը, որը փաստորեն մինչև հիմա շարունակվում է ժամանակակակից հայոց մեջ[38]:

Տեսականորեն կարելի էր պատկերացնել, որ հնագույն հայերենի կրողները ձևավորվել են այլուրեք, Էթիունիից դուրս, լեռնաշխարհի մեկ այլ շրջանում: Առաջին թեկնածուն, ակնհայտորեն, լեռնաշխարհի հյուսիսարևմտյան շրջանն է, ուր Ք. ա. 14–13-րդ դարերում խեթական աղբյուրները հաղորդում են Հայասա-Ացցի երկրի մասին: Հայ ցեղանման հետ նմանության պատճառով մի շարք գիտնականների կողմից այդ երկիրը համարվել է հայոց օրրան (Ն. Մարտիրոսյան, Գ. Ղափանցյան, Բ. Պիոտրովսկի, Գ. Մելիքիշվիլի, Ս. Երեմյան, Թ. Գամկրելիձե, Վ. Իվանով, Գ. Ջահուկյան, Գ. Սարգսյան և այլք)[39]: Այն, որ այնտեղ կարող էին հնագույն հայերենի կրողներ լինել, միանգամայն հնարավոր է: Սակայն, այդ երկրի հայտնի անվանաբանության մեջ հայերենով ստուգաբանելի

---

[35] Կարելի է նաև այլ փաստարկներ բերել այդ միգրացիայի օգտին: Այսպես, մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ խուռաուրարտական ամպրոպի աստված Թեշուբ/Թեյշեբայի անունը, վկայված մ. թ.ա. 3-րդ հազարամյակի վերջերից, ծագում է վաղնջահայերենից (հնդեվրոպական *tek’s- + $h_1$ep- «կացին բռնող», տե՛ս Петросян 2023): Հաշվի առնելով ընտանեցված ձիերի՝ Ք. ա. 3-րդ հազարամյակի վերջին Հայկական լեռնաշխարհում արևելաեվրոպական տափաստաններից բերված լինելու հանգամանքը (Guimaraes 2020), նոր հիմնավորում է ստանում խուռիերեն ešši, iššiya «ձի» բառը վաղնջահայերենից փոխառված լինելու վարկածը (հմմտ. հայ. *էշ*, սեռ. հոլով՝ *իշոյ*, հնդեվրոպական *ek’wo- «ձի» արմատից, որը հետագա հայերենում իմաստափոխվել է որպես «էշ», տե՛ս Petrosyan 2002: 22–26): Եթե այդպես է, ապա Ք. ա. 3-րդ հազարամյակի վերջերին արդեն հայերենը բավական ձևավորված էր որպես ինքնուրույն սատեմային լեզու, համապատասխան դիրքերում *k’s-և *k’w > ŝ անցումներով: Ապա, ազգածին ավանդության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն հնդեվրոպական առասպելաբանության մի տիպիկ օրինակ է, որտեղ ոչ միայն հայ հերոսները, այլև նրանց հակառակորդները խմբավորվում են ըստ Ժ. Դյումեզիլի եռաֆունկցիոնալ տեսության (մի բան, որ բացակայում է խեթալուվիական աշխարհում), տե՛ս Ahyan 1982; Petrosyan 2002; Պետրոսյան 2020:

[36] Պետրոսյան 2017: 181–182:

[37] Պետրոսյան 2017: 189–193:

[38] Պետրոսյան 2017: 185–186; Էթիունիի վերաբերյալ տե՛ս և Գրեկյան 2022:

[39] Պետրոսյան 2017: 165:

մասը փոքր է (մինչդեռ ավելի ակնառու երևում են բալկանյան, անատոլիական, խաթական, արիական և այլ լեզուների հետքեր)[40]: Հայասային հաջորդ դարաշրջանում հաջորդել է ասորեստանյան աղբյուրներում Դայաենի, ուրարտականում՝ Դիաուխի կոչվող երկիրը, որը Ք. ա. 8-րդ դարում նվաճվում է ուրարտական արքաների կողմից և դուրս գալիս պատմության թատերաբեմից որպես ինքնուրույն միավոր[41] (մինչդեռ Էթիունին մնում է և մասնակցում Ուրարտուի կործանմանը): Հայասայի մասին հետաքրքիր նյութ կարող էր տալ հնագենետիկան, սակայն տվյալներ չկան:

Հնագիտական տվյալները հուշում են, որ տափաստանային հնդեվրոպացիները Կասպից ծովի արևմուտքով՝ Դաղստանով և Դերբենդով՝ «Կասպիական դարպասներով» են ներթափանցել Հարավային Կովկաս: Դաղստանի և Հարավային Կովկասի կապերը վաղ բրոնզի դարում շատ սերտ են եղել: Նախ, Դաղստանը եղել է Կուր-արաքսյան մշակույթի տարածման կարևոր շրջաններից մեկը: Դրանից հետո այնտեղ ձևավորվում է տափաստանային Կատակոմբյան մշակույթի մի տեղական շրջան (Պրիսուլակի մշակույթ): Մինչդեռ, Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմուտքը, ինչպես և Վրաստանի ու Փոքր Ասիայի հարևան շրջանները հնում կազմել են առանձին, Հարավային Կովկասից տարբեր մի մշակութային մարզ: Այսինքն, հնդեվրոպացիները Դաղստանից են անցել Հարավային Կովկաս և այսպիսով՝ տարածվել այնտեղ արևելքից արևմուտք ուղղությամբ: Մինչև հիմա էլ տափաստանային գենոֆոնդի ամենաբարձր տոկոսները գրանցվում են Արցախի, Արարատյան դաշտի (բնիկ) և Սյունիքի հայերի մեջ, որը մարում է հյուսիսարևելքից հարավարևմուտք՝ ամենացածր ցուցանիշին հասնելով Սասունի և Կարինի շրջաններում (Նկար 6), իսկ վերջինս Հայասայի մաս է կազմել: Այսպիսով, հայոց հայասական ծագման վարկածը նաև այս տվյալներով չի հաստատվում:

## Հնագենետիկա և հնագիտություն

### *Արևելյան Եվրոպա. նեոլիթ–բրոնզի դար*

Սառցադաշտային դարաշրջանի բարձրակետից հետո Եվրոպան բնակեցվում է նոր մարդկանցով: Արևելյան Եվրոպայի որսորդ-հավաքող բնակչության մեջ ի հայտ են գալիս հիմնականում Y քրոմոսոմային R1 հապլոխմբի ենթաճյուղերը: Բացի դրանցից այնտեղ հայտնվում են I2 հապլոխումբը արևմուտքից, Q-ն արևելքից և ավելի ուշ՝ J-ն հարավից[42]: Նեոլիթի դարաշրջանի մի շարք որսորդական մշակույթներից կան պեղված ԴՆԹ-ներ, որտեղ կովկասյան ծագման գեներ չկան:

Էնեոլիթում, երբ հայտնվում են առաջին անասնապահական մշակույթները, ԴՆԹ նմուշներ կան Խվալինսկի մշակույթից (Վոլգայի ավազան, Ք. ա. 5–4-րդ հազարամյակներ), որտեղ առաջին անգամ ի հայտ է գալիս կովկասյան որսորդ-հավաքողների գենետիկական ներդրումը (միջինը՝ 23%)[43]: Հետագայում այնտեղ ձևավորվում են գենետիկորեն իրար հետ կապված Սրեդնի Ստոգ (Ք. ա. 4500–3500), Յամնայա (Ք.ա. 3300–2700), Պարանային խեցեղենի (Шнуровая керамика, Ք. ա. 3000–2400), ապա՝ Յամնայային զուգահեռ տարածված և հաջորդած Կատակոմբային (Ք. ա. 2800–2200) մշակույթները[44], որոնցից, բացի առաջինից, կա բավական հնագենետիկական նյութ: Նրանց մոտ հիմնականում եղել են R1a, R1b և ավելի քիչ քանակով՝ I2, J և Q հայրական Y քրոմոսոմային հապլոխմբերը: R1b-ն ավելի տարածված էր Յամնայայում ու նրանից ածանցված, իսկ R1a-ն՝ Պարանային խեցեղենից ածանցվող մշակույթներում[45]: Արդի գենետիկական ուսումնասիրություններում Յամնայայի և տափաստանային գեներ հասկացությունները հոմանիշ են:

Յամնայայի գենոֆոնդում հարավային՝ կովկասյան որսորդ-հավաքողների ներդրումը շատ բարձր է՝ մինչև 47%, արևելաեվրոպական որսորդ-հավաքողներինը նույնպես մինչև 47%, մնացածը

40 Պետրոսյան 2015:
41 Պետրոսյան 2017: 77–82:
42 Mathieson 2018.
43 Mathieson 2015; Lazaridis 2022a, Suppl.: 307.
44 Այս մշակույթների անվանումները տրվել են ռուսերեն և սովորաբար չեն թարգմանվում: Սրեդնի Ստոգը աղավաղված ձևն է Սրեդնի ստոլբ «Միջին սյուն» տեղանվան, Պարանային խեցեղենը պարզ հնագիտական անվանում է, Յամնայան («Փոսային») և Կատակոմբյանը կոչվել են ըստ թաղման ձևերի: Լազարիդիսի և համահեղինակների հոդվածներում միշտ շեշտվում է Յամնայա մշակույթի դերը հնդեվրոպացիների տարածման ժամանակ, մինչդեռ, այդ դարաշրջանում տափաստանում իշխում էր նաև Կատակոմբային մշակույթը (Լազարիդիսը ելնում է գենետիկական տվյալներից, ըստ որոնց՝ այդ մշակույթների կրողներին անհնար է տարբերակել՝ Կատակոմբայինը Յամնայայի հաջորդը և ժառանգորդն էր, տե՛ս Wang 2019; Ochir-Goryaeva 2021: 7; Lazaridis 2022a, Suppl.: 302 և ստորև):
45 Haak 2015; Narasihman 2019; Papac 2021.

անատոլիական և լևանտյան երկրագործների գեներն են: Անատոլիա-լևանտյան գեների աղբյուրը Ցամնայայում հարավկովկասյան երկրագործներն էին, որոնց մոտ դրանք առկա էին խառնված կովկասյան որսորդ-հավաքողների գեների հետ (տե՛ս ստորև)[46]: Այսպիսով, Ցամնայայի բնակչության գենոֆոնդը կիսով չափ ուներ տեղական արևելաեվրոպական որսորդների և կիսով չափ՝ Կովկասի հարավից եկած գեներ:

### *Հայկական լեռնաշխարհ. նեոլիթ և էնեոլիթ (Ք.ա. 6200–3600)*

Վերջին ութ տարվա մեջ մեծաքանակ հնագենետիկական նյութ է հավաքվել ներկայիս ՀՀ տարածքից՝ մոտ 200 հին ԴՆԹ նեոլիթյան շրջանից մինչև միջնադար, որոնք քննվել են շուրջ մեկ տասնյակ հոդվածներում[47]: Արևմտյան Հայաստանից տվյալներ կան Վանի ավազանից, Մալաթիայից, Բաթմանից և Կորդվաց լեռներից՝ Ճիրնակից: Իրանից կան նմուշներ Ուրմիայի ավազանից, իսկ Վրաստանից ու Ադրբեջանից տվյալներն ավելի քիչ են:

Կա նեոլիթյան մեկական նմուշ Ակնաշենից, Մասիս բլրից, հինգ նմուշ՝ ուշ էնեոլիթով թվագրվող Արենի քարանձավից և մի քանի նմուշ Ադրբեջանից[48]: Գենոֆոնդը կովկասյան որսորդ-հավաքողների և Բարերեր Մահիկի երկրագործների գեների խառնուրդ է: Այս դարաշրջանում Հարավային Կովկասում չկան տափաստանային գեներ[49]: Հիմնական հայրական հապլոխումբը J2-ն է (J2a, J2b): Այն ըստ երևույթին բնիկ է լեռնաշխարհում, ինչպես և նրա քույր J1-ը[50]: Աուտոսոմներով՝ ոչ սեռական քրոմոսոմներով հարավկովկասյան երկրագործները մոտ են ներկայիս հայերին[51]: Նման անընդհատության պատկեր է հայոց մայրական գենոֆոնդում[52]:

Ուշ էնեոլիթի Արենի քարանձավի հիմնական հայրական հապլոխումբը մերձավորարևելյան ծագման L-ն է[53]: Աուտոսոմներում կա որոշակի տափաստանային խառնուրդ[54]: Այն, հավանաբար, հայտնվել է Արենի քարանձավում առևտրային կապերի հետևանքով: Համաժամանակյա մի նմուշ կա Ադրբեջանի հարավից, Լեյլա թեփե մշակույթից, որտեղ բացակայում է տափաստանային գենետիկան[55]: Այն չկա նաև հաջորդ՝ Կուր-արաքսյան մշակույթում, ինչը խոսում է այն մասին, որ Արենիում գործ ունենք հպանցիկ մի երևույթի հետ:

### *Վաղ բրոնզի դար, Կուր-արաքսյան մշակույթ (Ք.ա. 3600–2400)*

Կուր-արաքսյան մշակույթից կա տասնյակից ավել հնագենետիկական նմուշ՝ Կապսից, Բերքաբերից, Թալինից, Կալավանից, Շենգավիթից, և մի նմուշ Վրաստանի արևելքի Դողլաուրի հնավայրից[56]: Նրանց բնորոշ է կովկասյան որսորդ-հավաքողների գեների աճը և տափաստանային գեների բացակայությունը[57]: Հաճախ հանդիպող հայրական հապլոխմբերն են տեղական J1, J2, G2, և R1b-ի մի ճյուղ որը կապված չի Ցամնայայի հետ (մանրամասն ստորև)[58]:

Կովկասյան որսորդների գեների աճը չի նշանակում միգրացիա Կովկասից: Դա թերևս պայմանավորված է այն բանով, որ Կուր-արաքսյան մշակույթը ստեղծողները չէին ծագում միայն նախորդ նեոլիթյան երկրագործներից, այլ դաշտերում ապրող երկրագործների և լեռներում պահպանված կովկասյան որսորդ-հավաքողների մի խառնուրդ էին: Դա նաև բացատրում է նրանց բարձր լեռնային վայրերում բնակավայրեր ստեղծելու հակումը: Հատկանշական է, որ Կուր-արաքսյան արեալի հյուսիսում (Վելիքենտ, Դաղստան) հանդիպող J1-Z1842 ճյուղը այսօր շատ տարածված է նախ-դաղստանյան լեզվով խոսող

---

46 Lazaridis 2022a, Suppl.: 307–311.
47 Allentoft 2015; Lazaridis 2016; նույնի՝ 2022a; Margaryan 2017; Damgaard 2018b; Wang 2019; Antonio 2022.
48 Skourtanioti 2020; Guarino-Vignon 2023.
49 Lazaridis 2022a, Suppl.: 270–282.
50 Տե՛ս Platt 2017՝ J2-ի և Sahakyan 2021՝ J1-ի համար:
51 Եպիսկոպոսյան 2022:
52 Margaryan 2017.
53 Lazaridis 2016, Suppl. 6: 50.
54 Lazaridis 2016: 422.
55 Guarino-Vignon 2023: 7.
56 Lazaridis 2016; Wang 2019; Lazaridis 2022 Հայաստանից; Koptekin 2023 Վրաստանից:
57 Lazaridis 2022a, Suppl: 270–282.
58 Lazaridis 2016, Suppl. 6: 50; նույնի՝ 2022a, Suppl. Table 1; Wang 2019, Suppl. Table 1; Կուր-արաքսյան R1b-ն պատկանել է V1636 ճյուղին, որը տարբեր է R1b-M269-ից: Այն խիստ հազվադեպ է հանդիպում ներկայիս հայերի մոտ (Նկար 6):

ժողովուրդների մեջ[59]: Հնարավոր է, որ Կովկասից հյուսիս ընկած շրջաններում կուր-արաքսացիները խոսել են հյուսիսարևելակովկասյան լեզուներով: Բայց ամբողջ Կուր-արաքսյան հորիզոնի էթնիկ կազմին դա չի կարող վերաբերվել (այստեղ պետք է լինեին հնդեվրոպական անցյալի ժառանգներ):

### *Միջին բրոնզի դար (Ք.ա. 2400–1500)*

Դիակիզման տարածման և բնակչության նոսրացման պատճառով ԴՆԹ նմուշները այդ շրջանից քիչ են: Սակայն, ՀՀ տարբեր մարզերից վերցրած 5 նմուշները նույն պատկերն են ցույց տալիս՝ հայտնվում է տափաստանային խառնուրդի մի զգալի չափաբաժին[60]: Այսպես, ՀՀ երկու արական սեռի նմուշում առկա են տափաստանային հապլոխմբեր (I2, R1b)[61]: Միջին բրոնզի դարից ևս մի նմուշ կա Ուրմիա լճի ավազանից, որը տափաստանի և տեղական գեների խառնուրդ է[62]:

Ըստ գենետիկական տվյալների հիման վրա արված հաշվարկի, ներգաղթը տափաստանից սկսվել է Ք.ա. 2579-ին[63], որը մոտ է մեզանում Վաղ կուրգանային մշակույթի սկզբին (Ք.ա. շուրջ 2500 թ.): Այդ ժամանակաշրջանում Արևելաեվրոպական տափաստաններում հիմնական մշակույթը Կատակոմբյանն էր: Դաղստանով անցնելով Հարավային Կովկաս՝ նրանց մի ճյուղը՝ վաղնջահայերենի հավանական կրողները, Ք.ա. 3-րդ հազարամյակի կեսերից տարածվել են համարյա ողջ Հայկական լեռնաշխարհում:

Հետաքրքրական է, որ տափաստանային գեների կրողները Հունաստանում հայտնվում են գրեթե նույն ժամանակ (Ք.ա. 2300 թ.)[64], ինչը թերևս խոսում է այն բանի օգտին, որ վաղնջահայերը և վաղնջահույները ծագում են նույն՝ Կատակոմբյան մշակույթի կրողներից: Վաղնջահայերի և վաղնջահույներին մոտ համարվող մյուս՝ հնդիրանական խումբը տեղաբաշխվել է Վոլգայից արևելք, Կամա գետի ավազանում (Աբաշևո), ապա՝ Միջին Ասիա (Սինտաշտա և Անդրոնովո մշակույթներ): Ի տարբերություն հայ-հունական խմբի, նրանց առաջնային հայրական հապլոխումբը R1a-ն է, որը սերում է Պարանային խեցեղենի մշակույթից[65]: Սա մի հավելյալ փաստարկ է հայ-




*Նկար 3. R1b հապլոխմբի ծառը. ka-ով նշվում է ճյուղի հնարավոր տարիքը հազարամյակներով. օրինակ Z2103-ը 5400 տարեկան է (Lazaridis 2022a: 10):*

հունական լեզվական առավել մերձավոր ազգակցության տեսակետի օգտին:

Նյութի պակասության պատճառով հնարավոր չէ մանրամասն քննել Հայաստանի միջինբրոնզեդարյան մշակույթների գենետիկական առանձնահատկությունները. հավանաբար, տափաստանյան գենոֆոնդն ավելի բարձր է եղել լեռնաշխարհի հյուսիսարևելքում և ցածր՝ հարավարևմուտքում, ինչպես հիմա է:

### *Տափաստանային հապլոխմբերը բրոնզեդարյան Հայաստանում*

Ներկայիս հայերի մեջ, բացի տեղական ծագման Y քրոմոսոմային հապլոխմբերից, առկա են մեր նյութին վերաբերվող տափաստանային երկու հապլոխումբ՝ R1b և I2, համապատասխանաբար ~27% և ~3% մասնաբաժնով (Նկար 6): Հատկապես կարևոր է R1b-M269-ից ծագած

[59] Balanovsky 2011.
[60] Lazaridis 2022a, Suppl.: 270–282; նույնի՝ 2016: 422.
[61] Allentoft 2015. Թավշուտի Թռեղք-վանաձորյան նմուշը (համար I14813) պատկանել է I2-Y16649 ճյուղին, որը ներկայիս հայերի I2 հապլոխմբի ամենատարածված տիպն է: Lazaridis 2022a, Suppl. Table 1.
[62] Ժամանակագրվում է Ք.ա. 2350 թ., տե՛ս Narasimhan 2019, Suppl. 4: 222–223.
[63] Lazaridis 2022a: 9.
[64] Clemente 2021: 2574.
[65] Narasimhan 2019.

Z2103 ենթաճյուղը, որն անցյալում ևս պետք է լիներ ամենատարածվածը (Նկար 3):

Ներկա տվյալներով ամենահին R1b-Z2103-ը հայտնաբերվել է Յամնայա մշակույթում[66]: Նրան զուգահեռ R1b-L51 ճյուղը, առկա հիմնականում Արևմտյան Եվրոպայում[67], տարածվել է Պարանային խեցեղենի ու Զանգակաձև գավաթների մշակույթների միջոցով[68]: Z2103-ը տարածվել է Բալկաններում (հատկապես Z2106 ենթաճյուղը) և այսօր էլ առկա է ալբանացիների ու հույների մեջ[69]: Z2103-ը եղել է նաև Ալթայում ձևավորված Աֆանասևո մշակույթի (Յամնայայի ժառանգն է) հիմնական հապլոտիպը[70]: Հետագայում այն շարժվել է հարավ (Չինաստանի Սինձյան նահանգ), որտեղ և ձևավորվել են թոխարները:

Այսպիսով, ակնհայտ է, որ R1b-M269 հապլոտիպը իր բոլոր ենթաճյուղերով հնդեվրոպական ցեղերի տեղաշարժի կարևորագույն ցուցիչ է: R1b-ն խիստ սակավաթիվ է միայն հնդիրանական[71] և բալթիկ-սլավոնական ժողովուրդների մեջ, որտեղ դոմինանտ է R1a-M417 հապլոտիպը: Ի միջի այլոց, այդ պատճառով անհրատեսական է Թռեղք-վանաձորյան մշակույթը հնդիրանցիների հետ կապելը: Ինչ վերաբերում է Կուր-արաքսյան դարաշրջանի միակ R1b-ին. այն եղել է V1636 ճյուղից, որը բավականին հեռու է M269-ից (Նկար 3): Այսպիսով, բացառվում է, որ միջին և ուշ բրոնզի դարերում լայնորեն տարածված R1b-Z2103-ը ունենար կուր-արաքսյան ծագում:

Լեռնաշխարհի միջին բրոնզի դարի հնագիտական մշակույթների տարբերակվածությունը թերևս արտացոլվում է նաև գենետիկական մակարդակում: Այսպես, Թռեղք-վանաձորում գտնըված I2-ը բացակայում է Իրանի հյուսիս-արևմուտքից պեղված բազմաթիվ նմուշներում, որտեղ միայն R1b է գտնվել: Փոխարենը՝ I2-ը առատորեն ներկայացված է Սևանի ավազանում, ինչը կարող է վկայել Սևան-արցախյան մշակույթի որոշակի առանձնահատկության մասին: Լճաշեն-մեծամորում տարածված Z2103-ի ենթաճյուղը Y13369-ն է, և բացակայում է Y4364-ը, որն առկա է Ուրմիայի ավազանի Հասանլու թեփեում: Սա կարող է վկայել այն բանի օգտին, որ Y4364-ը եղել է կարմիրվանքյան (Վան-ուրմիական) մշակույթի ցուցիչ: Ներկայիս հայերի մեջ էլ առկա են Z2103-ի այս երկու ենթաճյուղերը, ընդ որում՝ ավելի տարածված է Լճաշեն-մեծամորյանը[72]:

### *Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարեր (Ք. ա. 16–9-րդ դդ.)*

Ներկայիս ՀՀ տարածքից Լճաշեն-մեծամորյան մշակույթի բազմաթիվ հնավայրերից կա հարյուրից ավելի հին ԴՆԹ, որոնց հիմա վրա կարելի է, ի տարբերություն նախորդ դարաշրջանների, հիմնավոր եզրակացություններ անել: Գենեֆոնդն ընդհանուր առմամբ համասեռ է, ինչը վկայում է ընդհանուր լեզվի օգտին[73]: Կա մի քանի տարբերվող նմուշ, որոնք, ըստ երևույթին, ծագում են հարևան երկրամասերից: Հայրական գեներն ըստ հապլոխմբերի բաշխվում են հետևյալ կերպ: Երեք քառորդը, ինչպես ասվել է, կազմում են տափաստանային ծագման R1b-ն և I2-ը, մնացածը հիմնականում տեղական՝ կուր-արաքսյան մշակույթի ժառանգներն են: Տարբերությունը Կուր-արաքսյան իրողություններից զգալի է և, հաշվի առնելով տափաստանային հնդեվրոպացիների՝ իրենց լեզուն տարածելու հայտնի հատկանիշը, կասկած չկա, որ միջին բրոնզում տեղի է ունեցել լեզվի փոփոխություն: Աուտոսոմային գեներով էլ Լճաշենմեծամորի մարդիկ նման են միջին բրոնզի դարի մարդկանց: Այս վիճակը պահպանվում է նաև վաղ երկաթի դարում մինչև Վանի թագավորության ասպարեզ իջնելը:

Հավելենք, որ կա մի ուշբրոնզեդարյան նմուշ Վրաստանի Դողլաուրի լճաշեն-մեծամորյան տիպի հնավայրից, որը չունի տափաստանային գենոֆոնդ[74]: Սա կարող է վկայել, որ Կուր գետից հյուսիս ընկած լճաշենյան տիպի բնակավայրերում այլ, էթհունցիներից տարբեր էթնիկ խմբեր են ապրել:

[66] R1b-M269-ի առաջացման վայրը վերջնականապես հայտնի չէ: Այն, հավանաբար, էնեոլիթյան անասնապահության հետ պետք է տարածվեր: Իսկ նրա դուստր Z2103 ճյուղի պատմությունը ավելի լավ է փաստագրված, տե՛ս Haak 2015.

[67] Myers 2011.

[68] Papac 2021.

[69] Z2103-ի հետ միասին Բալկաններում և Հայաստանում տարածվել է նաև PF7562 ճյուղը: Այն հայերի մոտ ավելի քիչ է հանդիպում քան Z2103-ը, տե՛ս Lazaridis 2022a:

[70] Narasimhan 2019.

[71] Իրանի հյուսիս արևմուտքում R1b-M269-ն Կովկասով անցած միջին բրոնզի դարի տափաստանային զաղթերի հետևանք է:

[72] «Հայկական ԴՆԹ նախագիծ» (Armenian DNA Project at FamilyTree DNA), ղեկավար՝ Հովան Սիմոնյան:

[73] Lazaridis 2022a, Suppl: 270–282.

[74] Koptekin 2023: 29.

### *Վանի թագավորություն (Ք.ա. 800–600)*

Ք.ա. 9-րդ դարի վերջերից ուրարտական արքաները հարձակումներ են ձեռնարկում Էթիունիի դեմ: Ուրարտուն իրականում բազմազգ մի կայսրություն էր, տիպիկ կայսերական, շատ հարցերում՝ ասորեստանյանից փոխառյալ մշակույթով, որը ներդնում էր նվաճված տարածքներում կառուցած և պետության ուրիշ մարզերից բերված մարդկանցով բնակեցվող նոր քաղաքներում և ամրոցներում (իսկ տեղի բնակչությունն ամենուրեք ապրում էր իր հին կենսակերպով)[75]: Այդ դարաշրջանից առկա է 29 ԴՆԹ նմուշ: Նախկին լճաշեն-մեծամորյան բնակավայրերում պահպանվում է նախորդ շրջանի բնակչությունը, կենսակերպը և գենոֆոնդը, իսկ նյութական մշակույթը որոշ ուրարտական ազդեցության է ենթարկվում: Սա համապատասխանում է հնագետների առանձնացրած Լճաշեն 6 շերտին[76], որտեղից պեղված ԴՆԹ-ն հիմնականում նման է նախորդ՝ Վաղ երկաթի դարի նյութին[77]: Բայց կա երկու նմուշ, ակնհայտ հարավային ծագման, որոնք ուրարտական արքաների՝ լեռնաշխարհի այլ մասերից բերված վերաբնակիչների պետք է պատկանեին: Ցավոք, շատ քիչ են կամ գրեթե բացակայում են ԴՆԹ-ի նմուշներ քաղաք/ամրոցներից, ինչպիսիք էին Էրեբունին և Արգիշտիխինիլին: Իսկ Թեյշեբայի քաղաքից (Կարմիր բլուր) կա համեմատաբար ուշ շրջանի հինգ նմուշ, որոնցից երկուսը տեղացի էթիունյան է, մեկը՝ հարավից, մյուսները՝ միջանկյալ դիրքում են:

Վանի թագավորության ժամանակաշրջանը, ինչպես ասվել է, լեռնաշխարհի այլ մասերում ևս բնորոշվել է բնակչության մեծ տեղաշարժերով: Այսպես, Վանի ավազանի Չավուշթեփե հնավայրից (Սարդուրիխինիլի, Հայկաբերդ) եղած մի քանի նմուշների վերլուծությունը տալիս է հետաքրքիր մի պատկեր: Մի քանիսն ունեն մոտավորապես այնպիսի գենոֆոնդ, ինչպիսին ներկայիս հայերինն է: Մեկը ունի Մալաթիայի կողմերի հին բնակչությանը բնորոշ հայրական հապլոխումբ[78], իսկ մի կին էլ ակնհայտ էթիունցի է[79]:

Վանի թագավորների ձեռնարկած մարդկանց մեծ տեղաշարժերը ակնհայտորեն նպաստել են լեռնաշխարհում համասեռ գենետիկ և լեզվական միջավայր ստեղծելուն: Վանի թագավորության տարբեր շրջաններին իրար կապող միասնական լեզուն դարձել է հայերենը, որի բարբառները ներ-




*Նկար 4. ՀՀ տարածքի Լճաշեն-մեծամորյան մշակույթի շրջանից (Ք.ա. 1500–800 թթ.) պեղված 64 հայրագիծ քրոմոսոմների բաշխումն ըստ հապլոխմբերի: R1b-ն և I2-ը տափաստանային հայրական քրոմոսոմների հապլոխմբերն են: Մնացածը տեղական կուր-արաքսյան շրջանից են ժառանգված: I2-ի զգալի մասը պեղվել է Սևանի ավազանի հնավայրերից (Allentoft 2015; Damgaard 2018b; Lazaridis 2022: Suppl Table 1): Համեմատել նկար 6-ի հետ:*




*Նկար 5. ՀՀ տարածքի ուրարտական շրջանից (Ք.ա. 800–600 թթ.) պեղված 20 հայրագիծ քրոմոսոմների բաշխումը ըստ հապլոխմբերի: Նմուշները, բացի 2-ից, վերցված են լճաշենյան տիպի հնավայրերից: I2-ի սակավությունը նախորդ դարաշրջանի նկարից կապված է այն բանի հետ, որ չկան նմուշներ Սևանի ավազանից (Lazaridis 2022a: Suppl. Table 1):*

75 Zimansky 1995; նույնի՝ 2012; Պետրոսյան 2017: 87–96:
76 Avetisyan 2008.
77 Lazaridis 2022a, Suppl. 270–282.
78 Համար I19612-ը որը պատկանել է G2 հապլոխմբի M406 ճյուղին, որը տարածված էր հին Փոքր Ասիայում:
79 Համար I14764, Grave 7; VÇN18-M7: Իգական սեռ: Lazaridis 2022a, Suppl: 57.

| Հապլոխումբ | Արարատյան դաշտ | Սյունիք | Արցախ | Գարդման | Սալմաստ | Էրզրում | Ալաշկերտ | Բայազետ | Վան | Սասուն | ԸՆԴՀԱՆՈՒՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| E1b-M35 առանց M78 | 5,5 | 1,9 | 2,9 | 4,2 | 5 | 5,1 | 4,1 | 1 | 3,9 | 2,9 | 3,76 |
| E1b-M78 | | 1 | 2,9 | | 7 | 4 | 1 | 2,9 | 3,9 | | 2,67 |
| G առանց P15 | 1,8 | 1 | 1,9 | 1 | 2 | 3 | | 2,9 | | | 1,42 |
| G2a-P15 | 9,1 | 5,7 | 8,6 | 5,2 | 5,5 | 13,1 | 12,2 | 16,7 | 7,8 | 12,5 | 9,27 |
| F* հիմնականում H2 | | | | | | | | 1 | | | 0,09 |
| I | 2,7 | 1,9 | 1,9 | 8,3 | 1,5 | 4 | 3,1 | 3,9 | 1,9 | | 2,75 |
| J առանց J1, J2 | | | | | 1 | | | | | | 0,18 |
| J1 առանց P58 | 8,2 | 5,7 | 11,4 | 2,1 | 8 | 3 | 7,1 | 8,8 | 7,8 | 6,7 | 7,03 |
| J1a-P58 | 6,4 | 12,4 | 3,8 | 2,1 | 11,6 | 2 | 12,2 | 5,9 | 5,8 | 2,9 | 6,97 |
| J2 առանց M67, J2b | 10 | 18,1 | 8,6 | 14,6 | 12,6 | 21,2 | 14,3 | 14,7 | 19,4 | 9,6 | 14,10 |
| J2a-M67 | 12,7 | 5,7 | 8,6 | 14,6 | 7,5 | 10,1 | 11,2 | 2,9 | 7,8 | 7,7 | 8,73 |
| J2b | 0,9 | | 1,9 | 3,1 | 1 | 5,1 | 2 | 5,9 | 1,9 | | 2,05 |
| L | 0,9 | | 1,9 | 1 | 2 | 3 | 1 | | 1,9 | 3,8 | 1,59 |
| N | | | | 1 | | | | | | | 0,09 |
| Q | | | 1,9 | | 1,5 | 2 | | | 1 | | 0,71 |
| R1 առանց R1a, R1b | | | | | 0,5 | | | | | | 0,09 |
| R1a | 0,9 | 3,8 | | 5,2 | 5,5 | | 4,1 | 2 | | 1 | 2,50 |
| R1b առանց M269 | | | 1 | | | | | 1 | | | 0,18 |
| R1b-M269 | 37,3 | 36,2 | 39 | 31,3 | 23,6 | 15,2 | 16,3 | 26,5 | 32 | 15,4 | 27,12 |
| R2a | | 1,9 | | | 1,5 | | 2 | 1 | 1 | 17,3 | 2,41 |
| T | 3,6 | 4,8 | 3,8 | 6,3 | 2,5 | 9,1 | 9,2 | 2,9 | 3,9 | 20,2 | 6,25 |
| n | 110 | 105 | 105 | 96 | 199 | 99 | 98 | 102 | 103 | 104 | 1121 |

*Նկար 6.*

կա պիտի լինեին լեռնաշխարհում միջին բրոնզի դարից:

### Հետուրարտական շրջանից մինչև ներկա Հայաստան (Ք.ա. 7-րդ դ. – 21-րդ դ.)

Վանի թագավորությանը հաջորդած Երվանդունիների, Արտաշիսյանների և Արշակունիների դարաշրջաններից ՀՀ տարածքից կա երկու տասնյակ ԴՆԹ-ի նմուշ[80]: Այդ ժամանակ արդեն էթիունցիները և հարավից ու արևմուտքից տեղափոխված բնակչության խմբերը լրիվ խառնվել են և առաջացել է համասեռ մի գենոֆոնդ, որը և հատուկ է ներկայիս հայերին (ավելի ցածր տափաստանային խառնուրդով, քան էթիունցիների մոտ էր)[81]: Ըստ հաշվարկի՝ գեների այդպիսի միախառնումը պիտի տեղի ունեցած լիներ Ք.ա. 772–403 թթ.[82]: Սա վերաբերվում է միայն ներկայիս ՀՀ-ի տարածքին: Լեռնաշխարհի հարավային ու արևմտյան շրջաններում տափաստանային բաղադրիչը, ընդհակառակը, պետք է որ աճեր, քանի որ բազմաթիվ էթիունցիներ էին տեղափոխվել այնտեղ:

Ներկայիս հայերը թեև համասեռ աուտոսոմ գենոֆոնդ ունեն, բայց միջին բրոնզի իրողությունների հետևանքները պահպանվել են հայրական Y քրոմոսոմների բաշխման մեջ: Այսպես, R1b հայրական հապլոխմբի ամենաբարձր մակարդակը նկատվում է Արցախում, Արարատյան դաշտում ու Սյունիքում: Հատկապես Սևանի ավազանում տարածված I2 հայրական հապլոխմբի ամենաբարձր մակարդակը Գարդմանի հայերի մեջ է (Նկար 6): Իսկ տափաստանային հապլոխմբերի ամենացածր և հետևաբար՝ տեղական գեների ամենաբարձր մակարդակը առկա է Սասունի (Աղձնիք) հայերի մեջ:

### Եզրակացություն

Վաղնջահայերեն լեզուն սկզբնավորվել է հնդեվրոպական հայրենիքում՝ Պոնտոս-կասպյան տափաստանային և անտառատափաստանային գոտում: Այն չէր կարող ձևավորված լինել այլուրեք,

80 Lazaridis 2022a; Antonio 2022.
81 Antonio 2022: 8; Lazaridis 2022, Suppl.: 270–282.
82 Antonio 2022: 8.

քանի որ հենց այդտեղ են ձևավորվել նաև հայերենին առավել մոտ հնդեվրոպական լեզուները՝ հունարենը, հնդիրանականը և բալթիկ-սլավոնականը:

Վաղնջահայերենի կրողները անցել են Հարավային Կովկաս և հաստատվել հատկապես Հայկական լեռնաշխարհի արևելյան շրջաններում: Ինչպես և հնդեվրոպական մյուս ցեղերը, նրանք ևս ունեցել են որոշակի մշակույթ, համապատասխան առասպելաբանություն և նոր տարածքներում տարածել են իրենց լեզուն:

Նրանք և նրանց ժառանգներն են, որ ստեղծել են լեռնաշխարհի միջին և ուշ բրոնզի, ապա և՝ երկաթի դարի հնագիտական մշակույթները:

Սկսած առնվազն միջին բրոնզի վերջին շրջանից՝ հնագույն հայերի կենտրոնական տարածք՝ Նախնական Հայաստան է դառնում հետագա ուրարտական աղբյուրներում Էթիունի կոչվող երկիրը (Մեծ Հայքի կենտրոնական Այրարատ նահանգի տարածքը):

Տափաստանային հնդեվրոպացիները ժամանակի ընթացքում խառնվել են տեղի հին բնակիչների հետ: Սակայն, ինչպես և այլ նման դեպքերում, հայրագիծ ժառանգորդության մեջ երկար ժամանակ գերակայում է տափաստանային տարրը. մինչև Ուրարտուի անկումը Էթիունիի բնակչության մեջ տափաստանային ծագման հայրագիծ Y քրոմոսոմային R1b և I2 հապլոխմբերը կազմել են ամբողջի 75%-ը: Ժամանակի ընթացքում այդ թիվը նվազում է, թեև ներկա հայերի մեջ դրանք նույնպես առավել տարածված են, ընդհանուրում՝ շուրջ 30%, իսկ արևելյան շրջաններում (Արցախ, Սյունիք, Արարատյան դաշտ)՝ շուրջ 40%:

Ակնհայտ է, որ շուրջ չորս ու կես հազարամյակ Հայկական լեռնաշխարհում առավել տարածված այդ հապլոխմբերի առաջին ներկայացուցիչները պետք է լինեին վաղնջահայերենի կրողները՝ վաղնջահայերը:

**Արմեն Պետրոսյան**

*ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ*
*Չարենցի 15, 0025, Երևան,*
*Հայաստանի Հանրապետություն*
alpehist@gmail.com

**Արամ Պալյան**

*անկախ հետազոտող*
araratinfo@gmail.com

## Գրականություն

Ավետիսյան Պ. 2014. *Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XXIV–IX դարերում (սոցիալ-մշակութային ձևափոխումների դինամիկան ըստ հնագիտական տվյալների)*: «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման գիտական զեկուցում: Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ:

Գրեկյան Ե. 2022. Էթիունին և էթիունցիները նորաօրեստանյան սկզբնաղբյուրներու՞մ, Մ. Բադալյան, Ք. Մարտիրոսյան-Օլշանսկի, Ա. Բոբոխյան (խմբ.), *Ծովային Հայաստան. Ուդուրի-Էթիունի երկրի հնագիտական ժառանգությունը*: Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակչություն, էջ 264–272:

Եպիսկոպոսյան Լ. 2022. *Չընդհատված կող. հայոց գենետիկական պատմություն*: ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ: Երևան, Էդիթ Պրինտ:

Պետրոսյան Ա. 2010. Խեթերենի հետքեր Հայկական լեռնաշխարհի արևելքում և հարավ-արևելքում, Պ. Ավետիսյան, Ա. Պետրոսյան (խմբ.), *Խայկյան զորությամբ... Հոդվածների ժողովածու նվիրված Բորիս Պիոտրովսկու ծննդյան 100-ամյակին*: Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 65–77:

Պետրոսյան Ա. 2014. Հնդեվրոպական նախահայրենիքի խնդիրը և վաղնջահայերենը: *Պատմա-բանասիրական հանդես* թիվ 1(195), էջ 196–207:

Պետրոսյան Ա. 2015. Հայասայի դիցարանի էթնիկական հիմքերը: *Էջմիածին* թիվ 11, էջ 78–98:

Պետրոսյան Ա. 2017. *Հայ ժողովրդի ծագման խնդիրը*: Երևան, Անտարես:

Պետրոսյան Ա. 2020. *Հայկական էպոսի հնագույն ակունքները*: Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակչություն:

Ջահուկյան Գ., 1987. *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:

Гамкрелидзе Т. В., Иванов В. В. 1984. *Индоевропейский язык и индоевропейцы*. Тбилиси: Тбилисский государственный университет.

Дьяконов И. М. 1968. *Предыстория армянского народа*. Ереван: Издательство АН Армянской ССР.

Дьяконов И. М. 1988. О некоторых направлениях в урартском языкознании и новых урартских текстах. *Древний Восток* 5: 133–180.

Иванов В. В. 1980. Анатолийские языки, в кн. И. М. Дьяконов, В. В. Иванов (ред.). *Древние языки Малой Азии*. 129–160. Москва: Прогресс.

Капанцян Г. А. 1975. *Историко-лингвистические работы*, том 2. Ереван: Ереванский государственный университет.

Лигорио О., Лубоцкий А. 2013. Фригийский язык, в кн. Ю. Б. Коряков, А. А. Кибрик (ред.). *Языки мира: Реликтовые индоевропейские языки Передней и Центральной Азии*. 180–195. Москва: Academia.

Пиотровский Б. Б. 1962. *Искусство Урарту*. Ленинград: Издательство Государственного Эрмитажа.

Ahyan S. 1982. Les débuts de l'histoire d'Arménie et les trois fonctions indo-européennes. *Revue de l'histoire des religions* 199/3: 251–271.

Allentoft M.E., Sikora M., Sjögren K.-G., Rasmussen S. Rasmussen M. *et al.* 2015. Population Genomics of Bronze Age Eurasia. *Nature* 522: 167–172.

Anthony, D.W. 2007. *The Horse, the Wheel, and Language. How Bronze-Age Riders from the Eurasian Steppes Shaped the Modern World*. Princeton – Oxford: Princeton University Press.

Antonio M.L., Weiß C.L., Gao Z., Sawyer S., Oberreiter V. *et al.* 2022. Stable Population Structure in Europe Since the Iron Age, Despite High Mobility. *bioRxiv*, 2022.05.15.2022.491973.

Avetisyan P., Bobokhyan A. 2008. The Pottery Traditions of the Armenian Middle to Late Bronze Age "Transition" in the Context of Bronze and Iron Age Periodization, in: K.S. Rubinson, A.G. Sagona (eds). *Ceramics in Transitions: Chalcolithic Through Iron Age in the Highlands of the Southern Caucasus and Anatolia* (Ancient Near Eastern Studies, Supplement 27). 123–183. Leuven – Paris – Dudley, MA.: Peeters.

Balanovsky O., Chukhryaeva M., Zaporozhchenko V., Urasin V., Zhabagin M. *et al.* 2017. Genetic Differentiation Between Upland and Lowland Populations Shapes the Y-chromosomal Landscape of West Asia. *Human Genetics* 136: 437–450.

Balanovsky O., Dibirova K., Dybo A., Mudrak O., Frolova S. *et al.* 2011. Parallel Evolution of Genes and Languages in the Caucasus Region. *Molecular Biology and Evolution* 28/10: 2905–2920.

Biscione R. 2019. The Roots of the Urartian Kingdom: The Growth of Social Complexity on the Armenian Plateau Between Ancient Bronze and Early Iron Ages, in: P.S. Avetisyan, R. Dan, Y.H. Grekyan (eds). *Over the Mountains and Far Away: Studies in Near Eastern History and Archaeology Presented to Mirjo Salvini on the Occasion of His 80th Birthday*. 74–89. Oxford: Archaeopress.

Brixhe C. 2004. Phrygian, in: R.D. Woodard (ed.). *The Cambridge Encyclopedia of the World's Ancient Languages*. 777–788. Cambridge: Cambridge University Press.

Clackson J. 1994. *The Linguistic Relationship Between Armenian and Greek* (Publications of the Philological Society 30). Oxford – Cambridge, MA: Blackwell.

Clemente F., Unterländer M., Dolgova O., Amorim C.E.G., Coroado-Santos F. *et al.* 2021. The Genomic History of the Aegean Palatial Civilizations. *Cell* 184/10: 2565–2586.e21.

Damgaard P.d.B., Martiniano R., Kamm J., Moreno-Mayar J.V., Kroonen G. *et al.* 2018a. The First Horse Herders and the Impact of Early Bronze Age Steppe Expansions into Asia. *Science* 360(6396).

Damgaard P.d.B., Marchi N., Rasmussen S., Peyrot M., Renaud G. *et al*. 2018b. 137 Ancient Human Genomes from Across the Eurasian Steppes. *Nature* 557: 369–374.

Gimbutas M. 1973. The Beginning of the Bronze Age in Europe and the Indo-Europeans in 3500–2500 BC. *Journal of Indo-European Studies* 1: 163–214.

Grekyan Y.H. 2023. Climate Change and the Transition from the Early to the Middle Bronze Age in the Armenian Highland, in: Y.H. Grekyan, A.A. Bobokhyan (eds). *Systemizing the Past. Papers in Near Eastern and Caucasian Archaeology Dedicated to Pavel S. Avetisyan on the Occasion of His 65th Birthday*. 149–161. Oxford: Archaeopress.

Grigoriev S.A. 2002. *Ancient Indo-Europeans*. Chelyabinsk: Rifei.

Guarino-Vignon P., Lefeuvre M., Chimènes A., Monnereau A., Guliyev F., Recqueur L., Jovenet E., Lyonnet B., Bon C. 2023. Genome-Wide Analysis of a Collective Grave from Mentesh Tepe Provides Insight into the Population Structure of Early Neolithic Population in the South Caucasus. *Communications Biology* 6: no. 319.

Guimaraes S., Arbuckle B.S., Peters J., Adcock S.E., Buitenhuis H., Chazin H., Manaseryan N., Uerpmann H.-P., Grange T., Geigl E.-M. 2020. Ancient DNA Shows Domestic Horses Were Introduced in the Southern Caucasus and Anatolia During the Bronze Age. *Science Advances* 6(38): eabb0030.

Haak W., Lazaridis I., Patterson N., Rohland N., Mallick S. *et al.* 2015. Massive Migration from the Steppe Was a Source for Indo-European Languages in Europe. *Nature* 522: 207–211.

Herrera K., Lowery R., Hadden L., Calderon S., Chiou C., Yepiskoposyan L., Regueiro M., Underhill P.A., Herrera R.J. 2012. Neolithic Patrilineal Signals Indicate that the Armenian Plateau Was Repopulated by Agriculturalists. *European Journal of Human Genetics* 20: 313–320.

Hovhannisyan A., Khachatryan Z., Haber M., Hrechdakian P., Karafet T., Zalloua P., Yepiskoposyan L. 2014. Different Waves and Directions of Neolithic Migrations in the Armenian Highland. *Investigative Genetics* 5: 15.

Hovhannisyan A., Eppie J., Delser P.M., Schraiber J., Hakobyan A. *et al.* 2020. An Admixture Signal in Armenians Around the End of Bronze Age Reveals Widespread Population Movement Across the Middle East. *bioRxiv*, 2020.06.24.2020.168781.

Jones E., Gonzalez-Fortes G., Connell S., Siska V., Eriksson A. *et al.* 2015. Upper Palaeolithic Genomes Reveal Deep Roots of Modern Eurasians. *Nature Communications* 6: no. 8912.

Kassian A.S., Zhivlov M., Starostin G., Trofimov A.A., Kocharov P.A., Kuritsyna A., Saenko M.N. 2021. Rapid Radiation of the Inner Indo-European Languages: An Advanced Approach to Indo-European Lexicostatistics. *Linguistics* 59/4: 949–979.

Kloekhorst A. 2023. Proto-Indo-Anatolian, the "Anatolian Split" and the "Anatolian Trek": A Comparative Linguistic Perspective, in: K. Kristiansen, G. Kroonen, E. Willerslev (eds). *The Indo-European Puzzle Revisited: Integrating Archaeology, Genetics, and Linguistics*. 42–59. Cambridge – New York: Cambridge University Press.

Koptekin D., Yüncü E., Rodríguez-Varela R., Ezgi Altınışık N., Psonis N. *et al*. 2023. Spatial and Temporal Heterogeneity in Human Mobility Patterns in Holocene Southwest Asia and the East Mediterranean. *Current Biology* 33/1: 41–57.e15.

Kozintsev A. 2019. Proto-Indo-Europeans: The Prologue. *Journal of Indo-European Studies* 47/3–4: 293–380.

Lazaridis I., Nadel D., Rollefson G., Merrett D. C., Rohland N. *et al.* 2016. Genomic Insights into the Origin of Farming in the Ancient Near East. *Nature* 536: 419–424.

Lazaridis I., Alparslan-Roodenberg S., Acar A., Açıkkol A., Agelarakis A. *et al.* 2022a. The Genetic History of the Southern Arc: A Bridge Between West Asia and Europe. *Science* 377(6609): eabm4247.

Lazaridis I., Alparslan-Roodenberg S., Acar A., Açıkkol A., Agelarakis A. *et al.* 2022b. A Genetic Probe into the Ancient and Medieval History of Southern Europe and West Asia. *Science* 377(6609): 940–951.

Lazaridis I., Alparslan-Roodenberg S., Acar A., Açıkkol A., Agelarakis A. *et al.* 2022c. Ancient DNA from Mesopotamia Suggests Distinct Pre-Pottery and Pottery Neolithic Migrations into Anatolia, *Science* 377(6609): 982–987.

Mallory J. P. 1989. *In Search of the Indo-Europeans. Language, Archaeology and Myth*. London: Thames and Hudson.

Mathieson I., Lazaridis I., Rohland N., Mallick S., Patterson N. *et al.* 2015. Genome-Wide Patterns of Selection in 230 Ancient Eurasians. *Nature* 528: 499–503.

Mathieson I., Alpaslan-Roodenberg S., Posth C., Szécsényi-Nagy A., Rohland N. *et al.* 2018. The Genomic History of Southeastern Europe. *Nature* 555: 197–203.

Martirosyan H. 2013. The Place of Armenian in the Indo-European Language Family: The Relationship with Greek and Indo-Iranian. *Journal of Language Relationship* 10: 85–138.

Myres N., Rootsi S., Lin A. A., Järve M., King R. J. *et al.* 2011. A Major Y-chromosome Haplogroup R1b Holocene Era Founder Effect in Central and Western Europe. *European Journal of Human Genetics* 19: 95–101.

Narasimhan V., Patterson N., Moorjani P., Rohland N., Bernardos R. *et al.* 2019. The Formation of Human Populations in South and Central Asia. *Science* 365(6457): eaat7487.

Ochir-Goryaeva, M. A., Kornienko, I. V., Faleeva, T. G., Aramova, O. Y., Makhotkin, M. A., Kekeev, E. A., Burataev, E. G., Kukanova, V. V., Sidorenko, Y. S., Chartier, D. R., Schurr, T. G., Tatarinova, T. V. 2021. Ancestry and Identity in Bronze Age Catacomb Culture Burials: A Meta-Tale of Graves, Skeletons, and DNA. *Journal of Archaeological Science: Report*s 37: 102894.

Papac L., Ernée M., Dobeš M., Langová M., Rohrlach A. B. *et al.* 2021. Dynamic Changes in Genomic and Social Structures in Third Millennium BCE Central Europe. *Science Advances* 7(35): eabi6941.

Petrosyan A. Y. 2002. *The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic* (Journal of Indo-European Studies Monograph 42). Washington DC: Institute for the Study of Man.

Petrosyan A. Y. 2009. The Eastern Hittites in the South and East of the Armenian Highland? *Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies* 4/1: 63–72.

Platt D. E., Haber M., Dagher-Kharrat M. B., Douaihy B., Khazen G. *et al.* 2017. Mapping Post-Glacial Expansions: The Peopling of Southwest Asia. *Scientific Reports* 7: no. 40338.

Reich D. 2018. *Who We Are and How We Got Here*. Oxford: Oxford University Press.

Renfrew C. 1987. *Archaeology and Language: The Puzzle of Indo-European Origins*. London: Penguin Books.

Sahakyan H., Margaryan A., Saag L., Karmin M., Flores R. *et al.* 2021. Origin and Diffusion of Human Y-chromosome Haplogroup J1-M267. *Scientific Reports* 11: no. 6659.

Sergent B. 2003. Les troupes de jeunes hommes et l'expansion indo-européenne. *Dialogues d'Histoire Ancienne* 29/2: 9–27.

Skourtanioti E., Erdal Y. S., Frangipane M., Balossi Restelli F., Aslıhan Yener K. *et al.* 2020. Genomic History of Neolithic to Bronze Age Anatolia, Northern Levant, and Southern Caucasus. *Cell* 181/5: 1158–1175.e28.

Sturtevant E. H. 1926. On the Position of Hittite Among the Indo-European Languages. *Language* 2/1: 25–34.

Sturtevant E. H. 1962. The Indo-Hittite Hypothesis. *Language* 38/2: 105–110.

Tischler J. 2002. Bemerkungen zur Urheimatfrage, in: M. Fritz, S. Zeilfelder (eds). *Novalis Indogermanica. Festschrift für Günter Naumann zum 80. Geburtstag* (Grazer Vergleichende Arbeiten 17). 475–487. Graz: Leykam.

Wang Ch.-Ch., Reinhold S., Kalmykov A., Wissgott A., Brandt G. *et al.* 2019. Ancient Human Genome-Wide Data from a 3000-Year Interval in the Caucasus Corresponds with Eco-Geographic Regions. *Nature Communications* 10: no. 590.

Zimansky P. E. 1995. Urartian Material Culture as State Assemblage: An Anomaly in the Archaeology of Empire. *Bulletin of American School of Oriental Research* 299–300: 103–115.

Zimansky P. E. 2012. Urartu as Empire: Cultural Integration in the Kingdom of Van, in: S. Kroll, C. Gruber, U. Hellwag, M. Roaf, P. Zimansky (eds). *Biainili-Urartu. The Proceedings of the Symposium held in Munich 12–14 October 2007* (Acta Iranica 51). 101–110. Louvain: Peeters.

# THE PROBLEM OF ARMENIAN ORIGINS IN THE LIGHT OF RECENT ARCHAEOGENETIC DATA

*Armen Petrosyan, Aram Palyan*

**Keywords**: Palaeigenetics, Indo-European homeland, Indo-European linguistics, early archaeology of Armenia, prehistory of Armenia, Proto-Armenian, Proto-Armenians, formation of the Armenian people.

**Abstract**: The article presents the latest archaeogenetic data, by comparing linguistic and archaeological evidences, on the basis of which one of the most important problems of the prehistory and early history of Armenia – the origin and formation of the Armenian people – is examined. According to those data, the *Urheimat* of the Indo-Hittite or Indo-Anatolian community was localized in the Armenian Highland and adjacent territories. From here, some of them crossed the Caucasus to the north and settled in the Eastern European steppe and forest-steppe regions, from the Volga to the Dniester. Since the beginning of the 5$^{th}$ millennium BC, Eastern European Steppe populations had an increasing genetic contribution from the territories south of the Caucasus. And the people of the subsequent Yamnaya culture there had half of their gene pool of southern origin.

It was there that the Indo-European homeland formed, from where all the currently spoken Indo-European languages originated (while the Anatolian languages of Asia Minor disappeared more than two thousand years ago). Archaeogenetic data convincingly prove the reverse migration of people across the Caucasus from the Eastern European steppes to Transcaucasia and the Armenian Highland since the middle of 3$^{th}$ millennium BC. They and their descendants created the Early Kurgans, Trialeti-Vanadzor, Sevan-Artsakh, Karmirvank, Karmirberd and Lchashen-Metsamor cultures of the Middle and Late Bronze Age. Even at the end of Urartu the local population in the territory of the Republic of Armenia still had a significant Steppe patrilineal DNA (75%). The Armenian had to be the language of the creators of these cultures, and genetic data makes the Etiuni hypothesis of Armenian origins more likely. Modern Armenians gene pool is similar to Neolithic farmers of the region, but it has also a significant patrilineal ancestry inherited from the Steppe homeland (*c.* 30%).

# ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ԳԱՂԹԵՐ. ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԸՆՏԵԼԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ

*Արսեն Բոբոխյան*

**Բանալի բառեր**. Հայկական լեռնաշխարհ, ուղղահայաց գոտիականություն, տարածական մոդելավորում, վաղ պատմական հասարակություններ:

**Ամփոփում**. Հայկական լեռնաշխարհի անցյալի հիմնական փուլերում, կենսատարածքի կազմակերպման ընթացքում, էական դեր է խաղում երկրի ռելիեֆի կարևոր առանձնահատկությունը՝ ուղղահայաց գոտիականությունը: Լեռնաշխարհի ժողովուրդների անցյալն այդ գոտու ներսում տեղաշարժվելու, դրա առավելություններին ու թերություններին ադապտացվելու տևական մի ընթացք է: Ուղղահայաց գոտիականության և մարդկային խմբերի համապատասխան շարժերի վրա հենված կենսատարածքի կազմակերպման քննարկվող տարբերակը լեռնաշխարհը ներկայացնում է որպես ներփակ համակարգ, որի ներսում, մարդկային խմբերի ուղղահայաց և կրկնվող գաղթերի արդյունքում, յուրացվել է ողջ տարածքը (ստորին, միջին և բարձրլեռնային գոտիներում) և ձևավորել է երկրի ներքին հաղորդակցական համակարգը: Լեռնաշխարհի երեք խոշոր լճերը, որոնք գտնվում են միջին (նախալեռնային) մակարդակի վրա, էական դեր են խաղացել երկրի պատմամշակութային զարգացումներում: Այդ լճերը շրջապատող լեռները եղել են բնական այն սահմանները, որոնք, մի կողմից, որպես թիկունք պաշտպանական դեր են խաղացել, մյուս կողմից էլ՝ դարձել այդ տարածքների կրողների հոգևոր կենտրոնները: Լեռների ու լճերի միջև ընկած սարահարթերում ընթացել է լեռնաշխարհի բնակչության կյանքը:

## Ներածություն[1]

Մարդկանց որոշակի խմբերի տևական գոյությունը կոնկրետ տարածական ոլորտում առասպելականացնում է այդ տարածությունը, որի տարրերը միրճվելով կոլեկտիվ հիշողության մեջ՝ դառնում են ինքնության հիմնաքարեր[2]: Այդ խմբերը տարածվելով հորիզոնական և/կամ ուղղահայաց մակարդակներում՝ ընտրել են որոշակի աշխարհագրական ուղենիշներ, որոնք արտահայտում են ոչ միայն տարածության նկատմամբ նրանց տածած հարազատությունը, այլև՝ որոշակի կենսակերպը և արժեհամակարգը: Հատկապես ուղղահայաց գաղթերը աշխարհագրորեն սահմանազատված գոտիներում, լինելով բնույթով կրկնվող, էապես նպաստել են տարածության ընտելացմանը և ինքնությունների ձևավորմանը:

Ինքնությունը ինչ-որ տեղ կարելի է սահմանել որպես տարածության հետ կապվածության բարձրագույն ձև: Մոտենալով որևէ ինքնության որպես համակարգի՝ հնարավոր է դառնում վերակազմելու նրա աշխարհի մոդելը[3]: Ու քանի որ վաղ հասարակություններին բնորոշ է եղել արխայիկ (առասպելական) մտածողություն, ապա պարզ է, որ դրանում գերիշխել է մոդելավորման սինկրետիկ ձևը[4]:

Նմանատիպ վաղ համակարգերում, որպես կանոն, կենտրոնական (= սրբազան) տարածքը և նրա միջավայրը մոդել է այլ՝ երկրորդային տարածքների/ոլորտների համար և վերարտադրվում է մի քանի մակարդակներում (օրինակ՝ երկնքում և երկրի վրա կամ լեռան տարբեր հատվածներում): Ընդ որում, երկրորդային տարածքը ձգտում է վերարտադրել նախնականն իր մանրամասներով՝

1 Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 21AG-6A080 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

2 Հմմտ. Büttner, Peltz 2006:

3 Հմմտ. Раевский 1985.

4 Кликс 1983; Островский 2005.

դրանով իսկ դառնալով տարածական արխետիպ[5]:

Այս տեսանկյունից պատահական չէ, որ շատ ժողովուրդների մոտ աշխարհի մոդելը ծառի տեսքով մի առանցք է, որն ունի վերին, միջին, ստորին հատվածներ[6]: Ընդ որում, կենաց ծառը պահվում է երկնակամարի (դաշտավայրային ժողովուրդների մոտ) կամ լեռան (լեռնային ժողովուրդների մոտ) միջոցով[7]: Առասպելամտածողության մեջ հաճախ առկա են նաև հարթավայր-լեռան զագաթ կոսմոլոգիկ-աշխարհագրական բինար հակադրություններ[8]:

Այս հետազոտության առարկա Հայկական լեռնաշխարհի լանդշաֆտը ևս մոդելավորվել է նրանում ապրող մարդկային խմբերի և հարևանների կողմից, ինչի վերաբերյալ պահպանվել են բանավոր, գրավոր և հնագիտական տվյալներ[9]: Այդ պատկերացումներում խնդրո առարկա տարածքը մի քանի գոտիների բաժանված լեռնային երկիր է, որն օժտված է խորհրդավոր շղարշով: Փնտրելով այս ընկալման պատճառները՝ պետք է հաշվի առնել նրա լեռնային, ջրերով և բնապաշարներով հարուստ լինելու հանգամանքը: Դրա հետ է կապվում նաև տարածքի հրաբխային գոտի լինելը: Ինչպես ցույց են տալիս վերջին շրջանի պատմաերկրաբանական ուսումնասիրությունները, լեռնաշխարհում հրաբուխները գործել են նաև պատմական ժամանակներում՝ դրանով իսկ էական ազդեցություն թողնելով մարդկանց պատկերացումների վրա[10]: Հրաբուխների և դրանց միջավայրի մասին տեղեկություններ են պահպանվել հինարևելյան առասպելներում, որոնցում խոսվում է գլխավորապես Վան, Ուրմիա, Ծովք լճերի միջև ու Արարատ, Թոնդրակ, Նեմրութ սարերի շրջակայքում գտնվող շրջանների մասին[11]: Այսպես, օրինակ, շումերական «Լուգալ» վեպում նկարագրվում է լեռնային և հրաբխային մի լանդշաֆտ, որին բնորոշ են գրանիտ, բազալտ, ստեատիտ, հեմատիտ և կանաչ վանակատ քարերը: Այս հանքատեսակների ու հատկապես՝ կանաչ վանակատի հիշատակումը (որը բնորոշ է միայն Նեմրութին) կասկած չի հարուցում, որ գործ ունենք լեռնաշխարհի կենտրոնական շրջանների հետ: Չնայած բնույթով առասպելական՝ հիշյալ տվյալները, ինչպես ճիշտ նկատում է Կ. Ֆոսթերը, վկայում են այն մասին, որ սկսած առնվազն Ք.ա. IV հազ. վերջից (ուրուկյան առևտրականների լեռնաշխարհ ներթափանցման ժամանակաշրջանը) միջագետքցիները որոշակի պատկերացումներ են ունեցել այս լեռնային գոտու մասին[12]: Հեղինակը փորձում է վերականգնել նաև հրաբխային այս տարածաշրջանի պատկերագրական դրսևորումները առաջավորասիական արվեստում. նրա կարծիքով այս լանդշաֆտն է արտահայտված Հասանլուի ոսկե գավաթի (Ք.ա. II հազ. կեսեր) վրա, որի մանրամասները նա դիտարկում է «Կումարբիի» հայտնի առասպելի համատեքստում[13]: Ավելի վաղ է Մայկոպի հայտնի արծաթե անոթի պատկերագրությունը, որի մեջ որոշ հեղինակներ տեսնում են Արարատ ու Արագած լեռների գոտին՝ նրանց միջև հոսող Արաքս գետով[14]:

## Հայկական լեռնաշխարհի լանդշաֆտային առանձնահատկությունը

Հայկական լեռնաշխարհի ռելիեֆը, համապատասխան լեռնաշղթաների և նրանց միջև ընկած սարահարթերի ու գոգավորությունների դասավորությամբ, ներկայանում է որպես որոշակի օրինաչափություններով բնորոշվող մի համակարգ, որի ենթամիավորները հաճախ ստեղծում են առանցքներ և այդ առանցքների շուրջ տարածվող համանման գոտիներ[15]: Այս համակարգը բնորոշվում է հստակ ուղղահայաց գոտիականությամբ, որը պայմանավորված է տարածքի լեռնային բնույթով և սահմանում է նրա լանդշաֆտային բազմազանությունը[16]:

Հայկական լեռնաշխարհի այս առանձնա-

5 Garibian de Vartavan 2009.
6 Гамкрелидзе, Иванов 1984: 485–489.
7 Штернберг 1936: 450.
8 Հմմտ. Островский 2005: 102.
9 Հարությունյան 2000; Ավետիսյան, Բոբոխյան 2005:
10 Foster 2000; Gadjimuradov 2004.
11 Foster 2000: 33–34; Gadjimuradov 2004; Haas 2006: 131, 156–157, 172–174.
12 Foster 2000: 31–33.
13 Foster 2000: 35–37.
14 Բրյուսով 1967: 181:
15 Зограбян 1979, հատկապես՝ էջ 85, 98:
16 Ուղղահայաց գոտիականությունը տիպիկ է ընդհանրապես կովկասյան տարածաշրջանին՝ ինչպես հյուսիսային, այնպես էլ

հատկությունը նկատել է արդեն Մովսես Խորենացին, ով Հայաստանում առանձնացնում է մի քանի աշխարհագրական/կլիմայական գոտիներ՝ ցածրադիր՝ շոգ ամառով, ձյունազուրկ ու ցուրտ ձմեռով; անտառային խոնավ (հյուսիսում և հյուսիս-արևելքում), միջին լեռնային՝ չափավոր բարեխառն կլիմայով (Վանա ծովի արևելյան ափը, Շիրակ, Սյունիք և այլն) և բարձր լեռնային՝ խիստ կլիմայով[17]: Նոր ժամանակներում ուղղահայաց գոտիականությունը որպես տարածաշրջանային կարևոր առանձնահատկություն առաջիններից մեկը նշում է տնտեսագետ Ա. Քալանթարը, ով կարևորում է գոտիականության պարագան որպես տնտեսություն և մշակույթ կերտող առանձնահատկություն՝ շեշտելով, թե ինչպես է մարդն իր հնարավորությունների սահմաններում պայքարել դրա անհարմարությունների դեմ. այդ պայքարի ձևերից մեկն էլ եղել է հեռագնա անասնապահությունը[18]: Հողերի «ուղղաձիգ գոտևորման» կարևորությունը ընդգծվել է նաև ազգագրագետ Ստ. Լիսիցյանի կողմից[19]: Հայաստանի բաժանումը տարբեր՝ ստորին, միջին և բարձր ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների և դրանց աշխարհագրական ու պատմական նշանակությունը հետագայում նշվել է հատկապես աշխարհագետների կողմից[20]:

Հայկական լեռնաշխարհը կարելի է բաժանել մի քանի լեռնագրական գոտիների՝ ցածր (մինչև մոտ 1300 մ), միջին (մինչև մոտ 2300 մ) և բարձր (մինչև մոտ 4000 մ): Բարձրությունների բաշխման արդյունքում այն սահմանվում է որպես միջին բարձրության լեռնաշխարհ՝ մոտ 1800–2000 մ միջին բարձրությամբ, որը, սակայն, իր դիրքով ավելի բարձր է, քան հարակից Առաջավորասիական և Կովկասյան լեռնաշխարհները[21]:

Համապատասխանաբար Հայաստանի Հանրապետությունում կարելի է առանձնացնել հետևյալ բնակելի գոտիները՝ 1. 390–1000 մ (Արարատյան դաշտ, Կապանի և Մեղրիի դաշտավայրային շրջանները, Հանրապետության հյուսիս-արևելքը); 2. 1000–1500 մ (Արարատյան դաշտը եզերող շրջանները հյուսիսում և հյուսիս-արևելքում, Գուգարաց և Մուրգուզի լեռների միջև գտնվող լեռնային դաշտավայրերը, Արփա և Որոտան գետերի հովիտների նույն բարձրության վրա գտնվող շրջանները); 3. 1500–2300 մ (որի ստորին շերտը՝ մինչև 1900–2000 մ, ներառում է հիմնականում բավականին խիտ բնակեցված հովիտներ Սևանա լճի ավազանում, Շիրակում, Լոռիում): Վերին՝ ենթաալպյան շերտում բնակավայրեր չկան կամ խիստ հազվադեպ են և որի՝ երկրագործության համար պիտանի տարածքները մշակվում են ստորին և նախալեռնային գոտիներում ապրող բնակիչների կողմից: Այսպիսով, Հայաստանի գրեթե բոլոր կենսական կենտրոնները գտնվում են 800–2000 մ վրա[22]:

Վերոհիշյալ պատկերին համապատասխանում են նաև հողաօգտագործման վերաբերյալ տվյալները: Լեռնամարգագետնային հողերը Հայաստանում տարածվում են ծովի մակերևույթից մոտ 2000–4000 մ վրա և կազմում են երկրի մակերեսի 25,8%-ը՝ հանդիսանալով կերարտադրության հիմնական հենքը: Այս տարածքից ստացված խոտն իր սննդարարությամբ բավականին բարձր է տափաստանայինի համեմատությամբ: Բազմադարյան ոչ կանոնավոր արոտների պայմաններում հարուստ խոտերով բնորոշվող արոտավայրերը գնալով փոխվել են դեպի վատը՝ ոչ սննդարարը: Լեռնամարգագետնային հողերը կարելի է բաժանել երկու գոտիների. 1. Մոտ 1800–2300 մ՝ մարգագետնա-տափաստանային կամ ենթալպյան գոտի (կլիման չափավոր ցուրտ՝ կարճ և ցուրտ ամառով ու երկար ձմեռով, բացարձակ մինիմումը ձմռանը՝ –46°, ձյան ծածկույթը մինչ 50–70 սմ, ամռան միջինը՝ +15°, ոչ ցրտային շրջանը՝ 90–120 օր, տարեկան տեղումների քանակությունը՝ 500–600 մմ); 2. մոտ 2300 մ բարձր՝ լեռնա-մարգագետնային կամ ալպյան գոտի (կլիման ցուրտ, 6 ամիս ձմեռ՝ 270 օր ձնածածկ, միջին ամառային ջերմաստիճանը՝ +10°, ոչ ցուրտ օրերը՝ 50–60; միջին տարեկան տեղումները՝ 800–950 մմ)[23]:

Լեռնային համակարգերը Հայաստանում հա-

հարավային հատվածներին (Калоев 1981: 34, 53, 111, 202):

17 Багдасарян 1956; Բաղդասարյան և այլք 1971: 16:

18 Калантар 1911: 12–13.

19 Լիսիցյան 1940: 120:

20 Բաղդասարյան և այլք 1971: 10, 31, 51–52, 273–289: Հմմտ. Мкртчян 1962: 48–53; Гргеарян 1964; Խաչատրյան 1982; Գաբրիելյան 2000: 16–17, 281:

21 Зограбян 1979: 11, 16–17: Հմմտ. Бабаян 1982: 7, 202, 217:

22 Минц 1966: 13, 217.

23 Бабаян 1982: 5–9, 11–13, 65, 122–127.

ղորդակցական և տնտեսական գոտիների սահմանի դեր են խաղացել և խաղում: Հզոր լեռնաշղթաներն իրենց գագաթային մասում ներկայանում են որպես տնտեսական «սպիտակ բծեր»՝ բաժանելով խիտ բնակեցված հովիտները և միջլեռնային գոգահովիտները (բնակչության տնտեսական գործունեության կենտրոնները), որոնք հիմնականում ի հայտ են գալիս որպես տնտեսական ենթաշրջանների սահմաններ: Հայաստանի լեռներում 2800–3000 մ վրա տարածվում են ալպյան, 2200/2400–2800/3000 մ վրա՝ ենթաալպյան մարգագետինները, որոնք ամենաարդյունավետն են ամառային անասնապահության համար: Չնայած բարձրադիր մարգագետինները միայն 2–3 ամիս են ծաղկում, բայց բուսականությունն այստեղ շատ բազմազան է[24]:

Բարձր լեռնային գոտիներն իրենց բնական տարրերով հաճախ կրկնում են միջին և ստորին միջավայրերի պատկերը՝ որպես կանոն բաղկացած լինելով հետևյալ բնական միավորներից՝ լիճ/ լճակ, սարահարթ, լեռնային շրջապատ: Այդ կրկնությունն առկա է նաև բնակավայրերի և ամառանոցների տեղաբաշխման մեջ և համապատասխան տեղանուններում (օրինակ՝ Գեղհովիտ գյուղ, Գեղհովիտ միջին բարձրության ժամանակավոր բնակավայր, Գեղհովիտ ամառանոց)[25]:

### Տարածության ուղղահայաց ընտելացման ժամանակագրական առանձնահատկությունները

Վերջին տասնամյակի մեր դաշտային հետախուզական աշխատանքները Հայաստանի հատկապես բարձր լեռնային գոտիներում «Վիշապ» ծրագրի սահմաններում, հիմնվելով հետախուզական աշխատանքների և պեղումների տվյալների վրա, ի հայտ են բերում ուղղահայաց տարածության ընտելացման և ներքին գաղթերի վերաբերյալ՝ հնագիտական նյութի և ռադիոածխածնային տվյալներով ձևավորված ժամանակագրական մի պատկեր, որը ստորև կցանկանայինք ներկայացնել որպես աշխատանքային հիպոթեզ:

Մասնավորապես, ըստ այդ տվյալների նախնական վերլուծության, բարձր լեռնային գոտիները ակտիվորեն յուրացվել են նեոլիթ/խալկոլիթի, միջին և ուշ բրոնզի, վաղ երկաթի ընթացքում, միջնադարում և նոր շրջանում: Դրանք գրեթե չեն օգտագործվել կամ շատ թույլ են օգտագործվել վաղ բրոնզում, ուրարտական և անտիկ շրջանում: Համապատասխանաբար տվյալ դարաշրջանների առանձին մշակութային խմբերը ցուցաբերում են լանդշաֆտի ուղղահայաց կամ հորիզոնական յուրացման միտումներ:

Այս համատեքստում առանցքային է ուրարտական պետության գոյության շրջանը, որը նշանավորվում է Հայաստանում հինարևելյան ոճի վարչակարգի հաստատմամբ: Ուրարտացիները կենտրոնանում են դաշտավայրերում՝ ի տարբերություն բրոնզ-երկաթեդարցիների, որոնք տեսանելի են նաև նախալեռներում ու բարձր լեռներում: Սրանով հանդերձ ուրարտական վերնախավը մեկ անգամ ևս նմանակում է հին առաջավորասիական քաղաքակրթությունների արժեհամակարգը: Ասվածն արտահայտված է նաև ոռոգման համակարգերի կիրառման համատեքստում. եթե մինչուրարտական հասարակությունները իջեցնում են ջուրը բարձր լեռներից, ապա ուրարտացիները, կենտրոնանալով դաշտավայրերում, շնորհիվ ինժեներական հմտությունների, կարողանում են օգտագործել հարակից ջրային պաշարները՝ ինչպես ոռոգովի երկրագործության կազմակերպման արդյունքում զարգացած հինարևելյան պետությունները: Այլ խոսքերով՝ նրանք ռացիոնալ են օգտագործում ժամանակն ու տարածությունը:

Անտիկ շրջանը, կենտրոնաձիգ պետական ապարատով և բնական ռեսուրսների ու մարդկային ներուժի օգտագործման օրինաչափություններով, որոշակիորեն նմանվում է ուրարտականին և հստակորեն ուղղված է դեպի դաշտավայրեր և նախալեռներ: Մինչդեռ միջնադարյան՝ բնույթով ֆեոդալական հասարակությունը ակտիվորեն յուրացնում է բարձր լեռնային գոտիները: Բարձր լեռներում ապրող մարդկանց, ուխտագնացությունների և ծեսերի, սրբավայրերի, կոթող-խաչքարերի, արձանագրությունների մասին վկայում են հայ միջնադարյան պատմիչները, ինչպես նաև առկա հնագիտական տվյալները[26]:

Բարձր լեռնային գոտիների յուրացման վերոհիշյալ պատկերը չի կարող լինել բացարձակ, այն ընդամենը ցույց է տալիս զարգացման միտումները: Ի հաստատումն ասվածի հիշենք, օրինակ, ուրարտական բարձր լեռնային Քելիշինի արձանագրու-

24 Минц 1966: 207, 262: Հմմտ. Բալոյան 1982; Զիրոյան, Բալոյան 1982:

25 Այս երևույթի առանձին տարրերը վաղուց նկատվել են գիտնականների կողմից: Այսպես, արդեն 20-րդ դ. սկզբին, խոսելով արագածյան բարձր լեռնային Սև լճի մասին որպես ջրակուտակող համակարգի, Մ. Տէր-Մովսիսեանը գրում է, որ այն իր դիրքով և բնական ջրամբարի գործառույթով նմանվում է միջին լեռնային Սևանա լճին (Տէր-Մովսիսեան 1912: 235):

26 Շահինյան 1974; Դևրիկյան 2001: 8, 18, 22–25, 30–36:

թյան հանգամանքը, որը առաջին հայացքից կարող է հակասել մեր հիպոթեզին, թե ուրարտացիները բարձր լեռնային գոտիներ չեն բարձրացել: Այս տեսանկյունից ուշագրավ է Արտամետի հիմնադրման համատեքստում Թովմա Արծրունու (I. 8) նկարագրած մշակութային լանդշաֆտի կազմակերպման տարբերակը (աղբյուրներով, գոգավոր հովիտներով և լճերով բնորոշվող բարձր լեռնային սրբազան գոտիներ համապատասխան արձաններով, ջրային ռեսուրսների ուղղում դեպի դաշտավայրային բնակավայրեր), որը վերաբերում է անտիկ/ուրարտական շրջանի Հայաստանին, սակայն իր բնույթով ավելի արխայիկ է և հիշեցնում է, օրինակ, միջին և ուշբրոնզեդարյան վիշապաքարային միջավայրերը[27]:

## Վերջաբան

Ուղղահայաց գոտիականությունը որպես կենսատարածքի կազմակերպման առանցքային ձև էական դեր է խաղում Հայկական լեռնաշխարհի անցյալի հիմնական փուլերում և մասնակի զուգահեռներ է գտնում կովկասա-փոքրասիական (հատկապես խեթա-խուռիական ոճի) հասարակություններում[28]: Լեռնաշխարհի ժողովուրդների անցյալն այդ գոտու ներսում տեղաշարժվելու, դրա առավելություններին ու թերություններին ադապտացվելու տևական մի ընթացք է: Ուղղահայաց գոտիականության և մարդկային խմբերի համապատասխան շարժերի վրա հենված կենսատարածքի կազմակերպման քննարկվող տարբերակը լեռնաշխարհը ներկայացնում է որպես ներփակ համակարգ, որի ներսում, մարդկային խմբերի ուղղահայաց և կրկնվող գաղթերի արդյունքում յուրացվել է ողջ տարածքը (ստորին, միջին և բարձր լեռնային գոտիներում) և ձևավորել է երկրի ներքին հաղորդակցական համակարգը: Լեռնաշխարհի երեք խոշոր լճերը, որոնք գտնվում են միջին (նախալեռնային) մակարդակի վրա, էական դեր են խաղացել երկրի պատմամշակութային զարգացումներում: Այդ լճերը շրջապատող լեռները եղել են բնական այն սահմանները, որոնք մի կողմից որպես թիկունք պաշտպանական դեր են խաղացել, մյուս կողմից էլ դարձել են այդ տարածքների կրողների հոգևոր կենտրոններ: Լեռների ու լճերի միջև ընկած սարահարթերում ընթացել է լեռնաշխարհի բնակչության կյանքը: Այս համակարգում զարկերակի դեր է խաղացել հատկապես Արաքս գետը, որն իր արգասաբեր ու երկարավուն ընթացքի պատճառով մշակութաkerտ գործոն է դարձել լեռնաշխարհի ողջ շրջանում՝ ուղղորդելով ներքին տեղաշարժերի ընթացքը սկսած իր բարձրլեռնային ակունքներից:

**Արսեն Բոբոխյան**

*ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ*
*Չարենցի 15, 0025, Երևան, Հայաստանի Հանրապետություն*

arsen.bobokhyan@sci.am

## Գրականություն

Ավետիսյան Պ., Բոբոխյան Ա. 2005. Տիգրիսի և Եփրատի ակունքներն ըստ Աստվածաշնչի, Վ. Բարխուդարյան (խմբ.), *Աստվածաշնչական Հայաստան: Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու*: Երևան, «Նոյյան տապան», էջ 82–90:

Բալոյան Ս. Ա. 1982. Քարի լճի ափին: *Հայաստանի բնություն* թիվ 2, էջ 44–46:

Բաղդասարյան Ա. Բ., Աբրահամյան Գ. Ս., Ալեքսանդրյան Գ. Ա., Ասլանյան Ա. Ա., Զոհրաբյան Լ. Ն. (խմբ.) 1971. *Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն*: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:

Բոբոխյան Ա. 2020. «Թարմանա ծովն ու Արարա լեռը». կենսատարածքի կազմակերպման առանձնահատկությունները Վանա լճի ավազանում Ք. ա. II հազարամյակում: *Լրաբեր հասարակական գիտությունների* թիվ 3, էջ 248–280:

Բրյուսով Վ. 1967. *Հայաստանի և հայ կուլտուրայի մասին*: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:

Գաբրիելյան Հ. Կ. 2000. *Հայկական լեռնաշխարհ*: Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն:

Դևրիկյան Վ. 2001. *Լուսավորչի կանթեղը*: Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպ.:

Զիրոյան Ա. Ն., Բալոյան Ս. Ա. 1982. Արագածի ալպյան կայանը: *Հայաստանի բնություն* թիվ 3, էջ 15–17:

Լիսիցյան Ստ. 1940. *ՀԽՍՀ ֆիզիկական աշխարհագրություն*: Երևան, «Հայպետհրատ»:

Խաչատրյան Լ. Ա. 1982. Հայկական ՍՍՀ բարձրլեռնային ավտոմայրուղիների առանձնահատկությունները: *Հայաստանի բնություն* թիվ 3, էջ 42–43:

Հարությունյան Ս. 2000. *Հայ առասպելաբանություն*: Բեյրութ, Վահէ Սէթեանի տպ.:

Մարգարյան Հ. Զ. 2018. Արտաշես արքայի Արտամատ քաղաքը՝ ըստ Թոմա Արծրունու «Արծրունյաց տան պատմության»: *Լրաբեր հասարակական գիտությունների* թիվ 1(652), էջ 285–300:

[27] Հմմտ. Մարգարյան 2018: Տարբեր ժամանակաշրջաններում մշակութային զարգացումների նմանության և այդ մշակույթների՝ տարածությանը ադապտացվելու եղանակների նույնության մասին լեռնաշխարհում խոսում են նաև այլ հեղինակներ (հմմտ. Rothman 2000; նույնի՝ 2005: 58):

[28] Այս մասին ավելի մանրամասն՝ Բոբոխյան 2020:

Շահինյան Ա. 1974. VII դարի կոթողներ Գեղամա լեռներում. *Էջմիածին* թիվ 7–8, էջ 75–80:

Տէր-Մովսիսեան Մ. 1912. Էջմիածնի դաշտի ոռոգումը. *Արարատ* թիվ 4, էջ 334–346:

Бабаян Г. Б. 1982. *Агрохимическая характеристика горно-луговых почв Армянской ССР*. Ереван: Институт *агрохимических* проблем и гидропоники.

Багдасарян А. Б. 1956. Климат Армянского нагорья по «Истории Армении» Мовсеса Хоренаци. *Известия АН Арм. ССР: Общественные науки* 5: 121–123.

Гамкрелидзе Т. В., Иванов В. В. 1984. *Индоевропейский язык и индоевропейцы*. Тбилиси: Тбилисский государственный университет.

Гргеарян А. К. 1964. Распределение населения Армянской ССР по вертикальным поясам, в кн. *География населения в СССР: основные проблемы*. 230–238. Москва-Ленинград: Наука.

Зограбян Л. Н. 1979. *Орография Армянского нагорья (Опыт орографического анализа морфоструктуры)*. Ереван: Издателство АН Армянской ССР.

Калантар А. А. 1911. Вопрос об изучении зональных явлений на Кавказе. *Кавказское хозяйство* 17/18: 1–16.

Калоев Б. А. 1981. *Земледелие народов Северного Кавказа*. Москва: Наука.

Кликс Ф. 1983. *Пробуждающееся мышление: у исторков человеческого интеллекта*. Москва: Прогресс.

Минц А. А. (ред.) 1966. *География хозяйства республик Закавказья*. Москва: Наука.

Мкртчян С. С. (ред.) 1962. *Геология Армянской ССР*, том I: *Геоморфология*. Ереван: Издательство АН Армянской ССР.

Островский А. Б. 2005. *Парадигма мифологического мышления: очерк вклада К. Леви-Строса*. Санкт-Петербург: Кронос.

Раевский Д. С. 1985. *Модель мира скифской культуры*. Москва: Наука.

Штернберг Л. Я. 1936. *Первобытная религия в свете этнографии*. Ленинград: Институт народов Севера.

Büttner R., Peltz J. (eds) 2006. *Mythical Landscapes Then and Now*. Yerevan: Antares.

Foster K. P. 2000. Volcanic Landscapes in Lugal-e, in: S. De Martino, F. M. Fales, G. B. Lanfranchi, I. Milano (eds). *Landscapes, Territories, Frontiers and Horizons in the Ancient Near East II* (Rencontre Assyriologique Internationale XLIV). 23–39. Padova: Sargon.

Gadjimuradov I. 2004. Die vulkanische Urheimat der altanatolischen Sukzessions- und Steingeburtsmythen. *Altorientalische Forschungen* 31/2: 340–357.

Garibian de Vartavan N. 2009. *La Jérusalem nouvelle et les premiers sanctuaires chrétiens de l'Arménie*. Yerevan: Isis Paria.

Haas V. 2006. *Die hethitische Literatur*. Berlin – New York: Walter de Gruyter.

Rothman M.S 2000. Environmental and Cultural Factors in the Development of Settlement in a Marginal Highland Zone, in: L. E. Stager, J. A. Greene, M.D. Coogan (eds). *The Archaeology of Jordan and Beyond, Essays in Honour of J. A. Sauer*. 429–443. Winona Lake, Indiana: Eisenbrauns.

Rothman M.S 2005. Transcaucasians: Settlement, Migration, and Trade in the Kura-Araxes Periods. *Archäologische Mitteilungen aus Iran und Turan* 37: 53–62.

# VERTICAL MIGRATIONS: TRAITS OF SPACE DOMESTICATION WITHIN THE ARMENIAN HIGHLAND

*Arsen Bobokhyan*

**Keywords**: Armenian Highland, vertical zonality, spatial modeling, early historical societies.

**Abstract**: Vertical zonality as a key form of living space organization plays a significant role in the main stages of the past of the Armenian Highland and finds partial parallels in Caucasian and Asia Minor societies (especially of the Hittite and Hurrian style). The history of the Highland peoples is a long process of movements within that zone, adapting to its advantages and disadvantages. The discussed version of the organization of living space based on vertical zonality and the corresponding movements of human groups defines the Highland as a closed system, where the entire area was domesticated (in the lower, middle and high mountain zones) as a result of vertical and repeated migrations of human groups, thus creating the internal communication system of the country. The three large lakes of the Highland, which are located at the middle level, have played a significant role in the country's historical and cultural developments. The mountains surrounding those lakes were the natural borders, which on the one hand played a defensive role as a rear, and on the other hand became the spiritual centers of those ancient societies. In the plateaus between the mountains and lakes, the life of the people of the Highland took place. In this system, especially the River Araxses played a role of an artery, which, due to its fruitful and long course, became a culture-shaping factor in the whole area of the Highland, directing the course of internal movements of human groups starting from its highland sources.

# ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԸ. «ԿԱՏԱԿՈՄԲԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹ»-Ի ՕՐԻՆԱԿԸ

*Երվանդ Գրեկյան*

**Բանալի բառեր**. Եվրասիական տափաստանային գոտի, «Յամնայա մշակույթ», «Կատակոմբային մշակույթ», հնդեվրոպական լեզուներ, կլիմայական փոփոխություններ, միգրացիաներ, կատակոմբային թաղումներ:

**Ամփոփում**. Եվրասիայի բրոնզի դարը դինամիկ ժամանակաշրջան էր՝ բնակչության զանգվածային տեղաշարժերի վկայություններով, որոնք մեծապես պայմանավորեցին նաև լեզվական այն իրավիճակը, մասնավորապես Եվրոպայում, որը մենք ունենք վերջին մի քանի հազար տարում: Այդ նույնը վերաբերում է նաև Հայկական լեռնաշխարհին: Լեռնաշխարհի վաղբրոնզեդարյան՝ «Կուր-արաքսյան» մշակույթի անկումը, մի կողմից, ուղեկցվել է բնակչության զանգվածային տեղաշարժերով և արտագաղթով, իսկ մյուս կողմից տեղի է ունեցել դեպի լեռնաշխարհ էթնիկական նոր խմբերի ներհոսք: Դրանց թվում կարող էին լինել նաև «Կատակոմբային մշակույթ»-ի կրողները, որոնց տեղաշարժերն իրենց հայրենիքից դուրս ըստ երևույթին փոխկապակցված էին կլիմայական և միջավայրային զորեղ փոփոխությունների հետ:

## «Կատակոմբային մշակույթ»-ը. ընդհանուր ակնարկ

«Կատակոմբային մշակույթ»-ը (հայտնի է նաև «Կատակոմբային մշակութային ընդհանրություն», «Կատակոմբային մշակութային-պատմական ընդհանրություն» անվանումներով) պոնտ-կասպյան տափաստանային և անտառատափաստանային գոտիներում ծնունդ առած հնագիտական մշակույթի անվանում է, որն իր անունը ստացել է թաղման կառույցների տիպից ելնելով[1]: Դեռևս 1900-ական թթ. սկզբներին Վասիլի Ալեքսեյի Գորոդցովի կողմից Ռուսական կայսրության Խարկովի և Եկատերինոսլավի նահանգներում բացահայտված հնագիտական այս մշակույթի հուշարձանները[2] սփռված են հիմնականում Վոլգայի միջին և ստորին ավազանի և Դնեստր գետի միջև՝ հասնելով ընդհուպ մինչև Դանուբի դելտա: Այն միաժամանակ գոյակցել, ապա և հաջորդել է Ք.ա. մոտ 3400/3300–2600/2500 թթ. գոյություն ունեցած «Յամնայա մշակույթ»-ին, իսկ աշխարհագրական առումով զբաղեցրել նրա տարածքների մեծ մասը[3], ընդհանուր առմամբ՝ շուրջ 750 հազ. կմ² տարածք (Նկար 1/1)[4]: «Կատակոմբային մշակույթ»-ի վաղ փուլի հուշարձանները (Ք.ա. մոտ 2900/2800–2600/2500 թթ) հիմնականում զտնվում են մերձազովյան տարածքներում՝ Դոն և Դնեպր գետերի ստորին հոսքերի միջև, և համաժամանակյա են «Յամնայա մշակույթ»-ի ուշ փուլի դամբարանների հետ[5]: «Կատակոմբային մշակույթ»-ի զարգացած փուլը թվագրվում է Ք.ա. մոտ 2500/2400–2100/2000 թթ-ով[6] և ունեցել է տարբեր տեղային դրսևորումներ («խմբեր» կամ «մշա-

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 20TTSH-005 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում: Շնորհակալություն ենք հայտնում Պ. Ավետիսյանին, Ա. Քոսյանին, Ա. Բոբոխյանին և Ա. Պետրոսյանին հոդվածին ծանոթանալու և օգտակար դիտարկումների համար:

[2] Городцов 1905a: 189–200; նույնի՝ 1905b: 226–340; նույնի՝ 1907a: 221–233, 278; նույնի՝ 1907b: 286–365.

[3] Mallory, Adams 1997: 92–93; Парцингер 2013: 34; Gerling 2015: 20–21; Chernykh 2017: 172, Figure 11.2.

[4] Chernykh 2017: 177.

[5] Pustovalov 1994: 129; Telegin *et al.* 2003: 132–184; Govedarica *et al.* 2006: 107–112; Кайзер 2011: 26. Հմմտ., միաժամանակ, Chernykh 2009: 128–130; նույնի՝ 2017: 179–182, Figure 11.15.

[6] Rassamakin 2011: 294; Gerling 2015: 19.



*Նկար 1.* *1. «Կատակոմբային մշակույթ»-ի տարածման գոտին (1); «Յամնայա մշակույթ»-ի տարածման գոտին (2); «Պարանային խեցեղենի մշակույթ»-ի (3) և «Զանգակաձև գավաթների մշակույթ»-ի (4) տարածման գոտիները: Ըստ Говедарица / Govedarica 2013: 96, рис./Abb. 1;*
*2. Санжаров, Черных 2021: 14, фото 1; 3-4. Санжаров, Черных 2021: 13, рис. 2;*
*5. Санжаров, Черных 2021: 74, фото 16; 6. Санжаров, Черных 2021: 81, фото 24.*

կույթներ»), ինչպիսին է, օրինակ, «Մանիչյան կատակոմբային մշակույթ»-ն իր արևմտյան և արևելյան խմբերով, համապատասխանաբար՝ Արևմտյան և Արևելյան Մանիչ գետերի ավազանում[7]: Ենթադրվում է, որ «կատակոմբյան» բնակչության թվաքանակը տատանվել է շուրջ 50–60 հազ. մարդու սահմաններում[8]:

«Կատակոմբային մշակույթ»-ը գերազանցապես ներկայանում է դամբարանային կառույցներով: Դամբարանների կառուցվածքը, թաղման գույքը և ծեսը մշակույթի վաղ փուլում հիմնականում նույնական են: Դրանք մեկ և ավելի կից խցով, երկարաձիգ կոշիկ հիշեցնող կառույցներ են, որտեղ մուտքն ապահովվում էր ուղղահայաց հորի միջոցով (Նկար 1/5–6; 2/1–2), ծածկվել են դամբանաթմբով կամ կառուցվել ավելի վաղ փուլի՝ «Յամնայա մշակույթ»-ի դամբանաթմբերի մեջ (Նկար 1/2–4)[9]:

Դամբարանային՝ սովորաբար համեստ գույքը ներառել է այս մշակույթին բնութագրական ուղղահայաց-գոտիական զարդարանքով «շաղգամաձև» խեցանոթներ (Նկար 2/3–4) և տարաբնույթ ձեռածեփ խեցեղեն (Նկար 2/5–12), պաշտամունքային կրակամաններ (Նկար 3/1–4), որոշ դեպքերում՝ պղնձե, մկնդեղային բրոնզե և քարե զենքեր (մականներ, տապարներ, դաշույններ, նետասլաքներ, Նկար 3/5–6[10]), աշխատանքային գործիքներ և զարդեր (Նկար 3/9–10): Թաղումները, թեև ոչ միշտ, ուղեկցվել են նաև կենդանական զոհաբերություններով[11]: Ի տարբերություն նախորդող դարաշրջանի՝ դամբարանների վրա մարդակերպ կոթողներ քիչ են հանդիպում[12]: Թաղման ծեսում տարածված էր մահացածի մարմինը օքրայով պատելու երևույթը[13]: Յուրահատուկ է մահացածի դեմքի վերապատկերումը մարմնից անջատված գանգը օքրայով/կավով ծեփելու («դիմակների») միջոցով, ակնախոռոչները փակվել են օքրայի գնդերով կամ կավով, քթանցքը՝ ծխանքով կամ խեցիով, նույն կերպ փակվել է նաև բերանը (Նկար 3/11–12): Այս երևույթը բնորոշ էր հատկապես «Ինգուլյան կատակոմբային մշակույթ»-ի հուշարձաններին: Նման գտածոների թիվը հասնում է շուրջ հարյուրի[14]: Ոսկրաբանական մնացորդները վկայում են, որ «Կատակոմբային մշակույթ»-ի բնակչության շրջանում տարածված էր գանգը արհեստական ձևախեղման ենթարկելու երևույթը[15], ինչը որոշ խմբերի մոտ հասնում էր ընդհուպ մինչև 70 տոկոսի[16]:

Անվավոր փոխադրամիջոցների մեծաքանակ վկայություններ են հայտնի կատակոմբային դամբարաններում («Տյագունովա մոգիլա», «Կրիվոյ Ռոգ», «Բոլշոյ Իպատովսկի», «Իժևկա», «Պերվոկոնստանտինովկա», «Էլիստա», «Բոլոտնայա», «Ուլան IV» ևն)[17], ընդհանուր առմամբ՝ շուրջ հարյուր քսան թաղում սայլերով կամ դրանց առանձին մասերով[18]: Դրանք հոծ անիվներով քառանիվ և երկանիվ սայլեր են՝ բաց կամ փակ թափքով (Նկար 3/13–14), լծվել են խոշոր եղջերավորներ[19]: Դրանց կավե մանրակերտերը ևս պատկերացում են տալիս սայլերի տեսքի և կառուցվածքի մասին (Նկար 3/15)[20]: Որոշ սայլերի կողերը փորագրված են և հիշեցնում են լճաշենյան օրինակները[21]: Դամբարաններում սայլերը դրվել են ապամոնտաժված վիճակում՝ մուտքի հորի հա-

7 Андреева 2014. Կատակոմբային մշակույթի շուրջ առկա է մեծածավալ գրականություն: Ամփոփիչ հրատարակություններից տե՛ս, օրինակ, Попова 1955; Mallory, Adams 1997: 92–94; Jones-Bley 1999: 13–16; Кияшко 2002; Kaiser 2003; 2019; Иванова и др. 2005: 147–160; Shishlina 2008: 105–156; Otroshchenko 2013: 21–38; Gerling 2015: 19–25; Chernykh 2017: 177–178, ևն:

8 Mallory, Adams 1997: 92.

9 Թաղման ծեսի համար մանրամասն տե՛ս, օրինակ, Ślusarska 2006: 64–162; Андреева 2014; ևն:

10 Klochko, Pustovalov 1994: 196–215; Jones-Bley 1999: 31–56; Klochko 2001: 92–119; Кияшко 2002: 20–63.

11 Bunyatyan 2003: 278.

12 Otroshchenko 2013: 36–38; Kaiser 2019: 208. Գրականության և քննարկումների համար տե՛ս Синжаров 2009: 32–43; Санжаров, Черных 2021: 47–49, 114–120, 141–151, 180–182.

13 Ամփոփ տե՛ս, օրինակ, Фещенко 1990: 97–99; Jones-Bley 1999: 14–15; Небрат 2011: 121–125.

14 Новикова, Шилов 1989: 129–134; Евдокимов 1990: 18–20; Пустовалов 1999: 222–255, рис. 17–19; Shishlina 2006: 59–66; Kaiser 2006: 45–58; նույնի՝ 2020: 180, Abb. 8; Otroshchenko 2013: 33–34, Figure 5.

15 Jones-Bley 1999: 14; Казарницкий 2012; Балабанова 2018: 219–227.

16 Mallory, Mair 2008: 239.

17 Novozhenov 2012: 134–142, Figures 77/3; 78–80; Шишлина и др. 2013: 119–120, Ил. 1; Шишлина и др. 2014: 155–168 и Табл. 2; Shishlina *et al.* 2014: 378–394, Figure 1; Гей 2014: 413–416; Kaiser 2018: 142, Abb. 2; 145–148, Taf. 1–2.

18 Авилова, Гей 2018: 46. Տե՛ս նաև Избицер 2010: 193; Novozhenov 2012: 130. Հմմտ. նաև Kaiser 2018: 139–140.

19 Кузьмина 1974: 69–70; Kuz'mina 2007: 107–108; Belinskij, Kalmykov 2004: 201–220; Shishlina *et al.* 2014: 386–390, Figure 7 (գրականությամբ):

20 Տե՛ս, օրինակ, Jones-Bley 1999: 57; Мамонтов 2010: 68–71.

21 Shishlina *et al.* 2014: 388.




*Նկար 2. 1. Иванова и др. 2005: 55, рис. 34; 2. Санжаров, Черных 2021: 73, рис. 29;
3. Кекеев, Буратаев 2016: 79-80, 291, рис. 39; 4. Кекеев, Буратаев 2016: 116, 302, рис. 71;
Wilhelm G. 1994. Mittan(n)i, Mitanni, Maitani. A. Historisch. *Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie* 8·3./4.: 286–296.

# CLIMATE MIGRANTS: THE CASE OF "CATACOMB CULTURE"

*Yervand Grekyan*

**Keywords**: Eurasian Steppe Zone, "Yamnaya Culture", "Catacomb Culture", Indo-European languages, climate changes, migrations, catacomb burials.

**Abstract**: The Eurasian Bronze Age was a dynamic period with evidences of massive population migrations that also greatly conditioned the linguistic situation, particularly in Europe, that we have had in the last few thousand years. The same applies to the Armenian Highland. The decline of the Early Bronze Age Kura-Araxes culture of the highland, on the one hand, was accompanied by massive population movements and migrations and, on the other hand, there was an influx of new ethnic groups into the highland. Among them may have been the bearers of the "Catacomb Culture", whose migrations outside their homeland in the Pontic-Caspian steppe were apparently correlated with global climatic and environmental changes.

# ՔԱՐԱՇԱՄԲԻ ԳԱՎԱԹԸ ԽԱԹԱԽԵԹԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

*Համիկ Հմայակյան*

**Բանալի բառեր**. Քարաշամբ, գավաթ, տոն, խաթական կոշիկներ, առյուծ, ընձառյուծ, KI.LAM, $^{KUŠ}$ESIR:

**Ամփոփում**. Քարաշամբի գավաթը (Ք.ա 22–21-րդ դդ.) համարվում է Հայաստանի ամենաուշագրավ հնագիտական գտածոներից մեկը: Հետազոտողների կողմից գավաթի պատկերագրության մեջ դիտարկվել է միջագետքյան և փոքրասիական պատկերագրության ոճական առանձնահատկությունների և այսրկովկասյան ոսկերչական նմուշների սինթեզումը: Սույն հոդվածում քննարկվում են այլ մանրամասնություններ՝ գավաթի պատկերագրության մեջ մարդկանց հանդերձանքի մաս կազմող կոշիկների, առյուծների ու ընձառյուծների պատկերները, որոնք իրենց հնարավոր զուգահեռներն ունեն հին փոքրասիական մշակույթում՝ դրանք դիտարկելով խեթական գրավոր աղբյուրներում պահպանված նյութերի համատեքստում, ինչպես նաև որոշ համադրություններ կատարելով խաթական ծագմամբ խեթական տոներից մեկի՝ KI.LAM-ի ընթացքի ու ատրիբուտների հետ:

Քարաշամբի գավաթի համատեքստում մեր կողմից քննարկված մի շարք հին փոքրասիական իրողություններ տանում են խեթական թագավորության վաղ փուլեր կամ նախախեթական շրջան: Առյուծների ու հովազների պատկերագրությունը հնագույն հին փոքրասիական ավանդույթներ ունի, իսկ արքայի՝ առյուծի ու հովազի հետ համադրության ամենավառ օրինակը Խաթուսիլիս I-ի հետ է կապվում, ով խեթական առաջին արքաներից էր: KI.LAM տոնի ատրիբուտիկան, որ դիտարկել ենք գավաթի պատկերագրության համատեքստում, նույնպես առավել հին՝ խաթական արմատներ ունի: Այսպես կոչված «Անիտտայի տեքստը» (հին խեթական դարաշրջան) հետազոտողները համեմատել են KI.LAM տոնի նկարագրության հետ: Ընդ որում, տեքստում նկարագրված արքայական որսի ընթացքում որսված կենդանիները հիմնականում զուգորդվում են Քարաշամբի գավաթի կենդանիների հետ:

Կարելի է եզրակացնել, որ գավաթի պատկերագրությունն իրավամբ կրում է հին փոքրասիական և մասնավորապես՝ խաթական և վաղ խեթական ազդեցություն:

## Ներածություն

Քարաշամբի գավաթը (Ք. ա 22–21-րդ դդ.) համարվում է ամենաուշագրավ հնագիտական գտածոներից մեկը, որը 1987թ. աշնանը հայտնաբերել է ՀԽՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակից Վահան Հովհաննիսյանը: Վերջինիս գրչին է պատկանում առաջին ընդարձակ ուսումնասիրությունը, որում անդրադարձ է կատարել նաև գավաթի պատկերագրական առանձնահատկություններին, հնարավոր հինարևելյան և հին հնդեվրոպական զուգահեռներին, հորինվածքայուժետային վերլուծությանը, առասպելաբանական համատեքստին և՝ եզրահանգումներում համարելով այն «տեղական արտադրանք՝ բնորոշ Հայկական լեռնաշխարհի ու Փոքր Ասիայի մշակութային արեալին» (Նկար 1)[1]: Նա գավաթի պատկերագրության մեջ տեսնում է հին հնդեվրոպական առասպելական մի սյուժե՝ կապված վարազի որսի հետ, որն իր զուգահեռներն ունի մի շարք ժողովուրդների առասպելներում[2]: Այդ տեսակետը քննարկվել և ընդունվել է այլ ուսումնասիրողների կողմից ևս[3]: Գավաթի պատկերագրական առանձնահատկություններին մանրամասն անդրադարձած այլ հետազոտողներ դիտարկել են միջագետքյան և որոշ

1 Оганесян 1988: 161.

2 Оганесян 1988: 156–160.

3 Պետրոսյան 1997: 55; Հովհաննիսյան 2002: 132:



*Նկար 1. Քարաշամբի գավաթ (Ք.ա. 22-21-րդ դդ.): Աղբյուրը՝ Boehmer, Kossack 2000: 41, Abb 4.*



*Նկար 2. Ալաջահույուքի բարձրաքանդակներից, զրչանկար (Ք.ա. մոտ 1300-1200 թթ.): Աղբյուրը՝ Bonatz 2007: 113, Figure 1:*

առումներով նաև խեթական պատկերագրության ազդեցությունը[4]: Արտահայտված տարբեր տեսակետների արդյունքում, նշված զուգահեռները ու համեմատությունները թույլ են տալիս Քարաշամբի գավաթի պատկերագրության մեջ դիտարկել միջագետքյան և փոքրասիական պատկերագրության ոճական առանձնահատկությունների և Այսրկովկասի տարածքի ոսկերչական նմուշների սինթեզումը[5]:

Միանգամայն համաձայնելով վերոնշյալ տեսակետի հետ՝ մեր նպատակն է անդրադառնալ գավաթի պատկերագրության մեջ կերպարների հանդերձանքի մաս կազմող կոշիկների և առյուծների ու ընձառյուծների պատկերներին, որոնք իրենց հնարավոր զուգահեռներն ունեն հին փոքրասիական մշակույթում՝ քննարկելով նաև վերջիններս խեթական գրավոր աղբյուրներում պահպանված նյութերի համատեքստում: Տարբեր ուսումնասիրողներ ևս խոսել են Քարաշամբի գավաթի պատկերագրության վրա հին փոքրասիական հնարավոր ազդեցությունների մասին, սակայն, առավել քիչ է դիտարկվել նյութը գրավոր աղբյուրների տվյալների համատեքստում:

### «Խաթական կոշիկներ»

Այսպես են կոչվում խեթական տեքստերում վեր ցցված քթերով կոշիկները, որոնք այդքան հաճախակի հանդիպում են խեթական պատկերագրության մեջ՝ հատկապես արական և իգական աստվածությունների[6], թագավորների ու քրմերի պատկերներում (Նկար 2)[7]: Քարաշամբի գավաթում վեր ցցված քթերով կոշիկներ են կրում բոլոր կերպարները, ինչը դիտարկել է Վ. Հովհաննիսյանը՝ համարելով դա խեթական ազդեցություն (Նկար 3)[8]: Ավածին կիավելենք, որ պահպանվել են նաև գրավոր վկայություններ այն մասին, որ խեթական արքաները տարբեր տոների ժամանակ հագնում են խաթական՝ վեր ցցված քթերով կոշիկներ: Խեթական մի տեքստում ներկայացվում է, թե ինչպես են արքայի արձանին հագցնում խաթական տիպի կոշիկներ[9]: Դրանք, ըստ ուսումնասիրողների, Փոքր Ասիայում տարածված են եղել վաղբրոնզեդարյան ժամանակաշրջանից[10]: Խեթական տեքստերում «կոշիկ» բառը գրվում է գաղափարագրով՝ $^{\text{KUŠ}}$E. SIR[11], և հանդիպում են տարբեր գույների կոշիկներ՝ $^{\text{KUŠ}}$E.SIR BABBAR-*TI* – «սպիտակ կոշիկ», $^{\text{KUŠ}}$E.SIR GE$_6$ – «սև կոշիկ» և այլն[12]:

Խաթական տիպի վեր ցցված քթերով այդ կոշիկների պատկերումները, բացի Քարաշամբի գավաթից, հանդիպում են, օրինակ, Ք.ա. 12–11-

4 Boehmer, Kossack 2000: 9–71.
5 Ավետիսյան, Փիլիպոսյան 2007: 92:
6 Bryce 2002: 160.
7 Turgut 2017: 5; Hoffner 2003: 104.
8 Оганесян 1988: 149.
9 Ардзинба 1982: 54–55.
10 Akurgal 1961: 81.
11 Goetze 1947: 184.
12 Nakamura 1995: 111–112.



*Նկար 3. Քարաշամբի գավաթի կերպարների կոշիկները: Աղբյուրը՝ Boehmer, Kossack 2000: Abb. E, հատված:*



*Նկար 4. Լճաշեն, փորագրազարդ գոտի, բրոնզ, Ք.ա. 12-11-րդ դդ. Աղբյուրը՝ Գրիգորյան և այլք 2010: 95:*



*Նկար 5. Քարաշամբի գավաթի ընձառյուծների և առյուծների պատկերներ: Աղբյուրը՝ Boehmer, Kossack 2000: Abb. E, հատված:*

րդ դդ. Լճաշենից հայտնաբերված բրոնզե գոտու պատկերագրության մեջ, որտեղ կառապանը հսկայամարմին մի էակ է, ոտքերին՝ վեր ցցված քթով երկարաճիտ կոշիկներ, իսկ դեմքին՝ առյուծի դիմակ[13], ինչը ևս հետաքրքրություն է ներկայացնում քննարկվող համատեքստում (Նկար 4): Նման կոշիկների պատկերումներ հանդիպում են նաև Հայաստանի տարածքից գտնված այլ իրերի վրա[14], ինչը առանձին ուսումնասիրություն է պահանջում:

## Առյուծների և ընձառյուծների պատկերումները

Վերջիններս ի հայտ են գալիս գավաթի պատկերագրության առաջին երիզում, որի գլխավոր տեսարանը վարազի որսն է. աջ ոտքի վրա ծնկած որսորդն արձակել է նետը, որը խրվել է վարազի մարմնի մեջ, վիրավոր վարազի առջևից առյուծ է պատկերված, հետևից՝ ընձառյուծ, իսկ որսորդի հետևում կանգնած է վզին թոկ կապած շունը: Վարազի որսի տեսարանի ընդհանրությունները ներկայիս Թուրքիայի տարածքում գտնվող նախախեթական և խեթական ժամանակաշրջանի Ալաջահյուք հնավայրից հայտնի պատկերագրության հետ՝ ի դեմս այնտեղ պատկերված որսորդի, նրա կողմից վիրավորված վարազի, շան և այլն, քննարկվել է Վ. Հովհաննիսյանի կողմից[15]:

Երրորդ երիզում ի հայտ է գալիս առյուծը, որը հոշոտում է այծին, իսկ չորրորդում պատկերված են չորս առյուծ և հինգ ընձառյուծ, որոնք շարքով դեպի ձախ են ընթանում, իսկ գավաթը բոլորող վեցերորդ երիզում պատկերված է միայնակ առյուծ և նրա հետևում առյուծների ու ընձառյուծների զույգեր (Նկար 5):

Վ. Հովհաննիսյանը իրավացիորեն համադրել է առյուծների և ընձառյուծների պատկերագրությունը փոքրասիական հայտնի հնավայրեր Չաթալհյուքից և Հաջիլարից հայտնաբերված առ-

[13] Գրիգորյան և այլք 2010: 120:

[14] Վարդանյան 2021: 239, ծնթ. 37:

[15] Оганесян 1988: 156. Ալաջահյուքի վերոնշյալ պատկերների գծանկարները համապատասխան հղումներով տե՛ս Dörfler *et al*: 2011: 118, Plate B1(2), 8.

յուծների ու ընձառյուծների պատկերագրության հետ[16]: Նշվածին մենք կհավելենք, որ վերջիններիս պատկերագրությունը հիրավի հնագույն ավանդույթներ ունի Փոքր Ասիայում դեռևս նեոլիթյան ժամանակաշրջանից սկսած[17], ինչի վկայություններն են Չաթալհոյուքից հայտնի կանացի նստած աստվածուհու կողքին զույգ առյուծ/ընձառյուծի պատկերումները[18], միմյանց դեմ հանդիման կանգնած ընձառյուծների պատկերումները և այլն[19]: Հետաքրքրական են նաև նեոլիթյան ժամանակաշրջանից վկայված ընձառյուծների մորթու պատկերումները[20]: Ընձառյուծները ընդհանրապես հնագույն տարբեր մշակույթներում և մասնավորապես՝ հին փոքրասիականում, ի թիվս այլ հատկանիշների, ունեցել են իշխանության, դիրքի և ուժի սիմվոլիկա[21], և պատահական չէ, որ առյուծների և ընձառյուծների մորթիներ հայտնաբերվել են նաև Ներքին Նավերի «արքայական» համար 1 դամբարանի հատակին[22]:

Ընձառյուծի և առյուծի կապը միմյանց ու թագավորի հետ ի հայտ են գալիս մի շարք խեթական ծեսերում, օրինակ, նոր պալատի կառուցման հետ կապված ծեսում: Դրանցից առաջինը նկարագրում է թագավորի երիտասարդացման ծեսը, որն իրականացվում է լեռան գագաթին մինչև նոր պալատում թագավորի բնակություն հաստատելը: Ծեսն ուղեկցվում էր հետևյալ արտահայտություններով. «*Արի արծիվ, գնա, իմ հմայիլը անհայտացել է, գնա թաղման կրակի մոտ և բեր կավե սափորը: Սափորի մեջ միմյանց փաթաթիր առյուծի šišai-ն ու ընձառյուծի šišai-ն և պահիր դրանք, միացրու դրանք, դարձրու մեկ և տուր մարդու սրտին մոտ, և թող արքայի հոգին միախառնվի իր սրտի հետ*»[23]:

Այստեղ առյուծն ու ընձառյուծը ակնհայտորեն խորհրդանշում են թագավորի սիրտն ու հոգին: Հին թագավորության ժամանակաշրջանից պահպանված, բայց հստակ չթվագրվող մեկ այլ տեքստում, որը կոչվում է «Լաբարնայի ձեռնադրումը», ըստ Քոլինզի, ի հայտ են գալիս նշանակալի ընդհանրություններ վերոնշյալ ծեսի հետ այս հատվածում. «*Վերցրու դա առյուծից, վերցրու դա ընձառյուծից, բեր* [...] *Ինչ Լաբարնան՝ թագավորը, կամենում է, իր հոգու,* [*իր սրտի*] *հետ կապված, թող այդ* (բաները) *բերվեն նրան:* [*Եվ ինչը*] *Տավանանան՝ թագուհին, կամենում է մտնեն իր հոգու* (և) *իր սրտի հետ կապված, թող* [*այդ*] (բաները) *բերվեն նրան*»: Այստեղ ևս դիտարկելի է առյուծի և ընձառյուծի կապը թագավորի հոգու և սրտի հետ[24]:

Հաշվի առնելով վերևում նշված օրինակները՝ մենք կարող ենք ենթադրել, որ Քարաշամբի պատկերագրության մեջ պատահական չեն ընձառյուծների ու առյուծների պատկերագրության միասնաբար ի հայտ գալը: Հատկապես դիտարկելի է առյուծի՝ ընձառյուծի մորթիով պատկերումը (Նկար 6), որը ասես ուղղակի կրկնում է խեթական վերոնշյալ տեքստում երկուսի միախառնման գաղափարը: Եվ գավաթի երրորդ երիզում ի հայտ է գալիս ինքը՝ թագավորը, գահին բազմած, ձեռքին՝ կացինը, իսկ գլխավերևում՝ արևի և իշխանության խորհրդանիշ սկավառակը, որը դարձյալ մեզ տանում է դեպի խեթական իրողություն և իրենից արքայական սիմվոլիկա է ներկայացնում: Սյուժետային մեկ ամբողջության մեջ դիտարկելով նյութը՝ մենք կարող ենք տեսնել պայքարի, արքայական հաղթանակի թեմաները, որի հաղթանակն ապահովողները, սրտի ու հոգու պահապանները, նաև թագավորական իշխանության սիմվոլները, հավանաբար, առյուծներն ու ընձառյուծներն էին: Պատահական չէ Հ.Հոֆֆների հետևյալ ձևակերպումը, որ առյուծները խեթական արքայական գաղափարախոսության անբաժան մասն են կազմում[25]: Խեթական մի շարք տեքստերում նրանք կոչվում էին *šiunnašḫuitar*՝ «աստվածների կենդանիներ», սակայն, միայն Խաթուսիլիս I-ն էր

16 Оганесян 1988: 155.

17 Gunter 2002: 82.

18 Mellaart *et al.* 1989: 54, Plate 12/7–8.

19 Mellaart 1964: Plate 2/a-c; Hodder 2006: 141–142.

20 Meece 2006: 4; Mellaart 1967: Plate 13.

21 Bretschneider, Nys 2008: 12–18. Ի դեպ, այստեղ քննարկվել է նաև Քարաշամբի գավաթը, որի թվագրությունը նշված է Ք.ա. 12–11 դդ., և կարծիք է հայտնվել, որ այդ առավել ուշ ժամանակաշրջանին արդեն բնորոշ են կենդանիների առավել ռեալիստական պատկերումները (Bretschneider, Nys 2008: 14–15, Fig. 22): Հաշվի առնելով Քարաշամբի գավաթի այժմյան թվագրությունը՝ Ք.ա. 22–21-րդ դդ., կարելի է ևս մեկ անգամ փաստել, որ իր ժամանակաշրջանի համատեքստում այն իրավամբ բարձրարվեստ նմուշ է:

22 Սիմոնյան 2021: 47:

23 Collins1998: 15–20.

24 Collins 1998: 15–20; Marcuson 2016: 46.

25 Hoffner 1980: 297.

ինքն իրեն կոչում «առյուծ»[26], և սա ունի իր պատճառները. խեթական արքան դեռևս շարունակում էր ուրք մատուցել խաթական ավանդույթներին[27] և իր իշխանությունը ամրապնդելու խնդիր ուներ:

Եվ կարծես այս ձևակերպումների առհավատչյան մենք տեսնում ենք Քարաշամբի անոթի պատկերագրության մեջ, հատկապես, երբ առյուծը հոշոտում է այծին, որն ի հայտ է գալիս հենց երրորդ երիզում, որտեղ նույն թագավորն է՝ բազմած գահին, ձեռքին՝ կացին, և առջևում՝ ռազմավարը, թշնամու կտրած գլուխները, ձախից՝ պարտված թշնամու զինաթափման, աջից՝ վերջինիս ուղղված հարվածի տեսարանը (Նկար 7): Եվ հատկանշական է նաև այն, որ գավաթի պատկերագրական պատմությունը սկսվում է վարազի որսի տեսարանով, որտեղ թագավորի կողմից վիրավորված վարազի կողքին առյուծների ու ընձառյուծների պատկերներն են և վեցերորդ երիզում եզրափակվում է դարձյալ նրանց պատկերներով:

Ընդհանրապես, թագավորական որսը կարևոր պատկերագրական թեմա է, որ տարածված է ողջ հին աշխարհում և ունեցել է թե՛ կենցաղային, թե՛ սիմվոլիկ իմաստաբանություն: Հետաքրքրական է, որ Քարաշամբի գավաթի պատկերագրության մեջ առկա կենդանիները ի հայտ են գալիս Անիտտա արքային վերագրվող խեթական ամենավաղ թվագրվող տեքստում, որի սյուժեներից մեկը արքայական որսն է, որում Անիտտան պարծենալով նշում է. «*Առաջին օրը ես իմ Նեսա քաղաք բերեցի երկու առյուծ, 70 խոզ, 60 վայրի խոզ և 120* (այլ) *անտառային կենդանիներ,* (այդ թվում) *արջեր, ընձառյուծներ, առյուծներ, եղջերուներ, եղնիկներ և* [*վայրի այծեր*]»:

Ուսումնասիրողները ուշադրություն են դարձրել այն հանգամանքին, որ այդ նույն կենդանիները գրեթե նույնությամբ հանդիպում են KI.LAM տոնի ժամանակ[28]:

Հարկ է նշել, որ ըստ մեր դիտարկումների, խաթական ծագմամբ[29] և խեթերի կողմից իրականացվող վերոնշյալ KI.LAM տոնի[30] ընթացքը, ծիսական ատրիբուտները շատ բանով հիշեցնում են գավաթի մի շարք պատկերագրական ու սյուժետային առանձնահատկությունները: Տոնը հավանաբար իրականացվել է գարնանը[31] թագավորական ընտանիքի կողմից՝ իրենից ներկայացնելով ճանապարհորդություն խեթական տերության մայրաքաղաքով, որ միտված էր պտղաբերությանը:



*Նկար 6. Քարաշամբի գավաթի ընձառյուծի մորթով առյուծի պատկեր: Աղբյուրը՝ Boehmer, Kossack 2000: Abb. E, հատված:*



*Նկար 7. Քարաշամբի գավաթի գահին բազմած արքան՝ ձեռքին կացին: Աղբյուրը՝ Boehmer, Kossack 2000: Abb. E, հատված:*

Առանձին կետերով ներկայացնենք տոնի գլխավոր հատկանիշներն ու ատրիբուտները՝ դիտարկելով վերջիններս Քարաշամբի գավաթի պատկերագրության համատեքստում:

Տոնի կարևոր առանձնահատկություններից են.

1. Ամենատարբեր վայրի կենդանիների քանդակների կիրառումը, այդ թվում՝ արծաթյա ընձառյուծ, ոսկյա առյուծ, վայրի վարազներ՝ արծաթից և լազուրիտից և արծաթյա արջ[32], վայրի խոյ/վայրի այծ[33]: Այդ կենդանիների պատկերները, բացի արջից, հանդիպում են նաև Քարաշամբի գավաթի վրա:
2. Ընձառյուծի ունեցած դերակատարությունը այդ տոնի ժամանակ: Ինչպես վերը նշվեց, ծեսի ժամանակ տանում էին տարբեր կենդանիների քանդակներ, որոնցից առաջինը ընձառյուծինն էր, այնուհետև ծեսի նկարագրության մեջ նշվում է, որ ծիսական պարեր էին կատարվում թագավորի առջև, ով կանգնած էր դարպասների մոտ, և այդ պարերը հիշեցնում էին ընձառյուծի պար: «*Պտտվում էին տեղում և*

[26] Lorenz, Schrakamp 2011: 131; Collins 2007: 92.
[27] Collins 1998: 19.
[28] Collins 2002: 250.
[29] Haas 1994: 748; Taracha 2009: 42–43.
[30] Singer 1983; նույնի՝ 1984.
[31] Gurny 1977: 31.
[32] Taracha 2009: 42.
[33] Collins 2010: 60–61.



Նկար 8. *Քարաշամբի գավաթի նիզակակրի մենամարտը սրով զինվածի հետ, նիզակակրի հաղթանակը սրով զինվածի նկատմամբ: Աղբյուրը՝ Boehmer, Kossack 2000: Abb. E, հատվածներ՝ համակցված:*

*ընձառյուծի պես էին պարում, բարձրացնում էին ձեռքերն ու ծափահարում»*[34]:

3. Նիզակի ու կացնի դերը:

Երբ ողջ երթը կենդանիների արձանիկներով անցնում է մեծ դարպասների միջով, արքային մոտեցնում էին կառքը, բայց մինչ արքան կնստեր այն, «պալատի որդի նիզակակիրը» մեկնում էր թագավորին ծիսական մաքուր նիզակը, իսկ «պալատի որդիների գլխավորը» նրան էր մեկնում մետաղյա այսպես կոչված «նիզակի կացինը»՝ հենց այն կողմով, որի վրա առկա էր Ամպրոպի աստծո պատկերը[35]: Ինչպես կարելի է տեսնել, Քարաշամբի գավաթի մենամարտերում և պայքարում հաղթում են նիզակակակիրները՝ սրերով զինվածներին, հատկապես երրորդ երիզում, որտեղ հաղթանակի կուլմինացիան է. նիզակակիրը հաղթում իր հակառակորդին (Նկար 8): Այնուհետև՝ զենքերի ու պարտվածների կտրած գլուխների պատկերներն են, որոնք հավանաբար կտրել է գահին բազմած թագավորը՝ ձեռքին կացին, ինչպես և տեքստում էր նշված, իսկ գլխավերևում արքայական իշխանության սիմվոլը հանդիսացող արևի սկավառակն է (Նկար 7):

4. KI.LAM տոնը, ըստ ուսումնասիրողների, իր կառուցվածքով հիշեցնում է թագավորի թագադրության ծեսը, որի ժամանակ նրա իրականացրած երեք ծիսական գործողությունները նման են KI.LAM տոնի ժամանակ արքայի երեք անգամ նստելու գործողություններին, որն ավարտվում է «հայրենական կալվածքներ» այցելությամբ և իր ենթականերից երդում ստանալով[36]: Ինչպես նաև մի շարք քաղաքների պաշտոնյաներ ներկայացվում են արքային իրենց պահեստների առջև՝ ի նշան խորհրդանշական հավատարմության արքային և պետական բաշխման համակարգի վրա նրա ունեցած վերահսկողության[37]:

Քարաշամբի գավաթի վրա ներկայացված պայքարի ու հաղթանակի թեման, բացի ծիսական բովանդակությունից, հավանական է, իր հպատակների վրա գերիշխանությունը հաստատող թագավորին է ի ցույց դնում, ով սկզբնապես պատկերվում է նստած՝ առանց արքայական սիմվոլների, իսկ հաղթանակից հետո՝ գահին բազմած, առջևում՝ պարտված թշնամիների սիմվոլիկ գլուխներն ու ավար վերցված զենքերը, ձեռքին՝ կացին, իսկ գլխավերևում՝ արևի սիմվոլիկ պատկերումը, որն արքայական իշխանության խորհրդանիշն է: Նման հարուստ պատկերագրությամբ և բազմաշերտ բովանդակությամբ առարկաներ, ինչպիսին Քարաշամբի գավաթն է, ըստ ուսումնասիրողների, ստեղծվում են այն ժամանակ, երբ հասարակության մեջ տեղ են գտնում սոցիալական էական փոփոխություններ և ձևավորվում է նոր վերնախավ: Նման ձևով նորաստեղծ վերնախավը կարիք ունի արդարացնել և ամրապնդել իր դիրքերը[38]:

## Ամփոփում

Քարաշամբի գավաթի համատեքստում քննարկված մի շարք հին փոքրասիական իրողություններ հանգում են խեթական թագավորության վաղ փուլին կամ նախախեթական շրջանին.

1. Գավաթի պատկերագրության մեջ բոլոր կերպարները կրում են «խաթական»՝ քթերը վեր ցցված կոշիկներ, որոնք, ըստ ուսումնասիրողների, տարածված են եղել Հին Փոքր Ասիայում դեռևս վաղբրոնզեդարյան ժամանակաշրջանից:
2. Առյուծների ու հովազների պատկերագրությունը հին փոքրասիական ավանդույթներ ունի:
3. Արքայի՝ առյուծի ու ընձառյուծի հետ համադրության ամենավառ օրինակը Խա-

[34] Ардзинба 1982: 29.
[35] Ардзинба 1982: 30. Տե՛ս նաև Güterbock 1997: 89.
[36] Ардзинба 1982: 39.
[37] Collins 2012: 113.
[38] Boroffka and Boroffka 2013: 185.

թուսիլիս I-ի հետ է կապվում, ով խեթական առաջին արքաներից էր: KI.LAM տոնը, որի ծիսակարգին առնչվող տարբեր երևույթներ դիտարկել ենք գավաթի պատկերագրության համատեքստում, նույնպես առավել հին՝ խաթական արմատներ ունի և հանգում է խեթական վաղ ժամանակաշրջանին:

Կարելի է եզրակացնել, որ գավաթի պատկերագրությունը, ինչպես դիտարկվել է ուսումնասիրողների կողմից, կրելով միջագետքյան և այսրկովկասյան ազդեցություն, կրում է նաև հին փոքրասիական, մասնավորապես՝ խաթական և վաղ խեթական ազդեցություն: Հայտնի է, որ Փոքր Ասիայի հնագույն բնիկները խաթերն էին, իսկ խեթական ժողովուրդները, ըստ առավել ընդունված տեսակետների, հայտնվել են Խեթական պետության տարածքում արդեն Ք. ա. 3-րդ հազ. վերջերին: Փոքր Ասիայում խեթերի նախնական տարածման շրջան է համարվում Կիլիկյան դարպասներից մինչև Վերին Եփրատ ընկած տարածքը, որտեղ էլ պետք է գտնվեր խեթական առաջին պետությունը՝ Կուսսար կենտրոնով (Եփրատից արևմուտք, հավանաբար՝ Մալաթիայի շրջակայքում)[39]: Ըստ ուսումնասիրողների, միջին բրոնզի դարի էգեյան, փոքրասիական և հարավկովկասյան առնչությունները խիստ ակտիվ են եղել և արտացոլվում են նյութական մշակույթի գրեթե բոլոր բնագավառներում: Այդ առնչությունները վերականգնվում են հիմնականում մետաղե և խեցեղեն առարկաների ու համապատասխան պատկերագրական տվյալների (Թռեղքի և Քարաշամբի արծաթե անոթները) հիման վրա[40]:

**Համմիկ Հմայակյան**

*ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ*
*Մարշալ Բաղրամյան 24/4, 0019, Երևան,*
*Հայաստանի Հանրապետություն*
hhmayakyan@yahoo.com

## Գրականություն

Ավետիսյան Պ., Փիլիպոսյան Ա. 2007. Քարաշամբ, Հայաստանի ոսկին վաղ և միջին բրոնզի դարաշրջաններում, Ա. Քալանթարյան (խմբ.), *Հին Հայաստանի ոսկին*: Երևան, «Գիտություն» հրատարակչություն, էջ 89–99:

Բոբոխյան Ա., Գնորգյան Ա. 2015. Ոսկե զեղմ–վիշապաքար. առասպելից դեպի հնագիտություն, Ա. Պետրոսյան, Ա. Բոբոխյան (խմբ.), *Վիշապ քարակոթողները*: Երևան, «Գիտություն» հրատարակչություն, էջ 241–258:

Գրիգորյան Ա., Մկրտչյան Ի., Հարությունյան Ս. 2010. *Հայացք բրոնզի դարից*, Կատալոգ ալբոմ: Երևան, Հայաստանի պատմության թանգարան:

Հովհաննիսյան Ս. 2002. Քարաշամբի մեծ դամբարանաբլրի արծաթե գավաթի կենդանական պատկերազոտիների մեկնաբանման շուրջ: *Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու* թիվ 5, էջ 127–133:

Պետրոսյան Ա. 1997. *Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը*: Երևան, Վան Արյան հրատարակչություն:

Սիմոնյան Հ. 2021. Ներքին Նավերի թիվ 1 «Արքայական» դամբարանը: *Հուշարձան* թիվ 16, էջ 9–84:

Վարդանյան Բ. 2021. Կուրաարաքսյան միջագետքի բրանզերկաթեդարյան ուսազոտիները: *Լրաբեր հասարակական գիտությունների* 3(663), էջ 225–246:

Քոսյան Ա. 2022. *Խեթական թագավորություն (քաղաքական պատմություն)*: Երևան, Քոփի Փրինթ:

Ардзинба В. 1982. *Ритуалы и мифы древней Анатолии.* Москва: Наука.

Оганесян В. 1988. Серебряный кубок из Карашамба. *Պատմա-բանասիրական հանդես* 4(123), էջ 145–161.

Akurgal E. 1961. *Die Kunst der Hethiter*. München: Hirmer Verlag.

Boehmer R., Kossack G. 2000. Der figürlichverzierte Becher von Karašamb, in: R. Dittmann, B. Hrouda, U. Löw, P. Matthiae, R. Mayer-Opificius, S. Thürwächter (Hrsg.). *Variatio Delectat. Iran und der Westen. Gedenkschrift für Peter Calmeyer* (Alter Orient und Altes Testament 272). 9–71. Münster: Ugarit-Verlag.

Bonatz, D. 2007. The Divine Image of the King: Religious Representation of Political Power in the Hittite Empire, in: M. Heinz, M.H. Feldman (eds). *Representations of Political Power: Case Histories from Times of Change and Dissolving Order in the Ancient Near East*. 111–136. Winona Lake, Ind.: Eisenbrauns.

Boroffka N., Boroffka R. 2013. Auf, singet und trinket den köstlichen Trank! Gedankenzur Darstellung von Festen in der Ur- und Frühgeschichte, in: C. von Carnap-Bornheim, W. Dörfler, W. Kirleis, J. Müller, U. Müller (Hrsg.). *Von Sylt bis Kastanas. Festschrift für Helmut Johannes Kroll zum 65. Geburtstag* (Offa 69/70). 171–188. Neumünster: Wachholtz Verlag.

Bretschneider J., Nys N. 2008. Research on the Iconography of the Leopard. *Ugarit-Forschungen* 39: 555–615.

Bryce T. 2002. *Life and Society in the Hittite World*. Oxford: Oxford University Press.

Collins B.J. 1998. Ḫattušili I, The Lion King. *Journal of Cuneiform Studies* 50: 15–20.

Collins B.J. 2010. Hero, Field Master, King: Animal Mastery

[39] Քոսյան 2022: 13:

[40] Բոբոխյան, Գնորգյան 2015: 246–247:

in Hittite Texts and Iconography, in: D. B. Counts, B. Arnold (eds). *The Master of Animals in Old World Iconography*. 59–71. Budapest: Archaeolingua Alapítvány.

Goetze A. 1947. The Priestly Dress of the Hittite King. *Journal of Cuneiform Studies* 1/2: 176–185.

Güterbock H. 1997. Some Aspects of Hittite Festivals, in: H.A. Hoffner, Jr (ed.). *Perspectives of Hittite Civilization: Selected Writings of Hans Gustav Güterbock* (Assyriological Studies 26). Chicago, Ill.: The Oriental Institute of the University of Chicago.

Dörfler W., Herking C., Neef R., Pasternak R., von den Driesch A. 2011. Environment and Economy in Hittite Anatolia, in: H. Genz, D. P. Mielke (eds). *Insights into Hittite History and Archaeology* (Colloquia Antiqua 2). 99–124. Leuven – Paris – Walpole, MA: Peeters.

Haas V. 1994. *Geschichte des Hethitischen Religion* (Handbook of Oriental Studies 1/15). Leiden: E. J. Brill.

Hodder I. 2006. *Çatalhöyük: The Leopard's Tale: Revealing the Mysteries of Turkey's Ancient 'Town'*. London – New York: Thames & Hudson.

Hoffner H. 1980. Histories and Historians of the Ancient Near East: The Hittites. *Orientalia* Nova Series 49/4: 283–332.

Hoffner H. 2003. Daily Life Among the Hittites, in: R. Averbeck, M. Chavalas, D. Weisberg (eds). *Life and Culture in the Ancient Near East*. 95–118. Bethesda, MD: CDL.

Gunter A. 2002. Animals in Anatolian Art, in: B.J. Collins (ed.). *A History of the Animal World in the Ancient Near East* (Handbook of Oriental Studies 1/64). 77–98. Leiden: E. J. Brill.

Gurny O. R. 1977. *Some Aspects of Hittite Religion*. Oxford: Oxford University Press.

Lorenz J., Schrakamp I. 2011. Hittite Military and Warfare, in: H. Genz, D. P. Mielke (eds). *Insights into Hittite History and Archaeology* (Colloquia Antiqua 2). 125–151. Leuven – Paris – Walpole, MA: Peeters.

Marcuson H. 2016. "Word of the Old Woman": Studies in Female Ritual Practice in Hittite Anatolia, A Dissertation Submitted to the Faculty of the Division of the Humanities in Candidacy for the Degree of Doctor of Philosophy Department of Near Eastern Languages and Civilizations, Chicago, Illinois, June, 2016.

Meece S. 2006. A Bird's Eye View – of A Leopard's Spots. The Çatalhöyük 'Map' and the Development of Cartographic Representation in Prehistory. *Anatolian Studies* 56: 1–16.

Mellaart J. 1964. Excavations at Çatal Hüyük, 1963, Third Preliminary Report. *Anatolian Studies* 14: 39–119.

Mellaart J. 1967. *Çatal Hüyük, A Neolithic Towns in Anatolia*. New York: McGraw-Hill Book Company.

Mellaart J., Hirch U., Balpinar B. 1989. *The Goddess from Anatolia*, vol. 1. Adenau: Eskenazi.

Nakamura M. 1995. Some Remarks on the Priestly Dress of the Hittite King. *The Sanyo Review* 2: 111–118.

Rubinson K. 2003. Silver Vessels and Cylinder Sealings: Precious Reflections of Economic Exchange in the Early Second Millennium BC, in: A.T. Smith, K. Rubinson (eds). *Archaeology in the Borderlands, Investigations in Caucasia and Beyond* (Monograph 47). 128–143. Los Angeles: Cotsen Institute of Archaeology, University of California.

Turgut M. 2017. Dress and Culture in the Hittite Empire and during the Late Hittite Period according to Rock Reliefs, in: G. Motta, A. Biagini (eds). *Fashion through History: Costumes, Symbols, Communication*, volume 1. 2–13. Newcastle upon Tyne: Cambridge Scholars Publishing.

Singer I. 1983. *The Hittite KI.LAM Festival:* Part One *(*Studien zu den Boğazköy-Texten 27). Wiesbaden: Otto Harrassowitz.

Singer I. 1984. *The Hittite KI.LAM Festival*: Part Two (Studien zu den Boğazköy-Texten 28). Wiesbaden: Otto Harrassowitz.

Taracha P. 2009. *Religions of Second Millenium Anatolia*. Wiesbaden: Harrassowitz Verlag.

# THE GOBLET OF KARASHAMB IN THE CONTEXT OF HATTIAN-HITTITE REALITIES

*Hasmik Hmayakyan*

**Keywords:** Karashamb, goblet, festival, Hattian shoes, lion, leopard, KI.LAM, $^{KUŠ}$ESIR.

**Abstract**: The goblet of Karashamb ($22^{nd}$–$21^{st}$ centuries BC) is considered one of the most famous archaeological finds, that was discovered in autumn 1987 by Vahan Hovhannsyan, the member of the archeological expedition of the Institute of Archaeology and Ethnography of Armenia: he also presented the first sizeable study on the goblet.

The iconography specificities of the goblet were also discussed by other researchers and various opinions expressed by them, parallels and comparisons allow to point out to jeweled styles distinctive to Mesopotamia, Asia Minor and South Caucasus fused in the goblet of Karashamb.

Fully agreeing with the above viewpoint, we have nevertheless discussed the images of shoes, lions and leopards in the goblet iconography that have their possible parallels in the culture of Asia Minor, examining them within context of the Hittite texts as well as making some comparisons with the course and attributes of the Hittite KI.LAM festival of Hattian origin.

Some aspects relating to Asia Minor discussed by us in the context of the goblet of Karashamb take us to early Hittite or pre-Hittite periods. The iconography of lions and leopards was an ancient tradition in Asia Minor, while the most distinctive example of king's comparison with lions and leopards is Hattusilis I, one of the first Hittite kings. The attributes of the KI.LAM festival that we have analyzed in the context of the goblet also has ancient Hattian roots and to all probability can be traced back to early Hittite period. The same is true for Anitta text compared by the scientists with the description of KI.LAM festival during which the animals captured by royal hunt as a whole match with those depicted on the Karashamb goblet while they belong to early Hittite period.

It can be summarized that the iconography of the goblet as was already mentioned share Mesopotamian and Caucasus character, according to our study truly carries out the influences of Asia Minor as well as showing Hattian and Hittite impacts.

# ՄԻԳՐԱՑԻԱՆԵՐԸ ԵՎ ՄԻԿԵՆՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

*Արամ Քոսյան*

**Բանալի բառեր**. Միկենյան քաղաքակրթություն, ավերածություններ, ապաբնակեցում, դորիացիներ, միգրացիաներ, վերջնական աղետ, չորային կլիմա:

**Ամփոփում**. Հոդվածում քննարկվում է Ք.ա. 13-րդ դարի կես – 12-րդ դարի կեսերին Արևելյան Միջերկրականում գոյություն ունեցող Միկենյան քաղաքակրթության աստիճանական անկման գործընթացը: Միկենյան կենտրոնների անկումն այդ քաղաքակրթական աշխարհի ներսում սկսված գործընթացների հետևանք էր, որոնց շարունակական ներգործության արդյունքում այդ քաղաքական և մշակութային առումներով միասնական համալիրը դադարեց գոյություն ունենալ: Անկման հավանական պատճառը ոչ թե հյուսիսից դեպի Հունաստան ուղղված բարբարոսական ցեղերի հարձակումներն էին, այլ քննարկվող դարաշրջանում սկիզբ առած այսպես կոչված 3.2 կլիմայական երևույթը, որի ազդեցությամբ տարեցտարի խորացող կենսապահովման խնդիրները: Վերջիններս ինչ-որ պահ ստիպեցին բնակչության խոշոր զանգվածներին թողնել իրենց բնակության վայրերը և վերաբնակվել Արևելյան Միջերկրականի տարբեր երկրներում և այլ վայրերում: Այսպիսով, Միկենյան աշխարհի անկումը կարելի է մեկնաբանել որպես բնակչության երկարաժամկետ խոշոր արտագաղթ:

## Խնդրի դրվածքը

Բնակչության տեղաշարժերը (միգրացիա) հանդիսանում են մարդկային հասարակության կենսագործունեության բաղկացուցիչ, շրջակա միջավայրի կամ արտաքին ազդակների ճնշման տակ նաև անհրաժեշտ մասը: Միաժամանակ, դրանք նաև մշակութաբանական առումով կարևորագույն երևույթ են: Միգրացիաների դերը պատմական տարբեր ժամանակահատվածներում, հատկապես մինչպետական և վաղպետական փուլերում, անկախ դրանց դրդապատճառներից, հանդիսացել են մարդկային խմբերի միջև փոխշփումների միջոց՝ խթանելով մշակութային արժեքների տարածման գործընթացը: Այս առումով դրանք, ցեղային մեկուսացվածության պայմաններում, զգալիորեն նպաստել են փոխշփումների և, ընդհանուր առմամբ, առաջադիմության ծավալմանը (նոր տեխնոլոգիաների, սոցիալական, քաղաքական ինստիտուտների և հոգևոր-մշակութային իրողությունների տարածում)[1]:

Պատմական զարգացման փուլերի հերթագայության գործում միգրացիաների խաղացած դերի խնդիրը գիտական շրջանակներում տարբեր մեկնաբանություններ է ստացել՝ հաճախ հանգեցնելով տրամագծորեն հակադիր բևեռների ձևավորման:

Դեռևս նախորդ դարի առաջին կեսին անգլիացի խոշորագույն հնագետ-տեսաբան Գ. Չայլդը միգրացիաները համարում էր մշակույթների փոփոխման, զարգացման և ընդհանրապես՝ առաջընթացի կարևոր միջոց[2]: Որ բնակչության տեղաշարժերը մարդկային խմբերի միջև մեկուսացվածության վերացման և նրանց գաղափարների հարաճուն զարգացման միջոց են, դժվար է ժխտել:

Հարկ է նշել, որ վաղ շրջանի ուսումնասիրություններում միգրացիաների դերը որոշակիորեն ուռճացված էր ներկայացվում: Որպես օրինակ ունենալով Արևմտյան Հռոմեական կայսրության գոյության շրջանում բարբարոսների ավերիչ տե-

[1] Պատմական գործընթացում միգրացիաների խաղացած դերի մասին առկա են մեծաքանակ ուսումնասիրություններ՝ Crown 1971; Rouse 1986; Renfrew 1987; Anthony 1990 (միգրացիաների խնդրի համառոտ տեսությունը); նույնի՝ 1997; Bellwood 2013 (ed.); Van Dommelen 2014; Burmeister 2000; նույնի՝ 2017; Van Oyen 2017 ևն: Ք.ա. 12-րդ դարում Առաջավոր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում ընթացած միգրացիաներին անդրադարձել էինք նաև մեր վաղ շրջանի ուսումնասիրություններում (Քոսյան 1997; նույնի՝ 1999; Косян 1998):

[2] Childe 1926: 200.

ղաշարժերն ու հարձակումները տերության եվրոպական տարածքների վրա, մյուս բոլոր միգրացիաներն էլ պատկերացվում էին միևնույն մոդելով[3]: Ներկայումս նկատելի տեղաշարժ է արձանագրված միգրացիաների հետևանքով ենթադրվող համընդհանուր ավերածությունների, քաղաքակրթական կենտրոնների վերացում ենթադրող անցյալի ուսումնասիրություններում առկա սխեմայում: Բնակչության խոշոր զանգվածներ ընդգրկող միգրանտների մասին ավանդական պատկերացումներն իրենց տեղը զիջել են մասնակի տեղաշարժերին կամ, որ անընդունելի է, երբեմն դրանց դերը հասարակությունների հետագա զարգացման վրա ունեցած կարևոր նշանակությունը հնարավորինս նվազեցվում է: Այսօր ավելի հաճախ են հանդիպում և լայնորեն շրջանառվում են երկու այլ մոտեցումներ, այսպես կոչված «մշակութային էվոլյուցիան» (ձևավորվել է 19-րդ դարում) և «դիֆուզիոնիզմը»[4], որոնց էությունը հետևյալն է:

Մարդկային տարբեր խմբերի միջև շփումները, մշակութային արժեքների ներթափանցումը մեկ մշակութային տարածաշրջանից մյուսին ընթացել է խաղաղ շփումների և/կամ առանձին անհատների (արհեստավորներ, առևտրականներ, ճանապարհորդներ և այլն) միջոցով: Այս մոդելը հաճախ է հանդիպում, սակայն, այն կիրառելի է հիմնականում հասարակությունների պատմության «խաղաղ» փուլերում, այն է՝ պետական կազմավորումների ներսում կամ դրանց միջև ընթացող տարաբնույթ փոխհարաբերությունների պարագայում: Նման պայմաններում, իհարկե, փոխշփումներն ուղեկցվում են մշակութային արժեքների տարածումով: Եվ հնավայրերի նյութական մշակույթում նկատվող՝ նախկինում անհայտ երևույթները կարող են բացատրվել հենց այդպիսի ազդեցություններով:

Սակայն, հասարակության կենսագործունեության ընթացքում առկա ճգնաժամային իրավիճակների դեպքում, այն էլ այնպիսի դեպքերում, երբ ավելի քան ակնհայտ է հասարակության քաղաքական և տնտեսական կառույցի դեգրադացիան, խոսել «մշակութային էվոլյուցիայի» կամ «դիֆուզիոնիզմի» մասին, ուղղակի անընդունելի է: Հատկապես այն պարագայում, երբ դեգրադացիոն երևույթներն առկա են մեկից ավելի տարածաշրջանում:

Միգրացիաներ, այն էլ բավական լայնածավալ, արձանագրված են ոչ միայն հնագիտորեն, այլև, որ ավելի հավաստի է, գրավոր աղբյուրներով[5]: Իրերի այսպիսի վիճակի հիմնական պատճառը ոչ թե հասարակության կենսագործունեության վրա միգրացիաների դերի նվազեցման ցանկությունն է, որքան, ինչպես նշում է Մ. Անթոնին. «*միգրացիայից խուսափում են այն պատճառով, որ հնագետները դեռևս չունեն տեսություն և մեթոդներ, որոնք նրանց թույլ կտան միգրացիան ներառելու մշակույթի փոփոխման բացատրության մեջ*»[6]:

Մասնագիտական հրատարակություններում հաճախ կարելի է հանդիպել հատկապես լայնամասշտաբ միգրացիաների գնահատման ավերիչ մոդելի: Այդպիսի վերականգնումներում մշտապես ընգծվում է տեղաշարժվող բնակչության կողմից այլ տարածաշրջանի վրա դրանց ունեցած բացասական ազդեցությունը: Այսինքն՝ եկվոր տարրը իր կենսապայմանների բարելավման նպատակով գրավում է ինչ-որ տարածք և, հաստատվելով այնտեղ, բացասաբար է ազդում տեղական բնակչության հետագա զարգացման վրա (ավերածություններ, տեղական բնակչության մասնակի կամ լիակատար ոչնչացում՝ մշակութային արժեքների հետ միասին)[7]:

Քաղաքակրթությունների կենսագործունեության վրա միգրացիաների խաղացած դերի գնահատման տեսանկյունից առաջնահերթ նշանակություն ունեն դրանց առավել ծավալման ժամանակափուլերը: Բնակչության շարժունակության աճը ինչպես գյոբալ, այնպես էլ՝ ավելի սահմանա-

---

3 Նշենք, օրինակ, հայտնի հնագետ Մ. Գիմբուտասի աշխատությունները հնդեվրոպական ցեղերի պարբերաբար կրկնվող տեղաշարժերի մասին Եվրոպայից դեպի Առաջավոր Ասիա և Բալկանյան թերակղզի (Gimbutas 1974; նույնի՝ 1977a; նույնի՝ 1977b; նույնի՝ 1980 և այլն):

4 Դիֆուզիոնիզմի՝ որպես տարբեր մշակույթների և էթնիկ խմբերի փոխազդեցության եղանակի տեսության մասին տե՛ս Shaw, Jameson 1999: 200–201.

5 Նշենք թեկուզ նույն Հռոմեական կայսրության անկման շրջանի վիթխարածավալ տեղաշարժերը, ավելի վաղ՝ հունական մեծ գաղութացումը, վաղ միջնադարում՝ արաբների արշավանքները, ավելի ուշ շրջանում՝ թյուրքալեզու ցեղերի և մոնղոլների արշավանքները և այլն: Նշված բնակչության լայնածավալ տեղաշարժերն արտացոլված են մեծաքանակ աղբյուրներում:

6 Anthony 1990: 895.

7 Այդպիսի սցենարը հատկապես տարածված էր վաղ շրջանի ուսումնասիրություններում (օրինակ, Մ. Գիմբուտասի աշխատությունները հյուսիսմերձծովյան ավազանից կուրգանային մշակույթի կրողների ավերիչ տեղաշարժերի մասին դեպի Առաջավոր Ասիա և Էգեյան ծովի ավազան, տե՛ս վերը՝ ծնթ. 4, Ք. ա. 13-րդ դարի վերջերին – 12-րդ դարի սկզբներին Բալկաններից դեպի Փոքր Ասիա ընթացած ժողովուրդների տեղաշարժերը և Խեթական տերության տրոհումը՝ Götze 1936: 154; Bittel, 1950: 73f.; Barnett 175: 417 և այլն):

փակ ծավալներով ակնհայտորեն տեղավորվում է այնպիսի ժամանակափուլերում, որոնք պատմագիտության մեջ սովորաբար կոչվում են «ճգնաժամային» կամ «խավար» դարաշրջաններ:

Միգրացիաները տարբեր բնույթի ընդգրկում և ազդեցություն են ունեցել թե՛ տեղաշարժվող ժողովուրդների, թե՛ դրանց հետևանքով տուժած տարածքների բնակչության կենսագործունեության վրա[8]: Անկախ այն հանգամանքից՝ արդյո՞ք ողջ բնակչությունն է տեղաշարժվում, թե՞ դրա մի հատվածը, պարզ է, որ դրա պատճառը իր նախնական բնակության վայրում կենսապայմանների խիստ անբավարար վիճակն է: Տեսականորեն կարելի է նշել երեք հիմնական պատճառներ.

ա. Հարևանների շարունակական հարձակումներ:

բ. Բնակչության մեծ աճ, որի հետևանքով տեղի է ունենում «ժողովրդագրական պայթյուն» (անհամապատասխանություն արտադրանքի ծավալի և սպառողների քանակի միջև):

գ. Էկոլոգիական պատճառ (կլիմայական պայմանների վատթարացում, խոշոր բնական աղետ և այլն):

Այս երրորդ պատճառը անհամեմատ ավելի ընդգրկուն է և բացասական հետևանքների առումով շատ ավելի ակնառու:

Վերը նշվածը թույլ է տալիս վստահորեն հաստատելու, որ միգրացիաներում ընդգրկված բնակչության խմբերը թերևս ներկայանում են որպես տուժած կողմ՝ ի տարբերություն նրանց կողմից բնակեցված նոր տարածքի բնիկ բնակչության: Եկվոր տարրի ճնշման տակ հաճախ կարող է հարձակման ենթարկված բնակչությունը գրեթե ամբողջությամբ ոչնչանալ, սակայն, նման օրինակները պատմության ընթացքում խիստ հազվադեպ են[9]: Սովորաբար, եկվորների և տեղացիների միջև սկզբնական փուլում տեղ գտնող որոշակի հակամարտությունից հետո աստիճանաբար ձևավորվում են խաղաղ գոյակցության հիմքեր, որոնք ժամանակի ընթացքում հանգեցնում են երկու մշակույթների ինտեգրման: Ահա հենց այստեղ է, որ լիովին արդարացված է վերոհիշյալ դիֆուզիոնիստական տեսությունը: Երկու և ավելի հասարակությունների տարրերի փոխներթափանցումը (դիֆֆուզիա) սովորաբար առկա է հիմնականում հարևանների միջև բազմաբնույթ փոխհարաբերությունների համատեքստում: Օրինակ, այն լավ վկայված է Բալկանյան թերակղզու հյուսիսում գտնվող Մակեդոնիայի պարագայում, որը դարեր շարունակ իր վրա կրում էր հունական մշակույթի վիթխարածավալ ազդեցությունը, կամ հունական գաղութների ազդեցությունը Սևծովյան և Արևելամիջերկրածովյան տարածաշրջաններում:

Ստորև կփորձենք բնութագրել պատմության մեջ առավել լավ հայտնի մի ժամանակահատված, որի ընթացքում տարբեր տարածաշրջաններում թե՛ հնագիտորեն, թե՛ գրավոր աղբյուրներով վկայված են միգրացիաներ ու գոյություն ունեցող քաղաքակրթական կենտրոնների անկման ակնհայտ գործընթացներ, որոնց ազդեցությամբ տեղի ունեցավ մի ողջ աշխարհակարգի անկում և նորի ձևավորում: Խոսքը ուշ բրոնզի դարի վերջերին Առաջավոր Ասիայի և Արևելյան Միջերկրականի երկրների կենսագործունեության մեջ տեղի ունեցած հիմնավոր փոփոխությունների մասին է, երբ բրոնզեդարյան աշխարհակարգը համեմատաբար կարճ ժամանակաշրջանում (մի քանի տասնամյակ) դուրս եկավ պատմական ասպարեզից: Եվ այդ փոփոխությունների հետևանքով տրոհվեց Խեթական տերությունը, Եգիպտոսի 19-րդ դինաստիան ապրեց նկատելի անկում, նույնը նաև Ասորեստանը և Բաբելոնիան: Վերջապես դադարեց գոյություն ունենալ Միկենյան քաղաքակրթությունը:

Քանի որ վերոհիշյալ տարածաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների ետնախորքը հանգամանալի և ծավալուն ուսումնասիրության կարիք ունի, ապա այստեղ կներկայացվեն միայն Միկենյան աշխարհում ընթացած զարգացումների հիմնական ուղենիշերը որպես մոդել այլ տարածաշրջաններում նմանօրինակ իրավիճակների բացահայտման տեսանկյունից:

## Միկենյան քաղաքակրթությունը ուշ բրոնզի դարի վերջին

Մինչև Ք.ա. 13-րդ դարի կեսերը, մայրցամաքային Հունաստանում և Էգեյան ծովի կղզիներում պարզորոշ առկա է ընդհանրական միկենյան անվանումը կրող փոքր, սակայն տնտեսական և

[8] Այդ մասին տե՛ս Дьяконов 1983;նաև Косян 1998.

[9] Дьяконов 1983: 5. Հեղինակը իրավացիորեն նշում է, որ «*Ուշ հնադարի և միջնադարի նույնիսկ առավել ավերիչ արշավանքներից հետո, օրինակ, Աթիլլայի և Չինգիզխանի, նախնական երկրագործական բնակչության մի որոշ մասը, որպես կանոն, պահպանվում էր իր բնակության վայրում: Երբ պատմաբանները ենթադրում են նշանակալից երկրագործական մշակույթների լիակատար ֆիզիկական փոխարինում նոր էթնոսով, ապա նրանք ողջախոհաբար այդպիսի հիպոթետիկ երևույթները վերագրում են պատմության «խավար դարաշրջաններին», այսինքն այն շրջաններին, որոնք որևէ աղբյուրով վկայված չեն*»:

ռազմական լուրջ ներուժ ունեցող պետությունների մի ողջ շղթա: Դրա վկայությունն են աշխույժ առևտրական կապերը Արևելամիջերկրածովյան ավազանի երկրների հետ, հզոր կիկլոպյան պարիսպներով պատված քաղաքները, ինչը ակնհայտ է դրանց մի մասի պեղումների, ինչպես նաև Հոմերոսի «Իլիականի» էջերում տեղ գտած հոյակապ պալատների նկարագրությունից: Ռազմական ներուժի վկայություն կարելի է համարել նաև Ք.ա. 15–13-րդ դարերում խեթական աղբյուրներում բազմիցս վկայված Խեթական տերության տևական հակամարտությունը Ախխիյավա անվանումը կրող քաղաքական միավորի (կամ միավորների) հետ, չնայած վերջինիս ինքնության հարցում առ այսօր կան լուրջ տարաձայնություններ[10]:

Սակայն, Ք.ա. 13-րդ դարի երկրորդ կեսին միկենյան աշխարհում սկսվում են ինչ-որ գործընթացներ, որոնք դարավերջին և հաջորդ դարի ընթացքում հանգեցրին ճգնաժամային իրավիճակի: Ճգնաժամի վկայություններ պետք է համարել միկենյան քաղաքային կենտրոններում իրականացված հնագիտական ուսումնասիրությունների արդյունքում ի հայտ եկած մի շարք երևույթներ՝ 1) շտապ կերպով կատարված ամրաշինական աշխատանքներ, այդ թվում քաղաքային պարիսպների ընդարձակում՝ նախկինից ավելի մեծ տարածքի ընդգրկմամբ, 2) բնակավայրերի մեծ մասի ապաբնակեցում (արդեն 12-րդ դարում), 3) Պելոպոննեսից մեծաքանակ բնակչության արտագաղթ տարբեր ուղղություններով (նույնպես 12-րդ դարում), 4) զգալի քանակությամբ ավերածություններ, և այլն: Նույն պատկերն է տիրում նաև Էգեյան ծովի կղզիներում (Հռոդոս, Կրետե և այլն): Վերոհիշյալ երևույթները վկայված են նաև հույն հեղինակների աշխատություններում (տես ստորև): Փաստացի, վերոհիշյալ երևույթները կարող են վկայել բնակչության մեծ շարժունակության մասին միկենյան աշխարհի ներսում:

Վաղ շրջանի ուսումնասիրություններում միկենյան աշխարհում նշված ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունները բացատրվում էին արտաքին աշխարհից եկող հարձակումներով, կոնկրետ հունալեզու դորիացիների արշավանքներով[11]: Հետագայում այդ տեսակետը որոշակիորեն վերանայվեց և առաջարկվեց դորիացիներին դիտել ոչ որպես հեռավոր վայրերից եկած ինչ-որ նվաճողներ, այլ միկենյան քաղաքակրթական աշխարհի ծայրագավառի բնակչություն, որը միկենյան կենտրոնների ճգնաժամի շրջանում ուղղակի զբաղեցրել էր ապաբնակեցված տարածքները[12]: Իսկ 1960-ական թվականներին հանդես եկավ մի նոր բացատրություն, ըստ որի՝ միկենյան քաղաքակրթության անկման պատճառը ոչ թե դորիական արշավանքն է, այլ կլիմայական իրավիճակի վատթարացումը, որը ստիպել էր առանց այդ էլ սահմանափակ հողային ռեսուրսներ ունեցող Բալկանյան թերակղզու բնակիչներին հեռանալ իրենց բնակավայրերից և վերահաստատվել ավելի բարենպաստ երկրամասերում[13]:

Սակայն, վերջին 2–3 տասնամյակներում հայտնվել են տեսակետներ, որոնք զգալիորեն նվազեցրել են ճգնաժամի հետևանքները և ծանրության կենտրոնը թեքվել է դեպի քաղաքական և մշակութային շարունակականությունը (այդ մասին տես ստորև):

Միկենյան ճգնաժամի պատճառների բացատրությունը մեծապես կախված է դրա մի շարք դրսևորումների քննարկումից: Նշենք, որ վերոհիշյալ ճգնաժամային երևույթները նկատել էին դեռևս նախորդ դարի շատ ուսումնասիրողներ: Չնայած դրանից հետո անցած տասնամյակների ընթացքում միկենյան կենտոններում իրականացվել են մեծածավալ հնագիտական ուսումնասիրություններ, սակայն, դրանք շատ քիչ են փոխում նախկինում առաջարկված մեկնաբանությունները և հիմնականում հաստատվում են ներկայիս հնագետների նոր սերնդի կողմից: Ուղղակի այսօր ծանրության կենտրոնը տեղափոխվել է միկենյան փուլից հետո նկատվող մշակութային շարունակականության ոլորտը (տես ստորև տեքստում):

Միկենյան աշխարհում տեղի ունեցած աղետալի իրավիճակը դեռևս նախորդ դարի կեսերին առաջարկվել էր տարաբաժանել երկու փուլերի՝ Առաջին աղետ (Ք.ա. 13-րդ դարի կեսեր) և Երկրորդ կամ վերջնական աղետ (Ք.ա. 13-րդ դարի վերջ – 12-րդ դարի սկիզբ), որով էլ ավարտվում է

[10] Ախխիյավայի նույնականացման վերաբերյալ առկա է մեծաքանակ մասնագիտական գրականություն (Huxley 1960; Guterbock 1983; Niemeier 1998 և այլն): Առաջարկվել են Ախխիյավայի նույնականացման մեծ թվով տարբերակներ՝ մայրցամաքային Հունաստանի մի որևէ կոնկրետ քաղաքական միավոր, Արևմտյան Փոքր Ասիայի որևէ միկենյան պետություն, որի հետ շփվել է Խեթական տերությունը, Էգեյան ծովի կղզի կամ կղզիախումբ և այլն: Կարծիքների համար ամփոփ տես Քոսյան 1999: 50–53:

[11] Միկենյան քաղաքակրթության անկման դորիական տարբերակը պաշտպանում էր նախորդ դարի մասնագետների գերակշիռ մասը (տե՛ս ստորև):

[12] Սակայն, ներկայումս այն զգալի վերափոխումներ է ապրել: Տե՛ս Thomas 1978:

[13] Տե՛ս Carpenter 1966.

միկենյան դարաշրջանը[14]: Առաջին աղետից հետո շուրջ կես դար կամ գուցե ավելի պակաս դեռևս շարունակվում է միկենյան կենտրոնների կենսագործունեությունը:

Որպեսզի քննարկվող խնդիրը ներկայացվի հնարավորինս ավելի ամբողջական տեսքով, կներկայացնենք թե՛ վաղ շրջանում, թե՛ ներկայումս արտահայտված կարծիքները:

### Առաջին փուլ

#### *Ավերածություններ և ապաբնակեցում*

Ավերածություններ, հիմնականում մասնակի, առկա են բազմաթիվ բնակավայրերում (Կորնթոսից հարավ գտնվող Զիգուրիես, Միկենքի միջնաբերդից դուրս գտնվող տները, Տիրինթոս, Մենելայոն` Լակոնիկայում, Բեոտիայի Գլա խոշոր ամրոցը, Կրիսան Ֆոկիդայում և այլն):

Ջ. Քելդերն արձանագրում է, որ Բեոտիայում գտնվող Թեբեն ամբողջությամբ հրդեհվել էր, իսկ նրա մոտ գտնվող Օրխոմենը ուղղակի լքվել էր[15]: Նույն Բեոտիայի Գլա ամրոցի պարիսպներն ավերվել էին, որից հետո բնակչությունը հեռացել էր[16]: Ավերածություններ են արձանագրված նաև Միկենքի միջնաբերդի շուրջ գտնվող կառույցներում[17]:

#### *Ամրաշինական աշխատանքներ և քաղաքային պարիսպների ընդարձակում*

Նախորդ դարի կեսերին իրականացված հնագիտական ուսումնասիրությունների հիման վրա ենթադրվում էր, որ Պելոպոննեսի որոշ քաղաքային կենտրոններում, այդ թվում Իսթմոսում առաջին աղետի շրջանում սկսվում են լայն ամրաշինական աշխատանքներ: Բնակավայրերի մեծ մասում պարիսպները սկսում են ներառել նախկինից ավելի մեծ տարածք և դա ինքնին արդեն խոսուն փաստ է[18]: Դրա դրդապատճառ նախկինում դիտվում էր հյուսիսից սպասվող ռազմական սպառնալիքը[19]: Սակայն, հնարավոր է մեկ այլ կարևոր դիտարկում (տես ստորև):

Այդպիսի երևույթների վկայություններն առկա են Տիրինթոսում[20], Միկենքում, Էվտրեսիսում (Բեոտիա), Կրիսայում (Ֆոկիդա), Թեսսալիայի Պետրա, Կտուրի և Արնե հնավայրերում և Միդեայում (Արգոս), Աթենքի ակրոպոլիսի շրջանում և քաղաքի մոտ գտնվող Բերբատիում[21]: Իսկ Պիլոսում (Մեսսենիա) ընդարձակվում են պահեստային հարկաբաժինները, ամրացվում է պալատի մուտքը[22]:

#### *Մշակութային դեգրադացիա*

Կոթողային ճարտարապետական և քանդակագործական ավանդույթների վերացում. միկենյան կենտրոններում այլևս վկայված չեն փղոսկրի և թանկարժեք մետաղների մշակումը և այլն[23]: Հարուստ դամբարանային թաղումներում չեն հանդիպում բրոնզե իրեր[24]:

Առաջին աղետով, իհարկե, չավարտվեց միկենյան քաղաքային կենտրոնների կենսագործունեությունը, սակայն, LH IIIB փուլի վերջին շերտերում առկա են անկումնային երևույթները:

### Երկրորդ աղետ

Այս փուլը, որը սկսվում է 1–2 սերունդ անց, հանգեցրեց հիմնավոր փոփոխությունների:

#### *Ավերածություններ և ապաբնակեցում. բնակչության արտագաղթ*

Ավերված բնակավայրերի թվում են Միկենքի և Տիրինթոսի միջնաբերդերը, Արգոլիդայի, Մեսսենիայի և Լակոնիկայի մի շարք բնակավայրեր: Բնակչության կողմից իրենց բնակավայրերից հեռացումը վկայված է մեծաթիվ վայրերում` Էվտրեսիսը Բեոտիայում, Բերբատին Աթենքի մոտ և Պրոսիմնան Արգոլիդայում, Ատտիկայի և Պելո-

---

14 Տերմինը շրջանառության մեջ է դրել Վ. Ռ. Դեսբորոն (Desborough 1964):

15 Kelder 2010: 34.

16 Millek 2023: 74–75, 139–142.

17 Cline 2014: 130.

18 Desborough 1964: 221.

19 Այդ սպառնալիքը, ըստ կարծիքի, արտացոլված է անտիկ ավանդությունում որպես Հերակլեսյանների արշավանքը դեպի Պելոպոննես (Hammond 1975: 686–696):

20 Տիրինթոսում LH IIIB2 փուլում անհայտ պատճառներից ելնելով սկսվում է ամրաշինական աշխատանքների լայն ծրագրի իրականացումը, Հյուսիսային Ստորին քաղաքի պարիսպներն ամրացվում են` ընդգրկելով նախկինից ավելի մեծ տարածք (Maran 2010: 728):

21 Shelmerdine 1987: 565–566; Castleden 2005: 219.

22 Shelmerdine 1987: 560.

23 Younger 1987.

24 Muhly 1992: 11.

պոնեսի կենտրոնում և հարավ-արևմուտքում գտնվող փոքր բնակավայրերում[25]:

Արտագաղթն ընթանում էր ինչպես Միջին և Հարավային Հունաստանում, այնպես էլ՝ դեպի Էգեյան և Հոնիական ծովի կղզիներ, Կրետե, Կիպրոս, Արևմտյան Փոքր Ասիա և նույնիսկ ներկայիս Ալբանիա[26]:

### *Անցումը ուշ բրոնզի դարից վաղ երկաթի դար*

Նախկինում էլ ընդունված էր ենթադրել, որ միկենյան քաղաքակրթության անկումը տևական գործընթաց էր և քաղաքային կենտրոնների կենսագործունեության ավարտը միաժամանակյա իրադարձություն չէր: Դեռ շուրջ 100 տարի առանձին կենտրոններ շարունակում են գոյատևել, սակայն, վայրէջքի ակնհայտ միտումով: Միկենյան բնակավայրեր են այս փուլում վկայված Պելոպոննեսում (Արգոլիդայում, Ախայայում), Միջին և Հյուսիսային Հունաստանում (Բեոտիայում և Թեսսալիայում): Այս հանգամանքը կարևոր է այն առումով, որ այն որոշակիորեն նվազեցնում է արտաքին աշխարհից եկող ավերիչ հարձակման/միգրացիայի մասին ենթադրվող դերը (տես ստորև):

## Կլիման և միկենյան քաղաքակրթության անկումը

### *Գրավոր աղբյուրներ*

Միկենյան քաղաքակրթության անկման ավանդական տեսությունը արտաքին աշխարհից եկած հարձակումների հետևանքով մասնագետները, հնագիտական ուսումնասիրություններից զատ, փորձել են հիմնավորել անտիկ հեղինակների աշխատություններում պահպանված տեղեկություններով: Խոսքը այսպես կոչված «դորիական» տեսության մասին է, որը հանգում է հետևյալին[27]:

Ըստ Թուկիդիդեսի, Տրոյայի անկումից 60 տարի անց թեսսալացիների ճնշման տակ ներկայիս բեոտիացիները հաստատվել էին Բեոտիայում, իսկ 80 տարի անց դորիացիները Հերակլեսյանների հետ միասին գրավել էին Պելոպոննեսը[28]:

Հերոդոտոսը գրում է, որ Հերակլեսյանների մուտքը Պելոպոննես տեղի էր ունեցել Հերակլեսի որդի Հիլոսի կողմից դեպի Պելոպոննես արշավանքից 100 տարի անց[29]: Նա իր աշխատության այլ մասում դորիացիներին կապում է Հերակլեսյանների հետ և ներկայացնում է առաջինների ատիճանական տեղաշարժերը Հյուսիսային Հունաստանից դեպի Պելոպոննես[30]:

Վերոհիշյալ տեղեկությունները կարող են մոտավոր պատկերացում տալ դեպի Միջին և Հարավային Հունաստան Տրոյական պատերազմից մի քանի տասնամյակ անց հյուսիսից հարավ ընթացած բնակչության ինչ-որ տեղաշարժերի ժամանակագրության մասին: Սակայն, դրանց կոնկրետացումը կապված է լուրջ խնդիրների հետ, քանի որ Տրոյական պատերազմի թվագրումը ինքնին արդեն խնդրահարույց է, եթե նույնիսկ ընդունենք, որ Թուկիդիդեսի տեղեկությունները համապատասխանում են իրականությանը: Այս առումով ոչ պակաս կարևոր են այն տեղեկությունները, որոնք վերաբերում են Տրոյական պատերազմին առնչվող մի շարք պատմական կամ պատմականությանը հավակնող անձանց ուղևորություններին դեպի Արևելյան Միջերկրականի տարբեր երկրներ՝ պատերազմից հետո:

Այսպես, «Ոդիսականում» հիշատակվում են Սպարտայի արքա Մենելայոսի դեգերումները Կիպրոսում, Փյունիկիայում և Եգիպտոսում պատերազմից հետո՝ վերադարձի ճանապարհին[31]: Իսկ Իթակեի արքա Ոդիսևսի ճանապարհը սկզբում անցել էր Եգիպտոսով, Փյունիկիայով և Լիբիայով[32]: Հիշատակություններ կան Պիլոսի բնակչության կողմից Ատտիկայում վերաբնակվելու մասին[33]: Այդպիսի տեղեկություններ կան նաև այլոց

[25] Desborough 1964: 221–225; նույնի՝ 1975: 659–663; Tegyey 1974; Stubbings 1975: 351 և այլն:

[26] Desborough 1964: 222; Sandars 1971: 16–17; նույնի՝ 1978: 182; Sourvinou-Inwood 1973 և այլն:

[27] Հույն հեղինակների տեղեկությունների ընդարձակ քննարկումը տե՛ս, մասնավորապես, Hammond 1975; Thomas 1978: 79–84:

[28] Thucydides I. 12,2.

[29] Herodotus IX 26.

[30] Herodotus VIII 114; I 56.

[31] Homer, IV, 81ff., 128ff.

[32] Homer, XVII, 425ff.

[33] Պահպանվել են Հերոդոտոսի, Պավսանիասի, Ստրաբոնի և այլոց մոտ: Մասնավորապես, Հերոդոտոսը և Պլուտարքոսը գրում են, որ Ատտիկայի արևելյան ծովափին գտնվող յոթ բնակավայրերից չորսը հիմնադրել են Նելեիդները (Նեստորի տոհմակիցները) (Herod. V 65; Plut., Solon, X 2): Ընդ որում դրանցից Պերատին թվագրվում է ուշ բրոնզ IIIB-IIIC անցման փուլով, այսինքն՝ Միկենյան կենտրոնների անկման շրջանով: Պիլոսցիների մի մասը, ըստ Ստրաբոնի (XIV, 633), հաստատվել էր Էլևսինում՝ Աթենքից հարավ, իսկ մյուսները շարժվել էին դեպի Փոքր Ասիա (վկայությունները տե՛ս Sourvinou-Inwood 1974: 216):

(Տևկրոս, Ագապենոր, Ամֆիլոխոս, Մոփսոս և այլք) դեգերումների վերաբերյալ[34]:

Գրավոր ավանդույթի վերլուծությունը թույլ է տվել գալու եզրակացության, որ «Տրոյական պատերազմ» անվանումը ստացած իրադարձության շրջանում շատ ավելի ուշ շրջանի հունական գրավոր ավանդույթում շարունակում էին պահպանվել տեղեկություններ, որոնք, ամենայն հավանականությամբ, արտացոլում էին թեկուզև որոշակի գունազարդմամբ, իրական պատմական իրադարձություններ: Նույնիսկ ձևական մոտեցման պայմաններում դրանք կարելի է բավական վստահորեն ներկայացնել հետևյալ կերպ:

Միկենյան քաղաքակրթական աշխարհում Ք.ա. 13-րդ դարի կեսերից սկիզբ են առնում ինչ-որ գործընթացներ, որոնց ազդեցության տակ այն սկսում է ճեղքեր տալ: Դրա հետևանքով միկենյան մի շարք կենտրոններ ենթարկվում են հարձակման, նույնիսկ ավերածությունների: Իսկ ավելի ուշ վրա է հասնում դրանց կենսագործունեության ավարտական փուլը, որի ընթացքում վկայված են հիմնավոր ավերածություններ, բնակավայրերի մի մասի ապաբնակեցում, տեղի են ունենում ծավալուն տեղաշարժեր ինչպես թերակղզու ներսում, այնպես էլ՝ դուրս: Վերը նշված անձանց դեգերումները Արևելյան Միջերկրականում Տրոյական պատերազմից անմիջապես հետո լիովին կարող է տեղավորվել համատարած քաոսային իրավիճակի համատեքստում:

### Հնագիտական աղբյուրներ

Միկենյան քաղաքակրթության անկման խնդիրը շատ վաղ է հայտնվել մասնագետների ուշադրության կենտրոնում: Այդ ուսումնասիրությունների հեղինակները անկման պատճառները սովորաբար փորձում են փնտրել միկենյան կենտրոնների կենսագործունեության մեջ ուշ բրոնզի դարի ավարտական փուլում հնագիտորեն վկայված մի շարք երևույթների (ավերածություններ, ապաբնակեցում և այլն, տես վերը տեքստում) բացատրության մեջ՝ ի դեմս արտաքին աշխարհից եկող բարբարոսական ցեղերի արշավանքների[35]: Համառոտ ներկայացնենք հիմնական վարկածները, որից հետո կքննարկենք մեր մոտեցումը:

Ըստ Դեսբորոյի, աղետը վրա է հասել միաժամանակ: Նա բացառում էր անկման ներքին պատճառների հնարավորությունը (ապստամբություններ, քաղաքացիական պատերազմ)[36]: Արտաքին գործոնը Յ. Բոուզեկը փորձում էր դիտարկել շատ ավելի լայն աշխարհագրական ընդգրկում ունեցող հյուսիսբալկանյան ցեղերի տեղաշարժերի ետնախորքում[37]:

Բոլոր այդ վարկածների հեղինակները փորձում են բացատրել, թե ինչու միկենյան կենտրոններում չկան կամ գրեթե չկան ավերածությունների հեղինակների գոյության նյութական մշակույթի հետքեր[38]: Պելոպոնեսի որոշ հնավայրերում LH IIIC փուլում հայտնվող փոքրաքանակ խեցեղենը (Coarse ware), ֆիբուլաները և այլ իրերը ինքնին չեն կարող վկայել հյուսիսից ներխուժած ցեղերի կողմից իրականացված ավերածությունների մասին[39]: Նույնիսկ այն հեղինակները, ովքեր այս կամ այն չափով հակված էին միկենյան աշխարհի կործանումը ներխուժումով բացատրելու, այնուամենայնիվ, կասկածի տակ են առնում այդ ներխուժման չափերը և ազդեցության աստիճանը[40]:

Փորձելով ամփոփել վերոհիշյալը՝ միկենյան աշխարհում Ք.ա. 13-րդ դարի կեսերից մինչև հաջորդ դարի առաջին տասնամյակներն ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունների պատմական ետնախորքը, կարելի է հանգել հետևյալ եզրակացության:

Միկենյան կենտրոններում տեղ գտած մասնակի ավերածությունները («Առաջին աղետ»), դրանց հետևած էլ ավելի մեծ չափերի ավերածությունները և խոշոր մասշտաբի ապաբնակեցումը

---

[34] Աղբյուրների տեղեկությունները և դրանց քննարկումը տե՛ս Hammond 1975:

[35] Desborough 1964; նույնի՝ 1972; Snodgrass 1971; Rutter 1976 և այլն:

[36] Desborough 1964: 222–223. Սակայն, ավելի ուշ նա ամեն դեպքում նշում էր նաև այլ հնարավոր պատճառներ՝ ապստամբություն, դինաստիական պայքար, հարձակում արտաքին աշխարհից, բնական աղետ (Desborough 1967: 36–37.; նույնի՝ 1975: 660):

[37] Ըստ նրա, Հյուսիսային Բալկաններից դեպի հարավ ընթացել է թալանչիական հարձակում, այնուհետև դրա հեղինակները շարժվել են Փոքր Ասիա, մասնակցել Տրոյայի և Խեթական տերության կործանմանը, և միայն դրանից հետո 12-րդ դարի վերջերին դորիացիները մուտք են գործել արդեն ամայացած Հունաստան (Bouzek 1973: 173):

[38] Օրինակ, Snodgrass 1974: 209. Մասնագետների մի մասը փորձում էր այդ հետքերի բացակայությունը բացատրելու ավերածություններից հետո նվաճողների հեռանալու մասին փաստարկով, ինչը ավելի քան կասկածելի լուծում է խնդրին (Sandars 1964: 259; Desborough 1964: 225; Drews 1993: 44–47): Տես նաև Յ. Բոուզեկի կարծիքը, ով գտնում էր, որ նվաճողները մի որոշ ժամանակ անց հեռացել էին Փոքր Ասիա (Bouzek 1974):

[39] Ա. Սնոդգրասը ժամանակին նկատել էր, որ այդ իրերը առկա են միկենյան կենտրոններում դեռևս LH IIIB փուլում, այսինքն՝ աղետին նախորդող շրջանում (Snodgrass 1974):

[40] Desborough 1964: 222–225; Rutter 1975: 31–32; Sandars 1978: 181 և այլն:

(«Երկրորդ աղետ»), որոշ բնակավայրերի կենսագործունեության շարունակականություն (օրինակ, Տիրինթոս), հույն հեղինակների երկերում հիշատակվող շատ անձանց դեգերումները Արևելյան Միջերկրականի երկրներում և այլն չափազանց բարդ է բացատրել որպես արտաքին աշխարհից եկած ավերիչ արշավանքի կամ արշավանքների հետևանք: Մանավանդ որ եկվորների նյութական մշակույթի հետքերը գրեթե բացակայում են:

Հնարավոր է ենթադրել, որ միկենյան աշխարհի անկումը պետք է բացատրել քննարկվող ժամանակաշրջանում Միջերկրական ծովի ավազանում և Առաջավոր Ասիայում հնագիտորեն և գրավոր աղբյուրներով լավ վկայված համանման երևույթների լայն ետնախորքի վրա միայն: Սա այն ժամանակաշրջանն է, երբ Խեթական տերությունը ապրում էր ներքաղաքական ցնցումների տևական փուլ, որը Ք. ա. 1200 թ. սահմաններում հանգեցրեց դրա տրոհմանը և Կենտրոնական Փոքր Ասիայի բնակչության մի նշանակալից հատվածի ապարնակեցմանը: Ոչ պակաս բարդ իրավիճակում էր գտնվում Եգիպտոսը փարավոն Մերենպտահի օրոք: Թե՛ Խեթական տերությունը, թե՛ Եգիպտոսը այս շրջանում ստիպված էին բախվել արտաքին աշխարհից եկող սպառնալիքի հետ («Ծովի ժողովուրդներ»), ինչը խեթերի պարագայում ավելի էր բարդանում կենսապահովման միջոցների խիստ կարիքով[41]:

Ամենուրեք վկայված են լայնածավալ միգրացիաներ (Հյուսիսային Բալկաններից դեպի Փոքր Ասիա՝ Տրոյա VIIB2, արամեական ցեղերի շարունակական շարժումներ դեպի Միջագետք, Հայկական լեռնաշխարհի արևմուտքում և հարավ-արևմուտքում մուշկերի տեղաշարժ դեպի Հյուսիսային Միջագետք և այլն):

Ասվածից կարելի է եզրակացնել, որ Միկենյան ճգնաժամը անհնար է դիտարկել միայն Բալկանյան թերակղզու կտրվածքով: Այն ամենևին տեղական նշանակության իրադարձություն չէր:

Հնագետները վաղուց ի վեր նկատել էին, որ դեռևս Ք. ա. 13-րդ դարի երկրորդ կեսի ընթացքում Արևելյան Միջերկրականում, մասնակի ավերածություններից և ապարնակեցումից զատ, պարզորոշ նկատվում են անկման ակնհայտ նշաններ: Այսպես, այս շրջանում զգացվում է Միկենյան կենտրոնների՝ Լևանտյան ծովեզերքի երկրների հետ նախկինում ունեցած չափազանց ակտիվ առևտրական կապերի անկում[42]: Բուն Միկենյան աշխարհում վերանում են նյութական մշակույթի մի շարք բնորոշ ուղղություններ՝ կոթողային ճարտարապետությունը, քարե կնիքները, թանկարժեք մետաղներից պատրաստվող անոթները, հախճապակին, փղոսկրե իրերի արտադրությունը և այլն[43]: Այդ ամենը վկայում է տարեցտարի խորացող տնտեսական ճգնաժամի մասին, որը պետք է լիներ ներքաղաքական լուրջ խնդիրների ներգործության հետևանքը[44]:

### Շրջակա միջավայրը և միգրացիաները Միկենյան աշխարհում

Միկենյան քաղաքակրթության գոյության վերջին տասնամյակներում մայրցամաքային Հունաստանում տեղի ունեցած անկումնային երևույթների իրական պատճառների բացահայտման տեսանկյունից առաջնահերթ նշանակություն ունի այդ տարածաշրջանի շրջակա միջավայրի առանձնահատկությունների խնդիրը: Նշենք, որ առկա ուսումնասիրություններում սովորաբար դրան քիչ ուշադրություն է դարձվում: Այնինչ, հենվելով նույնիսկ պարզ վիճակագրական տվյալների վրա, հնարավոր է հեշտությամբ պատկերացնել, թե երկրագործության համար պիտանի հողային ռեսուրսներից ստացվող արտադրանքի ծավալների վրա ինչպիսի բացասական հետևանքների կարող էր հանգեցնել միջավայրի քիչ թե շատ տեսանելի փոփոխությունը[45]:

Միկենյան աշխարհի ուշբրոնզեդարյան քաղաքական միավորների տնտեսական ներուժը հենվում էր երկրագործության և կենտրոնական վարչակազմի կողմից վերահսկվող արհեստագործական արտադրանքի վրա: Վերջինս լայնորեն արտահանվում էր Արևելյան Միջերկրականի երկրներ՝ ապահովելով կայուն եկամուտ: Երկրագործության դերը հունական հասարակությունում, ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս, բա-

[41] Խաթթին ստիպված էր Եգիպտոսից հացահատիկ ներմուծել (տե՛ս Klengel 1974):

[42] Sandars 1978: 183–197; Hankey 1984: 18 և այլն:

[43] Younger 1987 (հղումը ըստ Muhly 1992: 11).

[44] Tritsch 1974; Hooker 1976: 138–139; Sandars 1978: 197.

[45] Նոր ժամանակներում կատարված հաշվարկների համաձայն (Gallant 1989: 397), Արևելյան Միջերկրականում կլիմայի տատանումները շատ զգալի են և ի վիճակի են մեծապես նվազեցնել երկրագործական արտադրանքի ծավալները: Ստացվող բերքի քանակը նախորդ տարվա համեմատ կարող է նվազել մինչև 30–50 տոկոս: Ընդ որում, մի քանի անբերրի տարիները կարող էին աղետալի հետևանքներ ունենալ (Sandars 1978: 78):

վական համեստ է: Երկրի հողային ռեսուրսների շուրջ 27 տոկոսն է պիտանի երկրագործության կարիքների համար, ընդ որում, դրանից միայն 17–18 տոկոսն է հնարավոր հատկացնել հողի մշակման համար. մնացածը ծառայում է անասնապահության կարիքներին[46]: Ըստ Հունաստանի Հանրապետության վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների՝ 2020 թ. երկրի ամբողջ հողային ֆոնդը կազմում էր 131.981 մլն հա, որից երկրագործության տակ դրված ոռոգովի հողերը՝ 21.181 մլն հա, իսկ տարբեր նշանակության արոտավայրերը՝ 35.582 մլն հա[47]: Այսպիսով, գյուղատնտեսության համար պիտանի հողատարածությունները, արոտավայրերի հետ միասին, երկրի տարածքի 50 տոկոսից ավելի քիչ է: Այս թվական տվյալները ներառում են ներկայիս Հունաստանի ողջ տարածքը, այդ թվում՝ բոլոր կղզիները: Բնական է ենթադրել, որ հնում այդ տոկոսները շատ ավելի պակաս պետք է լինեին: Քանի որ մեր պարագայում հաշվի ենք առնում հիմնական Միկենյան քաղաքակրթական կենտրոնները՝ Միջին Հունաստանը և Պելոպոննեսը, ապա ստացվող պատկերը ինքնին արդեն վկայում է այն մասին, որ միկենյան աշխարհը կենսական ռեսուրսների մեծ կարիք պետք է զգար, հատկապես սոցիալ-տնտեսական և քաղաքական բարդ իրավիճակներում:

Այսինքն՝ երկրի տնտեսական ներուժի և բնակչության թվաքանակի միջև հավասարակշռության որոշակի խախտման դեպքում բնակչության մասնակի արտագաղթը պարտադրված էր կենսամիջոցների սակավությամբ, որի անմիջական հետևանքը սոցիալական ընդվզումները և պարբերաբար տեղ գտնող ապաբնակեցումը պետք է լինեին:

Ք.ա. 15–13-րդ դարերում խեթական սեպագիր աղբյուրները ժամանակ առ ժամանակ հիշատակում են Արևմտյան Փոքր Ասիայում Ախխիյավայի (Միկենյան տարածաշրջանը) ռազմաքաղաքական ակտիվությունը[48]:

Կարո՞ղ էր արդյոք Ք.ա. 13-րդ դարի կեսերից սկսված կլիմայի աստիճանական չորացումը, որը վկայված է զգալի քանակությամբ ուսումնասիրություններով (տես ստորև), պատճառ դառնալ միկենյան ճգնաժամի համար: Կարծում ենք, որ այդպիսի սցենարը ավելի քան հնարավոր է:

Դեռևս 1960-ական թվականներին, երբ առաջարկվեց Միկենյան աշխարհի անկումը բացատրել շրջակա միջավայրում ուշ բրոնզի դարի վերջերին տեղի ունեցած կլիմայական փոփոխություններով[49], այդ մոտեցումը հանդիպեց լուրջ ընդդիմության: Սակայն, հետագայում Առաջավոր Ասիայում և այլուր իրականացված հնակլիմայաբանական ուսումնասիրությունները թույլ տվեցին նոր լույսի տակ մեկնաբանելու քննարկվող ժամանակաշրջանում քաղաքակրթական կենտրոնների վայրընթաց զարգացման գործում միջավայրում տեղի ունեցած փոփոխությունների դերը[50]: Իհարկե, կլիմայական փոփոխությունների դերը Միկենյան ճգնաժամի ծավալման հարցում որոշակիորեն վիճարկվում է տարբեր մասնագետների կողմից[51], սակայն, վերջիններս ամբողջությամբ չեն բացառում այն:

Նշենք նաև Օ. Դիքինսընի մոտեցումը խնդրին, որի աշխատությունը նվիրված է ուշ բրոնզի դարից վաղ երկաթի դար անցման շրջանի հիմնավոր մեկնաբանությանը[52]:

Նա իրավացիորեն թերահավատ վերաբերմունք ունի Միկենյան կենտրոնների անկմանը արտաքին աշխարհից եկող ավերիչ արշավանքի խաղացած դերի նկատմամբ: Նույնը նաև այդ քաղաքակրթության անկումը ամրացված քաղաքներում գտնվող պալատական համալիրների կողմից ղեկավարվող տնտեսական ենթակառուցվածքների կենսագործունեության փլուզման հանդեպ: Գտնելով, որ Միկենյան աշխարհի տնտեսական և սոցիալական մեխանիզմների խախտումը կարող էր նպաստել դրա հետագա վերացմանը, նա այնուամենայնիվ կապ չի տեսնում այդ իրադարձության

46 Яйленко 1990: 65 (հղում է Попов 1962: 34, 42).

47 Hellenic Statistical Authority (https://www.statistics.gr/en/statistics/-/publication/SPG51/-).

48 Ախխիյավայի և Խեթական տերության միջև այստեղ ընթացող բախումների ընդհանրական տեսությունը տե՛ս Bryce 2005; Քոսյան 1999; նույնի՝ 2022 (ըստ խեթական արքաների):

49 Carpenter 1966; Bryson *et al.* 1974; Weiss 1982.

50 Օրինակ, Drake 2012; Langgut *et al.* 2013; Langgut *et al.* 2015; Kaniewski *et al.* 2015 և այլն: Միկենյան քաղաքակրթության անկումը կլիմայական պայմանների վատթարացման ետնախորքի վրա մեկնաբանության համար տե՛ս նաև Քոսյան 1999: 117–138:

51 Middleton 2012; Knapp, Manning 2016; Manning 2017. Վկայակոչվող հիմնական փաստարկը հնակլիմայական վերականգնման համար ուսումնասիրվող նյութերի ավելի հստակ թվագրման խնդիրն է:

52 Dickinson 2006.

և միջավայրում տեղի ունեցող փոփոխությունների միջև[53]:

Շրջակա միջավայրում տեղի ունեցող կլիմայական փոփոխությունների առնչությամբ արտակարգ կարևոր ուսումնասիրություն իրականացվեց հնակլիմայաբանների կողմից վերջերս Պելոպոննեսի հարավ-արևմուտքում՝ պատմական Պիլոս քաղաքի մոտակայքում գտնվող Մավրի Տրիպա անվանումը կրող քարանձավում հայտնաբերված ստալագմիտների հիման վրա: Հետազոտությունը թույլ տվեց պարզելու Միկենյան քաղաքակրթության կարևոր կենտրոններից Պիլոսի պետության անկման շրջանում այստեղ տիրող կլիմայական իրավիճակը[54]:

Այսպես, Ք.ա. 13-րդ դարի կեսերին (մոտ 1250 թ.) սկսվել է շուրջ երկու տասնամյակ տևած ավելի չորային կլիմա, որը նախորդել է Հոմերոսի կողմից հիշատակվող Պիլոսի արքա Նեստորի պալատի ավերմանը: Այդ շուրջ մեկ սերունդ տևած չորային կլիմայի շրջանում, որը թվագրվում է LH IIIB փուլով, պետությունը դեռևս կարողացել էր գոյատևել, սակայն, դրան մոտ 100 տարի անց հաջորդած էլ ավելի չորային կլիման, որն ընկնում է LH IIIC և «Պրոտոգեոմետրիկ» փուլի վրա, պետք է դառնար կարևոր գործոն պիլոսյան պետության անկման համար: Նման չորային կլիմայի վկայություններ կան նաև Արևելյան Միջերկրականի տարբեր շրջաններից:

## Ամփոփում

Ամփոփելով Միկենյան քաղաքակրթական կենտրոնների վայրընթաց զարգացման և անկման խնդիրը, հնարավոր ենք համարում առաջարկելու դրա հետևյալ մեկնաբանությունը:

1. Դեռևս Ք.ա. 13-րդ դարի կեսերին սկսված ճգնաժամային երևույթները (մասնակի ավերածություններ, ապաբնակեցում, պարիսպների ընդարձակում և ամրացում, միկենյան մշակույթի որոշ կարևոր ոլորտների վերացում, արտաքին առևտրի ծավալների կրճատում), որոնք դարավերջին կամ հաջորդ դարի սկզբներին ընդունում են աղետի տեսք, դժվար է վերագրել հյուսիսից ներխուժած բարբարոսական ցեղերի գործողություններին: Ավերիչ արշավանքը չէր կարող այդքան մեծ ժամանակահատված ընդգրկել:

2. Միկենյան կենտրոնների անկումը շատ ավելի հիմնավոր պատճառներ է ակնկալում: Վերոհիշյալ աղետալի երևույթները անհրաժեշտ է փնտրել այդ քաղաքակրթական աշխարհի ներսում սկսված ինչ-որ գործընթացներում, որոնց շարունակական ներգործության արդյունքում կարող էր հասցնել դրանց կենսագործունեության ավարտին կամ, առնվազն, ծավալների խիստ կրճատման, քանի որ որոշ շրջաններում շարունակականությունը ակնհայտ է (օրինակ, Տիրինթոսում):

3. Որպես անկման պատճառ կարելի է նշել միկենյան փոքր պետությունների միջև սկսված պատերազմները կենսատարածքի և գոյամիջոցների համար: Վերջինիս հետևանքները կարող էին պայմանավորված լինել շրջակա միջավայրում տասնամյակների ընթացքում ավելի վատթարացող պայմանների ազդեցությամբ:

4. Ինչ վերաբերում է ապաբնակեցման խնդրին, ապա, նկատի առնելով միկենյան աշխարհից Տրոյական պատերազմի շրջանում և հատկապես դրանից հետո հույն հեղինակների աշխատություններում տեղ գտած բազմաթիվ տեղեկությունները տարբեր ուղղություններով ընթացած արտագաղթերի մասին, կարելի է հստակ նշմարել ի դեմս Միկենյան քաղաքակրթության անկման, վաղ հունական հասարակության զարգացման մի կարևոր օրինաչափություն: Դա միջավայրի ազդեցությամբ պայմանավորված զանգվածային արտագաղթն է՝ ուղղված ինչպես Բալկանյան թերակղզու տարբեր շրջաններ, այնպես էլ՝ Էգեյան ծովի կղզիներ, Փոքր Ասիա, Լևանտյան ծովեզերք և Եգիպտոս: Երկրի ներսում գոյության համար անհրաժեշտ ռեսուրսների սակավությունը սկզբում պետք է հանգեցներ քաղաք-պետությունների կենսագործունեության տնտեսական հիմքերի խարխլմանը, նրանց միջև բախումների, իսկ այնուհետև՝ նաև արտագաղթի:

5. Այսպիսով, Միկենյան քաղաքակրթությունը արտաքին աշխարհից եկած միգրացիայի զոհը չէր, այլ իր մարդկային ռեսուրսները դեպի այլ երկրներ ուղղած «զավթիչ», որի բնակչության արտահոսքը իր որոշակի ազդեցությունը ունեցավ որպես արտագաղթերի նպատակակետ հանդիսացող Արևելյան Միջերկրականի երկրների վրա (Արևմտյան և Հարավային Փոքր Ասիա, սիրիական ծովեզերք և այլն): Ըստ էության, դա կարելի է ըն-

[53] Dickinson 2006: 242 (այս առնչությամբ նշում է Առաջավոր Ասիայում ընդհանուր քաղաքական իրավիճակի վատթարացումը առանց կոնկրետացնելու այն): Նշենք, որ ժամանակին նույնիսկ արտաքին գործոնի կողմնակից Ռ. Դեսբորոն էլ ամբողջությամբ չէր բացառում կլիմայի հնարավոր ազդեցության փաստարկը (Desborough 1967: 37):

[54] Finné *et al.* 2017.

կալել որպես հունական աշխարհի կողմից գաղութացման առաջին փուլ, որին չորս դար անց հաջորդեց երկրորդը (Մեծ գաղութացումը), իսկ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքից հետո նաև երրորդը:

**Արամ Քոսյան**

*ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ*
*Մարշալ Բաղրամյան 24/4, 0019, Երևան,*
*Հայաստանի Հանրապետություն*

aramkosyan@yahoo.com

## Գրականություն

Քոսյան Ա. Վ. 1997. *Խեթական տերությունը և Ախխիյավան (Տրոյական պատերազմը)*: Երևան, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ:

Քոսյան Ա. Վ. 1999. *Մ. թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը*: Երևան, Զանգակ:

Քոսյան Ա. Վ. 2022. *Խեթական թագավորություն (քաղաքական պատմություն)*: Երևան, Քոփի փրինթ:

Косян А. В. 1998. Кризис XII в. до н. э.: этнические передвижения и депопуляция (к постановке проблемы). *Լրաբեր հասարակական գիտությունների,* թիվ 3, էջ 45–52.

Попов В. Д. 1962. *Экономика Греции*. Москва: Институт международных отношений.

Яйленко В. П. 1990. *Архаическая Греция и Ближний Восток*. Москва: Наука.

Anthony D. W. 1990. Migration in Archeology: The Baby and the Bathwater. *American Anthropoligist* 92/4: 895–914.

Anthony D. W. 1997. Prehistoric Migration as a Social Process, in: J. Chapman, H. Hamerow (eds). *Migrations and Invasions in Archaeological Explanation* (British Archaeological Reports, International Series 664). 11–20. Oxford: Archaeopress.

Barnett R. D. 1975. Phrygia and the Peoples of Anatolia in the Iron Age, in: I. E.S. Edwards, C. J. Gadd, N. G.L. Hammond, E. Sollberger (eds). *Cambridge Ancient History*, volume II/2: *History of the Middle East and the Aegean Region, c. 1380–1000 B.* C. 417–442. Cambridge – New York – Melbourne – Madird – Cape Town: Cambridge University Press.

Bellwood P. 2015 (ed.). *The Global Prehistory of Human Migration*. Malden – Oxford: Wiley Blackwell.

Bittel K. 1950. *Grundzüge der Vor- und Frühgeschichte Kleinasiens*. 2. erweiterte Auflage. Tübingen: E. Wasmuth.

Bouzek J. 1974. Bronze Age Greece and the Balkans: Problems of Migrations, in: R.A. Crossland, A. Birchall (eds.). *Bronze Age Migrations in the Aegean: Archaeological and Linguistic Problems in Greek Prehistory*. 169–177. London: Duckworth.

Bryson R. A., Lamb H. H., Donley D. R. 1974. Drought and the Decline of Mycenae. *Antiquity* 48: 46–50.

Burmeister S. 2000. Archaeology and Migration. Approaches to an Archaeological Proof of Migration. *Current Anthropology* 41/4: 539–567.

Burmeister S. 2017. The Archaeology of Migration: What Can and Should it Accomplish?, in: H.Meller, F.Daim, J. Krause, R.Risch (Hrsg.). *Migration und Integration von der Urgeschichte bis zum Mittelalter*. 57–68. Halle: Salzland Druck GmbH & Co. KG.

Castleden R. 2005. *The Mycenaeans*. London – New York: Routledge.

Chadwick J. 1976. Who were the Dorians? *La parola del passato* 31: 103–117.

Childe G. 1926. *The Aryans. A Study of Indo-European Origins*. London: Keagan Paul, Trench, Trubner & Co.

Cline E H. 2014. *1177 B. C. The Year Civilization Collapsed*. Princeton, NJ: Princeton University Press.

Crown A. D. 1971. Climatic Change, Ecology and Migration. *Australian Journal of Biblical Archaeology* 1/4: 3–22.

Desborough V. R.d'A. 1964. *The Last Mycenaeans and Their Successors. An Archaeological Survey ca. 1200–1000 B. C.* Oxford: Clarendon Press.

Desborough V. R.d'A. 1967. History and Archaeology in the Last Century of the Mycenaean Age, in: *Atti e memorie del 1⁰ congresso internazionale di Micenologia, Roma 27 settembre – 3 ottobre 1967*, vol. 2. 35–50. Roma: Edizioni dell'Ateneo.

Desborough V. R.d'A. 1975. The End of Mycenaean Civilization and the Dark Age: the Archaeological Background, in: I. E.S. Edwards, C. J. Gadd, N. G.L. Hammond, E. Sollberger (eds). *Cambridge Ancient History*, volume II/2: *History of the Middle East and the Aegean Region, c. 1380–1000 B.* C. 658–677. Cambridge – New York – Melbourne – Madird – Cape Town: Cambridge University Press.

Dickinson O. 2006. *Aegean From Bronze Age to Iron Age*. London – New York: Routledge.

Drake B.L. 2012. The Influence of Climatic Change on the Late Bronze Age Collapse and the Greek Dark Ages. *Journal of Archaeological Science* 39/6: 1862–1870.

Drews R. 1993. *The End of the Bronze Age: Changes in Warfare and the Catastrophe ca. 1200 B. C.* Princeton: Princeton University Press.

Finné M., Holmgren K., Shen Ch.Ch., Hu H. M., Boyd M., Stocker S. 2017. Late Bronze Age Climate Change and the Destruction of the Mycenaean Palace of Nestor at Pylos. *PLoS ONE* 12/12: 1–18.

Gallant T. W. 1989. Crisis and Response: Risk-Buffering Behaviour and Subsistence Crises in Hellenistic Greek Communities. *Journal of Interdisciplinary History* 19: 393–413.

Gimbutas M. 1974. The Destruction of Aegean and East Mediterranean Urban Civilization around 2300 B. C., in: R.A. Crossland, A. Birchall (eds.). *Bronze Age Migrations in the Aegean: Archaeological and Linguistic Problems in Greek Prehistory*. 129–139. Park Ridge/Sheffield – New Jersey: Noyes Press.

Gimbutas M. 1977a. The Three Waves of the Kurgan People into Old Europe. *Archives suissesd'anthropologie générale* 41:113–137.

Gimbutas M. 1977b. The First Wave of Eurasian Steppe Pasto-

ralists into Copper Age Europe. *Journal of Indo-European Studies* 5: 277–338.

Gimbutas M. 1980. The Kurgan Wave #2 (c. 3400–3200 B. C.) into Europe and the Following Transformation of Culture. *Journal of Indo-European Studies* 8: 273–315.

Götze A. 1936. *Hethiter, Churriter und Assyrer*. Oslo: Aschehoug.

Güterbock H. G. 1983. The Hittites and the Aegean World: Part 1. The Ahhiyawa Problem Reconsidered. *American Journal of Archaeology* 87/2: 133–138.

Hammond N. G.L. 1975. The End of Mycenaean Civilization and the Dark Age. The Literary Tradition for the Migrations, in: I. E.S. Edwards, C. J. Gadd, N. G.L. Hammond, E. Sollberger (eds). *Cambridge Ancient History*, volume II/2: *History of the Middle East and the Aegean Region, c. 1380–1000 B.* C. 678–712. Cambridge – New York – Melbourne – Madird – Cape Town: Cambridge University Press.

Hankey V. 1984. Archaeological Comments on A. R. Millard's Paper, in: L. Foxhall, J.K. Davies (eds). *The Trojan War. Its Historicity and Context. Papers of the First Greenbank Colloquium, Liverpool, 1981*. 1–21. Liverpool: Bristol Classical Press.

Manning S. W. 2017. Comments on Climate, Intra-regional Variations, Chronology, the 2200 B. C. Horizon of Change in the East Mediterranean Region, and Socio-political Change on Crete, in: F. Hoflmayer (ed.). *The Late Third Millennium in the Ancient Near East. Chronology, C 14, and Climate Change*. 451–490. Chicago: Oriental Institute of the University of Chicago.

Hooker J. T. 1976. The Coming of the Greeks. *Historia* 25/2: 129–145.

Huxley L.G. 1960. *Achaeans and Hittites*. Oxford: Vincent Baxter Press.

Kaniewski D, Guiot J, Van Campo E. 2015. Drought and Societal Collapse 3200 years ago in the Eastern Mediterranean: A Eeview. *Wiley Interdisciplinary Reviews, Climate Change* 6: 369–382.

Kelder J. M. 2010. *The Kingdom of Mycenae: A Great Kingdom in the Late Bronze Age Aegean*. Bethesda: CDL Press.

Knapp A. B., Manning S. W. 2016. Crisis in Context: The End of the Late Bronze Age in the Eastern Mediterranean. *American Journal of Archaeology* 120/1: 99–149.

Langgut D., Finkelstein I., Litt T. 2013. Climate and the Late Bronze Collapse: New Evidence from the Southern Levant. *Tel Aviv* 40/2: 149–175.

Langgut D., Finkelstein I., Litt T., Neumann F. H., Stein M. 2015. Vegetation and Climate Changes during the Bronze and Iron Ages (*3600–600 BCE) in the Southern Levant Based on Palynological Records. *Radiocarbon* 57/2: 217–235.

Maran J. 2002. Tiryns Town after the Fall of the Palace: Some New Insights. *Bulletin of the Institute of Classical Studies* 46: 223–224.

Maran J. 2010. Tyrins, in: E. H. Cline (ed.). *The Oxford Handbook of the Bronze Age Aegean (ca. 3000–1000 BC)*. 722–734. Oxford: Oxford University Press.

Middleton G. D. 2012. Nothing Lasts Forever: Environmental Discourses on the Collapse of Past Societies. *Journal of Archaeological Research* 20: 257–307.

Millek J. 2023. *Destruction and Its Impact on Ancient Societies at the End of the Bronze Age*. Columbus: Lockwood Press.

Renfrew C. 1987. *Archaeology and Language*. London: Penguin Books.

Rouse I. 1986. *Migrations in Prehistory*. New Haven: Yale University Press.

Muhly J. D. 1992. The Crisis Years in the Mediterranean World: Transition or Cultural Disintegration? in: W. A. Ward, M.Sh. Joukowsky (eds). *The Crisis Years: The 12th Century B. C. From Beyond the Danube to the Tigris*. 10–26. Dubuque: Kendal/Hunt Publishing.

Rutter J. 1975. Ceramic Evidence for Northern Intruders in Southern Greece at the Beginning of the Late Helladic IIIC Period. *American Journal of Archaeology* 79/1: 17–32.

Sandars N. 1964. The Last Mycenaeans and the European Late Bronze Age. *Antiquity* 38: 258–262.

Sandars N. K. 1971. From Bronze Age to Iron Age: A Sequel to a Sequel, in: J. Boardman, M. A. Brown, T. G.E. Powell (eds). *The European Community in Later Prehistory*. 3–29. London: Routledge and Kegan Paul.

Sandars N. K. 1978. *The Sea Peoples*. London: Thames and Hudson.

Shaw I., R. Jameson 1999 (eds.). *A Dictionary of Archaeology*. Oxford: Blackwell Publishers.

Shelmerdine C. W. 1987. Architectural Change and Economic Decline at Pylos, in: J. T. Killen, J. L. Melena, J. P. Olivier (eds). *Studies in Mycenaean and Classical Greek Presented to John Chadwick* (Minos 20–22). 557–568. Salamanca: Universidad de Salamanca.

Snodgrass A. 1974. Metal-Work as Evidence for Immigration in the Late Bronze Age, in: R.A. Crossland, A. Birchall (eds.). *Bronze Age Migrations in the Aegean: Archaeological and Linguistic Problems in Greek Prehistory*. 209–214. London: Duckworth.

Sourvinou-Inwood C. 1974. Movements of Populations in Attica at the End of the Mycenaean Period, in: R.A. Crossland, A. Birchall (eds.). *Bronze Age Migrations in the Aegean: Archaeological and Linguistic Problems in Greek Prehistory*. 215–225. London: Duckworth.

Stubbings F. H. 1975. The Recession of Mycenaean Civilization, in: I. E.S. Edwards, C. J. Gadd, N. G.L. Hammond, E. Sollberger (eds). *Cambridge Ancient History*, volume II/2: *History of the Middle East and the Aegean Region, c. 1380–1000 B.* C. 338–358. Cambridge – New York – Melbourne – Madird – Cape Town: Cambridge University Press.

Tartaron T.F. 2013. *Maritime Networks in the Mycenaean World*. Cambridge: Cambridge University Press.

Tegyey I. 1974. Messenia and the Catastrophe at the End of Late Helladic IIIB, in: R.A. Crossland, A. Birchall (eds.). *Bronze Age Migrations in the Aegean: Archaeological and Linguistic Problems in Greek Prehistory*. 227–232. London: Duckworth.

Thomas C.G. 1978. A Dorian Invasion? The Early Literary Evidence. *Studi micenei ed egeo-anatolici* 19: 77–87.

Tritsch F.J. 1974. The 'Sackers of Cities' and the 'Movement of Populations', in R.A. Crossland, A. Birchall (eds). *Bronze Age Migrations in the Aegean: Archaeological and Linguistic Problems in Greek Prehistory*. 233–238. London: Duckworth.

Van Dommelen P. 2014. Moving On: Archaeological Perspectives on Mobility and Migration. *World Archaeology* 46/4: 477–483.

Van Oyen A. 2017. Material Culture and Mobility: A Brief History of Archaeological Thought, in: C. Heitz, R. Stapfer (eds). *Mobility and Pottery Production. Archaeological & Anthropological Perspectives*. 53–65. Leiden: Sidestone Press.

Weiss H. 1982. The Decline of Late Bronze Age Civilization as a Possible Response to Climatic Change. *Climatic Change* 4: 173–192.

Younger J. 1987. The End of Mycenaean Art, in: E. Thomas (Hrsg.). *Forschungen zur ägäischen Vorgeschichte: Das Ende der mykenischen Welt*. 63–72. Köln: E.Wasmuth.

# MIGRATIONS AND THE FALL OF MYCENAEAN CIVILIZATION

*Aram Kosyan*

**Keywords**: Mycenaean civilization, destructions, depopulation, Dorians, migrations, final disaster, dry climate.

**Abstract**: In the article is discussed the problem of the gradual fall of the Mycenaean civilization which occurred in the interval between the mid-13th century – mid-12th century BC. The disintegration of Mycenaean centers was the result of internal processes within this civilizational milieu which step by step destroyed that uniform political and cultural complex. The main causes of that process should be looked not in the violent attacks of barbaric newcomers from the north but rather the consequences of the so-called 3.2 climatic event which presented irresistible problems with food supplies. At some point large masses of population was forced to leave their homeland and resettle in the countries of Eastern Mediterranean. Thus, the fall of Mycenaean civilization should be treated as a long-term emigration of population.

# ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ Ք. Ա. 2-ՐԴ – 1-ԻՆ ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ. ԼԵՌՆԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻ ԱԴԱՊՏԱՑՈՒՄԸ

*Նժդեհ Երանյան*

**Բանալի բառեր**. Կլիմայական փոփոխություններ, Հայկական լեռնաշխարհ, ուշ բրոնզի դար, երկաթի դար, Եփրատ, Տիգրիս:

**Ամփոփում**. Տարբեր ուսումնասիրություններ ցույց են տվել, որ մեզ հետաքրքրող շրջանում՝ Ք.ա 2-րդ հազարամյակի առաջին կեսից Ք.ա. 1-ին հազարամյակի սկիզբն ընկած ժամանակահատվածում, Հարավային Կովկասի, այդ թվում և Հայկական լեռնաշխարհի արևելյան գոտու կլիման հիմնականում չոր և տաք է եղել՝ խոնավության փոքր դրսևորումներով: Դա կարող էր հանգեցնել գյուղատնտեսության մեջ ջրի հասանելիության և արտադրողականության նվազմանը: Նշենք նաև, որ քննարկվող ժամանակաշրջանում տարածաշրջանի կլիման կարող էր ենթարկվել որոշակի փոփոխությունների՝ պայմանավորված ինչպես բնական, այնպես էլ՝ մարդկային գործոններով: Մասնավորապես, մարդու գործունեության որոշ ճյուղեր, ինչպիսիք են անտառահատումները, ակտիվ գյուղատնտեսությունը և այլն, ևս կարող էին նպաստել միջավայրի փոփոխությանը:

Ք.ա. 2-րդ հազարամյակի վերջում և 1-ին հազարամյակի սկզբում, Առաջավոր Ասիայում տեղի ունեցող կլիմայական կտրուկ փոփոխություններով պայմանավորված, տեղի էին ունենում միգրացիաներ թե՛ դեպի Հայկական լեռնաշխարհ, թե՛ լեռնաշխարհի ներսում՝ ցածրադիր գոտիներից վերաբնակեցում դեպի նախալեռնային և լեռնային գոտիներ: Չնայած այստեղ ևս ակնհայտ է կլիմայական փոփոխությունների դերը, սակայն, մի հանգամանք՝ ոռոգովի երկրագործության անհրաժեշտության ըստ երևույթին բացակայությունը ստեղծում էր քիչ թե շատ ավելի նպաստավոր պայմաններ բնակչության համար: Իհարկե, չի բացառվում, որ ցածր գոտիների գերբնակեցումը ևս կարող էր միգրացիայի պատճառ դառնալ: Իսկ կլիմայական փոփոխությունների դեպքում, երբ սննդի աղբյուր հայթայթելը դժվարանում էր, գերբնակեցման պայմաններում միգրացիան կարող էր լինել լավագույն իրավիճակային լուծումներից մեկը:

## Ներածություն[1]

Փաստ է, որ միջավայրի փոփոխությունները լրջորեն ազդել են հին հասարակությունների վարքի վրա և բնական «մարտահրավերներին» զուգահեռ հասարակական խմբերի արձագանքը փոխվել է: Բնական միջավայրի՝ անգամ աննշան փոփոխությունները մեծ ազդեցություն են թողել հասարակությունների տնտեսական գործունեության վրա: Ընդ որում, տարբեր տեղերում կլիմայական պայմանների միևնույն փոփոխությանը տարբեր հասարակություններ երբեմն արձագանքել են ոչ միանման. այն դրսևորվել է արձագանքի բացակայությունից մինչև բնակչության կենցաղավարության տիպի փոփոխություն և միգրացիա:

Տարբեր ուսումնասիրություններ ցույց են տվել, որ մեզ հետաքրքրող շրջանում՝ Ք.ա 2-րդ հազարամյակի առաջին կեսից 1-ին հազարամյակի սկիզբն ընկած ժամանակահատվածում, Հարավային Կովկասի, այդ թվում և Հայկական լեռնաշխարհի արևելյան գոտու կլիման հիմնականում չոր և տաք է եղել՝ խոնավության փոքր դրսևորումներով: Դա կարող էր հանգեցնել գյուղատնտեսության մեջ ջրի հասանելիության և արտադրողականության նվազմանը, ինչն իր հերթին կարող էր նպաստել տարածաշրջանում որոշակի տնտեսական գործունեության անկմանը: Նշենք նաև, որ քննարկվող ժամանակաշրջանում տարա-

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 20TTSH-005 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

ծաշրջանի կլիման կարող էր ենթարկվել որոշակի փոփոխությունների՝ պայմանավորված ինչպես բնական, այնպես էլ՝ մարդկային գործոններով: Մասնավորապես, մարդու գործունեության որոշ ճյուղեր, ինչպիսիք են՝ անտառահատումները, ակտիվ գյուղատնտեսությունը և այլն, ևս կարող էին նպաստել կլիմայի փոփոխությանը:

Ընդհանուր առմամբ, Ք.ա. 2-րդ–1-ին հազարամյակների ընթացքում տարածաշրջանում տեղի ունեցած կլիմայական փոփոխությունները կարող էին զգալի ազդեցություն ունենալ Հայկական լեռնաշխարհի բնակչության զբաղմունքի և մշակույթի զարգացման վրա, ինչն էլ իր հերթին կհանգեցներ բնակչության տեղաշարժերի, օրինակ, դեպի բարձրադիր գոտիներ, ուր տնտեսական գործունեության համար առկա էին առավել նպաստավոր պայմաններ, այդ թվում և ջրի բավարար աղբյուրներ:

Եվ չնայած Հայկական լեռնաշխարհի տարածքում կլիմայական փոփոխություններով արտահայտված հասարակություն-բնություն կապերի տարբեր հարցերին նվիրված արժեքավոր հետազոտություններին[2] դժվար է նոր խոսք ավելացնել, այնուամենայնիվ, այս հետազոտությամբ փորձ ենք արել համադրել Հայկական լեռնաշխարհին վերաբերող հնակլիմայական վիճակի ուսումնասիրության տվյալները հնագիտական և որոշ գրավոր սկզբնաղբյուրների հետ, այն դիտարկել լեռնաշխարհի տարածքում իրականացված հասարակությունների տեղաշարժերի ու նրանց կացութաձևի փոփոխության համատեքստում:

## Հնակլիմայական ակնարկ

Կլիմայական փոփոխություններով պայմանավորված հասարակական հնարավոր տեղաշարժերի վարկածը քննարկելու համար դիտարկել ենք Ք.ա. 2-րդ – 1-ին հազարամյակի առաջին կեսի ընթացքում կլիմայական իրավիճակը և տատանումները Հայկական լեռնաշխարհի տարածքում և շրջակայքում:

Այսպես՝ քննարկվող շրջանում հնակլիմայական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ լեռնաշխարհը ավելի տաք և, հավանաբար, ավելի չոր էր, քան ներկայումս: Մինչդեռ, Հայկական լեռնաշխարհի որոշ հատվածներում՝ մինչև հյուսիսարևմտյան Իրան և Հարավային Կովկասի բարձրադիր վայրեր, տեղումներն ավելի առատ էին և ավելի կայուն հիմք էին ապահովում երկրագործական և անասնապահական տնտեսությունների համար[3]:

Եթե Ք.ա. 2-րդ հազարամյակի կեսին այս տարածքները առանձնանում են տաք կլիմայով, ապա երկրորդ հազարամյակի վերջում տեղի է ունենում կլիմայի կտրուկ սառեցում: Դա նկատելի էր ոչ միայն Հայկական լեռնաշխարհի տարածքում, այլ նաև եվրասիական գոտու այլ շրջաններում[4]:

Հայկական լեռնաշխարհի մի քանի լճերի հատակից ծաղկափոշու դիագրամները ավելի մանրամասն պատկեր են տալիս կլիմայի փոփոխության վերաբերյալ: Այսպես՝ Վանա լճից վերցված ծաղկափոշու նմուշները ցույց են տալիս Ք.ա. մոտ 1800–1500-ական թվականներին սոճու և կաղնու անտառների առատություն: Անտառները սկսեցին «երիտասարդանալ»՝ առավելագույն վիճակին հասնելով Ք.ա. մոտ 1200 թվականին: Դրանից հետո տեղի է ունեցել որոշակի փոփոխություն՝ դեպի կլիմայի տաքացում[5]:

Ըստ Սևանի ավազանում հորատահանուկի ստորին հատվածի նմուշներում նկարագրված փոշեհատիկների տեսակի և քանակի՝ այս ժամանակահատվածում այստեղ գերակշռել են սոճու, հացենու, կաղնու, տխլենու ծառերը: Հանդիպում են նաև մեծ քանակությամբ ծաղկափոշիներ թելուկազգիների ընտանիքներից, որոնք հիմնականում լուսասեր են, երաշտակայուն և ցրտադիմացկուն: Այս հատվածը, ըստ C14 հասակագրման, համապատասխանում է 3290 ± 30 BP (մոտ Ք.ա. 13–12-րդ դարեր) ժամանակահատվածին:

Սևանա լճի հորատահանուկի ստորին շերտերում հայտնաբերված ծաղկափոշիներով կարելի է ենթադրել, որ տարածաշրջանին բնորոշ է եղել համեմատաբար սառը տափաստանային կլիման[6]:

Մի փոքր այլ իրավիճակ ենք տեսնում Կասպից ծովի շրջակայքում, որի ջրերի մակարդակը բավական բարձր է եղել մինչև Ք.ա. 15–13-րդ դարերը և կտրուկ անկում է նկատվում Ք.ա. 1300 թվականից հետո: Սա խոսում է քննարկվող ժա-

[2] Քոսյան 1994: 247–255; նույնի՝ 1999; Ավետիսյան 1994: 239–246; Գրեկյան 2021: 192–218:

[3] Connor, Kvavadze 2014: 11–12.

[4] Ամենայն հավանականությամբ, նման փոփոխություններն էին, որ առաջ բերեցին տարբեր ցեղերի ներթափանցում՝ այդ թվում և Հայկական լեռնաշխարհ: Մանրամասն տե՛ս Kirleis, Herles 2007: 7–37; Geel *et al.* 2004: 1735–1742; Lachenal *et al.* 2020: 3–4; Davis-Kimball *et al.* 2000.

[5] Issar, Zohar 2007: 166–167.

[6] Սահակյան և այլք 2021: 39:

մանակից սկսվող չոր և տաք կլիմայի մասին: Դա կարող էր պայմանավորված լինել ինչպես բնական պայմանների, այնպես էլ՝ այս տարածաշրջան մեծ թվով բնակչության կուտակման և միջավայրի մեծ ծավալի շահագործման հանգամանքով:

Ցավոք սրտի Հայկական լեռնաշխարհի տարածքից քննարկվող ժամանակահատվածի համար հնակլիմայական այլ հետազոտությունների տվյալներ չունենք: Եղած տվյալները համադրելով այլ սկզբնաղբյուրների հետ՝ փորձել ենք պարզել դրանց հավանական ազդեցությունը լեռնաշխարհի տարածքում բնակչության ներքին տեղաշարժերի վրա:

## Պատմական և հնագիտական սկզբնաղբյուրները էթնիկական տեղաշարժերի մասին

Ներկայացված տվյալների վերլուծության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ տաք և չոր կլիման, ամենայն հավանականությամբ, բացասաբար է անդրադարձել ցածր գոտիականությամբ տարածքների (կիսաանապատային և լեռնատափաստանային, այն է՝ մինչև 1400 մ) բնակչության վրա: Իհարկե, հետագայում սառը և համեմատաբար խոնավ ժամանակաշրջանը, որն ընդգծվեց Ք. ա. 2-րդ հազարամյակի վերջին, այսինքն՝ երկաթի դարի սկզբին, դրական ազդեցություն ունեցավ տարածաշրջանի մեծ մասի, հատկապես՝ խոշոր գետային համակարգերի վրա, քանի որ դրանք հնարավորություն ունեցան մասամբ կամ ամբողջությամբ վերականգնվել: Սակայն, այդ սառը փուլն էլ իր հերթին կարող էր բացասաբար ազդել Հայկական լեռնաշխարհի բարձրլեռնային շրջանների և այստեղից դեպի հյուսիս՝ մինչև Սև ծով և Կովկասյան լեռների բնակչության վրա, քանի որ այն անբարենպաստ է հողագործության և անասնապահության համար[7]:

Հայկական լեռնաշխարհի հարավային և հարավ-արևմտյան շրջաններում մերձավորարևելյան ճգնաժամի փուլում ընթացած էթնիկական լայն տեղաշարժերի մասին գիտությանը վաղուց էր հայտնի՝ շնորհիվ հինարևելյան տարբեր տեքստերում պահպանված տեղեկությունների: Եվ տրամաբանական է, որ հինարևելյան աղբյուրներում հիշատակվող տարբեր էթնիկական տեղաշարժեր կապված լինեին կլիմայական տատանումների հետ և տեղի է ունենում բնակչության կենտրոնացում նախալեռնային/լեռնային գոտիներում[8]:

Ըստ գրավոր աղբյուրների՝ քննարկվող ժամանակաշրջանում դեպի Հայկական լեռնաշխարհ նկատվում է տարբեր ցեղերի ներթափանցում: Այսպես՝ մոտավորապես Ք. ա. 1165 թ. սահմանում նկատելի է կասկերի և մուշկերի տեղաշարժ դեպի վերինեփրատյան շրջաններ: Հենվելով խեցեղեն գտածոների վրա՝ Չ. Բըրնին գտնում է, որ ուշ բրոնզի դարից վաղ երկաթի դար անցման փուլում այս շրջանում հավանաբար տեղի է ունեցել նոր էթնիկական տարրի ներհոսք. վերջիններս, ըստ նրա, մուշկերն են եղել[9]:

Չնայած վերոնշյալ տեղաշարժերին՝ կլիմայական պայմանները շատ բարենպաստ չեն եղել Հայկական լեռնաշխարհի տարածքում ևս: Այսպես՝ Եփրատի և Տիգրիսի ջրի մակարդակի տատանումները ցույց են տալիս, որ Ք. ա. 1450–950 թթ. տեղի է ունեցել մակարդակի տատանում. Ք. ա. 1450 թ. սկսած կտրուկ աճն իր բարձրակետին է հասել Ք. ա. 1350–1250 թթ., իսկ Ք. ա. 1150 թ. այն հասել է նվազագույն մակարդակի: Ավելի ուշ՝ Ք. ա. 950 թ., գրանցվել է մակարդակի համեմատական աճ[10]:

Ա. Քոսյանը, ով մանրամասն ուսումնասիրել է մերձավորարևելյան ճգնաժամը, գտնում է, որ ուշ բրոնզից վաղ երկաթ անցման ընթացքում Հայկական լեռնաշխարհում տեղի ունեցած ժողովրդագրական փոփոխությունների արդյունքում հայտնված մշակույթը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով.

- ա. Ուշբրոնզեդարյան բնակավայրերի և բնակչության քանակի կտրուկ նվազում,
- բ. որոշ բնակավայրերում նկատվող փոքր ավերածություններ,
- գ. նախորդ շրջանի համեմատ վաղերկաթեդարյան բնակավայրերի քանակական աճ,
- դ. նոր և պարզունակ մշակույթի կրողների զանգվածային ներհոսք դեպի լեռնաշխարհ,
- ե. նոր մշակույթի բնորոշ առանձնահատկություններն են՝ գերազանցապես անորակ կավից, առանց բրուտի անիվի կամ դանդաղ անիվի վրա պատրաստված և

[7] Issar, Zohar 2007: 166.
[8] Գրեկյան 2019: 47:
[9] Տե՛ս Քոսյան 1999: 160–161:
[10] Քոսյան 1994: 251–252:

փոքր տեսականիով ներկայացված խեցեղեն, շինությունների պարզունակություն: Վաղերկաթեդարյան վերոհիշյալ շերտը տևել է շուրջ 150 տարի[11]:

Տարածաշրջանում ուշ բրոնզի դարը բնութագրվում է բարձրադիր գոտիներում կառուցված ամրացված բնակավայրերով, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ ձևավորվել են նոր սոցիալական հարաբերությունների և կենտրոնացված իշխանություն և նաև համայնքներ, որոնք ավելի քիչ էին հակված շարժուն կենսակերպին: Այս հարցը վերջին մի քանի տասնամյակների ընթացքում եղել է Կովկասի մի շարք խոշոր ուսումնասիրությունների և դաշտային հետազոտական թեման: Ամենայն հավանականությամբ փոփոխվող քաղաքական միջավայրը համընկել է Կովկասում և Հայկական լեռնաշխարհում շրջակա միջավայրի վերակազմավորման շրջանի հետ, որը հիմք ստեղծեց, որպեսզի ստեղծվեն նոր բնակավայրեր[12]:

Չնայած երկաթի դարի սկզբում վավերացված համեմատաբար բարենպաստ կլիմային, մոտ երեք դար հետո դարձյալ արձանագրվել է տաք և չոր կլիմա, որն իր հերթին բերել է ներքին տեղաշարժերի: Ե. Գրեկյանը, մանրամասն քննելով Ուրարտուի թուլացման և անկման վարկածները, կարևոր դերակատարում է հատկացնում նաև կլիմայական փոփոխություններով, մասնավորապես՝ կլիմայի չորացումով ի հայտ եկած դժվարություններին, ինչով պայմանավորված էլ տեղի է ունենում բնակչության կենտրոնացում նախալեռնային/լեռնային գոտիներում[13]:

## Եզրակացություն

Կարելի է եզրակացնել, որ կլիմայական տատանումները բրոնզի դարաշրջանում հանգեցրել են հողի որակի զգալի փոփոխությունների, ինչն իր հերթին նաև որոշակի հասարակական «արձագանք» է ստացել:

Տեսնում ենք, որ Ք.ա. 2-րդ հազարամյակի վերջում և 1-ին հազարամյակի սկզբում Առաջավոր Ասիայում տեղի ունեցող կլիմայական կտրուկ փոփոխությունների պատճառով տեղի էին ունենում միգրացիաներ թե՛ դեպի Հայկական լեռնաշխարհ, թե՛ լեռնաշխարհի ներսում՝ ցածրադիր գոտիներից վերաբնակեցում դեպի նախալեռնային և լեռնային գոտիներ: Չնայած այստեղ ևս դիտարկվում են կլիմայական փոփոխություններ, սակայն, մի հանգամանք, հավանաբար՝ ոռոգովի երկրագործության անհրաժեշտության բացակայությունը ստեղծում էր քիչ թե շատ ավելի նպաստավոր պայմաններ բնակչության համար: Իհարկե, չի բացառվում, որ ցածրադիր գոտիների գերբնակեցումը ևս կարող էր միգրացիայի պատճառ հանդիսանալ: Իսկ կլիմայական փոփոխությունների դեպքում, երբ սննդի աղբյուր հայթայթելը դժվարանում էր, գերբնակեցման պայմաններում միգրացիան կարող էր լինել լավագույն իրավիճակային լուծումներից մեկը:

Եղած տվյալներով դժվար է պնդել, որ միգրացիաները տեղի են ունեցել միայն կլիմայական փոփոխությունների պատճառով, սակայն, կարող ենք վստահ ասել, որ այն էապես նպաստել է դրան:

**Նժդեհ Երանյան**

*ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ*
*Չարենցի 15, 0025 , Երևան,*
*Հայաստանի Հանրապետություն*

*Հայաստանի պատմության թանգարան,*
*Հանրապետության հրապարակ 4, 0010,*
*Երևան, Հայաստանի Հանրապետություն*

arsenbobokhyan@yahoo.com

## Գրականություն

Ավետիսյան Հ. 1994. Հնագույն էթնիկական տեղաշարժերը և Հայկական լեռնաշխարհը մ. թ.ա. III - I հազարամյակներում: *Պատմաբանասիրական հանդես* թիվ 1–2 (139–140), էջ 239–246:

Գրեկյան Ե. 2019. Կլիմայական փոփոխությունները և Ուրարտական պետության անկումը: *Լրաբեր հասարակական գիտությունների* թիվ 2(656), էջ 35–71:

Գրեկյան Ե. 2021. «Ք.ա. VII դ. ճգնաժամ»-ը և մարական տերության կազմավորման խնդիրը: *Պատմաբանասիրական հանդես* թիվ 1(216), էջ 192–218:

Սահակյան Ք., Սահակյան Լ., Աթոյանց Ա. 2021. Սևանա լճի ավազանի ուշ հոլոցենի պալեոմիջավայրի վերականգնումը: *ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին* 75/1, էջ 33–42:

Քոսյան Ա. 1994. Կրկին էթնիկական տեղաշարժերի մասին: *Պատմաբանասիրական հանդես* թիվ 1–2(139–140), էջ 247–255:

Քոսյան Ա. 1999. *Մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական Լեռնաշխարհը*. Երևան, Զանգակ-97:

Connor S. E., Kvavadze E. V. 2014. Environmental Context of The Kura-Araxes Culture. *Paléorient* 40/2: 11–22.

11 Քոսյան 1999: 159–161:

12 Connor *et al.* 2020: 159–161:

13 Գրեկյան 2019: 35–71:

Connor S., Sagona C., Jamieson A. 2020. Vegetation, Fire and Grazing Dynamics in Mtskheta, Georgia, and their Implications for Human Economic Strategies Since 2000 BC. *Ancient Near Eastern Studies* 57: 149–188.

Davis-Kimball J., Murphy E.M., Koryakova L., Yablonksy L.T. (eds) 2000. *Kurgans, Ritual Sites, and Settlements Eurasian Bronze and Iron Age* (British Archaeological Reports. International Series 890). Oxford: Archaeopress.

Geel B. van, Bokovenko N.A., Burova N.D., Chugunov K.V., Dergachev V.A., Dirksen V.G., Kulkova M., Nagler A., Parzinger H., Plicht van der J., Vasiliev S.S., Zaitseva G.I. 2004. Climate Change and the Expansion of the Scythian Culture after 850 BC: A Hypothesis. *Journal of Archaeological Science* 31: 1735–1742.

Isaar A., Zohar M. 2007. *Climate Change – Environment and History of the Near East*. New York: Springer.

Kirleis W., Herles M. 2007. Climatic Change as a Reason for Assyro-Aramaean conflicts? Pollen Evidence for Drought at the End of the 2nd Millennium BC. *State Archives of Assyria Bulletin* 16: 7–36.

Lachenal T., Roure R., Lemercier O. (eds) 2020. *Demography and Migration. Population Trajectories from the Neolithic to the Iron Age. Proceedings of the XVIII UISPP World Congress (4–9 June 2018, Paris, France)*, vol. 5. Oxford: Archaeopress.

# CLIMATE CHANGES AND THE INTERNAL MOVEMENTS OF POPULATION IN THE ARMENIAN HIGHLANDS IN THE 2ND–1ST MILLENNIA BC. THE ADAPTATION OF MOUNTAINOUS ZONES

*Nzhdeh Yeranyan*

**Keywords**: Climatic changes, Armenian Highlands, Late Bronze Age, Iron Age, Euphrates, Tigris.

**Abstract**: Various studies have shown that in the period from the first half of the 2nd millennium BC to the beginning of the 1st millennium BC, the climate of the Armenian Higlands was mostly dry and warm, with small manifestations of humidity. This could lead to reduced water availability and productivity in agriculture, which, in turn, could contribute to a decline in certain economic activities in the region. It should also be noted that during the discussed period the climate of the region could undergo certain changes due to both natural and human factors. In particular, some branches of human activity, such as deforestation and active agriculture, could also contribute to environmental changes.

We see that at the end of the 2nd millennium BC and the beginning of the 1st millennium BC, due to the drastic climatic changes taking place in Western Asia, migrations took place both towards the Armenian Highlands and within the highlands, accompanied by resettling from the lowlands to the foothills and mountain zones. Although there are climatic changes here too, the absence of the need for irrigated agriculture probably created more or less favorable conditions for the population. Of course, it is not excluded that the overpopulation of the steppe zones could also have been the cause of migration. And in the case of climate change, when it became difficult to find a food source, migration could be one of the best situational solutions in conditions of overpopulation.

# ՀԱՅԿՅԱՆՆԵՐԻ ՄԻԳՐԱՑԻԱՆ (ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՓՈՐՁ)

*Ռուզան Ցականյան*

**Բանալի բառեր**. Հայկ, Բել, «Տուն Թորգոմայ», Բաբելոն, Ասորեստան, Թաբալ, Հայկական լեռնաշխարհ, տեղահանություն, արշավանք:

**Ամփոփում**. Հայկական լեռնաշխարհի հայացման վերաբերյալ հայկական ազգաստեղծ առասպելական ավանդավեպը պահպանել է մի շարք ուշագրավ հիշատակություններ, ըստ որոնց՝ Լեռնաշխարհը յուրացվել է երկու փուլով՝ Մինչհայկյան և Հայկյան: Մինչհայկյան փուլի հիմքում ընկած են բացառապես աստվածաշնչյան պատումները և Լեռնաշխարհի յուրացումը մեկնարկվում է հարավ-արևելքից՝ պատմական Կորդվաց աշխարհից: Երկրորդ՝ Հայկյան փուլն իր մեջ ունենալով աստվածաշնչյան որոշակի տարրեր կապված «Թորգոմի տուն» էթնոքաղաքական միավորի և վաղմիջնադարյան աղբյուրների կողմից հայ ազգին տրված «թորգոմածին» մակդիրի հետ՝ միևնույն ժամանակ ունի նաև պատմական լուրջ կռվաններ: Իրականում աստվածաշնչյան շերտը շատ կարևոր տեղեկություն է պարունակում Հայկյանների տեղաշարժման և արևմուտքից հարավ-արևելք և արևելք ուղղությամբ Հայկական լեռնաշխարհի յուրացման մասին:

## Ներածություն

Սկսած 5-րդ դարից՝ աստվածաշնչյան ասքերը, հայ բանավոր ավանդազրույցների հետ համադրվելով, ներթափանցեցին հայ պատմագրություն, որի արդյունքում աստվածաշնչյան Թորգոմը դարձավ հայ ազգի էպոնիմ (անվանադիր) Հայկ նահապետի[1] (հին հայկական աստված, հերոս[2]) հայրը: Այստեղից է, որ պիտի սկիզբ առներ Հայկազունիների պատմաառասպելական տոհմի պատմությունը: Էթնանունները շատ հաճախ ծագում են էպոնիմներից, ինչի շնորհիվ նրանք սովորաբար այս կամ այն ժողովրդի համար երկրորդ անուն են հանդիսանում կամ հակառակը, երբ էթնանունից է ծագում առասպելական հերոսի անունը[3]: Մեր պարագայում *հայ* ցեղանունն իր անվանումը ստացել է ոչ թե առասպելական հերոս անվանադիր Հայկից, այլ հակառակը՝ վերջինիս անունն է ծագել ցեղանունից[4]: Եվ եթե Հայկը դարձավ ազգի անվանադիր, ապա Թորգոմն էլ իր հերթին պահպանեց նախահոր ու դինաստիայի հիմնադրի համբավը: Դրա վառ ապացույցը կարող է հանդիսանալ վաղմիջնադարյան պատմագրության մեջ հայ ազգին «Թորգոմածին» անվանելու փաստը: Այսպիսով, Թորգոմը սրբազան նահապետական «տուն-օջախ»-ի անվանադիրն է, որից էլ և Bêṯ-Torgāmā – «Տուն Թորգոմայ» կամ «Թորգոմի սերունդների տուն»-ը, այսինքն՝ Թորգոմի դինաստիան[5]:

### Հայկական ազգաստեղծ առասպելն ու նրա առասպելա-պատմական համակարգը

Ցանկացած մշակութային համալիրում ազգային առասպելաբանությունը մշակվում է դարերի ընթացքում՝ տարբեր սերունդների կողմից համապատասխանեցվելով կարևորագույն պատմական կյանքի իրողություններին[6]: Առասպելների նյութը այն ստեղծող էթնոսի տիեզերածնական և ազգածնական պատկերացումներն են: Սակայն, որպես կանոն, դրանց հիմքում ընկած են կոնկրետ ցեղի, ժողովրդի կյանքում տեղի ունեցած իրական դեպքերը:

---

1 Աբեղյան 1944: 19–23:
2 Պետրոսյան 2003: 189–224; նույնի՝ 2020: 37–40:
3 Ցականյան 2017: 175; նույնի՝ 2018: 199:
4 Սարգսյան 1992: 33:
5 Մանրամասն տես՝ Քոսյան 1998: 46–65; Kosyan 2022: 57–69; Ցականյան 2017: 161–175; Цаканян 2018: 130–137:
6 Арутюнян 2006: 64–65.

Հայոց ազգաստեղծման մասին ավանդավեպը վաղ միջնադարյան հայ պատմիչներ Մովսես Խորենացու և Սեբեոսի միջոցով մեզ հասած Հայկ նահապետի և Հայկյանների տեղաշարժերի մասին պատումն է: Այն անմիջականորեն կապվել է հայկական ցեղերի կամ նահապետների պատմաառասպելական գործունեության հետ և անվիճելիորեն հնագույն ծագում ունի: Դժվար է չհամաձայնվել Գ. Խ. Սարգսյանի այն պնդման հետ, ըստ որի՝ դարերի և հազարամյակների ընթացքում այն շերտակալել է այլևայլ տարրերով ու մանրամասներով, ենթարկվել ձևափոխությունների և նշանակալից չափով կորցրել իր նախնական պատկերը, բայցևայնպես պահպանել է հնագույն տարբերակի հիմնական գծերը[7]:

Հայկ նահապետի և նրա հետնորդների կողմից Հայկական լեռնաշարհի յուրացման մասին պատումն անմիջականորեն աղերսվում է աստվածաշնչյան մի շարք պատումների հետ: Հայոց ազգածագման առասպելի բազմաշերտության առումով խիստ ուշագրավ է այն փաստը, որ Մովսես Խորենացին, մինչև Հայկ նահապետի ու նրա «աղխի» Բաբելոնից դեպի Հայկական լեռնաշխարհ տեղաշարժվելը, ներկայացնում է մի աստվածաշնչյան սյուժե, որտեղ խոսվում է դեպի Հայկական լեռնաշխարհի մինչհայկյան մի ալիքի միգրացիայի մասին: Այլ խոսքով՝ Մովսես Խորենացու ավանդության մեջ ներկայացված են Հայկական լեռնաշխարհի յուրացման երկու ալիքներ:

### Հայկական լեռնաշխարհի յուրացման առաջին ալիքը

Հայկական լեռնաշխարհի յուրացման առաջին ալիքի հիմքը բացառապես աստվածաշնչյան հետջրհեղեղյան պատումն է: Այստեղ հետաքրքիր է այն հանգամանքը, որ ինչպես Աստվածաշնչում՝ Հայկական լեռնաշխարհում ևս մարդկային գործունեությունը բաժանվում է երկու հիմնական փուլի՝ մինչջրհեղեղյան և հետջրհեղեղյան: Վերջին փուլում շրջադարձային տեղ է հատկացվում բաբելոնյան աշտարակաշինության ձախողմանը (Ծննդոց 11), որից հետո մարդկությունը լեզվի հիմքի վրա բաժանվում է առանձին ցեղերի: Մովսես Խորենացին, հարազատ մնալով աստվածաշնչյան պատումին, գործում է նույն կերպ՝ փուլաբաժանման ենթարկելով իր պատումը:

Այսպիսով, ըստ պատումի, երբ Քսիսութրոս (Նոյը – Ռ. Ց.) նավարկելով հասնում է Հայաստան (ավելի կոնկրետ՝ Կորդվաց աշխարհ) և կանգ առնում Արարադ լեռան[8] (ժամանակակից Ջուդի դաղը – Ռ. Ց.) գագաթին, նրա որդիներից Սեմը հետախուզական նպատակներով շարժվում է դեպի հյուսիս-արևմուտք, որտեղ կանգ է առնում մի փոքր դաշտով դեպի Ասորեստան հոսող գետի (ըստ երևույթին խոսքը Տիգրիս գետի մասին է) ափին գտնվող երկայնանիստ լեռան մոտ: Հետախուզելով ամբողջ տարածքը և այնտեղ երկու լուսնական ամիս մնալուց հետո՝ Սեմը լեռն իր անվամբ կոչում է Սիմ և վերադառնում: Սակայն, Սեմի որդի Տարբան իր 30 որդիներով, 15 աղջիկներով ու նրանց ամուսիններով բնակություն է հաստատում վերոնշյալ գետի շրջակայքում և վայրն իր անունով կոչում Տարոն.

«*Իսկ ի կրտսերագունից որդւոցն նորա Տարբան անուն, երեսուն ուստերաւք եւ հնգետասան դստերաւք եւ նոցին արամբք մեկնեալ ի հաւրէն՝ բնակէ անդէն ի նոյն գետեզր, յորոյ անուն եւ զգաւառն անուանէ Տարաւն, եւ զանուն տեղւոյն ուր բնակեցաւն՝ կոչէ Ցրաւնս. զի անդ զառաջինն սկիզբն եղեւ բաժանելոյ որդւոց նորա ի նմանէ*» (Խորենացի I, Զ):

Ակնառու է մի հանգամանք, որ Հայկական լեռնաշխարհի յուրացման առաջին փուլը տեղի է ունենում լեռնաշխարհի հարավ-արելքից և հասնում հյուսիս-արևմուտք: Ըստ երևույթին՝ մենք գործ ունենք մի ուղու հետ, որն անցնում էր Կորդուքից Մոկք ապա Վանա լճի արևելյան ափամերձ գոտով՝ Տուրուբերան, կամ Կորդուք–Մոկք–Աղձնիք ապա և Տուրուբերան:

### Հայկական լեռնաշխարհի բնակեցման երկրորդ ալիքն ու լեռնաշխարհի յուրացման ավարտական փուլը

Հայկական լեռնաշխարհի բնակեցման երկրորդ ալիքն արդեն վերաբերում է Հայկ նահապետին և կրկին հագեցած է աստվածաշնչյան տարրերով: Հայկ նահապետի մասին պատմող առասպելական ավանդավեպի գործողությունների կիզակետը Բաբելոնն է՝ աստվածաշնչյան աշտարակաշինության ժամանակներում: Ըստ առասպելի՝ Հայկ նահապետը ոչ միայն աշտարակաշինության ժամանակակիցն է, այլև՝ նրա մասնակիցը: Աշտա-

---

7 Սարգսյան 1992: 35:

8 Չշփոթել Մեծ Մասիսի հետ: Ինչպես շատ ճիշտ նկատել են Գ. Խ. Սարգսյանն և այլք՝ Մովսես Խորենացու հիշատակած «Արարադի երկիրը» կապ չունի ո՛չ Մեծ Մասիս (Արարատ) սարի, ո՛չ էլ՝ Արարատյան դաշտի հետ, որոնք նա, համապատասխանաբար, անվանում է Մասիս և Այրարատ կամ Արայի դաշտ: Տե՛ս Սարգսյան 1992: 36, ծնթ. 24, հմմտ., սակայն, Պետրոսյան 2020: 156–158:

րակաշինության թոհուբոհի ժամանակ, հսկաներից Բելը որոշում է հնազանդեցնել մյուս հսկաներին և իշխել բոլորի վրա: Բելի որոշման դեմ բռնանում է Հայկ նահապետը: Ըմբոստությունը, աստվածամարտությունը և այլ դիցաբանական գծեր ընկած են եղել աստվածաշնչյան աշտարակաշինության ժողովրդական պատումի հիմնական գաղափարի հենքում: Հայկի առասպելական-իրական կերպարին ևս հատուկ է ըմբոստությունը: Հայկը աշտարակաշինության և Բելի դեմ առճակատման ժամանակ սպասում է իր անդրանիկ որդու ծնվելուն: Իսկ արդեն Արամանյակի ծնվելուց հետո նա թողնում է Բաբելոնը և չվում հյուսիս.

«…*ոչ կամեցեալ հնազանդ լինել Հայկայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրամանեակ ի Բաբելոնի՝ չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդւովք իւրովք եւ դստերաւք եւ որդւոց որդւովք, արամբք զաւրաւորաւք, թուով իբրեւ երեքհարիւր, եւ այլովք ընդոծնաւք եւ եկաւք յարեցելովք ի նա եւ բոլոր աղխիւ: Երթեալ բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուեալցն դադարեալ բնակէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ*» (Խորենացի I, Ժ):

Վերոշարադրյալից ակնհայտ է դառնում, որ աշտարակաշինության պատումը դարձել է հայկական առասպելական ավանդավեպի նախերգանքը կամ հայ էթնոսի կազմավորման բարդ ու երկարատև գործընթացի մեկնակետը: Ընդ որում, այս դեպքում ևս Հայկական լեռնաշխարհի բնակեցման երկրորդ փուլի մեկնարկը նույնպես Կորդվաց աշխարհից է: Պատմահայրն ըստ երևույթին ջանացել է հարազատ մնալ աստվածաշնչյան պատումին և որպեսզի հակասության տեղիք չտա կամ ընթերցողին չշփոթեցնի, նա հարկ է համարել շեշտել, որ մինչև Հայկյանների տեղաշարժը հյուսիսում «…*սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուեալցն դադարեալ բնակէին*»:

Հարկ է մեկ անգամ ևս շեշտել, որ խոսքը պատմական Մեծ Հայքի Կորդվաց աշխարհի մասին է: Խնդիրն այն է, որ ընդամենը մեկ պարբերություն անց Խորենացին նկարագրում է Հայկի տեղաշարժը հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք և նրա հանգրվանը Տուրուբերանի Հարքում: Դրա վերաբերյալ Պատմահայրը նշում է. «…*ի հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ, առ երկայնանիստ միով լերամբ, բնակեալ յառաջագոյն արք սակաւք, ինքնակամ հնազանդեալ դիւցազինն:*» (Խորենացի I, Ժ): Իրեն ենթարկելով Կորդվաց աշխարհը՝ Հայկն այն թողնում է իր թոռ Կադմոսին՝ Արամանյակի որդուն, իսկ ինքը ուղղություն բռնում դեպի հյուսիս-արևմուտք՝ Տուրուբերան:

Պատմահայրը Հայկյաններին փաստացի տանում է արդեն հայտնի Սեմ-Տարբանյան ուղիով: Եվ հենց այդ ուղին է, որ նշագծում է հայ էթնոսի կազմավորման սկիզբը: Ամեն դեպքում, եթե առաջին ալիքի առումով ամեն ինչ գրեթե պարզ է և խոսքը Նոյի որդիների հետջրհեղեղյան տարածույթն է, ապա երկրորդի պարագայում մենք գտնվում ենք Նոյի որդի Սեմի որդի Տարբանի տիրույթներում: Եվ եթե երկրորդի պարագայում Պատմահայրն ընդգծում է «*ինքնակամ հնազանդեալ դիւցազինն*», ապա առաջինի պարագայում՝ նա լռում է: Մնում է ենթադրել, որ Հայկին ինքնակամ հնազանդվել են նաև Կորդվաց աշխարհում կամ հնազանդեցումը տեղի է ունեցել ռազմական ճանապարհով:

Մենք շարունակում ենք մնալ մեր այն կարծիքին, որ «…*հանդերձ որդւովք իւրովք եւ դստերաւք եւ որդւոց որդւովք, արամբք զաւրաւորաւք, թուով իբրեւ երեքհարիւր, եւ այլովք ընդոծնաւք եւ եկաւք յարեցելովք ի նա եւ բոլոր աղխիւ*» հիշատակությունն իր աղերսներն ունի պատմա-առասպելական 300 նահապետական կամ տոհմացեղային միավորման հետ, մի թիվ, որն ընկած է եղել բազում ժողովուրդների միավորման հիմքում[9]: Փաստացի, այստեղ խոսքը հենց «Թորգոմի տան» սերունդների մասին է: Իսկապես, «Տուն Թորգոման» և Հայկազուն նահապետները, ինչպես նշում է Ա. Քոսյանը, կարող էին գոյություն ունենալ Հայկյան փուլին միաժամանակ[10]: Գ. Սարգսյանն իրավացիորեն նշում է, որ Հայկի և Հայկյանների տեղաշարժերի մասին ավանդության մեջ աստվածաշնչյական ծագում ունեն միայն Բաբելոնի և նրանից ածանցվող պատումային տարրերը, իսկ Հարքում բնակվելու, Բելի հետ բախման և Հայկյանների՝ Հայկական լեռնաշխարհի արևելյան մասը իրացնելու հարուստ թեմաները կապ չունեն Աստվածաշնչի հետ[11]:

Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքում Հայկյանների բնակեցման ելակետը Բելի հետ Հայկ նահապետի բախումն է: Մինչ Հայկի դեմ արշավելը, Բելին հաջողվում է իրեն ենթարկել մյուս հսկաներին, որից հետո նա պատգամավորներ է

---

9 Ցականյան 2018: 206:

10 Քոսյան 1998: 55:

11 Սարգսյան 1992: 37:

ուղարկում Հայկի մոտ՝ հորդորելով հնազանդվել և հարցը խաղաղ ճանապարհով լուծել: Հայկի կողմից բացասական պատասխան ստանալուց հետո Բելը «*Ապա զաւրաժողով լինի ի վերայ Տիտանեանն Բէլ ամբոխիւ հետեւակ զաւրաց. գայ հասանէ հիւսիսի, յերկիրն Արարադայ, մերձ ի տունն Կադմեայ*» (Խորենացի I, ԺԱ): Կադմոսը, սակայն, չի պատրաստվում դիմակայել Բելին և դիմում է փախուստի: Իրենից առաջ նա սուրհանդակ է ուղարկում Հարք և տեղեկացնում Հայկին Բելի հարձակման մասին: Հայկը զորք է ժողովում և շարժվում Բելին ընդառաջ: Ճակատամարտում, որը տեղի է ունենում Վանա լճի արևելյան ափին՝ Հայոց ձորում, Հայկին հաջողվում է սպանել Բելին, որից հետո նրա զորքում խուճապ է սկսվում: Հաղթանակած Հայկը Բելի ընկած բլուրը կոչեց Գերեզմանք, իսկ նրա դին՝ «*պաճուճեալ դեղովք, ասէ, հչամայէ Հայկ տանել ի Հարք, եւ թաղել ի բարձրաւանդակ տեղւոջ, ի տեսիլ կանանց եւ որդւոց իւրոց*»:

Հարկ է նշել, որ Սեբեոսի մոտ Բելի արշավանքի այլ նկարագրություն ենք հանդիպում: Սեբեոսը նշում է՝ «*Գայ հասանէ* (Բելը – հեղ.) *յերկիրն Արարադայ ի տունն, որ էր նոցա հայրենի, զոր շինեալն էր ի լեռնոտին. եւ Կադմոս փախստական գնաց ի Հարք առ հայր իւր…*

*Առնու Հայկն զԱրամենակ եւ զԿադմոս զորդի իւր. եւ զորդիս նոցա եւ զորդիս եւթանեցունց դստերաց իւրոց, արս հսկայս եւ նուազունս թուով:*

*Եւ ի դիմի հարկանի Հայկն Բէլայ արքայի. եւ ոչ կարաց զդէմ ունել բազմութեան արանց հսկայից սպառազինաց:*

*Անդ ի դիմի հարկանի Հայկն Բէլայ, եւ կամեցաւ ըմբռնել զնա Բէլ ի բուռն իւր: Խոյս ետ Հայկն յերեսաց նորա, եւ գնայր նա փախստական. եւ Բէլ զհետ նորա երթայր պնդագոյն հանդերձ զինակրաւն իւրով*» (Սեբեոս I, 19–31):

Ըստ Սեբեոսի, Հայկի և Բելի միջև երկու բախում է տեղի ունեցել և միայն երկրորդ ճակատամարտում է Հայկին հաջողվել հաղթանակ տանել, որից հետո նա վերագրավում է Կորդվաց աշխարհը և վերադարձնում Կադմոսին:

Բելի դեմ տարած հաղթանակից հետո Հայկը վերադառնում Հարք և երկար տարիներ ապրելուց հետ Հայկն «ամբողջ ազգը հանձնում է Արամանյակին» և մահանում: Լեռնաշխարհի *յուրացման և անվանակոչման* մնացած գործը շարունակում են նրա սերունդները (Խորենացի I, ԺԲ): Արամանյակը Հարքը և Վանա լճի շրջակայքը թողնում է իր եղբայրներ Խոռին ու Մանավազին, իսկ ինքը շարժվում դեպի հյուսիս-արևելք և բնակություն հաստատում Արագածոտնում: Մանավազը (*Մանավազյան տոհմ*) ժառանգում է Հարքը, իսկ նրա որդի Բազը (*Բզնունյաց և Որդունի տոհմ*)՝ Վանա լճի հյուսիս-արևմտյան ափամերձ շրջանները, իսկ Խոռը (*Խոռխոռունյաց տոհմ*)՝ տարածքներ հյուսիսային կողմերում:

Արամանյակի կողմից յուրացվող տարածքների նկարագրության հետ զուգահեռ հանդիպում ենք մի ուշագրավ երևույթի, մի հանգամանք, որը Խորենացին կարծես ամեն մի նոր տարածք յուրացնելու ժամանակ հարկ է համարել շեշտել, որ մինչ Հայկի ու Հայկյանների տեղաշարժերն ու յուրացումը՝ այդ տարածքները բնակեցված են եղել. «*Բայց աքանչէլի իմն ասէ պատմագիրն, թէ ի յոլով տեղիս գտանէին բնակեալք ի մարդկանէ յերկրիս մերում ցան եւ ցիր սակաւք* ***յառաջ քան զգալուստ բնկին մերոյ նախնւոյն Հայկայ***» (Խորենացի I, ԺԲ): Խորենացին բավականին մանրամասն նկարագրում է Արարատյան դաշտի, Շիրակի, Սյունյաց աշխարհի, Գեղարքունիքի յուրացումը Արամանյակի որդի Արամայիսի և նրա հաջորդների ժամանակ (Խորենացի I, ԺԲ): Պատմահոր ուշադրության կենտրոնում է հիմնականում պատմական Մեծ Հայքի կենտրոնական ու արևելյան շրջանները: Հայկական լեռնաշխարհի մնացած հատվածների յուրացումը տեղի է ունենում արդեն Արամայիսից հետո, չորրորդ սերնդի՝ Արամ նահապետի (Արամն Արամայիսի թոռ Գեղամի թոռն էր) ժամանակահատվածում՝ դեպի արևելք, հարավ ու հարավ-արևելք և արևմուտք նրա կատարած երեք հիմնական արշավանքների արդյունքում (Խորենացի I, ԺԳ-ԺԴ):

Մովսես Խորենացին ապրել և ստեղծագործել է մի ժամանակահատվածում, երբ Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը, ապա և Մարզպանական Հայաստանը *Այրարատակենտրոն* կառուցվածք ունեին[12]: Ըստ այդմ՝ դժվար չէ նկատել, որ Հայկական լեռնաշխարհի կենտրոնական շրջաններում Հայկյանների բնակեցման ուղղու վերաբերյալ Պատմահոր հայեցակարգն իր իսկ ժամանակների արդյունք են: Իսկ Պատմահայրը, բացառությամբ այն դեպքերի, երբ հնարավոր չի եղել համադրել իրական-պատմականն ու ժամանակի ցանկալի պատկերացումները, շատ հազվադեպ է շեղվում իր հայեցակարգից: Դրա մասին է վկայում այն փաստը, որ երբ Պատմահայրը նկարագրում է Արամ նահապետի կողմից Հայկական լեռնաշ-

[12] Քոսյան 1999: 256–257; Հարությունյան 2001: 56, 59–61, 101:

խարհի արևմտյան շրջանների նվաճումը, օգտագործում է «*բուն իւր սահմանն*» (Խորենացի I, ԺԳ-ԺԴ) արտահայտությունը:

### Պատումի պատմական բաղադրիչը, թվագրումն ու պատմականացման փորձերը

Առասպելների պատմական հիմքի բացահայտման համար խիստ կարևոր է առասպելի կոնկրետ պատմական դաշտ վերհանումը, տեղայնացումն ու թվագրումը: Առասպելական պատումի ու պատմական կոնկրետ իրադարձության երկու և ավելի բաղադրիչների հնարավոր համադրման դեպքում հնարավոր է դառնում պատումի տեղայնացումն ու թվագրումը: Հակառակ պարագայում առասպելական պատումը պետք է դիտարկվի որպես ժողովրդական բանահյուսության մասնիկ և չբերվի պատմական դաշտ: Բաղադրիչների համադրման արդյունքում առասպելական ժամանակը վերափոխվում է պատմականի, առասպելական իրադարձություններն անցնում են պատմական հիմքին և տեղայնանում կոնկրետ-պատմաաշխարհագրական միջավայրում[13]:

Ինչպես նկատել են Գ. Խ. Սարգսյանն ու Ա. Վ. Քոսյանը, հայոց ազգածագման մասին առասպելն ունի ոչ միայն պակասող, այլև՝ ներկայացվող նյութին հակասող սյուժեներ: Ինքնին հասկանալի է, որ Պատմահայրն իր ձեռքի տակ ունեցել է այդ առասպելի նախաքրիստոնեական տարբերակը: Սակայն, փաստերի համադրման և հակադրման սկզբունքում ընտրում է այն տարբերակը, որը չէր հակասում իր հայեցակարգին կամ ավելի արժանահավատ էր համարում: Իսկ նման մոտեցումները Պատմահոր մոտ եզակի չեն[14]:

Պատմահոր վերոնշյալ հայեցակարգին հակասում է պատմիչների կողմից տրված հայերիս «*թորգոմածին*» և Հայաստանին «*Տուն Թորգոմայ*» կամ «*Թորգոմի սերունդների տուն*» անվանումները[15]: Չնայած այն հանգամանքին, որ հայ վաղմիջնադարյան պատմիչների երկերում հայերիս «*Թորգոմածին*» անվանելու փաստն ինքնին մուտք է գործել Աստվածաշնչից, սակայն, ի տարբերություն առաջինի, որը զուտ աստվածաշնչյան է, այստեղ գործ ունենք իրական-պատմական էթնոքաղաքական միավորի հետ: Աստվածաշնչում Թորգոմի ու նրա որդիների բնակության վայրը գտնվում էր հյուսիսային կողմերում՝ «*Գոմերն ու նրա բոլոր զորախմբերը, Թորգոմայի տունը՝ հյուսիսի ամենահեռավոր վայրերից ու նրա բոլոր զորախմբերը. շատ ժողովուրդներ քեզ հետ են*» (Եզեկիել 38:6): Եթե Հայկը Թորգոմի զավակն էր, ապա նրա բնակության վայրը նույնպես պետք է լիներ «Տուն Թորգոման»: Իսկ այս պարագայում այն կհակասեր ժողովուրդների առաջացման աստվածաշնչյան տարբերակին: Հակառակ դեպքում Պատմահայրը ստիպված պետք է բացատրեր Հայկի Բաբելոնում հայտնվելու հանգամանքները: Վերոշարադրյալ հանգամանքից ելնելով՝ Գ. Խ. Սարգսյանը եզրակացրել է, որ հայոց հնագույն ազգային ավանդության նախնական տարբերակում Հայկը և Հայկյանները հասել են Հարք-Տարոնի շրջանը արևմուտքից՝ Եփրատի ավազանից՝ «Տուն Թորգոմայ»-ից: Եվ հենց այս տարբերակն է նա համարում *մեզ հասած առասպելի մեջ պակասող օղակը*, որը դուրս է մղվել բաբելոնյան ուղու հավելման հետևանքով, որպես նրան տրամագծորեն հակասող[16]:

Հայկի ելակետի մակաշերտային (աստվածաշնչական) էության փոխարեն Ա. Վ. Քոսյանը նույնպես տեսնում է մինչաստվածաշնչյան՝ արևմտյան-անդրեփրատյան ելակետ[17]:

Որքան որ մեզ է հայտնի, Հայկի ճակատամարտը Բելի դեմ առաջին թվագրման փորձը պատկանում է Մ. Չամչյանցին: Վերջինս ելնելով աստվածաշնչյան հաշվարկների վրա՝ Հայկի իշխանության համար որպես տարիներ նշում է Ք. ա. 2107–2027 թթ.[18]: Հաջորդ թվագրումը, որը լայն տարածում և քաղաքացիություն է ստացել, կատարել է Ղ. Ալիշանը: Ըստ Ալիշանի, 428 թ. Արշակունյաց արքայատոհմի անկումից պետք է հետ զնալ երկու «Հայկյան ցիկլ» և հանել 428 տարի, որի արդյունքում ստացվում է Ք. ա. 2492 թ.[19]: Հետագայում ալիշանական թվագրումը պահպանվեց և կիրառվում է անգամ այսօր:

Առասպելի առաջին լուրջ գիտական և համակողմանի վերլուծության փորձը պատկանում է Ս. Հմայակյանին: Վերջինս, ուսումնասիրելով Ասորեստանի արքա Թիգլաթպալասար I (Ք.ա. 1114–

[13] Арутюнян 2006: 64.
[14] Տե՛ս, օրինակ, Ցականյան 2018: 184–189:
[15] Մանրամասն տե՛ս վերը՝ ծնթ. 5 (հղված գրականությամբ հանդերձ):
[16] Սարգսյան 1992: 47–48:
[17] Քոսյան 1994: 254:
[18] Չամչյանց 1984: Աղյուսակ 22:
[19] Ալիշան 1869: 76–104:

1077 թթ.) կառավարման ժամանակահատվածում՝ Ք. ա. մոտ 1110 թ., Նիբուրի լեռներում գտնվող Կիբշա քաղաքի բնակչության ըմբոստության հանգամանքները և այն համադրելով առասպելի բաղադրիչներից 300 ընտանիքի հետ, գալիս է այն եզրակացության, որ Հայկի տեղաշարժման ելակետը եղել է հենց Կորդվաց աշխարհը՝ Ք. ա. մոտ 1110 թ.: Բանն այն է, որ ըստ երևույթին Ասորեստանի արքան թույլ է տալիս այդ 300 ընտանիքներին լքել Կիբշան և հեռանալ[20]:

Հանուն ճշմարտության պետք է արձանագրել, որ այս կամ այն թվականի ընդունումը զուտ կամայական մոտեցում է: Ինչ խոսք, առասպելն ունի բավականին խտացված շերտեր, սակայն, թվագրման համար, ինչպես արդեն նշեցինք, անհրաժեշտ է, որ այդ շերտերի բաղադրիչները համապատասխանեն: Մնացած բոլոր պարագաներում այն դառնում է կամայական: Որպես օրինակ նշենք, որ Բ. Հարությունյանի կարծիքով Հայկյան շրջափուլից պետք է հանել մեկ ցիկլ և որպես հիմք ընդունել Ք. ա. 1032 թ., իսկ թե ինչու՞ և ինչպե՞ս՝ հեղինակը չի բացահայտում[21]:

Հաջորդ թվագրման փորձը պատկանում է Վ. Խաչատրյանին: Նա եզրակացնում է, որ Հայկը Հայասայի (Հայք) այն թագավորն է եղել, որը Ք. ա. 1244 թ. առաջնորդել է 43 գավառների իշխաններին և նրանց հավաքական զորքին երկիր ներխուժած Ասորեստանի բանակի և նրա առաջնորդ Թուքուլթի-Նինուրթա I-ի դեմ (Ք. ա. 1244–1208 թթ.)[22]: Սակայն, հեղինակի առաջ քաշած ոչ մի բաղադրիչ իր անգամ մոտավոր հաստատումը չի գտնում առասպելի մեջ:

Այս թվագրումների շարքը կարելի է անվերջ երկարացնել: Միաժամանակ, պետք է նկատել, որ վերոնշյալ թվագրությունները խիստ թերի են փաստարկված և բոլորովին էլ չեն բխում աղբյուրներից: Առավել մերժելի են ոչ մասնագետների կողմից առաջարկված կամայական, երբեմն՝ ահեթեթության հասնող թվագրությունները, որոնք կատարելապես զուրկ են գիտական հիմքից, բայց քողարկված են «հայրենասիրության» գաղափարի տակ:

Խնդրի վերաբերյալ տարիներ առաջ կատարած մեր հետազոտության արդյունքում հանգել ենք Ք. ա. 705 թ.՝ չբացառելով, սակայն, այլ տարբերակներ ևս: Մեր կարծիքի շարադրման ժամանակ ձգտել ենք առաջին հերթին հարազատ մնալ առասպելի տառին և այն բերելով պատմական դաշտ՝ ձգտել ենք նրա բաղադրիչների պահպանման ու անաղարտ վերաշարադրմանը: Հայդմ՝ Հայկի ու Բելի պատերազմի մասին առասպելի պատմական հենքը ներկայանում է միանգամայն այլ կերպ:

Ասորեստանի արքա Շարրու-ուկին (Սարգոն) II-ի (Ք. ա. 722–705 թթ.) հատուկ ուշադրության կենտրոնում էր գտնվում Փոքր Ասիայի արևելյան շրջանները[23]: Ք. ա. 705 թ. Սարգոն II-ի՝ դեպի արևելյան Փոքր Ասիա կատարած արշավանքն անհաջողության մատնվեց: Թաբալում կուլումմանցի Գուրդիի դեմ տեղի ունեցած ճակատամարտն ավարտվեց ասորեստանցիների պարտությամբ: Արքան, որն անձամբ էր ղեկավարում ճակատամարտը, զոհվեց[24]:

Այս իրադարձությունը հնարավոր եղավ պարզել միայն երկու աղբյուրների՝ Ասորեստանի անվանադիրների (*limmu*) ցուցակ՝ B6[25]-ի և «Բաբելոնյան ժամանակագրության» հաղորդած տվյալների համադրման արդյունքում: Առանձին-առանձին վերցրած՝ այդ աղբյուրները հանգեցրել են խիստ տարբեր և անգամ հակասական եզրակացությունների: Աղբյուրներից առաջինում արձանագրված է.

«*8. ina lim-me* ᴵNIGIN.EN[26] ᴸᵁ*šá-kìn* URU.*A-me-di* LU[GAL …]

*9. ina* UGU ᴵ*Qúr(!)-di-i* LÚ.*Ku-lum-ma-a-a da-[…]*

*10.* LUGAL GAZ *ma-dak-tú ša šàr* KUR.*Aš-šur*ᵏⁱ *lu-[…]*»

*«8. Նաշխուր-բելի էպոնիմատի տարում՝ Ամիդի նահանգապետի, ար[քան ...], 9. ընդդեմ Գուրդիի Կուլումմանցու [...]* 10. *արքան սպանվեց: Ասորեստանի արքայի ճամբարը [վերցվեց? ...]*»[27]:

20 Հմայակյան 1992: 128–131:
21 Հարությունյան 2005: 128–145:
22 Խաչատրյան 1998: 18–19, 22–24, 46, 81–87; նույնի՝ 2013: 123–128:
23 Մանրամասն տե՛ս Kossian 2002a: 191–203; նույնի՝ 2002b: 187–196.
24 Kuhrt 1995: 499; Frahm 1999: 74–76; նույնի՝ 2003: 129; նույնի՝ 2005: 4–5; Kossian 2002: 191–203; Melville 2010: 99; Fales 2014: 228–229; Elayi 2017: 210–212; նույնի՝ 2018: XV.
25 Նախկինում հայտնի էր նաև որպես Cb6 (Ungnad 1938: 435).
26 NIGIN.EN (Nasḫur-bēl): Տե՛ս Streck 1998: 184–185. Ընթերցվել է նաև Upaḫ(ḫ)ir-bēl (Pfeiffer 1935: 6–7) և Lipḫur-bēl (Lanfranchi, Parpola 1990: nos 1–20. Հմմտ. նաև Smith 1871: 8, 10; Parpola 1981: 136, և այլն:
27 Millard 1994: 48, 60; Frahm 1999: 75; Glassner 2004: Chron. 9, ll. 8–10.

Իսկ երկրորդից պահպանվել է միայն հետևյալ հատվածը.

*«20.* [MU.17(?) LUGAL.GI]N[28] *ana* KUR.*Ta-ba-lu […]»*

*"20. [XVII (?) տարի, Շարրուկ]ինն [արշավեց] դեպի Թաբալ […]»*[29]:

Այն, որ երկու աղբյուրները խոսում են միևնույն իրադարձության մասին՝ գրեթե կասկած չի հարուցում, իսկ նրանց համադրման արդյունքում իրադարձությունը կարելի վերականգնել հետևյալ կերպ.

*«Նաշխուր-Բելի էպոնիմատի տարում (Ք.ա. 705թ.)՝ Ամիդի նահանգապետի, ար[քան զնաց ընդդեմ Թաբալի ...], ընդդեմ Գուրդիի Կուլումմանցու […] արքան սպանվեց: Ասորեստանի արքայի ճամբարը [վերցվեց? ...]»*:

Չնայած այն հանգամանքին, որ իրադարձության այսպիսի վերականգնումը կարծես թե հաջողված է թվում, սակայն, աղբյուրների հաղորդած կցկտուր տեղեկությունների արդյունքում պատմագրության մեջ ի հայտ են եկել հակասական մոտեցումներ՝ կապված Սարգոն II-ի զոհվելու վայրի, նրա հակառակորդի էթնիկական պատկանելիության և անվանաբանական խնդիրների շուրջ[30]: Նախկինում, էպոնիմների *B6* ցուցակի 9-րդ տողում առկա Սարգոն II-ի հակառակորդի անունն ընթերցվում էր $^{m}$Ešpai (Էշպաի) ձևով[31], սակայն, հետագայում աղբյուրների համադրման ու ճշգրտման արդյունքում վերընթերցվեց որպես $^{m}$Gurdî (Գուրդի)[32]:

Սարգոն II-ն ամենայն հավանականությամբ զոհվել է Ք. ա. 705 թ. սկզբներին[33], իսկ ըստ «Բաբելոնյան ժամանակագրության»՝ Abu (հուլիս-օգոստոս) ամսի 12-ին՝ Ամիդի կառավարիչ Նաշխուր-Բելի էպոնիմատի տարում: Գահ բարձրացավ նրա որդին՝ Սինախերիբը ($^{d}$Sin-aḫḫē$^{meš}$-erība, Ք. ա. 705–681 թթ.)՝ «11. ina $^{iti}$NE U$_4$ 12.kám $^{Id}$30.PAB. MEŠ.SU L[UGAL (?)…]»[34]:

Հաջորդ խնդիրն արդեն կապված է նրա զոհվելու վայրի ու «Կուլումման» տեղանվան հետ: Ընդհանուր առմամբ՝ պատմագրության մեջ ընդունված է ճակատամարտի վայրը տեղայնացնել Թաբալում կամ Մարաստանում, դեռ ավելին՝ կիմմերների դեմ պայքարում[35]:

Այսպես՝ Մ. Շտրեկը Սարգոն II-ի զոհվելու վայրի առումով որպես ուղենիշ ելնում էր *«կուլումմանցի»* արտահայտության տեղորոշմամբ, որն ըստ նրա գտնվել էր Ասորեստանյան Խարխար նահանգի հարավային շրջաններում[36] կամ Էլլիպիի տարածքում, իսկ «Կուլումման»-ը նա համեմատում էր՝ «$^{ál}$Ki-il-man – $^{ál}$Ku-lu-man-ni (Kunala, Kinala)»[37]: Իսկ Լեման-Հաուպտը տեղորոշում էր հարավային Բաբելոնիայում և նույնացնում էր բազում քաղդեական և արամեական ցեղերից մեկի հետ[38]: Ա. Օլմստեդի կարծիքով՝ Սարգոնը II-ը զոհվել է Մարաստանում՝ կիմմերների դեմ տեղի ունեցած ճակատամարտում[39]: Մարաստանում տեղորոշման կողմնակից է նաև Ս. Պարպոլան[40]: Իսկ ըստ Է. Ֆորրերի՝ Սարգոն II-ն արշավանք է կատարել Թիլ-Գարիմմուի դեմ[41]:

Ք. ա. 705 թ. Ասորեստանի հակառակորդների էթնիկական պատկանելիության առումով Ա. Վ. Քոսյանը նշում է, որ դժվար է ենթադրել, որ Թաբալում Սարգոն II-ի հակառակորդը կարող էին լինել լուվիացիները, որոնք այս դեպքերից մի քանի տարի առաջ կորցնելով պետականությունը՝ համախմբվեցին Գուրդի Կուլումմանցու շուրջը, իսկ Թաբալում և Մելիդում առավել հավանական էթնոսը, որը վերացրեց քաղաքական վակուումը, նա համարում է մուշկերին, որոնք հետագայում կարող էին մտնել հայոց էթնոգենեզի մեջ[42]:

---

28 LUGAL.GIN (Šarru-kîn)՝ Սարգոն II:

29 Grayson 1975: Chron. 1, Col. II, l. 6; Glassner 2004: Chron. 17, Col. II, l. 20.

30 Frahm 1999: 75, n. 12; Grayson, Novotny 2012: 15–16.

31 Smith 1875: 53, 67; Ungnad 1938: 435, 452; Tadmor 1958: 85, 97, n. 311; Hawkins 1982: 422; Tadmor *et al.* 1989: 27; ևն:

32 Parpola 1981: 133. Հմմտ. նաև Parpola 1987: 70, n. 76 (no. 76, l. 7).

33 Մանրամասն տե՛ս Frahm 1999: 73–90; նույնի՝ 2005: 4–5.

34 Millard 1994: 48, 60; Frahm 1999: 75; Glassner 2004: Chron. 9, ll. 11.

35 Hawkins 1982: 422; Melville 2010: 99: Չնայած այն հանգամանքին, որ կիմմերների ներկայությունն երկու վայրերում էլ բացառված չէ, միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ Ք. ա. 714–679 թթ. միջակայքում նրանց մասին աղբյուրները լռում են: Տե՛ս Parpola 1981: 136.

36 Streck 1900: 270.

37 Streck 1900: 366, 379.

38 Lehman-Haupt 1920: 342.

39 Olmstead 1908: 159; նույնի՝ 1923: 267; Дьяконов 1956: 236. Հմմտ. նաև von Soden 1954: 102–104.

40 Parpola 1970: 214; նույնի՝ 1983: 235; նույնի՝ 1987: 237; Fuchs, Parpola 2001: 258.

41 Forrer 1921: 81.

42 Косян 2002: 194.

Ռազմադաշտի տեղորոշումը Մարաստանի տարածքում ունի մի շարք թույլ կողմեր: Նախ այն, որ վերոհիշյալ երկու աղբյուրները ոչ միայն չեն հակասում միմյանց, այլև՝ փոխլրացնում են: Այն, որ էպոնիմների ցուցակում ռազմի դաշտում զոհված արքան Սարգոն II-ն է, կասկած չի հարուցում: Դա հաստատվում է նաև Սինախերիբի գահ բարձրանալու հանգամանքի վերաբերյալ 11-րդ տողում նշված տեղեկությամբ:

«Բաբելոնյան ժամանակագրության» մեջ, Սարգոն II-ին վերաբերվող տողերն ավարտվում են դեպի Թաբալ կատարած արշավանքով, որից հետո արձանագրությունը բավականին վնասված է, իսկ հաջորդ տողերն արդեն վերաբերում են Սինախերիբին: Եվ անկախ այն հանգամանքից, թե որտեղից էր և ինչ ծագում ուներ Գուրդին, միևնույն է՝ փաստ է այն, որ Սարգոն II-ը զոհվել է հենց Թաբալում:

Նախ պետք է կարևորել այն փաստը, որ աղբյուրի մեջ Գուրդին հստակորեն կոչված է «LÚ.*kulum-ma-a-a*», այսինքը՝ *կուլումմանցի*: Եվ անկախ այն հանգամանքից, թե կոնկրետ որտեղ է գտնվել Կուլումման անունով բնակավայրը, միևնույն է, աղբյուրի տվյալները թույլ չեն տալիս, որ ճակատամարտի վայրը տեղորոշվի աշխարհագրական այն տարածքով, որտեղ որ գտնվել է այդ քաղաքը: Նույնիսկ եթե հիմք ընդունենք, որ Կուլումման քաղաքը (որից ամենայն հավանականությամբ սերում էր Գուրդին), գտնվել է Մարաստանի տարածքում, միևնույն է՝ չենք կարող անտեսել այն փաստը, որ էպոնիմների ցուցակը և «Բաբելոնյան ժամանակագրությունը» Սարգոն II-ի համար ճակատագրական ճակատամարտ նշում են Թաբալի տարածքում: Ըստ այդմ՝ տվյալների համադրությունից կարելի է միայն եզրակացնել, որ պատմական ինչ-որ ժամանակահատվածում Գուրդին կամ նրա նախնիները Կուլումման քաղաքից տեղահանվել և վերաբնակեցվել են Թաբալում: Այս տեսանկյունից կարելի է որոշակի աղերսներ տեսնել կուլումմանցի Գուրդիի և հայկական առասպելի «Հայկ նախապետի» միջև: Ճիշտ է, ըստ հայ պատմիչների Հայկ նախապետն ըմբոստացել է Բաբելոնիայի տիրակալի դեմ այլ ոչ տեղահանվել:

Բայց եթե հարցին նայենք Գուրդիի՝ հյուսիսարևմտյան Իրանի Կուլումման քաղաքից սերելու հավանականության տեսանկյունից, ապա անհնարին կլինի չնկատել Գուրդիի՝ ենթադրվող մարական Կուլումմանից դեպի Թաբալ և Հայկ նախապետի՝ հարավ-արևելքից (Բաբելոնիայից) դեպի հյուսիս-արևմուտք (Հայկական լեռնաշխարհ) կատարած տեղաշարժերի նմանությունը: Հայոց ազգածագման առասպելի պատմական հիմքի որոշման առումով անչափ կարևոր է նկատել, որ թե՛ Հայկը, և՛ թե Բելը հանդիսանում են էպոնիմներ և առաջինը մարմնավորում է հայ ժողովրդին, իսկ նրա հակառակորդ Բելը՝ բաբելացի-ասորեստանցիներին: Հետևաբար, ասորեստանյան և բաբելոնյան արքայացանկերում միակ արքան, որն արշավանք է կատարել դեպի Հայկական լեռնաշխարհ կամ նրա հարակից որևէ մի տարածաշրջան ու սպանվել ճակատամարտում, դա Սարգոն II-ն է, որը համատեղության ավանդակարգով նաև Բաբելոնիայի արքան էր: Եվ եթե Հայկ-Գուրդի և Բել-Սարգոն II նույնականությունների վերաբերյալ մեր ենթադրությունը[43] ճիշտ է, ապա միանգամայն հիմնավոր կլինի եզրակացնել, որ «Հայկ և Բելի» առասպելական պատումի հիմքում ընկած պատմական իրողությունը հենց Սարգոն II-ի դեմ Գուրդիի տարած հաղթանակն է: Դժվար չէ պատկերացնել, որ թաբալյան-հայկական ցեղերն իրենց ինքնահաստատման առումով արմատական նշակություն ունեցած այդ իրադարձությունը կարևորել են մի արտառոց ձևով և, պահ տալով այն բանավոր հիշողությանը, իրենց ցեղային միգրացիայի ընթացքում փոփոխել են ճակատամարտի իրական աշխարհագրական միջավայրն ու ժամանակը: Ակնհայտ է, որ ժամանակի ընթացքում նրան են հարակցվել զանազան շրջիկ վիպական մոտիվներ, որի արդյունքում պատմական իրողությունը պարուրվել է վիպական-առասպելական բազմաշերտ շղարշով:

**Ռուսլան Ցականյան**

*ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ*
*Մարշալ Բաղրամյան 24/4, 0019, Երևան, Հայաստանի Հանրապետություն*

rooslantsakanyan@gmail.com

## Գրականություն

Աբեղյան Մ. 1944. *Հայոց հին գրականության պատմություն*, հ. 1: Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն:

Ալիշան Ղ. 1869. *Յուշիկք հայրենեաց Հայոց*, հ Ա.: Վենետիկ, Ս. Ղազար, Վ. Միաբանություն:

Խաչատրյան Վ. 1998: *Հայաստանը մ. թ.ա. XV-VII դարերում (Հայոց հին պատմություն)*: Երևան, «Զանգակ»:

Խաչատրյան Վ. 2013. Հայկ նախապետը որպես պատմական անձ, Վ. Բ. Բարխուդարյան (խմբ.), *Հայկազու-*

[43] Цаканян 2018: 134–135:

*նիներ. առասպել և պատմություն*: Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 123–128:

Հարությունյան Բ. 2005. Թորգոմա երկիրը և Հայկյանները, Վ. Բ. Բարխուդարյան (խմբ.), *Աստվածաշնչյան Հայաստան: Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու*: Երևան, Հայ առաքելական եկեղեցի, Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատուն, էջ 128–145:

Հարությունյան Բ. 2001. *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի*: Երևան, ԵՊՀ հրատարակչություն:

Հմայակյան Ս. Գ. 1992. Հայկ Նահապետի մասին առասպելն ու Կիբշա քաղաքը Նիբուրի լեռներում: *Պատմա-բանասիրական հանդես* թիվ 1(134), էջ 128–131:

*Մովսես Խորենացի*. *Պատմութիւն Հայոց*, քնն. բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Նմանահանութիւն, լրացումները Ա. Բ. Սարգսեանի: Երևան, 1991, ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն:

Չամչյանց Մ. 1984. *Հայոց պատմություն*, հ. 3: Երևան, ԵՊՀ հրատարակչություն:

Պետրոսյան Ա. 2003. Հայոց ազգածագման հարցեր ավանդական տվյալների քննության լույսի տակ: *Պատմա-բանասիրական հանդես* թիվ 2(163), էջ 189–224:

Պետրոսյան Ա. 2020. *Հայկական էպոսի հնագույն ակունքները*, 2: Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատարակչություն:

Սարգսյան Գ. Խ. 1992. Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները (Հայկի և Հայկյանների առասպելի պատմականության և զարգացման փուլերի խնդիրը): *Պատմա-բանասիրական հանդես* թիվ 2–3(135–136), էջ 27–50:

Սեբէոս. *Պատմութիւն*, աշխատասիրությամբ՝ Գ. Վ. Աբգարյանի: Երևան, 1979, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:

Ցականյան Ռ. Ա. 2018. *Էթնոքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արևելքում և Հայկական լեռնաշխարհում մ. թ.ա. VII-VI դդ.*: Երևան, Էդիթ Պրինտ:

Ցականյան Ռ. 2017. «Տուն Թորգոմա»-ն սկզբնաղբյուրներում, Ռ. Սաֆրաստյան (խմբ.), *Հին և Միջնադարյան Հայաստանը և իր հարևանները* (Արևելագիտությունը Հայաստանում 3): Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 161–180:

Քոսյան Ա. 1994. Կրկին էթնիկական տեղաշարժերի մասին: *Պատմա-բանասիրական հանդես* թիվ 1–2(139–140), էջ 247–255:

Քոսյան Ա. 1998. *Տուն Թորգոմայ (առասպել և իրականություն)*: Երևան, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ:

Քոսյան Ա. 1999. Արամ նահապետը Կապադովկիայում (Մի վարկածի առթիվ): *Պատմա-բանասիրական հանդես* թիվ 1(150), էջ 237–259:

Арутюнян С. 2006. Основные черты древнеармянской мифологии. *Պատմա-բանասիրական հանդես* թիվ 3(173), էջ 57–66.

Дьяконов И.М. 1956. *История Мидии. От древнейших времен до конца IV в. до н.э.* Москва – Ленинград: Издателство Академии Наук СССР.

Косян А.В. 2002. Лувийцы, фригийцы и мушки (к этнополитической истории Малой Азии в VIII-VII вв. до н.э.), в кн. В.А. Лившиц (ред.). *История и языки Древнего Востока: Памяти И.М. Дьяконова*. 187–196. Санкт-Петербург: Петербургское Востоковедение.

Цаканян Р.А. 2018. Армения от Хайка до Парнаваза: миф и реальность. *Метаморфозы истории* 12: 127–147.

Elayi J. 2018. *Sennacherib, King of Assyria* (Archaeology and Biblical Studies 24). Atlanta: SBL Press.

Elayi J. 2017. *Sargon II, King of Assyria* (Archaeology and Biblical Studies 22). Atlanta: SBL Press.

Fales F.M. 2014. The Road to Judah: 701 B.C.E. in the Context of Sennacherib's Political-Military Strategy, in I. Kalimi, S. Richardson (eds). *Sennacherib at the Gates of Jerusalem. Story, History and Historiography* (Culture and History of the Ancient Near East 71). 223–248. Leiden – Boston: Brill.

Frahm E. 1998. 704 v. Chr. *N.A.B.U.* 4: 106 (no. 116).

Frahm E. 1999. Nabû-zuqup-kēnu, das Gilgameš-Epos und der Tod Sargons II. *Journal of Cuneiform Studies* 51: 73–90.

Frahm E. 2003. New Sources for Sennacherib's "First Campaign", in: P.A. Miglus, J.M. Córdoba (Hrsg.). *Assur und sein Umland Im Andenken an die ersten Ausgräber von Assur* (Isimu 6). 129–164. Madrid: Servicio de Publicaciones Universidad Autónoma de Madrid.

Frahm E. 2005. Nabû-zuqup-kēnu, Gilgamesh XII, and the Rites of Du'uzu. *N.A.B.U.* 1: 4–5 (no. 5).

Forrer E. 1921. *Die Provinzeinteilung des assyrischen Reiches*. Leipzig: J.C. Hinrichs'sche Buchhandlung.

Fuchs A., Parpola S. 2001. *The Correspondence of Sargon II, Part III: Letters from Media and Babylonia* (State Archives of Assyria 15). Helsinki: Penn State University Press for Neo-Assyrian Text Corpus Project.

Glassner J.-J. 2004. *Mesopotamian Chronicles* ( Writings from the Ancient World 19). Atlanta: Society of Biblical Literature.

Grayson A.K. 1975. *Assyrian and Babylonian Chronicles* (Texts from Cuneiform Sources 5). Locust Valley, New York: J.J. Augustin.

Grayson, A.K., Novotny, J. 2012. *The Royal Inscriptions of Sennacherib, King of Assyria (704–681 BC)*, Part 1 (The Royal Inscriptions of the Neo-Assyrian Period 3/1). Winona Lake, Ind.: Eisenbrauns.

Hawkins J.D. 1982. The Neo-Hittite States in Syria and Anatolia, in: J. Boardman, I.E.S. Edwards, N.G.L. Hammond, E. Sollberger (eds). *Cambridge Ancient History*, volume III/1: *The Prehistory of the Balkans, the Middle East and the Aegean World, Tenth to Eight Centuries BC*. 372–441. Cambridge – New York – Melbourne – Madird – Cape Town: Cambridge University Press.

Kuhrt A. 1995. *The Ancient Near East c. 3000–300 BC*, volume 2 (Routledge History of the Ancient World). London – New York: Routledge.

Kossian A. 2002. Sargon II and Kurtis of Atuna: an Interpretation, in: A.S. Kassian, A.V. Sidel'tsev (eds). *Studia Linguarum 3/1 (Memoriae A.A. Korolev dicata)*. 191–203. Moscow: Languages of Slavonic Culture.

Kosyan A. 2022. First Haykides and the "House of Torgom" (Some Comments on the Problem). *Fundamental Armenology* 2(16): 57–69.

Lanfranchi G.B., Parpola S. 1990. *The Correspondence of Sargon II*, Part II: *Letters from the Northern and North-*

*eastern Provinces* (State Archives of Assyria 5). Helsinki: The Neo-Assyrian Text Corpus Project.

Lehman-Haupt C.F. 1920. Gesichertes und Strittiges (7. Zum Tode Sargons von Assyrien). *Klio* 16: 340–342.

Melville S.C. 2010. Kings of Tabal: Politics, Competition, and Conflict in a Contested Periphery, in: S. Richardson (ed.). *Rebellions and Peripheries in the Mesopotamian World* (American Oriental Series 91). 87–109. Winona Lake, Ind.: Eisenbrauns.

Millard A. 1994. *The Eponyms of the Assyrian Empire 910–612 B.C.* (State Archives of Assyria Studies 2). Helsinki: Penn State University Press for Neo-Assyrian Text Corpus Project.

Olmstead A.T.E. 1908. *Western Asia in the Days of Sargon of Assyria*. Lancaster, PA: Press of the New Era Printing Company.

Olmstead A.T.E. 1923. *History of Assyria*. Chicago: University of Chicago Press.

Parpola S. 1970. *Neo-Assyrian Toponyms* (Alter Orient und Altes Testament 6). Kevelaer: Verlag Butzon & Bercker – Neukirchen-Vluyn: Neukirchener Verlag.

Parpola S. 1981. Assyrian Royal Inscriptions and Neo-Assyrian Letters, in: F.M. Fales (ed.). *Assyrian Royal Inscriptions: New Horizons in Literary, Ideological and Historical Analysis* (Orientis Antiqui Collectio 18). 117–142. Roma: Istituto per l'Oriente, Centro per la antichità e la storia dell'arte del Vicino Oriente.

Parpola S. 1983. *Letters from Assyrian Scholars to the Kings Esarhaddon and Assurbanipal*, Part II: *Commentary and Appendixes* (Alter Orient und Altes Testament 5/2). Kevelaer: Verlag Butzon & Bercker – Neukirchen-Vluyn: Neukirchener Verlag.

Parpola S. 1987. *The Correspondence of Sargon II*, Part I: *Letters from Assyria and the West* (State Archives of Assyria 1). Helsinki: Penn State University Press for Neo-Assyrian Text Corpus Project..

Pfeiffer R.H. 1935. *State Letters of Assyria. A Transliteration and Translation of 355 official Assyrian Letters Dating from the Sargonid Period (722–625 B.C.)* (American Oriental Series 6). New Haven: American Oriental Society.

Smith G. 1871. *History of Sennacherib*. London: Williams & Norgate.

Smith G. 1875. *The Assyrian Eponym Canon*. London: General Books LLC.

Soden von W. 1954. *Herrscher im Alten Orient*. Berlin: Springer-Verlag.

Streck M. 1900. Das Gebiet der heutigen Landsehaften Armenien, Kurdistan und Westpersiennaeh den babylonisch-assyrischen Keilinsehriften. *Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archäologie* 15: 257–382.

Streck M.P. 1998. Nasḫir(a)-Bēl. *Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie* 9·1./2.: 184–185.

Tadmor H. 1958. The Campaigns of Sargon II of Assur: A Chronological-Historical Study. *Journal of Cuneiform Studies* 12/1: 22–40; 12/3: 77–100.

Tadmor H., Landsberger B., Parpola S. 1989. The Sin of Sargon and Sennacherib's Last Will. *State Archives of Assyria Bulletin* 3: 3–51.

Ungnad A. 1938. Eponymen. *Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie* 2: 412–457.

Yamada Sh. 2006. The City of Togarma in Neo-Assyrian Sources. *Archiv für Orientforschung* 33/2: 223–236.

# MIGRATION OF THE HAYKIDES (ATTEMPT OF RECONSTRUCTION)

*Ruslan Tsakanyan*

**Keywords**: Hayk, Bel, "The House of Torgom", Babylon, Assyria, Armenian Highland, deportation, campaign.

**Abstract**: The Armenian nation-builder mythical epic about the Armenisation of the Armenian Highlands has preserved several remarkable references. According to this epic, the Highlands' population occurred in two – the pre-Haykid and Haykid phases. The pre-Haykid phase draws exclusively from biblical stories and indicates that the appropriation of the Highland began from the southeast, specifically, from the land of Korduk. The second phase, known as Haykid, incorporates certain biblical elements related to the ethno-political unit called "House of Torgom". At the same time, the adjective "Torgomogen" given by early medieval sources to the Armenian nation has solid historical tenets. In fact, the biblical layer contains very important information about the movement of the Haykids and the appropriation of the Armenian highlands from the west to the southeast and east.

# ԴԱՀԵՐԻ ՄԻԳՐԱՑԻԱՆ Ք. Ա. 5–3-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

*Արթուր Մելիքյան*

**Բանալի բառեր**. քոչվորներ, ապարններ, քսանթիներ, պիսսուրներ, Արշակ, Խորազմ, Սողդ, Բակտրիա, Օքսոս, Տանաիս:

**Ամփոփում**. Արշակունիների պետությունը ստեղծած էթնիկական խմբի՝ դահերի նախընթաց պատմության, մասնավորապես՝ նրանց միգրացիայի մասին տեղեկությունները սակավ են: Վաղ դահական մշակույթը հնագիտորեն հստակ զանազանելի չէ տարածաշրջանի մյուս քոչվորների մշակույթից, իսկ նրանց բնակության շրջանների վերաբերյալ անտիկ հեղինակների տվյալները միջնորդավորված, խիստ կցկտուր և հակասական են՝ Արալի ծովից հյուսիս, Սողդ-Սկյութիա, Բակտրիա: Ուսումնասիրողները սովորաբար նախապատվությունը տվել են այդ վարկածներից մեկին կամ մյուսին, որի հետևանքով մինչ օրս դահերի՝ Ք.ա. 5–3-րդ դդ. միգրացիայի ուղիների ու արդյունքների մասին կարծիքները տարբերվում են իրարից: Սակայն, գրավոր և հնագիտական տվյալների համադիր քննությունը ցույց է տալիս, որ դահերի միգրացիայի վերաբերյալ անտիկ պատմագրության հիշատակած վարկածներից յուրաքանչյուրը ճիշտ է այնքանով, որքանով որ արտացոլում է այդ գործընթացի մի որոշակի փուլի վարչաքաղաքական պատկերը:

## Դահերի ցեղամիության էթնիկ պատկանելությունը

«Դահ» էթնիկական անունն առաջին անգամ հիշատակվում է Ավեստայի Ֆարվարդին Յաշտում (13. 144): Այդպես են կոչված **Dāha-* (կամ **Dåŋha-*) երկրի բնակիչները, որոնք դեռևս Զրադաշտի ժամանակներում դարձել են նրա հետևորդները՝ արժանանալով սրբազան տեքստերի ընթերցանության ժամանակ մեծարվելու պատվին[1]: Պարսկական վաչկատուն ցեղերի շարքում «դահ» *(Δάοι)* անունով ցեղ է հիշատակում Հերոդոտոսը (Herodot. I, 125): Հետագայում «դահ» անունով ժողովրդի մասին, բացի մատենագիրներից (Curt. IV, 12.5, VII, 4.6, VII, 7.32: Arrian. III, 11.3, III, 28.8; Strabo XI. 9. 2–3; Ivst. XII, 6, 18. XLI, 1,10), վկայում են նաև վիմագրական աղբյուրները[2]:

Դարերի ընթացքում իրանական և հունահռոմեական աղբյուրների կողմից «դահ» անվան (Ավեստ. **Dāha-*, հին պարսկ. *Dahā-*, հին հուն. *Δάοι* և *Δάαι* ու լատ. *Dahae*) շարունակական հիշատակությունը շատերի մոտ այն թյուր պատկերացումն է ստեղծել, թե խոսքը միևնույն էթնիկական հանրության մասին է[3]: Ելնելով այն փաստից, որ Ավեստայում առաջին զրադաշտական ժողովուրդները թվարկված են արևմուտքից արևելք հաջորդականությամբ՝ (*Airiia-, Tūiriia-, Sairima-, Sāinu-*, **Dāha-*), շատ ուսումնասիրողներ այն տեղորոշել են իրանական լեզվի տարածման ծայր արևելյան սահմաններում՝ Տանաիսի (Սիրդարյա) ավազանում: Իրականում, **Dāha-*, *Dahā-*, *Δάοι*/ *Δάαι* ու *Dahae* անունների բառահիմքային թվացյալ նմանությունից բնավ չի հետևում, որ այդ անունները վերաբերում են միևնույն էթնիկական խմբին[4]: Հերոդոտոսը *Δάοι* ցեղին հիշատակում է պարսկական էթնոսի ծիրում, ինչն ինքնին բացառում է նրա նույնականացումը համեմատաբար ուշ շրջանի աղբյուրների հիշատակած սկյութ դահերի հետ (Strabo XI, 9.3; Ivst. XLI, 1.1)[5]: Առաջին հայացքից տարբեր են նաև Ավեստայի **Dāha*-ն և անտիկ աղբյուրների հիշատակած սկյութական *Δάοι/Δάαι* ու *Dahae*-ն, քանի որ Ավեստայում սկյութների էթնիկական խումբն արիացիների ցանկից դուրս է

---

1 *Ավեստա* 2022: 411:

2 Лившиц 2002: 55; Lurje 2010: 185–186; Olbrycht 2021: 24.

3 Vogelsang 1993: 582; Asheri *et al.* 2007: 164.

4 de Blois F. 1993: 581.

5 Որոշ ուսումնասիրողներ “Dahae, Dahā” եզրը նույնիսկ համարել են “Sakā, Śakāh” եզրի ֆոնետիկական տարբերակը (տե՛ս Olbrycht 2021: 22, n. 34. Հմմտ. Konow 1912: 96–97; Bailey 1958: 109–110):

թողնված: Բացի այդ, Ավեստայում և Ռիգվեդայում սկյութ դահերին տրված են մի շարք որակումներ[6], որոնք անհարիր են Ավեստայի դահերի պատվավոր կարգավիճակին: Ի լրումն վերոնշյալի, Արշակունիների մինչև Ք.հ. 1-ին դ. կեսերը թողարկած դրամների պատկերագրությունը ևս ցույց է տալիս, որ նրանք իրենց պատմության վաղ շրջանում զրադաշտականության հետևողական դավանողներ չեն եղել: Այդ ամենը տրամադրում է կարծելու, որ սկյութ դահերը տարբեր են եղել Ավեստայի դահերից: Այդուհանդերձ, ելնելով Ավեստայում *Dāha- ժողովրդի եզակի հիշատակության փաստից, կարելի է համաձայնել Ի. Պյանկովի հետ, համաձայն որի *Sāinu-* և **Dāha-* էթնիկական անուններն Ավեստայի արիական երրորդության (*Airiia-, Tūiriia-, Sairima-*) են հավելվել Ք.հ. 1-ին դ. երկրորդ կեսին կատարված պարթևական խմբագրության ժամանակ[7]: Հայդմ, իրանական արժեհամակարգին վերադարձած Արշակունիներն այդ կերպ փորձել են բարձրացնել հարազատ էթնիկ խմբի հարգը: Բայց, ինչպես նշվեց, այդ ներմուծումը եզակի բնույթ է կրել և չի արտացոլվել Ավեստայի մյուս բաժիններում:

## Սկյութ դահերը գրավոր հիշատակություններում

Դահերի սկյութական միությունը *Dahā* անվամբ առաջին անգամ հիշատակվում է Աքեմենյան արքա Քսերքսես I-ի (Ք.ա. 486–465 թթ.) Պերսեպոլիսի արձանագրության (XPh) մեջ: Հպատակ ժողովուրդների ու երկրների ցուցակում այն թվարկված է «հաումա խմող սակերի» *(Sakā Haumavargā)* և «սրազագաթ գլխարկավոր սակերի» *(Sakā Tigraxaudā)* հետ (XPh § 4)[8]: Հայդմ, այս ժամանակ դահերն եղել են սկյութական մյուս և ավելի հայտնի միություններից ինքնուրույն և ինքնատիպ հանրություն[9]: Տափաստանային խիստ կենսապայմաններին և արտաքին միջավայրի կոշտ ու համակողմանի ճնշմանը վարժված այս միության վաղ պատմությունը մինչ օրս մշուշապատ է: Ստրաբոնն իր «Աշխարհագրության» XI գրքում, ի մի բերելով իր ժամանակներում դահերի միության կառուցվածքի ու ծագման մասին գոյություն ունեցող վարկածները, գրում է (Strabo XI, 8. 2). *«Նրանց մի մասը կոչվում են ապարններ, որոշները քսանթիններ, իսկ մյուսները՝ պիսսուրներ: Այժմ նրանցից ապարնները բնակվում են Հիրկանիային* (հայ. Վրկան – Ա.Մ.) *և նրան սահմանակից ծովին ամենից մոտ, իսկ մյուսները տարածվում են մինչև Արեյային հանդիպակած երկիրը»*: Իսկ մի փոքր հետո հույն մատենագիրն ավելացնում է (Strabo XI, 9.3). *«Ասում են, թե ապարն դահերը եղել են տարագիրներ Մեոտիս լճից* (Արալի ծով – Ա.Մ.) *վերև ապրող դահերից, որոնք կոչվում են քսանդիներ* (Ξανδίους) *կամ պարիներ* (Παρίους)*: Սակայն այնքան էլ ընդունված չէ կարծիքն առ այն, որ դահերը Մեոտիսից վերև ապրող սկյութների մաս են կազմում: Ամեն դեպքում, ոմանք ասում են, թե Արշակը սերում է սկյութներից, այլք ասում են, որ նա եղել է բակտրիացի»*:

Վերոնշյալ հատվածում հիշատակված վարկածների տարբերությունից կարելի է եզրակացնել, որ անգամ Ստրաբոնի աղբյուրներ Պոսիդոնիոսն ու Ապոլլոդորոսն աղոտ պատկերացումներ են ունեցել դահերի ծագման և մերձկասպյան շրջաններում նրանց հայտնվելու մասին: Բայց «Աշխարհագրության» մեջ դահական ցեղերին անհամաչափ ներկայացնելով՝[10] Ստրաբոնն ակամա նպաստել է այդ շփոթի խորացմանը, ինչն էլ հանգեցրել է նախ ապարնների ու դահերի, իսկ հետագայում՝ դահերի ու պարթևների նույնացմանը (Herodian. VI, 2; Ivst., XLI, 1.1–9; Ammian. XXIII. 2; Zosim. I. 8.1; Phot. 1959, 58): Եվ եթե 2-րդ դ. Կ. Պտղոմեոսը դեռ տարբերում է «դահեր» և «պարններ» (ապարններ) հասկացությունները (Cl. Ptol. VI, 10.2), ապա դա պետք է բացառություն համարել և բացատրել նրա ալեքսանդրյան կրթությամբ: Մինչդեռ, զարմանալի չէ, որ առաջին Արշակունիների մասին պատմող Հուստինուսը երկիցս հիշատակում է «դահ» անունը (Ivst. XII, 6,18; XLI, 1,10), բայց նույնիսկ ապարնների մասին չգիտի[11]:

Ցավոք, վաղարշակունյաց հասարակության ուսումնասիրության գործում պատմագիտությունը զգալի չափով զնացել է անտիկ մատենագիրնե-

6 Տե՛ս de Blois 1993: 581.

7 Пянков 2013: 576–577.

8 Schmitt 2009: 166.

9 Olbrycht 2021: 22.

10 Ստրաբոնն «Աշխարհագրության» մեջ ապարնների ցեղին հիշատակում է վեց անգամ (Strabo XI, 7.1, XI, 8. 2 (երկիցս), XI, 8. 3, XI, 9.2, XI, 9. 3), դահ անունը տալիս է հինգ անգամ (XI. 9.2, XI, 9.3), մինչդեռ, քսանթիններին ու պիսսուրներին վերոնշյալ վկայությունից հետո այլևս չի մտաբերում: Հնարավոր է, որ դրա պատճառը եղել է քսանթինների ու պիսսուրների մասին հավելյալ տեղեկությունների չիմացությունը, կամ էլ՝ իր նախորդ պատմական երկերում արդեն ասածը չկրկնելու մտայնությունը (Strabo XI, 9.3):

11 Հմմտ. Wolski 1969: 206, n. 36.

րի գծած բավիղով և, նույնացնելով Արշակ I-ի (Ք.ա. 247–211 թթ.) հարազատ ապարնների ցեղին դահերի միության հետ[12], մյուս երկու ցեղերին՝ պիսսուրներին ու քսանթիներին՝ որպես երկրորդական դերակատարների, պարզապես մատնել է մոռացության:

## Դահերի միգրացիան Ք. ա. 5–4-րդ դդ.

19-րդ դ. մինչև մեր օրերը, ուսումնասիրողների առջև ծառացած կարևորագույն հարցերից մեկը մնում է այն, թե երբ է ձևավորվել դահերի ցեղամիությունը, և ինչ ընթացք է ունեցել նրա միգրացիան մինչև Պարթևստանում ու Վրկանում նրանց հաստատվելը: Ցավոք, այդ էթնիկ խմբի վաղ մշակույթը Կենտրոնական Ասիայի տափաստանների մյուս քոչվորներից հնագիտորեն հստակ զանազանելի չէ: Այդ պատճառով էլ դահերի միգրացիայի ուղեգիծն ու ժամանակագրությունը մինչ օրս գիտական բանավեճի առարկա են մնում: Ուսումնասիրողներից ոմանք Ք. ա. 5–4-րդ դդ. դահերի կենսատարածքն ուրվագծում են միայն ընդհանուր ձևով[13], մյուսներն այն պատկերացնում են Տանաիսի դելտայի շրջանում[14]: Մ. Օլբրայխտը հավանական է համարում, որ դահերի միությունը կազմավորվել է Հվ. Ուրալի «սարմատական» (Պրոխորովկյան) էթնոմշակութային միջավայրում[15], որտեղից նրանք Ք. ա. 4–3-րդ դդ. շարժվել են նախ դեպի Պովոլժիե, իսկ այստեղից էլ Ուստյուրթի վրայով թափանցել են Սողդ[16]: Նույնպիսի պատկերացում ունի նաև Ի. Պյանկովը, որի կարծիքով «պրոխորովկցի» միգրանտները մինչև Պովոլժիե կրել են աորսներ (Ἄορσοι) անունը, և հետո միայն կոչվել են դահեր[17]: Սակայն, մեզ ավելի համոզիչ է թվում Ա. Բալախվանցևի առաջադրած վարկածը, ըստ որի՝ դահերի բնօրրանը եղել է Հվ. Նախաուրալը, իսկ նրանց գաղթը Ք. ա. 6–5-րդ դդ. ընդգրկել է Հվ. Նախաուրալի ու Արալի ծովի միջև ընկած շրջանը[18]: Հեղինակի հիմնական փաստարկը Հվ. Ուստյուրթի, Սարիղամիշ լճի շրջանի, Սողդի ու Հվ. Թուրքմենստանի Ք. ա. 5–3-րդ դդ. դահական կուրգանների և Հվ. Ուրալում՝ Նովըյ Կումակ ավանի մոտ հայտնաբերված ու Ք. ա. 6-րդ դ. վերջ –5-րդ դ. սկզբներով թվագրվող կուրգանների թաղման ծեսերի միջև եղած էական ընդհանրություններն են:

Դահերի հասարակական-քաղաքական զարգացման մակարդակը մինչ օրս միայն ընդհանուր գծերով է հայտնի: Լ. Ն. Գումիլյովի կարծիքով Ք. ա. 1-ին հազարամյակում Կենտրոնական Ասիայի քոչվորների կառավարման հաստատությունները, նրանց կյանքի բնակլիմայական պայմանների, պարզ կացութաձևի ու բնակչության նոսրության պատճառով դեռևս գտնվել են սաղմնային վիճակում[19]: Սակայն, քոչվոր սկյութների մեջ «արքայական սկյութների» (Herodot. 4.19–20), սարմաթական ցեղերի շրջանում «արքայական սարմաթների» (Cl. Ptol. V, 8.16) և յազիգների մեջ «արքայական յազիգների» (Strabo VII, 3.17; Appian. XII, 67.2) մասին գրավոր տվյալները խոսում են խնդրո առարկա դարաշրջանի քոչվորների մոտ կառավարման կայացած համակարգի մասին: Թեև գրավոր աղբյուրները դահերի միության մեջ մտնող ցեղերից որևէ մեկին չեն կոչում «արքայական», այնուամենայնիվ, Հվ. Ուրալի դահական կուրգանների Ք. ա. 6–5-րդ դդ. թվագրվող նյութերը, փաստելով նրանց ցեղային ավագանու բարձր սոցիալական կարգավիճակի մասին, թույլ են տալիս եզրակացնել, որ համեմատաբար կայացած է եղել նաև նրանց միութենական իշխանությունը[20]: Դա տափաստանային կենսապայմաններին դիմակայելու, դահական ցեղերի համատեղ քոչն իրականացնելու և, հատկապես, քոչվորական այլ խմբերից միգրացիայի տարածքը պաշտպանելու հրամայականն էր:

Ք.ա. 5-րդ դ. առաջին քառորդին դահերը գաղթեցին Աքեմենյան տերության սահմաններից ներս՝ հաստատվելով հարավարևելյան Ուստյուրթում՝ Խորազմի և թիգրախաուդա սակերի միջև[21]:

---

12 Տե՛ս Bivar 1983: 21–99; Vogelsang, 1993: 581–582; Wiesehöfer 2001: 139; Gregoratti 2017: 125–153; Strootman 2018: 129–150; Overtoom 2020: 30, 77–79.

13 Дандамаев 1985: 175; Francfort 1988: 173; Vogelsang 1992: 118–119.

14 Bivar 1983: 27; Ставиский 1998: 260, 270.

15 Olbrycht 1998: 132–133.

16 Olbrycht 2019: 162; նույնի՝ 2021: 22–23.

17 Пянков 2013: 578–579.

18 Harmatta 1970: 13; Балахванцев 2018: 32, 37–38, 118–119. Հմմտ. Пянков 2013: 577–579.

19 Гумилев 1972, 48. Տե՛ս նաև Խորիկյան 2021: 380–387:

20 Harmatta 1970: 13–14.

21 Սովորաբար, Աքեմենյան տերության հյուսիսային սահման են համարում Ոււզբոյ գետը (Խորիկյան 2021: 283): Սակայն, Դարեհ I-ի Նախշ-ի Ռուստամի (DNa, 23, 25–26) արձանագրության մեջ հպատակ երկրների ու ժողովուրդների ցանկում թիգրախաուդա սակերի և Խորազմի հիշատակությունները (Schmitt 2009: 102) թույլ են տալիս եզրակացնել,

Քոչվորական միգրացիան Եվրասիայի տափաստաններում տարածված երևույթ էր: Սովորաբար, դա կատարվում էր լանդշաֆտների փոփոխության կամ ժողովրդագրական պայթյունների հետևանքով[22]: Սակայն, ավելի հաճախ քոչվորները ստիպված էին լինում լքել ավանդական արոտավայրերը առավել զորեղ քոչվորների ներխուժման պատճառով [Ammian. XXXI, 3]: Եվ քանի որ Ք. ա. 1-ին հազարամյակում Եվրասիայի տափաստանային գոտու կլիմայի խոնավացումը հանգեցրել է ոչ թե արոտավայրերի նվազմանը, այլ ընդարձակմանը[23], կարելի է ենթադրել, որ դահերի միգրացիայի պատճառը եղել է կա՛մ ժողովրդագրական խիստ աճը, կա՛մ էլ, որ նրանք պարզապես դուրս են մղվել իրենց միգրացիայի ավանդական տարածքից: Մենք առավել հակված ենք երկրորդ տարբերակին, քանզի հարկադրական միգրացիայի դեպքում է, որ, սովորաբար, քոչվորները հաստատվում էին տափաստանամերձ որևէ պետության սահմանային գոտում: Դա կատարվում էր ցեղային ավագանու խնդրանքով և ընդունող պետության համաձայնությամբ [Ammian. XXXI, 4.1–5]: Հարավարևելյան Ուստյուրթում Կասկաժոլ դամբարանադաշտի 3-րդ և 4-րդ դահական կուրգանները թվագրվում են Ք. ա. 4-րդ դ. սկզբներով[24]: Բայց, Քսերքսես I-ի թողած XPh արձանագրությունում դահերի՝ իբրև պարսկահպատակ ժողովրդի հիշատակությունից հետևում է, որ վերոնշյալ միգրացիան տեղի է ունեցել ավելի վաղ՝ Քսերքսես I-ի գահակալության սկզբներին[25]: Ընդ որում, դատելով դահական կուրգանների աշխարհագրությունից՝ նրանց քոչի նոր տարածքն ընդգրկել է Սարիղամիշ լճից մինչև Օքսոս և Կարակում անապատի հյուսիսային մասերից մինչև Օքսոսի դելտա ընկած շրջանը[26]:

XPh-ում դահերը հիշատակված են որպես համատեղ բնակվող էթնիկական խումբ: Դրանից հետևում է, որ Աքեմենյան տերության հյուսիսային սահմանային գոտի կատարած միգրացիայից հետո էլ պահպանվել են դահական ցեղերի կողք կողքի բնակությունն ու միակենտրոն կառավարման համակարգը: Աքեմենյանների տիրապետության ընդունումն, անշուշտ, էական փոփոխություններ է մտցրել դահերի կյանքում: Նախևառաջ, այն դառնում էր ապահով: Բայց, միաժամանակ, Կասպից և Արալի ծովերի միջև ընկած տարածքներով անցնող ճանապարհների հսկողությունը ստանձնելով՝ դահերը նշանակալից առավելություն էին ստանում Աքեմենյան տերության ու Կենտրոնական Ասիայի քոչվորների միջև ընթացող առևտրում[27]: Արտաքսերքսես I-ի (Ք.ա. 465–424 թթ.) օրոք դահերը մասնակցեցին Ք. ա. 465–454 թթ. Եգիպտոսում ծագած ապստամբությունը ճնշելու գործին[28], որից հետո նրանց ռազմական դերը դադարեց տեղային բնույթ կրել:

Դահերն ավելի կարևորվեցին Աքեմենյան տիրապետության դեմ Խորազմում սկսված անկախության պայքարի շրջանում: Թերևս հենց այդ քաղաքական իրադրության համատեքստում պետք է գնահատել դահերի առաջնորդական տոհմի հետ Արտաքսերքսես II-ի (Ք. ա. 405–359 թթ.) խնամիության փաստը[29]: Դահական ավագանուն պարսից արքունիքին մերձեցնելով՝ Արտաքսերքսես II-ն, ըստ երևույթին, ցանկացել է նախ այդ ռազմունակ քոչվորական հանրությանը կտրել ապստամբ Խորազմից[30], նրանց միջոցով հուսալի պատվար ստեղծել Խորազմի և մերձկասպյան սատրապությունների՝ Վրկանի ու Պարթևստանի միջև և, իհարկե, վերահսկողություն պահպանել Կասպից և Արալի ծովերի միջև ձգվող առևտրական ճանապարհների նկատմամբ: Այս տեսանկյունից դյուրին է բացատրել դահերի՝ Ք. ա. 4-րդ դ. սկզբներին կամ մի փոքր ավելի ուշ հարավարևելյան Ուստյուրթից դեպի Սարիղամիշ լճի ու Օքսոսի (Ամուդարյա) միջև ընկած շրջանը կատարած միգրացիան: Օքսոսի մերձսարիղամիշյան դելտայի

որ այն տարածվել է Ուզբոյից նկատելիորեն հյուսիս՝ ներառելով թիզրախաուդա սակերի, Ուստյուրթի ու Խորազմի տարածքները:

22 Гумилев 1972: 44.

23 Гумилев 1972: 48.

24 Ягодин 1982: 55; Ягодин и др. 1978: 156–158.

25 Հմմտ. Briant 2002: 553; Балахванцев 2018: 338.

26 Հմմտ. Briant 2002: 366.

27 Vogelsang 1993: 582; Briant 2002: 173, 553; Балахванцев 2018: 28; Olbrycht 2021: 288:

28 Балахванцев 2018: 338.

29 Melikyan 2021: 37–40: Հմմտ. Debevoise 1938: 10; Wiesehöfer 2001: 133; Dąbrowa 2010: 130–132; Балахванцев 2018: 58, пр. 175.

30 Խորազմի անկախացման ժամանակագրության մասին տե՛ս Дандамаев 1985: 248; նույնի՝ 2004: 620; Вайнберг 1991: 5–109; նույնի՝ 2004: 237; Ставиский 1998: 270; Балахванцев 2018: 350:




Աքեմենյան տերության սահման Քա.VI-III դդ. սկզբներին

Սելևկյան տերության սահման Քա. V դ. վերջ, IV դ. սկզբներին

Սելևկյան տերության առանձին երկրամասեր

Քաղաքներ

Ամրոցներ

Դահերի դամբարանադաշտեր Քա.VI-III դդ.

Դահերի քոչը Քա. VI-V դդ. սկզբներին

Դահերի միգրացիան Քա. V դ. առաջին քառորդին

Ապարնների միգրացիան Քա. III դ.

Քսանթիների և պիսսուրների միգրացիան Քա. IV-III դդ.

Քարտեզի հեղինակ՝ Ա. Տ. Մելիքյան
Համակարգչային վերամշակումը՝ հեղինակի

շրջանում գտնվող դամբարանադաշտերից Տուզգըրի 17-րդ և 19-րդ[31], Սակար-Չագայ I-ի 42-րդ[32], Տումեկ-Կիչիժիգի 41-րդ և 50-րդ[33] և Գյավուր IV-ի 2-րդ կուրգանները[34], որոնք թվագրվում են Ք. ա. 4–3-րդ դդ., կապվում են դահերի հետ[35]:

IV դ. առաջին կեսին դահերի մի մասը մերձարալյան շրջանից միգրացվեց Սողդ՝ հաստատվելով Օքսոսի վտակ Զերավշանի (*Polytimetos*) հովտում[36]: Նկատի առնելով Աքեմենյանների ու Խորազմի միջև թշնական հարաբերությունները՝ չենք կարող բացառել, որ դահերը դուրս են մղվել խորազմացիների կողմից և Արտաքսերքսես II-ից նոր տարածք ստացել Սողդում: Հնարավոր է, որ դահերի մի մասը վերաբնակեցվել է Խորազմի և Սողդի միջև քոչվորական պատնեշ ստեղծելու մտայնությամբ:

Դահական մշակույթի ներսում ցեղային ենթամշակույթները զանազանելի չեն: Այդ պատճառով Ք. ա. 4–3-րդ դդ. վերաբերող հնագիտական նյութերի միջոցով հնարավոր չէ պարզել, թե դահական ցեղերից որոնք են մնացել Օքսոսի ձախափնյակում և որոնք են անցել Սողդ: Բայց Ստրաբոնը, նկարագրելով Ք. ա. 4-րդ դ. վերջին քառորդին Կենտրոնական Ասիայում ստեղծված իրավիճակը, նշում է, որ ապարններն են առավել մոտ գտնվել Կասպից ծովին և Վրկանից, Նեսայայից, Պարթևստանից ու Արեյայից կտրված են եղել անջրդի (Կարակում – Ա. Մ.) անապատով (Strabo XI, 7.1, XI, 8.3): Օքսոսի ձախափնյա մասում ապարնների մնալու մասին է խոսում նաև այն փաստը, որ նրանք դեպի վերը նշված երկրամասեր իրենց հարձակումների ժամանակ ստիպված չեն եղել անցնել Օքսոս գետը[37]: Վերոնշյալից ինքնին հետևում է, որ Ք. ա. 4-րդ դ. առաջին կեսին Սողդ միգրացվողները եղել են պիսսուրներն ու քսանթիները:

Պիսսուրների ու քսանթիների Սողդ տեղափոխվելը խաթարեց դահերի միության համատեղ միգրացիայի ավանդույթը: Նրանց երկու հատվածներն հայտնվեցին իրարից խիստ տարբեր վարչաքաղաքական պայմաններում, որի հետևանքով խախտվեց նաև այդ ցեղամիության միակենտրոն կառավարման կարգը: Երկու հատվածների միջև ընկած Կարակում անապատը նվազագույնի էր հասցնում միջցեղային կապերը՝ ստիպելով նրանց յուրովի հարմարվելու կյանքի տեղական պայմաններին:

## Ապարնների միգրացիան Ք. ա. 4–3-րդ դդ.

Խորազմի անկախանալուց հետո Աքեմենյանների հյուսիսային սահմանների պաշտպանության գործում Օքսոսի ձախ ափին մնացած ապարնների ռազմաքաղաքական դերն ավելի կարևորվեց: Թեպետ դահերի նկատմամբ վերջին Աքեմենյանների իսկողությունը նվազագույն էր, այնուամենայնիվ, նրանք շարունակեցին հավատարիմ մնալ պարսկական արքունիքին: Դա վերաբերում է հատկապես առաջնորդական տոհմին, որին Ք. ա. 4-րդ դ. կեսերից իրավամբ կարող ենք Արշակունի կոչել՝ նրա ցեղապետերի Արշակ անձնանվան կրկնությունների պատճառով[38]: Մեր համոզմամբ, Կուրցիուս Ռուֆուսի կողմից Գրանիկոսի ճակատամարտում (Ք. ա. 334 թ.) իբրև Մեմնոնի պարսկական բանակի հեծելազորի պետ հիշատակված Արշակը (Curt. 1946: II) ոչ այլ ոք է, քան ապարնների ցեղառաջնորդը: Ըստ երևույթին, Դարեհ III-ի պարտություններից հետո իրանական բազմաթիվ ազնվականների պես նա ևս հարել է հաղթողին՝ պահպանելով իր սոցիալական դրությունը: Արեյայի սատրապ Սատիբարզանեսի խռովությունից հետո՝ Ք. ա. 329 թ., Ալեքսանդր Մակեդոնացին այդ երկրի կառավարումը վստահեց «պարսիկ Արշակին» (Arrian. III, 25.7)[39]: Սակայն, Ալեքսանդրին նրա հպատակությունը երկար չտևեց: Համաձայն Արրիանուսի, նույն Ք. ա. 329 թ. նա, Սատիբարզանեսի և Բեսի հետ կապեր ունենալու կասկածանքով ձերբակալվելով, Զարիաս-

31 Трудновская 1979: 109–110.

32 Яблонский 1999: 25.

33 Лоховиц 1979: 136, 145; Вайнберг 1991: 54.

34 Балахванцев 2016: 12; նույնի՝ 2018: 86.

35 Лившиц 2002: 55; Olbrycht 2021: 24.

36 Ակչարթեփե դամբարանադաշտի 4-րդ (Обельченко 1962: 57–70), Կույու Մազարսկի դամբարանադաշտի 7-րդ և 19-րդ (Обельченко 1956: 205–227), Լյավանդակի դամբարանադաշտի 7-րդ (Обельченко 1961: 114) կուրգաններում հայտնաբերված և Ք. ա. 4–3-րդ դդ. թվագրվող նյութերն այս տարածքում դահերի երկարատև բնակության վկայություններն են:

37 Балахванцев 2012: 34; Strootman 2018: 132.

38 Melikyan 2021: 38–39. Համտ. Harmatta 1970: 13–14.

39 Անտիկ հեղինակների կողմից Արշակին պարսիկ կոչելու պատճառների մասին տե՛ս Overtoom 2016: 165–170; Մելիքյան 2021: 205, ծան. 6:

պայում (Բակտրա) ներկայացվել է Ալեքսանդրին և, հավանաբար, նրա հրամանով էլ մահապատժի է ենթարկվել[40]: Արշակի դեմ հարուցված մեղադրանքը լուսաբանվում է Կ. Ռուֆուսի վկայությամբ առ այն, որ Ալեքսանդրի դեմ պայքարում Բեսը սպասել է, որ, ի թիվս այլոց, «...*Նրա մոտ կգան խորազմներն ու դահերը*...» (Curt. VII, 4.6): Տվյալ հատվածում դահերի՝ խորազմների հետ հիշատակությունից երևում է, որ խոսքը վերաբերում է Օքսոսի ձախափնյակում ապրող դահերին (ապարններին): Խորազմների օգնության մասին աղբյուրները ոչինչ չեն հաղորդում: Մինչդեռ, Արեյայի սատրապ Արշակի՝ Բեսին հարելու փաստը խոսում է նրա ցեղակից ապարնների օգնության կայացման մասին: Բայց, ինչպես երևում է, Արշակի և, ապա, ինքնահռչակ արքա Բեսի մահապատիժներն ու Սողդի դիմադրության ճնշումը ընկճել են ապարնական ավազանուն: Ք. ա. 328 թ. Խորազմի արքայազն Թրատաթերնը «*հարևան մարզերի մասսագետների և դահերի հետ միանալով*», Ալեքսանդրին պաշտոնապես հայտնեց իրենց հպատակության մասին (Curt. VIII. 1.8; Prolog. Pomp. Trog. XII, VI. 17–18): Թրատաթերնի ոչ միանձնյա գործելու փաստից հետևում է, որ ապարններն ու մասսագետները եղել են Խորազմի արքայից անկախ էթնոքաղաքական միավորներ[41], որոնք նրա հետ ընդունել են մակեդոնական գերիշխանությունը:

Ք. ա. 305 թ. Ալեքսանդրի տերության ասիական տիրույթներն անցան Սելևկոս I-ին (Ք.ա. 305–281 թթ.): Խորազմն ու ապարնները նրա տերության սահմաններից դուրս և լիակատար անկախ էին: Ք. ա 4-րդ դ. վերջին Սելևկյանները Պատրոկլեսի հրամանատարությամբ արշավախմբեր ուղարկեցին դեպի Կասպից ծովի ափերը (Pliny VI, 58): Մ. Օլբրայխտի գնահատմամբ՝ դրանք հետախուզական նպատակներ են հետապնդել[42]: Մինչդեռ, այդ ձեռնարկները ճիշտ կլինի դիտարկել Կենտրոնական Ասիայի օազիսների նստակյաց բնակչությունից ու հելլենիստական քաղաքներից քոչվորներին վանելու և նրանց հետ սահմաններն ամրապնդելու ընդհանուր քաղաքականության ծիրում: Այն սաղրում էր քոչվորներին, քանի որ մի կողմից խոչընդոտում էր սելևկյան ծաղկուն նահանգների թալանին, մյուս կողմից՝ նրանց մեջ կասկածներ էր առաջացնում Սելևկյանների պաշտպանական կարողությունների նկատմամբ[43]: Քոչվորների պատասխանը կտրուկ էր. Ք. ա. մոտ 280 թ. ներխուժելով Սելևկյանների տիրույթներ՝ նրանք հասան մինչև Մարգիանա և Արեյա և ավերեցին Ալեքսանդրիա ու Հերակլեա քաղաքները (Pliny VI, 18. 46–47; VI, 67): Փ. Հոլթը և այլք ներխուժողներին նույնացնում են ապարնների հետ[44], ինչը Սելևկյանների սահմաններին նրանց հարևանցի բնակության փաստի տեսանկյունից չի բացառվում: Մինչդեռ, անհիմն է այն կարծիքը, թե քոչվորների հիշյալ ներխուժման նպատակը եղել է Մարգիանան իրենց տիրույթներին միացնելը[45]: Ք. ա. 3-րդ դ. 80-ական թթ. Մարգիանան ոչ միայն հեռու էր ապարնների բնակության շրջանից, այլև կտրված էր նրանից Կարակում անապատով:

Սելևկյան զորավար Դեմոդամասը Ք. ա. 280 թ. վճռականորեն հետ մղեց քոչվորներին և մի քանի տասնամյակով կոտրեց նրանց ներխուժողական ներուժը: Բայց Սելևկյանները Կենտրոնական Ասիայի քոչվորների նկատմամբ վերահսկողության ռազմավարական նպատակներ չունեին և չզարգացրին այդ հաջողությունը[46]: Այնպես որ, Սելևկյան տերության սահմաններից անդին ապարնների միգրացիան շարունակվեց նաև Ք. ա. 3-րդ դ. հաջորդ տասնամյակներին: Պարթևստան ներխուժելու նախօրյակին նրանք արդեն բնակվում էին մերձարևադարձային տափաստանից նկատելիորեն հարավ՝ Օխի (Ատրեկի և նրա վտակ Սումբարի) հովտում (Strabo XI, 9.2)[47]:

---

40 Assar 2006: 74.

41 Խորիկյան 2021: 381:

42 Olbrycht 1998: 44.

43 Holt 1999: 29; Overtoom 2020: 79.

44 Holt 1999: 27–28; Lerner 2017; Overtoom 2020: 80.

45 Overtoom 2020: 80.

46 Overtoom 2020: 80.

47 Շատ ուսումնասիրողներ Օխ գետը նույնականացրել են Թուրքմենստանի Տեջեն (Tejen) գետի հետ (Debevoise 1938: 2; Bickerman 1944: 79; Shahbazi 1982: 216; Зеймаль 1998: 344; Choisnel 2004: 28; Gregoratti 2013: 43; նույնի՝ 2017: 127): Մ. Օլբրայխտը հիրկանյան Օխը նույնացնում է Ուզբոյի հետ (Olbrycht 1998: 74; նույնի՝ 2003: 114–116; նույնի՝ 2010: 302–309; նույնի՝ 2021: 116–119): Իսկ Ա. Բալախվանցևը գրավոր վկայությունների, ինչպես նաև խնդրո առարկա տարածաշրջանի ռելիեֆի, ջրագրության, պատմական աշխարհագրության և հնագիտության համակողմանի քննությամբ եզրակացնում է, որ Օխը նույնական է Ատրեկին ու նրա վտակ Սումբարին (Пьянков 2013: 576, пр. 2; Балахванцев 2018: 32, 82):

## Սողդական դահերը Ք. ա. 4–3-րդ դարերում

Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակակից հեղինակները Սողդում քսանթիների ու պիսսուրների բնակության շրջանը ուրվագծում են Զերավշանի հովտում՝ Սամարղանդի և Բուխարայի միջև ընկած շրջանում՝ առանց այդ երկու ցեղերին իրարից տարբերելու: Անշուշտ, Ք. ա. 4-րդ դ. երկրորդ կեսին օրեցօր թուլացող Աքեմենյանների համար տափաստանների քոչվորական շարժուն խմբերի նկատմամբ վերահսկողություն պահպանելը լուրջ խնդիր էր: Սակայն, սողդական դահերը նույնպես մինչև վերջ հավատարիմ մնացին Աքեմենյաններին: Նրանք տեղի այլ քոչվորների պես ենթարկվում էին Աքեմենյանների բակտրիական սատրապին[48]՝ կատարելով հարկային և ռազմական պարտավորություններ: Արրիանուսը Դարեհ III-ի հրամանով Գավգամելա եկած ջոկատների թվում հիշատակում է նաև սողդացիների (Arrian. III. 8.3), որոնց, սակայն, արդեն պարսից ռազմական դասավորության նկարագրության պարագայում կոչում է դահեր (Arrian. III, 11.3): Դա հիմք է տալիս կարծել, որ խոսքը հենց սողդական դահերի մասին է: Դարեհ III-ի սպանությունից հետո սողդական դահերը ակտիվորեն աջակցեցին իրենց նախկին սատրապին՝ ինքնահռչակ արքա Բեսին: Ք. ա. 329–328 թթ. նրանք մակեդոնացիներին համառորեն դիմադրեցին հատկապես Զերավշանի հովտում և Մարականդի մոտերքում (Curt. VII, 7.31–39, VIII, 1. 6; Arrian. IV, 5.2–6.2): Այնուհետև հնազանդեցվելով՝ նրանք ստիպված էին մասնակցել Ալեքսանդրի Հնդկական արշավանքին (Arrian. V, 12.2; Curt. VIII, 14.5; IX. 2.24): Ք. ա. 305 թ. քսանթիներն ու պիսուրները Սողդի նստակյաց և քոչվոր մյուս բնակչության հետ ճանաչեցին Սելևկյանների իշխանությունը[49], որին ենթակա մնացին մինչև Ք. ա. 3-րդ դ. կեսերը[50]:

Սողդի և Բակտրիայի նկատմամբ առաջին Սելևկյանների մեծ հետաքրքրությունը արտահայտվում էր այդ երկրամասերի կառավարումը զահաժառանգներին վստահելով, դրանցում ռազմական մեծաքանակ ուժեր տեղակայելով (Arrian. IV, 22.3), պաշտպանական ամրությունների ստեղծմամբ ու հունական գաղութացման թափով (Strabo XI, 11.4): Սողդի արագ ուրբանիզացումը նպաստավոր պայմաններ էր ստեղծում քաղաքային բնակչության հետ քոչվորների փոխշահավետ առևտրի համար[51]: Սակայն, այդ ամենի նախապայմանն ուժեղ իշխանությունն էր, մինչդեռ՝ Ք. ա. 261 թ. Անտիոքոս I-ի մահվանից հետո Սելևկյանները դադարեցին մեծ ուշադրություն դարձնել Վերին սատրապություններին[52]: Տարածաշրջանի քոչվորների նկատմամբ վերահսկողությունն ամբողջապես ընկավ տեղական իշխանությունների վրա: Բակտրիայի, Սողդի, Մարգիանայի և Արեյայի վերջին սելևկյան սատրապ[53], ապա և ինքնահռչակ արքա Դիոդոտոս I-ին (Ք ա. 238–235 թթ.) ու Սողդում նրա տեղապահ Եվտիդեմոսին աղբյուրները բնութագրում են քոչվորների նկատմամբ խիստ թշնամական վերաբերմունքով: Անկասկած, Արշակ I-ի ու ապարնների նկատմամբ Դիոդոտոս I-ի թշնամանքը պայմանավորված է եղել Մարգիանայի և Արեյայի վրա նրանց նախընթաց հարձակումներով[54]: Հնարավոր է, որ այդ ատելությունն ինքնաբերաբար տարածվել է նաև Սողդում ապրող նրանց ազգակից պիսսուրների և քսանթիների նկատմամբ, թեպետ, ինչպես երևում է, սողդական դահերն իրենց «վաստակն» են ունեցել այդ հարցում:

Գրավոր տվյալներ չկան ապարնների ցեղառաջնորդ Արշակի Ք. ա. 247 թ. թագադրության, Ք. ա. 246/245 թ. նրա Մարգիանա և Արեյա[55] ու Ք. ա. 238 թ. Պարթևստան ներխուժելու փաստերի հանդեպ սողդական դահերի վերաբերմունքի մասին: Բայց դժվար չէ պատկերացնել, որ այդ իրադարձությունները ոգևորել են նրանց՝ հանգեցնելով ապարնների հետ էթնիկ նույնականության գաղափարի զարթոնքին: Ինչպես երևում է, դրա արդյունքում նրանք վերադարձել են նստակյաց բնակչության վրա պարբերական հարձակումների կենսակերպին (Strabo XI, 8.3), որի պատճառով

[48] Балахванцев 2012: 34. Խորիկյան 2021: 303:

[49] Ivstinvs XV, 4; Appianos, Syr. 55.

[50] Ըստ երևույթին, Ք. ա. 6–3-րդ դդ. Սողդի վարչական ենթակայությունը Բակտրայում (Ζαριάσπα) նստող պարսկական և մակեդոնական սատրապներին, իսկ ավելի ուշ՝ նաև հունա-բակտրիական արքաներին, հանդիսացել է այն պատմական հիմքը, որի վրա առաջացել է Արշակի (դահերի) բակտրիական ծագման մասին վարկածը (Strabo XI, 9.3):

[51] Դահերի և սողդերի սերտ կապերի մասին է վկայում վաղ միջնադարի սողդական անվանաբանությունում պահպանված Dαx, Dαxānαk, Dαxč, Dαxzāte անունները (Lurje 2010: 185–186; Балахванцев 2018: 80):

[52] Попов 2008: 49.

[53] Overtoom 2020: 81.

[54] Overtoom 2020: 81; նույնի՝ 2021: 169.

[55] Overtoom 2020: 81.

Բակտրիայի արքայի համար դարձել են թշնամական և անցանկալի տարրեր: Որոշ անուղղակի տվյալներ թույլ են տալիս կարծել, որ Արշակի դեմ պատերազմի ընթացքում Դիոդոտոս I-ը նույնիսկ ինչ-որ պատժիչ գործողություններ է իրականացրել սողդական դահերի նկատմամբ[56]: Այդ քաղաքականությունը բխում էր Բակտրիայի ու Սողդի քաղաքների հելլենիստական, ինչպես նաև տեղական երկրագործ բնակչության տրամադրություններից: Քոչվորների հանդեպ վերջիններիս ատելությունն այնքան խորն էր, որ Արշակ I-ի հետ Դիոդոտոս II-ի (Ք. ա. մոտ 235–225 թթ.) հաշտությունը նրանք գնահատեցին որպես դավաճանություն իրենց կենսական շահերի հանդեպ: Դիոդոտոս II-ի սպանությունից հետո իշխանության եկած Սողդի նախկին կառավարիչ Եվտիդեմոս I-ը (Ք. ա. 225/4 – մոտ 190 թթ.) սաստկացրեց ճնշումները քոչվորների նկատմամբ[57]: Հուստինուսը հաստատում է, որ Դիոդոտոս I-ի և Եվտիդեմոսի քաղաքականությունն իր սուր ծայրով ուղղված է եղել հենց սողդական դահերի դեմ (Ivst. XLI, 1.10). «*Նրանք, ովքեր ներքին խռովությունների պատճառով վտարվեցին Սկյութիայից*[58], *աստիճանաբար զբաղեցրին Հիրկանիայի, դահերի, Արեյայի, Սպարնոսի և Մարգիանայի միջև ընկած անապատը*»:

Մի փոքր հետո, խոսելով վտարանդիների՝ Պարթևստան ներխուժելու մասին, գրում է (Ivst. XLI, 4.6–7). «*Այդ ժամանակ էր ապրում Արշակը՝ անհայտ ծագման, բայց փորձված քաջության տեր այրը: Սովորաբար նա զբաղվում էր ավազակությամբ ու թալանով: Լուր ստանալով, որ Սելևկոսը պարտություն է կրել Ասիայում, նա, այլևս չերկյուղելով արքայից, հարձակվեց Պարթևստանի վրա, հաղթեց նրա կառավարիչ Անդրագորասին և սպանելով նրան, զավթեց* [պարթև] *ժողովրդի նկատմամբ իշխանությունը*»:

Դժվար չէ նկատել, որ Արշակի ու դահերի սկյութական ծագման մասին Ստրաբոնի և Հուստինուսի պատումները որոշակիորեն աղերսվում են: Միայն թե այն, ինչը հույն մատենագիրը հիշատակել է որպես վարկած, հռոմեացի մատենագիրը ներկայացրել է որպես բացարձակ ճշմարտություն: Շատ ուսումնասիրողներ նախապատվությունը տվել են Հուստինուսի պատումին և նրա սցենարով են պատկերացրել Արշակունիների պետության կազմավորումը[59]: Ք. ա. 3-րդ դ. դահերի միգրացիայի մասին Հուստինուսի վերոնշյալ հաղորդման կարևորությունը, իհարկե, դժվար է թերագնահատել: Այդուհանդերձ, նրանում առկա են մի շարք հակասություններ, որոնք պահանջում են քննադատաբար վերանայել վերոնշյալ հաղորդման հիման վրա ստեղծված պատկերացումները: Նախ, Պ. Տրոգուսի մեզ չհասած *“Historiae Philippicae”* երկի հիման վրա մոտ 300 թ. կազմված «Պրոլոգներում»[60], որ պարունակում է նրա գրքերի (գլուխների) բովանդակությունների համառոտ նկարագրությունները, դահերի գաղթի մասին ոչ մի խոսք չկա: Դրանից հետևում է, որ Պ. Տրոգուսի երկի բնագրում նույնպես այդ մասին ոչինչ չի եղել, և Հուստինուսն իր *“Epitoma”*-ի վերոնշյալ պատումում ազատություն է տվել իր երևակայությանը[61]՝ Պ. Տրոգուսի պատումին հավելելով Պարթևստանում դահերի հաստատման մասին իրեն հայտնի տվյալները: Բացի այդ, հարկ է նկատել, որ Հուստինուսը «Սկյութիայից վտարվածների» զբաղեցրած տարածքին հարևան երկրներն արևմուտքից արևելք թվարկելու պարագայում Վրկանի և Արեյայի միջև Պարթևստանի փոխարեն հիշատակում է դահերին: Դրանով իսկ նա անուղղակիորեն փաստում է, որ «վտարանդի» դահերն իրենց նոր բնակության շրջան են հասել դահերի մեկ այլ խմբի կողմից Պարթևստանը նվաճելուց հետո: Իսկ քանի որ Պարթևստանի հարևանությամբ ապարններից բացի այլ դահեր չկային, կնշանակի, որ Պարթևստանը նվաճել են Օխի

---

[56] Ագաթոկլեսի (Ք.ա. 190–180 թթ.) թողարկված մի հուշադրամի վրա Դիոդոտոս I-ին հետմահու շնորհված է “Σωτήρ” («Փրկիչ») պատվատիտղոսը: Հելլենիստական արքաները սովորաբար այն ընդունում էին ներիանրութային կարևոր խնդիրների լուծման առթիվ, ինչպիսին կարող էր լինել պիսսուրների ու քանթիների դեմ ի շահ տեղական նստակյաց բնակչության ծավալած գործողությունները (հմմտ. Overtoom 2020: 83):

[57] Հատկանշական է, որ Եվտիդեմոս I-ը Ք. ա. 209 թ. Սելևկյան արքա Անտիոքոս III-ի (Ք.ա. 223–186 թթ.) առջև իր ինքնակոչությունն արդարացնելու համար հայտարարում է, թե արքայական տիտղոսն ընդունել է քոչվորական հորդաներին զսպելու համար (Polyb. XI, 34.5):

[58] Ուսումնասիրողներից ոմանք Հուստինուսի հիշատակած «Սկյութիան» պատկերացնում են լայն իմաստով՝ նույնացնելով այն Ուրալի և Կասպից ու Արալի ծովերի միջև ընկած տափաստանների հետ (Olbrycht 1998: 63–65; Пьянков 2013: 577): Նրանց կարծիքով Հուստինուսի խոսքը վերաբերում է իրենց նախնական քոչի շրջանից դահերի վտարմանը: Մեր կարծիքով Հուստինուսի տվյալ հաղորդման մեջ «Սկյութիան» պետք է նույնացնել Սողդի հետ, որի հիմնական բնակչությունը նույնպես պատկանում էր սկյութական էթնոմշակույթին:

[59] Wolski 1959: 222–238; նույնի՝ 1993: 56–57; Lerner 1999: 23–26; Assar 2005: 29–36; Dąbrowa 2010: 123–124; Overtoom 2020: 85–86; Olbrycht 2021: 126–146. Հմմտ. Bivar 1983: 28–31; Зеймаль 1998: 338–346, 350, 357–358.

[60] Տե՛ս Ivstinvs 1985: 306–324.

[61] Strootman 2018: 136–137.

ավազանում ապրող ապարններն՝ իրենց առաջնորդ Արշակի ղեկավարությամբ, ինչպես որ նշում է Ստրաբոնը: Վերոնշյալից հետևում է, որ Հուստինուսը, անտեղյակ լինելով դահերի միության կառուցվածքին ու Օխի հովտում ապարնների ցեղի առանձին բնակության փաստին, այդ հանրությանը պատկերացրել է բացառապես ի դեմս Սողդ-Սկյութիայից «վտարվածների»: Ուստի բնական է, որ նա Պարթևստանի նվաճող Արշակին էլ համարել է նրանց առաջնորդը:

Ե՞րբ է տեղի ունեցել Սողդական դահերի միգրացիան: Այդ հարցի պատասխանը կարելի է գտնել Սելևկյանների ու բակտրիական արքաների հետ Արշակ I-ի հարաբերությունների համատեքստում՝ Ստրաբոնի և Հուստինուսի մի քանի ակնարկների կարևորման միջոցով: Այսպես, Ստրաբոնը Պարթևստանի առաջին նվաճումից (Ք.ա. 238 թ.) հետո Արշակ I-ի դրությունը նկարագրում է *«սկզբում նա թույլ էր՝ մշտապես պատերազմելով նրանց դեմ, որոնց հողերը զավթել էին...»* արտահայտությամբ (Strabo XI, 9.2): Մեկ այլ տեղ նա վկայում է, որ Սելևկոս II-ի (Ք.ա. 246–225 թթ.) դեմ պատերազմում (Ք.ա. մոտ. 230 թ.[62]) պարտվելուց և նվաճված տարածքները կորցնելուց հետո Արշակ I-ը ստիպված ապաստանել է ապասիակների ցեղի մոտ (Strabo XI, 8.8): Սրանցից միանշանակ հասկացվում է, որ Արշակի թուլության և պարտության պատճառը եղել է նրա իշխանության էթնոքաղաքական հենքի բացառապես ապարնների ցեղից բաղկացած լինելը: Իսկ վերջինիս մարդկային և ռազմական ներուժը բավարար չէր Պարթևստանին տիրելու և հարևան հելլենիստական երկրների թշնամանքին դիմակայելու համար: Սելևկոս II-ի հետ մոտ Ք.ա. 230 թ. կնքած հաշտությամբ Արշակ I-ը ճանաչեց նրա տիրապետությունն ու պարտավորվեց զինվորներ մատակարարել սելևկյան բանակին: Փոխարենը՝ Արշակին թույլատրվեց մնալ Ատրեկի ու Սումբարի հովտում: Այդուհետ, մինչև Ք.ա. 217 թ. Ռափիենի ճակատամարտում Անտիոքոս III-ի պարտությունը, Արշակ I-ը պահպանեց հաշտության պայմանները: Անշուշտ, Արշակն այս ընթացքում հասկացել է իր ձախողման պատճառը և մտորել է իրավիճակը շտկելու ուղիների մասին: Արշակի իշխանության հենարանը տեղական բնակչության հաշվին ընդլայնելը գործնականում բացառվում էր, քանի որ նա Պարթևստանի հելլենիստական և տեղական նստակյաց բնակչությանն ատելի էր դարձել նախընթաց հարձակումների ու կարճատև տիրապետության ընթացքում իրականացրած հողազրկման և ունեզրկման պատճառով: Ուստի՝ Արշակ I-ին իր դրությունը բարելավելու մի միջոց էր մնում՝ ազգակից ցեղերին Պարթևստանի նվաճման գործին ներգրավելը[63]: Ք. ա. 4-րդ դ. կեսերին պիսուրների ու քսանթիների Սողդ միգրացվելուց հետո Արշակունիները նրանց նկատմամբ այլևս իրական իշխանություն ունենալ չէին կարող: Այդուհանդերձ, չի բացառվում, որ նրանց միգրացիան դեպի Պարթևստանի և Արեյայի միջև ընկած կիսանապատ սկսված լինի հենց Արշակի կոչով: Դրան դրականորեն արձագանքելու հարցում պետք է որ լուրջ ազդակ ծառայեր Բակտրիայի արքա Եվտիդեմոս I-ի հակաքոչվորական քաղաքականությունը: Այս պարագայում սողդական դահերի միգրացիայի միակ խոչընդոտը դառնում էր Ք. ա. 230 թ. Սելևկոս II-ի հաղթանակից հետո Պարթևստանում վերականգնված սելևկյան վարչությունը (Polyb. V. 43.6): Ըստ երևույթին Արշակին ու սողդական դահերին հաջողվել է նրա զգոնությունը հաղթահարել աստիճանաբար զաղթի միջոցով: Անտիոքոս III-ի Ք. ա. 217 թ. պարտությունից հետո Արշակ I-ը կրկին նվաճեց Պարթևստանը, որով և խորտակվեց սողդական դահերի միգրացիայի խոչընդոտը:

Քսանթիների ու պիսուրների տեղափոխվելը Պարթևստանի սահմանակից շրջան եռապատկեց Արշակ I-ի էթնոքաղաքական հենքն ու նրա ռազմական ներուժը: Արդյունքում՝ Արշակ I-ը կարճ ժամանակում նվաճեց նաև Վրկանը: Անտիկ հեղինակները հստակ արձանագրել են տարածաշրջանի ուժերի հարաբերության մեջ կատարված այդ կտրուկ փոփոխությունը: Ստրաբոնն Արշակի ձախողումների մասին ակնարկից հետո նշում է, թե *«Ավելի ուշ նրանք* (Արշակն ու նրա հետևորդները – Ա.Մ) *այնքան զորեղացան, որ շնորհիվ պատերազմական հաջող գործողությունների, մշտապես զավթում էին հարևան տարածքները»* (Strabo XI, 9. 2): Արշակի կողմից «մեծ զորքի ստեղծումը» փաստում է նաև Հուստինուսը, որը, շփոթելով իրադարձությունների պատճառահետևանքային կապը, ոչ թե Վրկանի նվաճումն է պայմանավորում «մեծ զորքի ստեղծմամբ», այլ «երկու թագավորությունների տիրանալն» է համարում «մեծ զորքի ստեղծման» պայման (Ivst. XLI, 4. 8): Անտիոքոս III-ի Ք. ա. 209 թ. Արևելյան արշավանքի ժամանակ սողդական դահերի հիմնական մասն արդեն միգրաց-

[62] Балахванцев 2018: 33, 192–197. Հմմտ. Debevoise 1938: 13; Зеймаль 1998: 344; Lerner 1999: 33–43.

[63] Հմմտ. Olbrycht 2003b: 74–75; Strootman 2018: 89.

վել էր: Բայց Զերավշանի հովտի դամբարանադաշտերում Ք.ա. 2-րդ–Ք.հ. 1-ին դդ. թվագրվող նյութերը վկայում են, որ սողդական դաhերի մի մասը մնացել է այնտեղ և ժամանկի ընթացքում անցել նստակյաց կենսակերպի: Այսպիսով, ավելի քան հարյուրամյա բաժանումից հետո դահերի միության երկու հատվածները կրկին վերամիավորվեցին միևնույն տարածքում, բայց արդեն ապարնների առաջնորդ Արշակ I-ի արքայական իշխանության ներքո: Այդ հանգամանքը դարձավ նորաստեղծ իշխանության կենսունակության կարևորագույն պայմանը և վճռորոշ դեր խաղաց Արշակունիների պետության սոցիալ-քաղաքական համակարգի կազմակերպման գործում:

**Արթուր Մելիքյան**

*Վանաձորի պետական համալսարան*

*Տիգրան Մեծի 36, 2021, Վանաձոր, Հայաստանի Հանրապետություն*

arthurmelikyan@rambler.ru

## Գրականություն

*Ավեստա. Իրանցիների հնագույն երգերը և տեքստերը*: Պարսկերենից թարգմանեց Էդ. Հախվերդյանը, գլխ. խմբագիր՝ Ն. Համբարձումյան: Երևան, Անտարես, 2022:

Խորիկյան Հ. 2021. *Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը*: Գյումրի, Էլ Դորադո:

Մելիքյան Ա. 2021. Արշակունիների պետության առաջացումը համաձայն Արրիանուսի «Պարթիկա» երկի առաջին գրքի տվյալների: *Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր* Ա/2, էջ 203–226:

Балахванцев А. 2012. Дахи Средней Азии в эпоху Александра Македонского: данные нарративной традиции. *Восток. Афроазиатские общества: история и современность* 1: 29–36.

Балахванцев А. 2016. Среднеазиатские дахи в IV–II вв. до н.э. (по данным археологии). *Российская археология* 1: 11–24.

Балахванцев А. 2018: *Политическая история Ранней Парфии*. Москва: Институт востоковедения РАН.

Вайнберг Б. 1991. Изучение памятников Присарыкамышской дельты Амударьи в 70–80-х годах, в. кн. Б.И. Вайнберг (ред.). *Скотоводы и земледельцы Левобережного Хорезма*. Вып. 1. 5–109. Москва: Институт этнологии и антропологии, Академия наук СССР.

Вайнберг Б. 2004. Заключение, в кн. Б.И. Вайнберг (ред.). *Калалы-гыр 2: Культовый центр в Древнем Хорезме в IV–II вв. до н.* э. 237–242. Москва: Восточная литература.

Гумилев Л. 1972. Изменение климата и миграция кочевников. *Природа* 4: 44–52.

Дандамаев М. 1985. *Политическая история Ахеменидской державы*. Москва: Наука.

Дандамаев М. 2004. Ахеменидская держава, в кн. А. Седов (ред.). *История древнего Востока: От ранних государственных образований до древних империй*. 581–655. Москва: Восточная литература.

Зеймаль Е. 1998. Греко-Бактрия. Парфия (III–II вв. до н.э.). Политическая история. Социальные отношения, в кн. Б.А. Литвинский, В.А. Ранов (ред.). *История таджикского народа*, том 1. *Древнейшая и древняя история*. 338–376. Душанбе: Институт истории, археологии и этнографии имени А. Дониша АН РТ.

Лившиц В. 2002. Три серебряные чаши из Исаковского могильника № 1. *Вестник древней истории* 2: 43–55.

Лоховиц В. 1979. Подбойно-катакомбные и коллективные погребения могильника Тумек-кичиджик, в кн. М. Итина (ред.). *Кочевники на границах Хорезма* (Труды Хорезмской археолого-этнографической экспедиции 9). 134–150. Москва: Наука.

Обельченко О. 1956. Кую-Мазарский могильник. *Труды Института истории и археологии АН УзССР* 8: 205–227.

Обельченко О. 1961. Лявандакский могильник. *История материальной культуры Узбекистана* 2: 97–176.

Обельченко О. 1962. Могильник Акджартепе. *История материальной культуры Узбекистана* 3: 57–70.

Попов А. 2008. *Греко-Бактрийское царство*. Санкт-Петербург: Издательство Санкт-Петербургского университета.

Пянков И. 2013. *Средняя Азия и евразийская степь в древности*. Санкт-Петербург: Петербургское лингвистическое общество.

Ставиский Б. 1998. Средняя Азия в Ахеменидскую эпоху, в кн. Б.А. Литвинский, В.А. Ранов (ред.). *История таджикского народа*, том 1. *Древнейшая и древняя история*. 250–282. Душанбе: Институт истории, археологии и этнографии имени А. Дониша АН РТ.

Трудновская С. 1979. Ранние погребения югозападной курганной группы могильника Туз-гыр, в кн. М.А. Итина (ред.). *Кочевники на границах Хорезма*. 101–110. Москва: Наука.

Яблонский Л. 1999. *Некрополи древнего Хорезма (археология и антропология могильников)*. Москва: Восточная литература.

Ягодин В. 1982. Археологическое изучение курганных могильников Каскажол и Бернияз на Устюрте. *Археология Приаралья* 1: 39–81.

Ягодин В., Бежанов Е., Манылов Ю., Юсупов Н. 1978. *Древняя и средневековая культура Юго-Восточного Устюрта*. Ташкент: Фан.

Ammianus 2000. *Ammiani Marcellini Rerum Gestarum Libri qui Supersunt*, with an English Translation by J.C. Rolfe, volume 2, Books XX-XXVI. Cambridge, Mass.: Harvard University Press – London: William Heinemann LTD.

Ammianus 1986. *Ammiani Marcellini Rerum Gestarum Libri qui Supersunt*, with an English Translation by J.C. Rolfe, volume 3, Books XXVII-XXXI. Cambridge, Mass.:

Harvard University Press – London: William Heinemann LTD.

Appianos 1962. *Appian's Roman History*, volume 2, Translated by H. White. London: William Heinemann LTD – Cambridge, Mass.: Harvard University Press.

Arrian 1966. *Anabasis Alexandri*, with an English Translation by E. Iliff Robson, in two volumes, volume 2, Books V-VII. London: William Heinemann LTD – Cambridge, Mass.: Harvard University Press.

Arrian 1967: *Anabasis Alexandri*, with an English Translation by E. Iliff Robson, in two volumes, volume 1, Books I-IV. London: William Heinemann LTD – Cambridge, Mass.: Harvard University Press.

Asheri D., Lloyd A., Corcella A.A. 2007. *Commentary on Herodotus. Books I-IV*. Oxford: Oxford University Press.

Assar G. 2005. Geneology and Coinage of the Early Parthian Rulers, Part II: A Revised Stemma. *Parthica* 7: 29–63.

Assar G. 2006. Moses of Chorene and the Early Parthian Chronology. *Electrum* 11: 61–86.

Bailey H. 1958. Iranian arya- and daha-. *Transactions of the Philological Society* 58/1: 71–115.

Bickerman E. 1944. Notes on Seleucid and Parthian Chronology. *Berytus* 8/2: 73–83.

Bivar A. 1983. The Political History of Iran Under Arsacids, in: E. Yarshater (ed.). *Cambridge History of Iran*, volume 3/1. 21–99. New York: Cambridge University Press.

Briant P. 2002. *From Cyrus to Alexander. A History of the Persian Empire*, Translated by P.T. Daniels. Winona Lake, Indiana: Eisenbrauns.

Choisnel E. 2004. *Les Parthes et la Route de la Soie*. Paris: L 'Harmattan.

Claudius Ptolomaeus 1845. *Claudii Ptolomaeii Geographia*, Edited Carolus Fridericus Augustus Nobbe, Tpm. II. Lipsiae: Sumptibus et typis Caroli Tauchnitii.

Curtius 1946. *Quintus Curtius. History of Alexander*, volume I, Books 1–5, volume II, Books 6–10, Translated by J.C. Rolfe. Cambridge, Mass.: Harvard University Press – London: William Heinemann LTD.

Dąbrowa E. 2010. The Parthian Kingship, in: G.B. Lanfranchi, R. Rollinger (eds). *Concepts of Kingship in Antiquity: Proceedings of the European Science Foundation Exploratory Workshop Held in Padova, November 28th - December 1st, 2007*. 123–134. Padova: S.A.R.G.O.N. Editrice e Libreria.

de Blois F. 1993. Dahae i, in: *Enciclopaedia Iranica* 6: 581.

Debevoise N.C. 1938. *A Political History of Parthia*. Chicago, Ill.: University of Chicago Press.

Francfort H. 1988. Central Asia and Eastern Iran, in: J. Boardman, N.G.L. Hammond, D.M. Lewis, M. Ostwald (eds). *Cambridge Ancient History,* 2nd ed., volume 4. 165–193. Cambridge: Cambridge University Press.

Gregoratti L. 2013. The Journey East of the Great King: East and West in the Parthian Kingdom. *Parthica* 15: 43–52.

Gregoratti L. 2017. The Arsacid Empire, in: T. Daryaee (ed.). *King of the Seven Climes: A History of the Ancient Iranian World (3000 BCE - 651 CE)* (Ancient Iran Series 4). 125–153. Irvine: Uci Jordan Center for Persian Studies.

Harmatta J. 1970. *Studies in the History and Language of the Sarmatians* (Acta Universitatis de Attila József Nominatae. Acta antique et archaeologica 13). Szeged: Szegedi nyomda.

Herodian 1961. *Herodian of Antioch's History of the Roman Empire*, Translated from the Greek by E.C. Echols. Berkeley – Los Angeles: University of California Press.

Herodotus 1920. *The Persian Wars*, with an English Translation by A.D. Godley, in Four Volumes, volume I, Books I and II. London: William Heinemann – New York: G.P. Putnam's Sons.

Holt F. 1999. *Thundering Zeus: The Making of Hellenistic Bactria*. Berkeley: University of California Press.

Ivstinvs 1985. *M. Ivniani Ivstini Epitoma Historiarvm Philippicarvum Pompei Trogi. Accedvnt Prologi in Pompeivm Trogum*. Stvtgardie: B.G. Tevbner.

Konow S. 1912. Vedic "dasyu", Toxrī [i.e. Khotanese] "dahä", in: editor? *Festschrift Vilhelm Thomsen*. 96–97. Leipzig: Otto Harrassowitz.

Lerner J. 1999. *The Impact of Seleucid Decline on the Eastern Iranian Plateau: The Foundations of Arsacid Parthia and Graeco-Bactria*. Stuttgart: F. Steiner Verlag.

Lerner J. 2017. Mithridates I and the Parthian Archer, in: J.M. Schlude, B.B. Rubin (eds). *Arsacids, Romans, and Local Elites*. 1–24. Oxford – Philadelphia: Oxbow Books.

Lurje P. 2010. *Personal Names in Sogdian Texts*. Wien: Verlag der Österreichischen Akademie der Wissenschaften.

Melikyan A. 2021. The Hypothesis of the Arsacids' Descent from the Achaemenids: Myth or Reality? Bulletin of the Institute of Oriental Studies 1/2: 31–52.

Olbrycht M. 1996. Die Beziehungen der Steppennomaden Mittelasiens zu den hellenistischen Staaten (bis zum Ende des 3. Jahrhunderts vor Chr.), in: B. Funck (Hrsg.). *Hellenismus. Beiträge zur Erforschung von Akkulturation und politischer Ordnung in den Staaten des hellenistischen Zeitalters. (Akten des Internationalen Hellenismus-Kolloquium s 9.-14. März 1994 in Berlin)*. 147–169. Tübingen: J.C.B. Mohr (Paul Siebeck).

Olbrycht M. 1998. *Parthia et ulteriores gentes: die politischen Beziehungen zwischen dem arsakidischen Iran und den Nomaden der eurasischen Steppen*. München: tuduv-Verlagsgesellschaft.

Olbrycht M. 2003a. The Ochos River in the Classical Sources: A Study in the Historical Geography of Northeastern Iran and Middle Asia, in: Т. К. Мкртычев (ред.). *Центральная Азия. Источники, история, культура*. 114–117. Москва: Восточная литература.

Olbrycht M. 2003b. Parthia and Nomads of Central Asia. Elements of Steppe Origin in the Social and Military Development of Arsacid Iran. *Militär und Staatlichkeit* 12: 69–110.

Olbrycht M. 2010. Some Remarks on the Rivers of Central Asia in Antiquity, in: Т.Н. Джаксон, И.Г. Коновалова, Г.Р. Цецхладзе (ред.). *Gaudeamus Igitur. Сборник статей к 60-летию А.В. Подосинова*. 302–309. Москва: Русский Фонд Содействия Образованию и Науке.

Olbrycht M. 2019. The Aparnoi in the Arsacid History, in: В.А. Алекшин, Л.Б. Кирчо (ред.). *Древности Восточной Европы, Центральной Азии и Южной Сиби-*

*ри в контексте связей и взаимодействий в евразийском культурном пространстве (новые данные и концепции): Материалы Международной конференции, 18–22 ноября 2019 г., Санкт-Петербург*, том 1. 161–165. Санкт-Петербург: Институт истории материальной культуры РАН.

Olbrycht M. 2021. *Early Arsacis Parthia (ca. 250–165 B.C.). At the Crossroads of Iranian, Hellenistic, and Central Asian History*. Leiden – Boston: Brill.

Overtoom N. 2016. The Rivalry of Rome and Parthia in the Sources from the Augustan Age to Late Antiquity. *Anabasis* 7: 137–174.

Overtoom N. 2020. *Reign of Arrows. The Rise of the Parthian Empire in the Hellenistic Middle East*. Oxford: Oxford University Press.

Photius 1959: *Bibliotheca*, ed. R. Henry, volume I. Paris: Les Belles Lettres.

Pliny 1961. *Natural History*, with an English Translation by H. Rackhem, in Ten Volumes, volume 2, Libri III-VII. Cambridge Mass.: Harvard University Press – London: William Heinemann.

Polybius 1925. *The Histories*, with an English Translation by W.R. Paton, in Six Volumes, volume 4, Books IX-XV. London: William Heinemann – New York: G.P. Putnam's Sons.

Polybius 1979. *The Histories*, with an English Translation by W.R. Paton, in Six Volumes, volume 3, Books V-VIII. Cambridge: Harvard University Press – London: William Heinemann LTD.

Prologi Histriarum Philippicarum Pompei Trogi, in: *M. Ivniani Ivstini Epitoma Historiarvm Philippicarvm Pompei Trogi*. 1985. 306–324. Stvtgardie: B.G. Tevbner.

Schmitt R. 2009. *Die altpersischen Inschriften der Achaimeniden. Editio minor mit deutscher Übersetzung*. Wiesbaden: Reichert Verlag.

Shahbazi A. 1982. Darius in Scythia and Scythians in Persepolis. *Archaologische Mitteilungen aus Iran* 15: 189–235.

Strabo 1928. *The Geography of Strabo*, with an EnglishTranslation by H.L. Jones, volume 5, Books X-XII, the Loeb Classical Library. London: William Heinemann LTD – Cambridge, Mass.: Harvard University Press.

Strootman R. 2018. The Coming of the Parthians: Crisis and Resilience in the Reign of Seleukos II, in: K. Erickson (ed.). *The Seleukid Empire, 281–222 BC: War Within the Family*. 129–150. Swansea: Classical Press of Wales.

Synkellos 2002. *The Chronography of George Synkellos, A Byzantine Chronicle of Universal History from Creation*. Translated with Introduction and Notes by W. Adler and P. Tuffin. New Yorp: Oxford University Press.

Vogelsang W. 1992. *The Rise and Organisation of the Achaemenid Empire: The Eastern Iranian Evidence*. Leiden: Brill.

Vogelsang W. 1993. Dahae ii, in: *Encyclopaedia Iranica* 6: 581–582.

Wiesehöfer J. 2001. *Ancient Persia from 550 BC to 650 AD*. London – New York: I.B. Tauris.

Wolski J. 1959. L'historicité d'Arsaces I. *Historia* 8/2: 222–238.

Wolski J. 1969. Der Zusammenbruch der Seleukidenherrschaft im Iran im 3. Jh. v.Chr., in: F. Altheim, J. Rehork (Hrsg.). *Der Hellenismus in Mittelasien*. 188–254. Darmstadt: Wissenschaftliche Buchges.

Wolski J. 1993. *L'Empire des Arsacides* (Acta Iranica 32). Leuven: Peeters Publishers.

Zosimus 1982. *New History*, A Translation with Commentary by R.T. Didley. Canberra: Australian Association for Byzantine Studies, University of Sydney.

# THE MIGRATION OF THE DAHAI IN THE 6TH-3RD CENTURIES BC

*Artur Melikyan*

**Keywords**: Nomads, Aparns, Xanthi, Pissurs, Arsaces, Chorasmia, Sogdiana, Bactria, Oxus, Tanais.

**Abstract**: The ethno-cultural genesis of the Dahai tribes was quite complex and non-linear. Archaeological materials show that at the end of the 6th century BC, the Dahai migration included the region from the South Ural foothills to the Aral Sea. In the first quarter of the 5th century BC, the Union of Dahai, pushed out of the area and migrated to deltas between the South Ustyurt and Amudarya with the permission of the Achaemenian kings. Later, they settled in the area between lake Sarykamysh and the left bank of Khorazm. In the first half of the 4th century BC, two tribes of the Dahai Union, the Pissurs and the Xanthi, migrated to Soghdiana, settling in the Zeravshan valley. This broke the system of joint migration and centralized control of the Dahai. After that, the Aparns and Sogdian Dahai appeared in various administrative and political settlements. The Aparns were practically independent, but until the last quarter of the 3rd century BC the Sogdiana Dahai were subject to the Persian and Macedonian satraps of Bactria, then the Greek kings of this country. While the Aparns opposed the Seleucid's policy of closing the borders against the nomads by raiding Parthia, Hyrcania, Areia, and Margiana, the Dahai of Sogdiana had to endure the unfriendly treatment of the Seleucid rulers of the "Upper Satrapies". In the middle of the 3rd century BC, the Aparns migrated further south from the Near-Sarighamish steppes to the Ochos (Atrek) valley. In the second half of the 3rd century BC, in order to get rid of the harsh conditions of steppe life and pressure from neighboring nomads, they came up

with the idea of creating a permanent and protected "homeland". Arsaces, leader of the Aparn tribe, took advantage from the political chaos created in Central Asia in the 40's of the 3rd century BC, and briefly conquered Parthia in 238. After the defeat by Seleucus II and the loss of the conquered territories (in 230 BC), Arsaces I realizing the inadequacy of his ethno-political support, also included the Sogdian Dahai in the implementation of his program. The latter, on the one hand, under the influence of the prospect of a stable and safe life, and on the other hand, the pressure of the Bactrian kings, migrated to the area between Parthia and Areia in 217–209 BC. By the time of the Eastern invasion of Antiochus III in 209 BC, that process had already been completed. Thus, after more than a hundred years of separation, the two parts of the Dahai union were reunited again in the same territory, but already under the royal rule of Arsaces I. That circumstance became the most important condition for the vitality of the newly created government.

# ՀԱՄԱՌՈՏ ՄԻ ԼՐԱՑՈՒՄ “ENCYCLOPAEDIA IRANICA”-Ի “DEPORTATIONS” ԲԱՌԱՀՈԴՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՄԱՄԲ

*Դաբաղյան Արտակ, Արթուր Պետրոսյան*

**Բանալի բառեր**. Հերակլ կայսր, Խաչվերաց պատերազմ, գերիների վերադարձ Հայաստան, ռազմի պատմագիտություն, տեղահանություն և քաղաքայնացում, սինոյկիսմոս:

**Ամփոփում**. Հոդվածը նվիրված է Բյուզանդիայի Հերակլ կայսեր պարսից արշավանքներից մեկի (624–625 թթ.) ընթացքում՝ դրա մինչ այժմ աննկատ մնացած հանգամանքներից մեկին՝ Մարաստանից Հայաստան տասնյակ հազարավոր հայերի գերեդարձի կազմակերպմանը, և Աղվանքում բյուզանդացիների ձմեռելու փաստին: Միակ աղբյուրում՝ Թեոփանես Խոստովանողի կողմից թյուրըմբռնված հաղորդումը լրացվում է հայկական աղբյուրների անուղղակի հաղորդումների օգնությամբ: Հոդվածում ռազմի պատմությունը հանդես է գալիս իրեն բնորոշ օժանդակ պատմական գիտակարգի դերում:

## Ներածություն

Հայագիտության ներսում ռազմի պատմության թերզարգացած վիճակը մեր հայտնի խնդիրներից է, թեև տեսանելի են դրա հաղթահարման բազմաթիվ փորձեր և կարևոր հաջողություններ: Ստորև շարադրված փաստերի ու եզրակացությունների միջոցով մեկ անգամ ևս փորձում ենք կարևորել ռազմի պատմության՝ որպես պատմագիտական օժանդակ բնագավառի կամ գիտակարգի նշանակությունը հայագիտական շարունակվող պրպտումներում[1]:

Այս աշխատանքը որոշ առումով երկհարկանի է կամ, եթե միահարկ է, ապա ունի նաև նկուղ, ինչը և դրդել է հոդվածը կառուցվածքային երկու մասի բաժանել՝ միմյանց հետ առնչված, բայց գիտակարգային առումով զանազանվող:

## Առաջին մաս

Հերակլ Ա կայսեր անձը և գործունեությունը բյուզանդագիտության ամենածավալուն և շարունակաբար ուշադրություն գրավող էջերն են կազմել, ինչը հետևանք է իր ապրած դարաշրջանի կարևորության: Հայագիտությունը նույնպես կարևորել է այդ մարդուն՝ անդրադառնալով ոչ միայն նրա հայկական ծագմանը, այլև, հետևելով եպիսկոպոս և պատմիչ Սեբեոսի (Սեբիոսի) պատմական երկից («Պատմութիւն Հերակլեայ») բխող դավանաբանական խոսույթին՝ դիտել է նրան իր ապրած բարդ դարաշրջանի անմիջական ու հիմնական մարտահրավերներից ու լուծումներից անջատ՝ հաղորդելով որոշ իմաստով հերթական մի բյուզանդացի կայսեր բոլոր հատկանիշները:

Մինչդեռ, Հերակլյան հարյուրամյա հարստության հիմնադիրը վճռական դեր է ունեցել Բյուզանդիայի պահպանման գործում, իսկ այդ տերության հաղթանակը Սասանյան Իրանի նկատմամբ դարակազմիկ նշանակություն ունեցավ մարդկության հետագա պատմության մեջ. Իրանի փլատակներին տիրեց արաբական խալիֆաթը՝ շատ ավելի կենսունակ ու ագահ, իսկ նույն

[1] Հոդվածն այս բովանդակությունը ձեռք է բերել աստիճանաբար. նախ՝ միայն առաջին հեղինակի կողմից 2017 թ. դեկտեմբերի 7–8-ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Քրիստոնյա Արևելքի բաժնի կազմակերպած գիտաժողովին ներկայացված զեկուցմամբ (Դաբաղյան 2017), այնուհետև՝ Ա. Պետրոսյանի մասնակցությամբ Արցախում լրացուցիչ հետազոտության և տեղազննությունների արդյունքում հասել է այս հանգրվանին: Արդյունքները ևս մեկ անգամ զեկուցվել են դարձյալ Արևելագիտության ինստիտուտում՝ 2022 թ. դեկտեմբերի 19-ի ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ համատեղ՝ «Միգրացիոն գործընթացները Հայկական լեռնաշխարհում հնագույն շրջանից XX դարասկիզբ» գիտաժողովին: Հեղինակներն իրենց անկեղծ երախտագիտությունն են հայտնում նշված գիտաժողովների կազմակերպիչներին և մասնակիցներին, հատկապես՝ Ալեքսան Հակոբյանին և Ռոբերտ Ղազարյանին, հոդվածի քննարկման և հրատարակության փուլերին աջակցելու համար:

Հերակլը չէր կարող այլևս դիմադրել: Նրան վիճակված էր միայն սկսել համառ պայքարը քրիստոնեական ու իսլամական աշխարհների միջև[2]:

Վերադառնալով հայագիտության ու ռազմի պատմության շրջանակներ՝ ընդգծենք, որ Հերակլի ռազմական նախաձեռնություններից՝ սկզբնաղբյուրներում պահպանված ամենաուշագրավ դրվագներից է Սասանյան կայսրության նրա հասցրած հակահարվածը՝ բաղադրյալ մի գործողություն, որի շատ մանրամասներ դեռևս վիճարկվում են: Որպես «ուշագրավության» վկայություն նշենք, որ դատելով գերմանացի Գեռլանդի՝ մեզ ծանոթ ամենավաղ ծավալուն հոդվածի հղումներից, Հայաստանով Պարսկաստան Հերակլի արշավանքներին անդրադարձ է եղել դեռ բյուզանդագիտության արշալույսին՝ 1850-ականներին[3]: Իսկ համեմատաբար վերջերս, սկսած Սեբեոսի հայերեն թարգմանության համահեղինակ Հովարդ-Ջոնսթոնի երկարաշունչ հոդվածից[4], դրանց պարբերաբար անդրադարձեր կան գիտական մամուլում: Միջանկյալ շրջանում ծավալուն մի անդրադարձ ունի նաև Հակոբ Մանանդյանը[5], ում 8 քարտեզներից երկուսը մեզ ամենաանհրաժեշտն են եղել այս հոդվածի համար (Նկար 1): Դրանցում ներկայացված է արշավանքներից մեկի ընթացքում բյուզանդական հսկա բանակի երթուղին մեկ տարվա ընթացքում, այդ տարվա ուշ գարնանից ուշ աշուն: Այս երթուղուն է վերաբերում նաև Հովարդ-Ջոնսթոնի զուսպ դիտողությունը Մանանդյանի վերակազմության մասին, որպես «*ընդհանուր առմամբ ճշգրիտ, թեև նա սխալ է թվագրում Հերակլի առաջին հակահարձակումը 623–624 թթ.-ով, և անտեսում է* ***նույն ռազմական կամպանիայի երկրորդ տարվա՝ 625 թ. գարուն-ամառվա զորաշարժերը*** (բոլոր հղումներում ընդգծվածներն այստեղ և ստորև՝ մերն են): *Կարելի է ուղղումներ առաջարկել որոշ աշխարհագրական վայրերի վերաբերյալ.* ***Գանձակը պետք էր տարբերել Թախտ-ի Սուլեյմանի կրակի տաճարից****, և Հերակլը, հավանաբար, Ախուրեան գետն իրենից արևելք է թողել 627 թ. աշնանը Թիֆլիսից դեպի հարավ երթի ժամանակ*»[6]:

Ժամանակագրական դիտողությունը, որ անգլիացի հետազոտողն անում է անվանի հայագետին, այնքան էլ պարզ չէ: Առկա հրապարակումները, եթե ոչ ամբողջությամբ, բայց մեծ մասն աչքի անցկացրած լինելով, կարող ենք հավաստել, որ խնդիրը շատ հին է: Դեռևս Գեռլանդը, հետազոտական խնդիրը կարգաբերելիս, ստիպված էր իր նախորդների կազմից առաջարկված 6 կամպանիաները (622–628 թթ.՝ հավանաբար, ռազմի պատմաբանների շրջանում տիրապետող և *Sachkritik* – «մանրաքննություն» անունով հայտնի մեթոդի ազդեցությամբ), կրճատել մինչև երեքը՝ 622 թ., 624–626 թթ. և 627–628 թթ.: Ընդ որում, դրանց միջև էր ընկնում երկու, այսպես կոչված «ավարական անակնկալ» (“Avar Surprise”)՝ 622 **կամ** 623 թ., և 626 **կամ** 627 թ., երբ ավարների ղեկավարությամբ սլավոնական ցեղերը պաշարել են Կոստանդնուպոլիսը՝ շեղելով Հերակլին իր հիմնական առաքելությունից: Այս արշավանքների հստակ թվագրումը մինչ այժմ բացակայում է[7], մինչդեռ, դրա կարևորությունը նկատվել է վաղուց[8] ու պատմաբանների միջև ցայսօր հիմնական առիթներից է Հերակլի պարսից արշավանքներին անդրադառնալու[9]: Ոչինչ, եթե դա մնար տոմարագիտական շրջանակներում: Բայց սկզբնաղբյուրների անբավարար ճշգրտությունից կամ մանրամասնությունից դրդված՝ պատմաբանները «շազրենու կաշվի» են վերածում բյուզանդական հակահարձակման գործողությունների ողջ ժամանակագրությունը, տեղագրությունը և ռազմի պատմությունը, մինչդեռ, թվագրման խնդիրն այնքան էլ կարևոր չէ:

2 Վալտեր Կեգիի կենսագրական պատմության երկն առայժմ լավագույն փորձն է այս անձնավորության գնահատման: Դրա «Ներածություն»-ից կարճ մի հղում գուցե անտեղի չէ՝ «*Հերակլը մի կայսր էր, որի կյանքի ընթացքում աշխարհը դադարեց լինել վերահսկելի և արագորեն մասնատվում էր, առանց փլուզվելու:*» (Kaegi 2003: 17): Իսլամի և արաբական նվաճումների ամենահայտնի բացատրություններից է հենց այս տիրակալի օրոք Բյուզանդիայի և Սասանյանների միջև գերլարված հյուծման պատերազմը՝ վերջինը այս զույգի մասնակցությամբ:

3 Gerland 1894:

4 Howard-Johnston 1999.

5 Манандян 1950.

6 Howard-Johnston 1999: 16–17, n. 54. Թախտ-ի Սուլեյման տաճարական բնակավայրը բյուզանդացի պատմիչը վկայակոչում է որպես «Թեբարմայիս»:

7 Վերջին անդրադարձներից տե՛ս Hurbanic 2011:

8 Baynes 1912.

9 Մանանդյանի կողմից 623 թ. Հայաստան մուտքի տարի նշելու հանգամանքները պետք է որ այլ լինեն՝ զուտ հայկական աղբյուրներին հիմնված: Բայնեսի վերոնշյալ աշխատանքը դրանում հղված չէ և կարող էր նրան անծանոթ լինել:







*Նկար 1. Հերակլի Պարսից արշավանքի առաջին տարվա գարնան-աշնան երթուղիներն ըստ Հ. Մանանդյանի (Манандян 1950: 137, Карты 2 и 3):*

Անցյալի ռազմի իրադարձություններին պատմաբանների անդրադարձը պետք է հաշվի առնի ռազմի պատմության ավելի քան երկու հազարամյա պատմական օժանդակ գիտակարգի կուտակած գիտելիքը[10]: Սրա լավագույն օրինակներից է Հովարդ-Ջոնսթոնի հոդվածին Կ. Ցուկերմանի առարկությունները և հակափաստարկները պարունակող աշխատանքը[11], որի եզրակացությունները պարունակող քարտեզը ևս ներկայացրել ենք (Նկար 2): Դրա առնչությամբ նշենք, որ նման քարտեզ հազիվ թե ի հայտ գար, եթե հեղինակը տեսած լիներ այդ տարածքները, և միաժամանակ՝ կարդացած լիներ ստորև հղվող բյուզանդական բանակի ռազմերթի մասին Ջ. Հալդոնի հուշումները. «*Օրինակ՝ Նիկեփոր Բ կայսրը օրական 16 մղոնը (մոտ 24 կմ) հոգնեցուցիչ էր համարում ինչպես մարդկանց, այնպես էլ ձիերի համար* (կտրտված տեղանքի մասին է)», «*1000 հեծյալով զորայունը, ամեն շարքում երկու ձիավորով, որոնք զբաղեցնում էին մոտ 4 մետր տարածություն, կտարածվեր 2 կմ-ից ավելի; 1000 հետևակային և 5000 հեծյալ ունեցող բանակը, ենթադրելով, որ հետևակային շարքը հինգ հոգի է, իսկ հեծյալ շարքը՝ երկու, կտարածվի 14 կմ, իսկ վերջին շարքերին ավելի քան 75 րոպե կպահանջվի առաջին շարքերի դիրքին հասնելու համար*»[12]: Այսպիսով, Ցուկերմանի առաջարկած երթուղին, որքան էլ ժամանակագրական հիմնավորումը թվա համոզիչ[13], ռազմի պատմության գիտակարգային տրամաբանությամբ պարզապես անհնարին է[14]: Մի փաստարկ ևս առաջարկենք, որ կարող է վերջնականապես այդ վարկածը (Նկար 2) հանել գիտական շրջանառությունից. ռուս-պարսկական առաջին պատերազմում 3000 հոգանոց ռուսական ջոկատի նման մի անցման նկա-

[10] Տե՛ս, օրինակ, Hanson 2007.

[11] Zuckerman 2002.

[12] Haldon 1999: 163–164.

[13] Տարբեր հիմնավորումներից մեզ առայժմ համոզիչ է թվացել միայն Բայնեսի հին հակափաստարկումը Գեոլանդի թվագրմանը, ըստ որում՝ նա առաջարկել է միայն 624 թ. փոխարեն հաշվարկը սկսել 623 թ.-ից (Baynes 1912: 110–119), այլ ոչ թե երկու տարի տևած ծանրագույն ռազմական գործողությունները խցկել մի քանի ամսվա մեջ:

[14] Չի բացառվում, որ այդ ճանապարհից օգտվել է Հերակլի զորքին հյուսիսից և հարավից պարսից զորաբանակների մոտենալուն պես հայրենիք վերադառնալու ցանկություն հայտնած լազ, աբազգ և իբեր հեծյալների օժանդակ զորքը: Դրա թվաքանակը մեծ չի եղել (Թեոփանես A.M. 6115, էջ 23):

րագրությունում՝ 1808 թ. Արցախի Վանք գյուղից կամ Կարկառի հովտից դեպի Նախիջեւան գեներալ Ներսլսինի ջոկատի անցումը տևել է մոտ 33 օր (հոկտեմբերի 1-ից նոյեմբերի 4), մինչդեռ, սա գրեթե տասնապատիկ ավելի փոքր զորակազմ էր և չի ուղեկցվել հետապնդումով ու մարտերով[15]:

Հերակլի բաղադրյալ, խիստ համարձակ և, ինչպես արդեն նկատել ենք, պատմական նշանակությամբ դարակազմիկ ռազմական գործողությունների մասին անհնար է խոսել միայն երթուղու (արշավների ուղիների) ճշգրտումների մակարդակում: Ուստի՝ այսքանով կավարտենք այդ անհետանկար թվացող ճանապարհը, նկատելով միայն հետևյալը. մեր նախաձեռնության առիթ է դարձել 2000-ական թվականներին՝ ընդհուպ մինչև 2020 թ. սեպտեմբեր շարունակված Տիգրանակերտերից մեկի հայտնաբերումն ու պեղումները (հնագիտական արշավախմբի ղեկավար՝ Համլետ Պետրոսյան)[16]: Դա միայն առիթն էր, որը սակայն դրդեց ավելի ուշադիր լինել գրավոր սկզբնաղբյուրների հաղորդումներին: Մասնավորապես՝ հիմա արդեն ավելի մեծ նշանակություն է ստանում Սեբեոսի ուղղակի նշումը Աղվանքում Հերակլի ճամբարի (ճամբարների) և նրան «շրջափակած» պարսից բանակների տեղադրության մասին, քանի որ անհայտներից մեկն արդեն հայտնի է[17]:

Բյուզանդացի պատմիչ Թեոփանես Խոստովանողը պահպանել է այդ տարիների մասին մի տեղեկություն, որը կարելի էր նկատել միայն ռազմի պատմագիտության գիտակարգին խստորեն հետևելով: Ավելին, մեր կարծիքով, այդ հաղորդման իմաստը չի հասկացել անգամ Թեոփանեսը, ով, ինչպես հայտնի է, Հերակլի ժամանակակիցը չէր, և իր «Ժամանակագրության» Հերակլի պատերազմ-




*Նկար 2. Պարսիկների հետապնդումից Հերակլի խուսափման երթուղին ըստ Կ. Ցուկերմանի (Zuckerman 2002: 197):*

ների մասին հատվածը կազմել է օգտվելով 8-րդ դ. վերջի դրությամբ Կոստանդնուպոլսի դիվանում պահպանված կայսեր՝ Սենատին ուղղված զեկույց-նամակների վերաշարադրմամբ[18]: Գրելով, որ «*Երբ ձմեռը վրա հասավ, նա մտածում էր՝ իր զորքով ո՞ւր ձմեռի...*» (նամակը հավանաբար ուղարկվել է Աղվանքը որպես ձմեռանոց ընտրությունից հետո և արդեն Արաքսի հովտում): Թեոփանեսը հաղորդում է մի բան, որի ամբողջ կարևորությունն ինքն էլ չի հասկանում. «*Նա իր հետ տանում էր բազում պարսիկ ռազմագերիների, բայց և անվերջ հարձակումների ենթարկվում պարսից զորքի կողմից, սակայն աստծո օգնությամբ նա բոլորին հաղթեց: Ճանապարհին վրա հասավ սաստիկ ձմեռն ու սառնամանիքը: Հասնելով Ալբանիա, նա իրեն հատուկ զթասրտությամբ ողորմեց և կապանքներից ազատեց իր գերի վերցրած* ***հինգ հազար*** *ռազմագերիներին, նրանց հանդեպ հոգատարություն ցուցաբերեց, հանգիստ տվեց, և բոլորը արտասվալից մաղթում էին նրան Պարսկաստանի փրկիչը դառնալ, բնաջնջել տիեզերակործան Խոսրովին*»[19]:

15 Երթուղու վերջնահատվածում միայն նշվում է Նախիջևանի ուղղությամբ Բաբոնք (Карабаба) բնակավայրը, այինքն՝ զորաջոկատն ընթացել է Անգեղակոթով (Утверждение русского владычества на Кавказе, том I, 1901: 299–300). Առայժմ ավելի ճշգրիտ հաղորդում տալ չենք կարող, թեև կարծում ենք, որ Ռուսաստանի ռազմա-պատմական արխիվում պետք է պահպանված լինեն այս զորաշարժի աշխարհագրական մանրամասները: Ավելացնենք միայն, որ մեկ այլ աշխատանքում արդեն նշել ենք Հ. Մանանդյանի նշած երթուղու (Манандян 1950: 140, Карта 4) նվազ հավանականությունը Ծակուռիով Դիզակը շրջանցող և Հակարիի հովտով դեպի Ծղուկ երթուղու համեմատ (Դաբաղյան 2014): Այդ աշխատանքում նշվել է, որ Կարկառ գետի վրա «Մազի կամուրջ»-ը կառուցվել է միայն 1822 թ., իսկ Շուշիից Գորիս ճանապարհը լայնացվել ու կանոնավոր երթևեկելի է դարձել միայն 1850–1860-ականներին: Ուստի Մանանդյանի առաջարկած երթուղու այդ հատվածը ևս ուղղման կարիք ունի:

16 Petrosyan 2020; նույնի՝ 2021; Petrosyan *et al*. 2012.

17 Ներկայացնում ենք այդ հատվածն ամբողջությամբ և աշխարհաբար՝ «*Հրաման տվեց* (Խոսրով Բ-ն) *իր զորավար Շահր Վարազին,* որ <Հերակլի> *ճանապարհը փակի: Եվ նա փութով հասավ Այրարատ, անցավ Գարդմանք՝ նրա դեմ, և բանակեց մյուս Տիգրանակերտում՝ նրա հանդիման: Իսկ Շահենը հասավ բանակեց Հերակլի թիկունքում՝ Տիգրանակերտ ավանում: Սրանք այստեղ էին բանակ դրել, նրանք՝ այնտեղ, իսկ Հերակլը բանակեց նրանց երկուսի միջև*» (Սեբեոս 2005: 175): Երբ արդեն հայտնի է հարավային Տիգրանակերտի տեղը գետնի վրա, ահավասիկ՝ ունենք շատ ավելի լուծելի մի խնդիր: Ավելացնենք, որ խնդիրը դեռ մնում է շատ բարդ լուծելի՝ նկատի ունենալով բանակների խոշոր լինելը, երկու պարսից ճամբարների միջև նվազագույն հեռավորությունը կարելի է գնահատել 50–60 կմ:

18 Howard-Johnston 1999: 16–17; Kaegi 2003: 127.

19 Թեոփանես, A. M. 6114, էջ 22. Միջնադարյան հունարեն կարդալ չիմանալով, Բարթիկյանի թարգմանած այս հատվածը համեմատեցինք անգլերեն թարգմանության հետ. “*As he had with him numerous Persian captives, he was the object of sev-*

Հիշեցնենք, որ Հերակլի ամբողջ արշավող զորքը Թեոփանեսը հաղորդում է 120 հազ. (ըստ Սեբեոսի՝ 100 հազ.): Մասնագետների կարծիքով այդ քանակն իրականից ավելի քան կրկնակի է նշվում, այսինքն՝ իրականում եղել է շուրջ 40 հազար: Այլ բան է, որ նույնքան մեծաթիվ են նշվում պարսից բանակները: Այսինքն՝ եթե պատմիչը, ով արդեն նշել է Հերակլի զորքի թիվը 100 հազ., իսկ հետո նրան թիկունքից (հարավից) մոտեցած պարսից բանակը գնահատում է 30 հազ. (իսկ դրանից առաջ Խոսրով Բ-ի 40 հազ.-ը թույլ էր գտնվել), համարվում է, որ Հերակլը ընտրել է հենց այդ հակառակորդին ջախջախելու համար, որովհետև այն ավելի թույլ էր, քան իրեն հյուսիսից մոտեցող բանակը, իսկ նրանց երկուսին նա կարողացել է հակադրվել միայն որպես պաշտպանվող կողմ, ապա՝ եթե անգամ գործ ունենք չափազանցված թվերի հետ (ինչն անկասկած է), գոնե դրանց հարաբերակցությունը պետք է տրամաբանական համարել:

Այսպիսով, գործ ունենք եզակի մի հաղորդման հետ, երբ բյուզանդական պատմիչը գրում է գործող բանակին ուղեկցող և դրան քանակով ընդամենը երկու անգամ զիջող գերիների մեծ բազմության մասին, որոնք այդ բանակի ուղեկցությամբ տեղաշարժվել են Մարաստանի խորքից մինչև Արաքս գետ, անցել են այդ գետը, ազատություն են ստացել և հեռացել բանակից: Բարեմաղթանքները, որոնք, պատմիչի հաղորդմամբ, այս բազմությունը հղել է Հերակլ կայսրին, դժվարացնում են ենթադրել, որ նրանք բռնությամբ են քշվել այդքան հեռու: Պետք է ուղղենք նաև Մանանդյանի քարտեզը (Նկար 1, առաջինը), որը չի նշում թե ինչ խորությամբ են Ատրպատական թափանցել Հերակլի զորքերը. դրանք հասել են Համադան (պատմական Էկբատանա), այսինքն՝ քարտեզի վրա երևացող Ուրմիային մերձակա Գանձակ քաղաքից շատ ավելի հարավ են շարժվել: Որպես գործողության նպատակներ են նշվում կայազորների ոչնչացումը, ավարառությունը: Այլ կերպ ասած, հաղթած, իր ճանապարհին հակառակորդի բոլոր կայազորները ոչնչացրած բանակը պետք է որ ծանրաբեռնված լիներ նաև որոշ ավարով: Ի լրումն՝ այդքան գերիներ պետք է որ կերակրվեին բավական երկար ժամանակ, իսկ դա նույնպես բեռ է: Առկա էր նաև բյուզանդացիներին հետապնդող զորախումբ, որը կարողացել էր մինչ այդ պաշտպանել Զագրոսի լեռնանցքները, այնուհետև համալրվել էր, ու թեև քանակով էապես զիջում էր բյուզանդացիներին, բայց նրանց ընդառաջ մեծ թվով ռազմագերիների ազատ արձակելը կատարյալ ինքնասպան քայլ կլիներ շարունակվող պատերազմի պայմաններում:

Ինչևէ, Թեոփանեսի այսքան հակասական հաղորդումը հաղթահարվում է միայն վերջին պարսկա-բյուզանդական պատերազմի ամբողջ համայնապատկերի տրամաբանության հաշվառմամբ:

## **Երկրորդ մաս**

Վերնագրում նշված *Encyclopaedia Iranica*-ի "Deportations" երկրորդ մասը[20], ինչպես և հարկ է հանրագիտական բառահոդվածին, ունի էական թերություններ ու բացթողումներ: Այսուհանդերձ, մեզ հետաքրքրող թեմայի շրջանակներում, այն ամենահարմարն է. սեղմ և բավականին մանրամասն նշված են 602 թ. 13-ամյա խաղաղությունից հետո վերսկսված պարսկաբյուզանդական պատերազմն ուղեկցած խաղաղ բնակչության ամենախոշոր տեղահանումները, և գլխավորը՝ դեպի Պարսկաստան դրանց հիմնական ուղղությունները: Է. Կետտենհոֆենը, տեղահանումների իր երկար ցուցակում նշում է Թեոդոսուպոլիս քաղաքից 610 թ. (?) տեղահանված բազմահազար բազմությունը[21]:

---

*eral attacks by the Persian troops on the intervening journey, but with God's help, was victorious against all of them. In spite of the severe winter cold that overtook him on the way, he reached Albania with 50,000 captives whom, in his compassionate heart, he pitied and liberated. He granted them proper care and repose so that all of them prayed with tears in their eyes that he should become the saviour even of Persia and slay Chosroes, the destroyer of the world*." (Theophanes 1997, AM 6114, p. 440): Գեռլանդը, ով, բնականաբար, օգտվել է միայն հունարեն բնագրից, թվում է թե կռահել է Թեոփանեսի այս հաղորդման մեջ պարփակված ուղերձը, քանի որ հետևյալ կերպ է ներկայացնում, թե վերապատմում գերիների դրվագը. «*այնտեղ, Աղվանքում, նա ստիպված էր կապանքներից ազատել մեծ թվով գերիներին, որոնց իր հետ տարել էր* (Theophanes p. 308, 21) *և որոնց մասին հոգ էր տարել, դրանով շահելով նրանց աջակցությունն իր դատին*» (Gerland 1894: 355): Նկատենք, որ Գեռլանդն օգտվել է Կարոլոս դե Բոորի հրատարակած քննական բնագրից, որից և արել են իրենց թարգմանությունները թե՛ Բարթիկյանը, թե՛ անգլերենի հեղինակները (Theophanis, Chronographia, recensuit Carolos de Boor, volumen I, Textum graecum continens, Lipsiae, 1883: 290–503):

20 Shahbazi *et al*. 2012: 2-րդ մասի հեղինակ՝ Էրիխ Կետտենհոֆեն:

21 Shahbazi *et al*. 2012. Նշված բառահոդվածը շատ կարևոր մանրամասնություններ ունի, և, բացի մեկ-երկու ակներև անհամամասնություններից, որոնք, անշուշտ, աղբյուրների վիճակի արտացոլումն են (Սասանյան շրջանի մասին

Սեբեոսի օգնությամբ (Սեբեոս, գլ. ԼԲ-ԼԳ) վերականգնելով դեպքերի հաջորդականությունը, ինչպես նաև՝ հաշվի առնելով Սմբատ Բագրատունու Դվին վերադառնալու և հետո կրկին Վրկան (Gorgan) մարզպանության ուղևորվելու ճշգրիտ տարեթիվը (608–609 թ., նաև՝ Սբ. Գրիգոր տաճարի հիմնարկումը), Փոկաս կայսեր վերջին տարիներից ռազմական գործողությունները հյուսիս փոխադրված լինելու հանգամանքը[22], պետք է նշել, որ Կարինի առումը և բնակչության արտաքսումը տեղի են ունեցել առայժմ նշված տարեթվերից ավելի ուշ՝ 612–613 թ. (*«յամի քսաներորդի առաջներորդի արքային Խոսրովայ»):* Առավելագույնը դրանից երկու տարի առաջ էլ գաղթեցվել էր Արգինա ամրոցին (նաև՝ «Երգինա քաղաք») ապավինած և պարսիկներին դիմադրություն ցուցադրած Շիրակի գավառի մի էական հատվածի (33 գյուղ) խաղաղ բնակչությունը: Կարինի բնակչության հետ Աhմատան կամ Համադան է տեղահանվել նաև Մորիկի կողմից (հակաթոռ) կաթողիկոս կարգված Հովհան Բագարանցին: Հայտնի է այս բավական սիրված հոգևոր հովվի մահվան և Համադանից հայրենիք նրա աճյունի փոխադրման ճշգրիտ տարին՝ 619 թ., այսինքն՝ նրա հոտի գերեդարձումից 4–5 տարի առաջ[23]: Այսպիսով, ողջ գերությունը (տեղահանությունը) տևել է բավականին կարճ: Միգուցե այս կարճատևությունն է պատճառը, որ, մեր կարծիքով, Հայաստանի հետագա պատմության համար այսքան կարևոր իրադարձությունը հայ պատմիչները գրեթե չեն արձանագրել: Սակայն, պետք է նշել, որ թե՛ Սեբեոսը, թե՛ Թովմա Արծրունին Համադանը նշում են (վերջինը հիշատակում է նաև Մայ քաղաքը) որպես գերության վայր: Քանի որ գերեվարված այս բնակչության չափերը միանգամայն համեմատելի են գրեթե տաս տարի անց նույն Համադան հասած Հերակլի բանակի հետ հյուսիս շարժված և Արաքսի մոտ նրանից բաժանված «գերիների» ահռելի թվին, Թեոփանեսի նշած հանգամանքները թույլ են տալիս 624 թ. դեպքերի շարքում առանձնացնել դրանք որպես գերիների վերադարձման փաստ[24]:

Զուգահեռաբար պետք է ընդունենք, որ այս փաստն աղբյուրներում միայն անուղղակի արտահայտություններ ունի: Եվ դրանց զգալի մասը կապված է ռազմի պատմության հետ: Մասնավորապես՝ տասնյակ հազարավոր այս խաղաղ բնակչությունը պետք է հասցներ հատել Արարատյան դաշտը հարավից հյուսիս, նախքան Մծբինից Գարդման շարժվող Շահր Վարազի պարսից զորաբանակը կհասներ նույն դաշտը: Եվս մի փաստարկ է Հերակլի արշավանքի երկամյա (623–624 կամ 624–625) տևողության օգտին:

Դժվար է ասել, թե ինչ չափով է այս գերեդարձը ազդել Հայաստանի հետագա պատմության վրա: Բազմահազար կազմով, բռնի կամ կամավոր արտագաղթերի մասին տասնյակ, գուցե հարյուրավոր վկայություններին[25] ի հեճուկս, այս ծավալի

մանրամասների առատություն, հայերի մեծ տեսակակարար կշիռ տեղահանված համայնքների ցուցակում և այլն), երկրորդ մասի հեղինակ Կետտենհոֆենը հիմնական շարադրանքին ավելացրել է մի քանի կարևոր վերլուծական բաժին, որոնք ցայժմ անպատասխան հարցեր են արծարծում:

[22] Սեբեոսի ԼԲ-ԼԳ գլուխներում շարադրված իրադարձություններում ժամանակագրական կարգն, ըստ երևույթին, խախտված է, բայց փորձելով այն վերականգնել հավաստի թվագրվող դեպքերի օգնությամբ, ստանում ենք հետևյալ պատկերը՝ Կոստանդնուպոլսում հեղաշրջումից անմիջապես հետո Հայաստանում մի քանի տարի հանգիստ էր: Բյուզանդիայի արևելյան բանակը չի ապստամբել Մորիկի դեմ և չի եղել Փոկասի դեմ նրանց ապստամբեցնող: 603 թ. Կոստանդնուպոլիս վերադարձած և էքսկուբիտորների կոմես նշանակված, այնուհետև՝ իր նախկին ենթակա Փոկասին փեսայացած Պրիսկոսը չուներ հեղինակություն Արևելքում, թեև բյուզանդացի ամենահայտնի զորավարն էր Դանուբյան բանակում: Ըստ Սեբեոսի (Լ) Մորիկը նրան վերջին հանձնարարությամբ ուղարկել էր Հայաստան՝ պահանջելով կազմակերպել 30000 ծուխ և հեծյալի գաղթը Դանուբի պաշտպանության համար («*Արդ ԼՌ երդաւոր ժողովեսցին ինձ անտի և նստուսցին ի Թիրակացւոց աշխարհին*»):

[23] Հեղինակավոր Սմբատ Բագրատունու արձակուրդը և Դվինում նոր գլխավոր եկեղեցու նախաձեռնումը 608–609 թթ., Կարինի առաջին գրավման մեղմ ընթացքը՝ բյուզանդական գահի կեղծ հավակնորդի անձնական հորդորով, կարծես թե նպատակ են ունեցել հայ զինվորներ հավաքագրել մինչ այդ պահը Մորիկի «փրկված որդու» պաշտպան Խոսրով Բ-ի կողմը: Ուստի՝ եզրակացրել ենք նաև, որ Եղվարդի ճակատամարտը, որից հետո միայն Սասանյան բանակն անցավ 591 թ. սահմանը, տեղի է ունեցել 610 թ. ամռանը, իսկ լայնածավալ, պարսիկների համար հաջող ռազմական գործողությունների սկիզբ պետք է համարել 611 թ.:

[24] Նաև իրադարձություններով այնքան հարուստ ժամանակաշրջանում այս միջադեպը կարող էր կորսված մնալ: Օգտվելով առիթից, նշենք նաև առաջին և երկրորդ արշավների արանքում Սյունիքից Հերակլի ստացած ռազմական օգնության մասին մինչ այժմ անտեսված մի ուղիղ վկայություն, պահպանված 10-րդ դ. մի ոչ միանշանակ հայ պատմիչի գործում՝ «… *եւ նա միացրեց Հայոց, Վրաց եւ Աղուանից, Միջագետքի, Յունաց եւ Փռանկաց զօրքերն ու առաջ շարժվեց գնաց Վասպուրական: Լսելով այդ մասին՝ Սիւնեաց տիկինը, որի անունը Բիւրեղ էր, ընդառաջ եկաւ Հերակլ արքային եւ բերեց ոսկե թանկարժեք իրեր [գանձեր], թանկագին հագուստներ, բազմաթիւ ձիեր, ջորիներ, հազար [Ռ] պատերազմական զրահ, չորս հարիւր [ԴՃ] ոսկեկուռ զէնքեր և հազար [Ռ] սաղավարտ: Իր հետ բերեց նաեւ [[երեք հազար, ԳՌ]] ռազմիկ մարդկանց*:» (Անանուն զրուցագիր 2011: 64–65):

[25] Վկայությունների մասով տե՛ս Shahbazi *et al.* 2012, հատկապես երկրորդ մասի գրականության ցանկը, հմմտ.՝ Garsoian 1987:

«ներգաղթ» արձանագրված չէ մինչև 19-րդ դար: Թեև պատմագիտական խիստ լայն առումով հայերի վերադարձի նույնիսկ փաստն է կասկածելի, իմաստ ունի նշել, որ 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը հանգեցրել է ռուսական տիրապետության տակ անցած Հայաստան մեծ մի ներգաղթի, որի թիվը ժամանակակիցները գնահատել են 45–50 հազ.[26], իսկ 1940-ականների վերջին Մեծ եղեռնից փրկվածների հայրենադարձությունը Խորհրդային Հայաստան գնահատվում է մոտ 100 հազ.[27]: Այսինքն՝ գործ ունենք ժողովրդագրական և մշակութային առումներով իսկապես խոշոր մի իրադարձության հետ, որը հավանաբար էական ազդեցություն է ունեցել արաբական տիրապետության բարձումից հետո Բագրատունյաց թագավորության կայացման և Շիրակի գավառի աստիճանական քաղաքայնացման մեջ:

**Դաբաղյան Արտակ**

*ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ*
*Չարենցի 15, 0025, Երևան,*
*Հայաստանի Հանրապետություն*

dabagart@gmail.com

**Արթուր Պետրոսյան**

*Արցախի պետական համալսարան*
*Մխիթար Գոշի 5, Ստեփանակերտ,*
*Արցախի Հանրապետություն*

apetrosyan186@gmail.com

## Գրականություն

Անանուն Զրուցագիր (Կարծեցեալ Շապուհ Բագրատունի) 2011. *Պատմութիւն*: Թարգմանութիւնը, առաջաբանը և ծանօթագրութիւնները՝ Վարազ Առաքելյանի, խմբ.՝ Ալ. Հակոբեան: Երևան, Վիամիր հրատարակչություն:

Դաբաղյան Ա. 2014. Արցախի եւ Սյունիքի ճանապարհները XIX–XX դդ. մշակութային և աշխարհագրական առումները, Ս. Հարությունյան, Հ. Մարության (խմբ.), *Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Դ. Վարդումյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու* (Հայ ժողովրդական մշակույթ 16): Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 71–77:

Դաբաղյան Ա. 2017. Հավելյալ մանրամասներ Հերակլ Ա կայսեր բանակի 623–625 թթ. Հայաստանով երթուղու վերաբերյալ: Ա. Հակոբյան, Ա. Բոզոյան, Ռ. Սաֆրաստյան (խմբ.), *Հայաստանը և արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը. Բ, Հայագետ-բյուզանդագետ Կարեն Յուզբաշյանի ծննդյան 90-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի զեկուցումներ և հիմնադրույթներ*: Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 81–84:

Թեոփանես Խոստովանող 1983. *Ժամանակագրություն*: Թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի, խմբ.՝ Ս. Մ. Կրկյաշարյան (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 13. Բյուզանդական աղբյուրներ 4): Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:

Սեբեոս 2004. *Պատմություն*: Քննական բնագիրը՝ Գ. Վ. Աբգարյանի, արևելահայերեն թարգմանությունը և ծանոթագրությունները.՝ Գ. Կ. Խաչատրյանի և Վ. Ա. Եղիազարյանի: Երևան, Զանգակ-97:

Ստեփանյան Ա. 2010. *XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում*: Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն:

Манандян Я. 1950. Маршрути персидских походов императора Ираклия. *Византийский временник* 3: 131–151.

Саркисян Г. Г. 2002. *Население Восточной Армении в XIX–начале XX в.* Ереван: Издательство «Гитутюн».

*Утверждение русского владычества на Кавказе*, том I. Под рукаводством начальника штаба Кавказского военного округа фенерал-лейтенанта Н. Н. Белявского, составлен в военно-историческом отделе, под ред. генерал-майора Потто. Тифлис: Типография Я. И. Либермана.

Baynes N. H. .1912. The Date of the Avar Surprise. *Byzantinische Zeitschrift* 21: 110–128.

Garsoian N. G. 1987. The Early-Medieval Armenian City. An Alien Element? *The Journal of the Ancient Near Eastern Society* 16–17: 67–83.

Haldon J. 1999. *Warfare, State and Society in the Byzantine World, 565–1204*. London: UCL Press.

Hanson V. D. 2007. The Modern Historiography of Ancient Warfare, in: P. Sabin, H. van Wees, M. Whitby (eds). *The Cambridge History of Greek and Roman Warfare*, volume I: *Greece, the Hellenistic World and the Rise of Rome*. 3–21. New York: Cambridge University Press.

Howard-Johnston J. 1999. Heraclius' Persian Campaigns and the Revival of the East Roman Empire, 622–630. *War in History* 6: 1–41.

Howard-Johnston J. 2012. The Late Sasanian Army, in: T. Bernhaeimer, A. Silverstein (eds). *Late Antiquity: Eastern Perspectives*. 87–127. Exeter: E. J.W. Gibb Memorial Trust.

Hurbanic M. 2011. The Eastern Roman Empire and the Avar Khaganate in the Years 622–624 A. D. *Acta Antiqua Academiae Scientiarum Hungarica* 51: 315–328.

Kaegi W. E. 2003. *Heraclius, Imperor of Byzantium*. Cambridge: Cambridge University Press.

[26] Ըստ Саркисян 2002: 61:

[27] Ստեփանյան 2010: 82: 1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմին հաջորդած ներգաղթն ավելի բազմաքանակ էր՝ 90 հազ., բայց այն տեղաշարժ էր Հայաստանի ներսում: Նույնը վերաբերում է Առաջին աշխարհամարտի ընթացքում Արևմտյան Հայաստանից Արևելյան Հայաստան բնակչության շարժին:

Petrosyan H. 2020. Tigranakert of Artsakh. *Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies* 10/1–2: 327–371.

Petrosyan H. 2021. Politics, Ideology and Landscape: Early Christian Tigranakert in Artsakh. *Electrum* 28: 163–187.

Petrosyan H., Kirakosyan L., Safaryan V., Zhamkochyan A., Vardanyan R., Karapetyan I., Vardanesova T. 2012. The Discovery and the First Results of Archaeological Excavations of Tigranakert in Artsakh, 2005–2009, in: P. Avetisyan, A. Bobokhyan (eds). *Archaeology of Armenia in Regional Context. Proceedings of the International Conference Dedicated to the 50th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography (September 15–17, 2009)*. 223–235. Yerevan: Gitutyun.

Polacek J. 2008. Heraclius and the Persians in 622. *Bizantinistica: Revista di Studi Bizantini e Slavi*, serie seconda 10: 105–124.

Theophanes 1997. *The Chronicle of Theophanes the Confessor, Byzantine and Near Eastern History AD 284–813*. Translated with Introduction and Commentary by Cyril Mango and Roger Scott with the assistance of Geoffrey Greatrex. Oxford: Clarendon Press.

Shahbazi Sh., Kettenhofen E., Perry J.R. 2012. Deportations, in: *Encyclopaedia Iranica* 7/3: 297–312. Available online at http://www.iranicaonline.org/articles/deportations (accessed on 30 December 2012).

Zuckerman K. 2002. Heraclius in 625. *Revue des études byzantines* 60: 189–197.

# A SMALL ADDENDUM TO THE SECOND PART OF THE "DEPORTATIONS" ENTRY IN "ENCYCLOPAEDIA IRANICA" WITH EMPHASIS ON THE ARMENIAN SOURCES

*Artak Dabaghyan, Artur Petrosyan*

Keywords: Emperor Heraclius, war for Resurrection of the Holy Cross, return of deportees into Armenia, war history, deportations and urbanisation, *synoikismos*.

**Abstract**: This article discusses a hitherto unexplored circumstance of one of Byzantine emperor Heraclius's Persian campaignsonquests (624–625) – that of returning tens of thousands of Armenian captives from Media to Armenia, and of the Byzantines' spending the winter in Caucasian Albania. While the only source is a misunderstood passage in Chronographia of Theophanes the Confessor, it is complemented with indirect reports in Armenian sources. In whole, the article reveals an exceptional fact of Armenian history through implementation of disciplinary requirements of the warfare history.

# ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐԻ ՄԻԳՐԱՑԻԱՆ ԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ 19–20-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՀՈՂԱՇԵՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

*Համազասպ Աբրահամյան*

**Բանալի բառեր**. հողաշեն մշակույթ, Թուրքմենչայ, Արարատյան դաշտ, հողի ճարտարապետություն, բազիլիկ եկեղեցի:

**Ամփոփում**. Հայաստանյան մշակութային ժառանգության մեջ իր կարևոր տեղն ունի հողի ճարտարապետությունը: 19–20-րդ դարերում Արարատյան դաշտում և հարակից շրջաններում ձևավորվում ու զարգանում է հողաշեն ժառանգության նոր փուլ, որի կրողներն են նախևառաջ 1828 թ. վերաբնակեցված պարսկահայերը:

Միգրացիոն այս շարժման արդյունքում 1828 թ. վերաբնակիչները, ովքեր իրենց նախկին բնակավայրերում, պարսկական մշակույթի ազդեցությամբ և այլ բնական շինանյութի բացակայության պայմաններում, ճարտարապետության մեջ որպես հումք օգտագործում էին հիմնականում հող, տեղափոխվելով Հայաստան՝ իրենց հետ բերեցին արդեն իսկ ավանդական դարձած հողի ճարտարապետությունը: Կավահողով հարուստ Արարատյան դաշտում և առատ քարանյութով Վայոց ձորի, Սյունիքի նախալեռնային, լեռնային շրջաններում հողի ճարտարապետության 19–20-րդ դարի կառուցների առկայությունը համապատասխանում է պարսկահայերի վերաբնակեցման տարածքներին:

Հողաշեն մշակույթի դասական օրինակներ են Արարատյան դաշտի 19–20-րդ դդ. եկեղեցիները: Նորաբնակները հում աղյուսից կառուցում էին նաև բնակարանային համալիրներ, արտադրական, հասարակական և գյուղատնտեսական նշանակություն ունեցող շինություններ: Շինությունների բոլոր այս տեսակների ճարտարապետությունները փոխկապակցված են իրար հետ, և 1830-ական թվականներից մինչև 1960-ական թվականները կիրառության մեջ մնալով՝ կրել են որոշակի զարգացում: Մինչև այժմ էլ պարսկահայերով բնակեցված տարբեր բնակավայրերում պահպանվել և կիրառվում են հում աղյուսից տարբեր նշանակություն ունեցող շինություններ:

Միգրացիոն այս կարևորագույն շարժի արդյունքում Արարատյան դաշտում և հարակից շրջաններում, բացի հայկական բնակչության թվաքանակի վերականգնումը, նաև հիմք դրվեց հողի ճարտարապետության նոր փուլին:

## Ներածություն

Հայաստանյան մշակութային ժառանգության մեջ իր կարևոր տեղն ունի հողի ճարտարապետությունը: Հողաշեն կառույցները հողի միջոցով պատրաստված կառույցներն են: Հողը հազարամյակներ շարունակ օգտագործվել է ճարտարապետության մեջ: Այժմ էլ այն համարվում է ամենատարածված շինարարական նյութն ամբողջ աշխարհում: Մշակութային ժառանգության այս ուղղության ուսումնասիրության և պահպանման հարցերով է զբաղվում 1979 թ. հիմնադրված «Հողի ճարտարապետության միջազգային կենտրոնը»՝ CRAterre-ը (հողը որպես ճարտարապետության հիմնական նյութ ընդունելու ուղղությամբ՝ կապված շրջակա միջավայրի և մշակութային բազմազանության պահպանման, ինչպես նաև աղքատության դեմ պայքարի հետ)[1]: Այս առումով մեծ նշանակություն ունի առկա ժառանգությունը: Հողաշեն ժառանգության հետազոտության համար ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության

[1] Տե՛ս Architecture de terre dans le monde, http://craterre.org/,20.04.2020:

կոմիտեի կողմից ընդունվել է Հողի ճարտարապետության համաշխարհային ժառանգության հետազոտության ծրագիրը՝ WHEAP/ՀՃՀԺԾ[2]: Հոդվածում 19–20-րդ դարերի հողաշեն մշակույթի հետազոտության համար օգտագործել ենք վերոնշյալ համաշխարհային փորձի մեթոդաբանությունը:

Հողի ճարտարապետությունը կիրառական է եղել գրեթե բոլոր մշակույթներում: Ճարտարապետության այս տեսակը մեծ կիրառում ունի նաև հայկական մշակույթում: Հողի կիրառումը լեռնաշխարհի տարածքում փաստագրված է դեռևս քարի դարից և շարունակվելով հասնում է մինչև մեր օրերը: 19–20-րդ դարերում Արարատյան դաշտում և հարակից շրջաններում ձևավորվում ու զարգանում է հողաշեն ժառանգության նոր փուլ, որի կրողներն են 1928 թ. վերաբնակեցված պարսկահայերը:

Հոդվածի նպատակն է անդրադառնալ պարսկահայերի միգրացիային և այս համատեքստում ներկայացնել Արարատյան դաշտի 19–20-րդ դարերի հողաշեն մշակույթը: Որպես դասական օրինակներ՝ կներկայացնենք հողաշեն եկեղեցական շինությունները, դրանց հատակագծային-ծավալային լուծումները, առանձին բաղադրիչները, ինչպես նաև կանդրադառնանք բնակելի համալիրներին ու դրանց պատրաստման տեխնալոգիաներին:

## Թուրքմենչայի պայմանագիրն ու Հայաստանի վերաբնակեցումը

1826–1828 թվականների ռուս-պարսկական երկրորդ պատերազմը ավարտվեց Թուրքմենչայի հաշտության պայմանագրով: Երկամյա պատերազմի արդյունքում Պարսկաստանից Ռուսական կայսրությանն անցան Երևանի և Նախիջևանի խանությունները ու Օրդուբադի գավառը[3]: Մինչ վերաբնակեցումը Ռուսաստանին միացած հայկական տարածքներում, մասնավորապես՝ Երևանի, Նախիջևանի խանություններում, հայերի թիվը հաշվվում էր 25 հազ., իսկ մահմեդականներինը՝ 31 հազ., մինչդեռ, Ատրպատականում ապրում էր 65 հազ. հայ[4]:

Նշված տարածքներում հայերի փոքր թվաքանակը առաջին հերթին պայմանավորված էր երկու հարյուրամյակ առաջ շահ Աբբասի կողմից իրականացված բռնագաղթով՝ Մեծ սուրգունով: Ըստ տարբեր աղբյուրների՝ շահ Աբբասը գաղթեցրեց 24–600 հազ. բնակիչ: Բնակչության քանակի առումով ավելի ընդունելի տարբերակ է համարվում մինչև կես միլիոնը[5]:

Թուրքմենչայի հաշտության պայմանագրի 15-րդ հոդվածով Պարսկաստանում ապրող հայերը մեկ տարվա ընթացքում վերաբնակության հնարավորություն են ստանում Ռուսական կայսրության տարածքներում, ինչպես նաև հնգամյա ժամանակամիջոց՝ իրենց անշարժ գույքը տնօրինելու համար[6]: Այս հոդվածի ձևակերպման մեջ իրենց ներդրումն ունեն Ներսես Աշտարակեցին և Ալեքսանդր Գրիբոյեդովը:

Պայմանագրի շնորհիվ 1828 թ. Պարսկաստանից Ռուսաստան տեղափոխվեց ավելի քան 50 հազ. հայ: Ըստ Լեոյի՝ Ատրպատականի հայկական բնակչությունից մոտ 10 հազ.-ը տեղ չի հասնում[7]: Ծրագրի համակարգող հայազգի գնդապետ Լազարևը (Ղազարոս Լազարյան) գրում է, որ չնայած դժվարություններին՝ 8249 հայ ընտանիք իր կողմից տեղափոխվել է նոր ձևավորվող հայկական մարզ, բացառությամբ 1500 ընտանիքի, որոնք մնացել են[8]: Արդյունքում՝ շուրջ 45 հազ. մարդ հաստատվեց Երևան, Նախիջևան, Օրդուբադ քաղաքներում, Զանգիբասարի, Կարբիբասարի, Սարդարապատի, Վեդիբասարի, Կրխբուլաղի, Դարաչիչակի, Ապարանի, Սուրմալուի, ինչպես նաև Նախիջևանի ու Օրդուբադի մահալներում և Վայոց ձորում: Մի քանի հարյուր ընտանիք բնակություն հաստատեց Ղարաբաղում և այլ վայրերում[9]:

Չնայած հետագայում նախնական ծրագրին համապատասխան չկազմավորվեց հայկական մարզը, վերաբնակեցումը կատարվեց անկազմակերպ պայմաններում, վերաբնակիչների համար չստեղծվեցին բավարար տարրական հարմարություններ: Այդուհանդերձ, 1828 թ. վերաբնակեցումը մեծ նշանակություն ունեցավ Արարատյան

[2] Տե՛ս Jyoti Hosagrahar, Earthen architecture is one of the most original and powerful expressions of our ability to create a built environment with readily available resources, http://whc.unesco.org/en/earthen-architecture/,15.05.2020:

[3] Տե՛ս Պարսամյան 1974: 168–175:

[4] Սարգսյան 2012: 23:

[5] Առաքելյան 1904: 17:

[6] Սարգսյան 2012: 24:

[7] Լեո 1984: 430:

[8] Սարգսյան 2012: 24:

[9] Պարսամյան 1974: 175:



*Նկար 1. Գետազատ գյուղի 1937 թ. կառուցված հողաշեն մշակույթի տունը, լուս.՝ Հ. Աբրահամյանի:*

դաշտի և հարակից շրջանների հայկական բնակչության՝ որպես մեծամասնության, հաստատման համար:

## Արարատյան դաշտի 19–20-րդ դարերի հողաշեն ժառանգությունը

Հողաշեն կառույցների հիմնական առավելությունը մատչելի հումքն ու համեմատաբար կայուն ջերմաստիճանի ապահովումն է (ձմռանը՝ տաք, ամռանը՝ զով): Շինությունները կառուցվել են կա՛մ հում աղյուսի շարվածքով, կա՛մ կավաշաղախի շերտերով լցման-ծեփման եղանակով, կա՛մ երկու մեթոդների համատեղ կիրառմամբ[10]:

Արարատյան դաշտում պարսկահայերի առաջին բնակավայրերը հիմնվել են գետերի, առվակների, ջրային գոգավորությունների հարևանությամբ, որոնք էլ նախնական շրջանում հանդիսանում էին հիմնական ջրի աղբյուրները: Սկզբնապես բնակավայրերը չեն ունեցել ուղիղ փողոցներ և հստակ հատակագիծ: Բոլոր բնակավայրերում գյուղի մի ծայրին կառուցվել է եկեղեցին, որի շուրջը ձևավորվել է գերեզմանատունը: Խորհրդային շրջանում սկսեցին մեծանալ և կերպարանափոխվել բնակավայրերը, ձևավորվեցին գյուղական հրապարակները, որոնք տեղադրվում էին գլխավորապես գյուղամիջում: Հրապարակի մոտ սովորաբար ստեղծվում են այգիներ, որտեղ կանգնեցվում են պետական գործիչների, քաղաքացիական կռիվների և Հայրենական Մեծ պատերազմի հերոսների հուշարձաններ, իսկ սրանց շուրջը տեղավորվում են կրթամշակութային ու տնտեսական հաստատությունները և այլն: Արդյունքում եկեղեցիների մի մասը հայտնվում են բնակելի հատվածի մեջ, իսկ կառույցը շրջապատող տապանաքարերը հիմնականում տեղափոխվում են գյուղի սահմաններից դուրս:

Արարատյան դաշտի բնակավայրերը եղել են ամբողջությամբ հողաշեն: Հայաստանի խորհրդայնացումից հետո, երբ սկսեցին կարգավորել նախկին բնակավայրերը և հիմնել հստակ հատակագծերով նոր բնակավայրեր, գերիշխող շինանյութը շարունակում էր մնալ հողը: Մինչև 1950-ական թվականները դաշտի բնակավայրերում հողից էին կառուցում ոչ միայն բնակելի-տնտեսական համալիրներն ու եկեղեցիները, այլև՝ համայնքային նշանակություն ունեցող մշակույթի տները, դպրոցները, մանկապարտեզները, համայնքային պահեստներն ու արտադրամասերը և այլն: Հողաշեն մշակույթի տան օրինակ է Արարատի մարզի Գետազատ գյուղի հուշարձանի կարգավիճակ ունեցող նախկին մշակույթի տունը, որը կառուցվել է 1937 թ. (Նկար 1):

[10] Architecture de terre dans le monde, http://craterre.org/,20.04.2020:



*Նկար 2. Գետազատ գյուղի հողաշեն եկեղեցին, լուս.՝ Հ. Աբրահամյանի։*

## Հողաշեն բնակելի-տնտեսական համալիրներ

Հողաշեն կառույցների մեջ ամենատարածվածը բնակելի համալիրներն են։ Դրանք մեկ սենյականոց տնակից մինչև երկհարկանի բնակելի-տնտեսական համալիրներ են։ Ընդհանուր առմամբ հայկական ժողովրդական բնակարանը իր զարգացման առաջին շրջանում եղել է մեկ բաժնով տուն, երկրորդ շրջանում՝ ոչ հաստատուն միջնորմներով անջատված ենթաբաժիններով բնակարան, իսկ երրորդ շրջանում՝ բազմասենյակ ամբողջական համալիր բնակարան[11]։ 19–20-րդ դարերի հողաշեն բնակարանները նույնպես իրենց ձևավորման շրջանից հետո ունեցել են հստակ զարգացում։ Հողաշեն բնակելի-տնտեսական համալիրներն այստեղ ձևավորվել են 1830-ական թվականներին, որոշակի զարգացում ունենալով կառուցվել են մինչև 1960-ական թվականները, իսկ կիրառական առումով հասել են մինչև մեր օրերը։ Այս կառույցները ևս մեկ սենյականոց տնակից մինչև երկհարկանի բնակելի համալիրներ են։ Արարատյան դաշտում առանձնանում են հողաշեն բնակելի-տնտեսական համալիրների կառուցման մի քանի եղանակներ։

Առաջին եղանակը կիսագետնափոր և գետնափոր գետնատնակներն են։ Սրանք հազարավոր տարիներ օգտագործել են ջերմություն ապահովելու համար և պատրաստվում էին արտաքին տարբեր ձևերով։ Տարածված մեթոդը հարթ տարածությունում միջինում 1–1.5 մ բարձրությամբ և 4×6 մ մակերեսով փոս փորելուց հետո վրան 1–1.5 մ հումաղյուսե կամ կավաշաղախի լցմանծեփման եղանակով պատրաստված պատի ավելացումն է։ Այնուհետև տանիքը ծածկել են գերաններով, ծղոտով և հողով։ Արդյունքում ստացվել է հատակից միջինում 2–2.5 մ բարձրությամբ սենյակ, որի լուսավորությունը ապահովել են վերգետնյա հատվածների վրա բացված պատուհաններով և/կամ երդիկով։ Ներսում հիմնականում ունեցել են թոնիր։ Այստեղ գետնատնակների օգտագործումը հասնում է մինչև 1950-ական թվականներ։ Այժմ Արարատյան դաշտի տարածքում պահպանված քիչ քանակությամբ գետնատնակները օգտագործվում են որպես ավելի ուշ շրջանում կառուցված բնակարանների ներքնահարկեր, մառաններ, մրգերի սառնարաններ և այլն։

Երկրորդ տարբերակը կավաշաղախի լցմանծեփման եղանակով պատրաստված շինություններն են։ Այս դեպքում պատրաստել են կավաշաղախը, ապա գլանաձև կամ անկանոն շերտերով

[11] Վարդանյան 1959։ 35։



*Նկար 3. Մրգաևուշ գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցին, լուս.՝ Ա. Աղիգյոզալյանի:*



*Նկար 4. Մրգանուշ գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցու արևմտյան կողմը, լուս.՝ Հ. Աբրահամյանի:*

լցրել ու ծեփել են իրար վրա: Միջինում 80 սմ լցնելուց հետո սպասել են մինչև չորանա, ապա նորից շարունակել են նույն գործողությունը: Այս եղանակը կիրառվել է ինչպես բնակելի-տնտեսական համալիրներում, այնպես էլ՝ եկեղեցիների (Գետազատի Ս. Սարգիս, Մրգանուշի Ս. Աստվածածին և այլն, Նկար 2–3), այգիների ցանկապատերի, դաշտային հյուղակների և այլ կառույցների ճարտարապետության մեջ: Սա ամենաքիչ դիմացկունություն ունեցողն է, այդ պատճառով էլ նմանատիպ կառույցներ քիչ են պահպանվել: Արարատյան դաշտում կավաշաղախի շերտերով լցման-ծեփման եղանակը հաճախ համադրել են այլ եղանակների և նյութերի հետ՝ կառույցի կայունությունը մեծացնելու նպատակով: Պատերի կայունությունը մեծացնելու համար օգտագործել են գերաններ կամ աղյուսներ: Օրինակ, Նորաշեն գյուղում այս եղանակով կառուցված հողաշեն բնակարաններից մեկի համար որպես կայունացնող նյութ օգտագործվել են գերաններ: Այս դեպքում գերանները միջինում 1 մ բարձրության վրա, հորիզոնական եղանակով դրվել են պատերի մեջ, իսկ տանիքի ծանրությունը կրելու համար պատերի անկյուններին կից գերաններ են կանգնեցվել ուղղահայաց դիրքով: Իսկ Մրգանուշի Ս. Աստվածածին եկեղեցու դեպքում շուրջ 60 սանտիմետր բարձրությամբ լցման-ծեփման միջոցով ստացված շերտին հաջորդում է երկու շարք հում աղյուսի շերտը, և պատերը հիմքից մինչև վերջ շարված են նման հաջորդականությամբ (Նկար 4):

Հողի ճարտարապետության մեջ դասական տարբերակը հում աղյուսով կառուցման եղանակն է: Կիրառման համար նախօրոք պատրաստում էին կավաշաղախ և դրանից կաղապարով ստա-

նում էին ուղղանկյուն կամ քառակուսի աղյուսներ, ապա սպասում էին մինչև դրանց չորանալը: Երբ արդեն աղյուսները պատրաստ էին, նորից պատրաստում էին կավաշաղախ և դրա միջոցով հաջորդաբար շարում էին աղյուսները: Հաշվի առնելով հողի ճարտարապետության հում աղյուսով կառուցման եղանակի որակական հատկանիշները, բնակելի համալիրների կարևոր հատվածները հիմնականում կառուցում էին հենց հում աղյուսով: Իսկ Արարատյան դաշտում, 19–20-րդ դարերում բնակարանաշինության մեջ ամենատարածված լուծումը երկսենյականի շինությունն էր: Հում աղյուսով դասական չափերի շինություն, այսինքն՝ երկսենյականց հաշտ (միջանցք, նախասենյակ)՝ 4×4մ մակերեսով և օթաղ (մեծ վրան, օդա, սենյակ)՝ 4×6մ մակերեսով կառուցելու համար աղյուսները պատրաստել են նախօրոք: Այստեղ օգտագործել են հիմնականում քառակուսի (բիթուն-բոլորը, ամբողջ)՝ 30×30×10սմ չափերի համադրությամբ և ուղղանկյուն (յարմ)՝ 30×15×10սմ չափերի համադրությամբ աղյուսներ: Աղյուսներ պատրաստելու համար հիմնականում շաղախին այլ նյութեր չեն ավելացրել, սակայն, կան տարբերակներ, երբ ավելացրել են դարման, ավազ, գոմաղբ, խոտ, բուրդ և այլն: Պատերը կանգնեցնելուց հետո տանիքը ծածկել են գերաններով-եղեգով-հողով կամ գերաններով-տախտակներով-խոտով-հողով: Բացի հորիզոնական հարթ ծածկը օգտագործել են նաև հողի երկլանջ ծածկ: Երկլանջ ծածկելու դեպքում սենյակի ներսից կանգնեցրել են սենյակը երկու մասի բաժանող մեկ կամ մի քանի սյուն: Գմբեթաձև ծածկելու դեպքում սենյակի ներսից պատերին կից կանգնեցրել են մի քանի փայտյա որմնասյուներ, որոնք վերևից միացվել են իրար հատակագծի ամբողջ երկայնքով անցնող գերանաշարով՝ առորմով, և կազմել են կոնստրուկտիվ կմախք: Հում աղյուսից պատերը բնության ներգործությունից պաշտպանելու համար ծածկել են ծեփով: Հիմնականում ծեփը պատրաստել են կավաշաղախին նույն քանակությամբ դարման ավելացնելով, իսկ հետագայում օգտագործել են այլ նյութեր՝ հիմնականում գաջ: Հատակը ամրացնելու համար այն պատել են 50% կավահող, 25% դարման և 25% գոմաղբ համադրությամբ շաղախով, հետագայում՝ պատրաստել են փայտե հատակ:

Բացի հողի ճարտարապետության վերոնշյալ եղանակներից, Արարատյան դաշտում ավելի քիչ քանակությամբ կիրառվել են նաև այլ եղանակներ և տարբեր եղանակների համադրություններ:

## Հողաշեն եկեղեցիներ

Հողաշեն մշակույթի դասական օրինակներ են Արարատյան դաշտի 19–20-րդ դարերի եկեղեցիները: Այստեղ բազմաթիվ են հողի մոնումենտալ ճարտարապետության օրինակներ հանդիսացող եկեղեցիները: Վերջիններս ունեն հիմնականում եռանավ կամ միանավ կառուցվածք, հստակ արևելք-արևմուտք ուղղվածություն: Դրանք կառուցված են հում աղյուսի շարվածքով կամ կավաշաղախի շերտերով լցման-ծեփման եղանակով, կամ երկու մեթոդների համատեղ կիրառմամբ: Որպես հիմք՝ երբեմն օգտագործվել է նաև քար: Եկեղեցիների սյուները փայտե գերաններ են: Գերաններ են օգտագործվել նաև կրող պատերում կամ պատերին կից տանիքը պահելու համար: Տանիքները ծածկել են գերաններով, ծղոտով և կավաշաղախով: Հողաշեն եկեղեցիներում երբեմն կիրառել են նաև թրծած աղյուս: Թրծած աղյուսով կառուցել են խորանի կամարը, գմբեթարդը, մուտքի կամ պատուհանների եզրաշարերը, գլխավոր մուտքի եզրանախշերը և այլն:

Հողաշեն եկեղեցու օրինակ է Մասիս գյուղի Սբ Աստվածածինը, որը գտնվում է գյուղի արևմտյան հատվածում՝ 19–20-րդ դարերի գերեզմանատան եզրին (Նկար 5): Գյուղի բնակչության 43%-ը 1828–1829 թթ. վերաբնակիչներ են: Եկեղեցին իր ճարտարապետությամբ կրկնում է Արարատյան դաշտի 19–20-րդ դարերի հողաշեն մյուս եկեղեցիներին: Կառույցն ուղղանկյուն հատակագծով եռանավ բազիլիկ է, որն ունի երկու մուտք՝ հարավային ու արևմտյան, և պահպանված 6 պատուհան՝ 1-ը հյուսիսից, 2-ը արևմուտքից, 3-ը հարավից: Ներքին տարածությունը բաղկացած է երեք մասից՝ աղոթասրահից, 29սմ բարձր նախաբեմից և 95սմ բարձրությամբ բեմից: Բեմին զուգահեռ երկու կողմերում առկա են երկարավուն ավանդատներ, որոնք պահպանվել են մասնակի: Տանիքն իրենց վրա կրել են պատերը, խորանի տուֆակերտ կամարը և չորս զույգ փայտե սյուները: Շինարարական տեսանկյունից եկեղեցու համար հիմնական շինանյութ է հանդիսացել հում աղյուսը: Աղյուսները խոնավությունից և անձրևաջրերից պաշտպանելու համար եկեղեցու հիմքը կառուցել են գետաքարերով, որի վրա էլ դրվել են աղյուսե պատերը: Օգտագործել են ուղղանկյուն՝ 21×10×5, 22×10×5, 23×10×5 կամ 23×11×5 և քառակուսի՝ 21×21×5, 22×22×5 կամ 23×23×5 համամասնությամբ աղյուսներ: Բացի այդ, եկեղեցու շինարարության մեջ օգտագործել է նաև տուֆ: Տուֆով են կառուցված եկեղեցու երկու



*Նկար 5. Մասիս գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցին, լուս.՝ Հ. Աբրահամյանի:*

մուտքերը, խորանի կամարակապը, մկրտության ավազանը, սյուների խարիսխները, ինչպես նաև առկա են տուֆի բազմաթիվ ագուցված կտորներ եկեղեցու ներսում՝ խաչի պատկերներով: Շինարարության մեջ օգտագործվել է նաև մեծ քանակությամբ թրծած աղյուս: Թրծած աղյուսների չափերը համապատասխանում են հում աղյուսներին: Հուշարձանում մեծ քանակությամբ թրծած աղյուսների առկայությունը հնարավորություն է տալիս եզրակացնել, որ եկեղեցին իր մյուս օրինակների նման ունեցել է աղյուսաշեն գմբեթարդ: Կառույցի սյուները և տանիքը գերաններով են: Փայտից են պատրաստված նաև կառույցի պատուհանները: Շինության երկու մուտքերի վերին հատվածներում առկա հորիզոնական փոսերը, մի քանի նմանատիպ պահպանված օրինակները (Ներքին Դվինի Սբ Հակոբ եկեղեցի) և տեղացիների վկայությունները թույլ են տալիս խոսել նաև գերաններով պատրաստված արտաքին նախամուտքերի մասին: Աջ ավանդատան մուտքի վերևում՝ պատի մեջ, եղել է կարաս: Նմանատիպ կարասներ առկա են գրեթե բոլոր պահպանված հողաշեն եկեղեցիների խորանների աջ և ձախ հատվածներում, բերանի կողմը դեպի աղոթասրահ: Այս կարասները նախատեսված են եղել պատի ծանրությունը թեթևացնելու և աղոթասրահում ձայնի հնչեղությունը կարգավորելու համար: Կառույցն ունեցել է չորս զույգ սյունաշար, որոնցից տեղում պահպանվել է մեկը: Սյուների խարիսխները պատրաստված են վարդագույն տուֆից և ունեն 51×51×29 սմ չափերի համադրություն: Կառույցի արևմտյան գլխավոր մուտքի բարավորի վրա տեսանելի են եկեղեցու գմբեթի պատկեր, հետնապատկերին՝ գրության համար առանձնացված 5 տող, սակայն, արձանագրությունը միտումնավոր ջնջված է և անընթեռնելի: Եկեղեցու գմբեթի այս պատկերը կրկնվում է նաև խորանի կամարի երկու հիմնամասերում, որտեղ նույնպես պատկերները միտումնավոր ջնջված են: Միտումնավոր ջնջված կամ շաղախով ծածկված են ներսի կողմից պատերին ագուցված շուրջ մեկ տասնյակ տուֆից խաչապատկերները: Նմանատիպ խաչեր պատկերող տուֆի կտորներ պատերի մեջ ագուցելը տարածված երևույթ է Արարատյան դաշտի 19–20-րդ դարերի հողաշեն եկեղեցաշինության մեջ, իսկ խաչապատկերների և գրությունների եղծումը կամ ծեփով թաքցնելը խոսում է խորհրդային շրջանում կառույցի վերօգտագործման մասին: Եկեղեցին խորհրդային նախնական շրջանում օգտագործվել է որպես մշակույթի տուն, ապա որպես թունաքիմիկատների պահեստ: Խորանի տուֆակերտ կամարակապի վերին հատվածում առկա է խաչապատկեր, որի վերևի հատվածում ընթերցվում է «1906» (խաչն ու թվականը ջնջված են): Մեկ այլ տուֆե սալի վրա առկա է խաչապատկերի ջնջված հատված, իսկ ջնջված հատ-

վածից ներքև կարդում ենք «1853»: Նմանատիպ արձանագիր և թվագիր բեկորներ առկա են նաև հողաշեն այլ եկեղեցիներում (Նորաշենի Սբ Հովհաննես, Մրգանուշի Սբ Աստվածածին, ևն), և տեղադրված են խորանից աջ՝ պատի մեջ:

Հողաշեն եկեղեցու օրինակ կարող է հանդիսանալ Արարատի մարզի Մրգանուշ գյուղի Սբ Մարիամ Աստվածածին եկեղեցին: Կառույցն իրենից ներկայացնում է 18 մետր երկարությամբ և 9.50 մետր լայնությամբ եռանավ բազիլիկա: Արտաքին պատերը կառուցված են հում աղյուսի և կավաշաղախի շերտերով լցման-ծեփման եղանակի համադրությամբ: Երկու շարք հում աղյուսի շերտին հաջորդում է շուրջ 60 սանտիմետր բարձրությամբ լցման-ծեփման միջոցով ստացված շերտը: Պատերը հիմքից մինչև վերջ շարված են նման հաջորդականությամբ: Հողի ճարտարապետության այս եղանակում հում աղյուսի շերտերը կավաշաղախով լցված-ծեփված շերտերի համար ամրություն և կայունություն են ապահովում: Սուրբ Աստվածածին եկեղեցու պատերի պահպանված բարձրությունը կազմում է 3.70 մ: Պատերի հաստությունը 50 սմ է: Իրենց վրա ծանրություն կրող հատվածները և մուտքը կառուցված են թրծած աղյուսից, որոնք հանդիպում են քառակուսի (19.50 × 19.50 × 4.50–5.0 սմ) և ուղղանկյուն ձևերով (19.50 × 11.0 սմ կամ 11.50 × 4.50–5.0 սմ): Հում աղյուսները հանդիպում են հիմնականում 21.0 × 8.50 × 5.50 սմ ձևաչափով: Պատերը պատված են 1 սմ հաստությամբ կավի և ծղոտի շաղախով: Եկեղեցու խորանը երկու կողմերից ունի ավանդատներ: Եկեղեցին ունեցել է երեք զույգ սյուներ, որոնց խարիսխներից տեղում պահպանվել են երեքը: Պահպանված երեք խարիսխներից երկուսը անտիկ են, իսկ մեկը՝ միջնադարյան: Բացակայող խարիսխներից մեկի փոխարեն եղել է Գառնու խոյակներից մեկը, որը տաճարի վերականգնման ժամանակ վերադարձվել է Գառնի: Խորանից դեպի աջ ավանդատուն բացված է կամարակապ որմնախորշ: Շինության շքամուտքի երկու կողմերում տեղադրված են երկուական տապանաքարեր, ևս մեկ տապանաքար տեղադրված է կառույցի հարավարևմտյան մասում: Տապանաքարերի թիվը նախկինում ավելի շատ է եղել: Ինչպես մնացած գրեթե բոլոր եկեղեցիները, Մրգանուշինը նույնպես սովետական տարիներին վերածվել է պահեստի, հետագայում լքվել:

## Վերջաբան

Այսպիսով, միգրացիոն այս կարևորագույն շարժի արդյունքում Արարատյան դաշտում և հարակից շրջաններում հայկական բնակչության թվաքանակի վերականգնումից բացի, հիմք դրվեց նաև հողի ճարտարապետության նոր փուլին:

1828 թ. վերաբնակիչները իրենց նախնական բնակավայրերում, պարսկական մշակույթի ազդեցությամբ և բնական այլ, մատչելի շինանյութի բացակայության պատճառով, ճարտարապետության մեջ որպես հումք օգտագործել են հիմնականում հենց հող: Տեղափոխվելով Հայաստան՝ նրանք իրենց հետ բերել են արդեն իսկ ավանդական դարձած հողի ճարտարապետությունը և նմանատիպ շինություններ են կառուցել ոչ միայն կավահողով հարուստ Արարատյան դաշտում, այլև՝ Վայոց ձորի, Սյունիքի նախալեռնային, լեռնային շրջաններում և այլ քարանյութով հարուստ վայրերում:

Պարսկահայերը հում աղյուսից կառուցում էին ինչպես եկեղեցիներ, այնպես էլ՝ բնակարանային համալիրներ, արտադրական, հասարակական և գյուղատնտեսական նշանակություն ունեցող շինություններ: Շինությունների բոլոր այս տեսակների ճարտարապետությունները փոխկապակցված են իրար հետ, և 1830-ական թվականներից մինչև 1960-ական թվականները կիրառության մեջ մնալով՝ կրել են որոշակի զարգացում: Մինչև այժմ էլ պարսկահայերի ժառանգներով բնակեցված տարբեր բնակավայրերում պահպանվել են և գործածվում են հում աղյուսից կառուցված տարբեր նշանակություն ունեցող շինություններ:

**Համազասպ Աբրահամյան**

*ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ*
*Չարենցի 15, 0025, Երևան,*
*Հայաստանի Հանրապետություն*

*Հայաստանի պատմության թանգարան,*
*Հանրապետության հրապարակ 4, 0010, Երևան,*
*Հայաստանի Հանրապետություն*

abrahamyanhamazasp@gmail.com

## Գրականություն

Առաքելյան Հ. 1904. Ակնարկ Պարսկաստանի հայերի անցեալի վրայ: *Գեղունի* թիվ 1–10, էջ 16–23:

Հովհաննիսյան Ա. 1972. Շահ Աբբասի արշավանքները և Հայաստանի քաղաքական վիճակը XVII դարի առաջին քառորդում, Լ. Ս. Խաչիկյան (պատ. խմբ.). *Հայ ժողովրդի պատմություն*, հատոր 4: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, էջ 95–102:

Լեո, 1984. *Երկերի ժողովածու*, հատոր 4: Երևան, Հայաստան:

Պարսամյան Վ. 1954. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: *Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տեղեկագիր. Հասարակական գիտություններ* թիվ 10, էջ 3–23:

Պարսամյան Վ. 1974. Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը և հայերի ներգաղթը Պարսկաստանից, Ժ. Պ. Աղայան (պատ. խմբ.). *Հայ ժողովրդի պատմություն*, հատոր 5: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, էջ 168–175:

Սարգսյան Ն. 2012. Պարսկահայերի 1828 թ. վերաբնակեցումը ռուսական իշխանությունների կողմից: *Էջմիածին* թիվ 68/2, էջ 22–27:

Վարդանյան Ս. 1959. *Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետություն. Պատմական ակնարկ*: Երևան, Հայպետհրատ:

Architecture de terre dans le monde, http://craterre.org/, 20.04.2020:

Jyoti Hosagrahar, Earthen architecture is one of the most original and powerful expressions of our ability to create a built environment with readily available resources, http://whc.unesco.org/en/earthen-architecture/, 15.05.2020.

# THE MIGRATION OF PERSIAN ARMENIANS AND THE EARTHEN HERITAGE OF THE ARARAT VALLEY IN THE 19TH-20TH CENTURIES

*Hamazasp Abrahamyan*

**Keywords**: Earthen culture, Turkmenchay, Ararat valley, earthen architecture, basilic church.

**Abstract**: Earthen architecture has an important place in Armenian cultural heritage. In the 19th and 20th centuries, a new phase of earthen heritage was formed and developed in the Ararat valley and adjacent regions, the bearers of which were the resettled Persian Armenians in 1928.

The Second Russo-Persian War of 1826–1828 ended with the Treaty of Turkmenchay. As a result of the two-year war, Russia was given the Erivan and Nakhchivan khanates (the East Armenia). The government of Iran was obliged not to prevent Armenians from moving to the Armenian region created in the territory of these khanates which contributed to the unification of the Armenian people within the Russian Empire.

As a result of this migration movement, the settlers of 1828, who in their former settlements, under the influence of Persian culture and in the absence of other natural building materials, used mainly earth as raw material in architecture, moved to Armenia and brought with them the already traditional earthen architecture. The presence of 19th-20th century earthen architecture structures in the Ararat valley rich in clay and in the foothills and mountainous regions of Vayots Dzor and Syunik with abundant stone material corresponds to the resettlement areas of Persian Armenians.

The 19th-20th century churches of the field are classic examples of earthen culture. The churches have mainly a three-nave or one-nave structure, with a clear east-west orientation. They are built with a layer of raw brick or by filling and plastering with layers of clay mortar, or by using both methods together. Sometimes stone was also used as a foundation. The pillars of churches are wooden logs. Logs were also used to support the roof in load-bearing walls or adjacent to walls. The roofs were covered with logs, straw and clay. Sometimes baked brick was also used in earthen churches. The arch, dome, borders of the entrance or windows, borders of the main entrance, etc., were built with baked brick. Persian Armenians built both churches and apartment complexes, industrial, public and agricultural buildings from raw bricks. The architectures of all these building types are interrelated and have undergone some development while remaining in use from the 1830s to the 1960s. Even now, in different settlements inhabited by Persian Armenians, raw brick buildings of different significance have been preserved and used.

As a result of this important migration movement, in addition to the increase in the number of the Armenian population in the Ararat valley and adjacent regions, the foundation was also laid for a new phase of earthen architecture.

ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ
ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻՑ
ՄԻՆՉԵՎ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿԻԶԲ

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ